

ԳՐԱՆ. ԳԲ. Լ. ՄԵԼԻՊՈՍԵՒՐԵՅ

ՎՐԱՑ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՅԵՎ ՀԱՅԵՐԻ ՄԱՍԻՆ

Հ Ս Խ Հ Լ Ռ Ի Ս Ժ Ռ Ղ Կ Ո Մ Ա Տ

ՊՐՈՖ. ԴՐ. Լ. ՄԵԼԻՔՍԵՐ-ԲԵԿ

9 (47.925)

Մ-51

**ՎՐԱՅ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՅԵՎ ՀԱՅԵՐԻ ՄԱՍԻՆ**

~~1270~~

ԲԱՂՎԱԾԻՆԵՐ ՎՐԱՅԵՐԵՆ ԲՆԱԳՐԵՐԻՅ ՀԱՅԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՄԲ.  
ՆՆՐԱՇՈՒԹՅՈՒՆ—ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ, ՅԵՎ ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐՈՎ.

1270

Հ Ա Տ Ո Ր Ա.  
(Ե-Ժ-Բ ԳԱՐ)



ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՄԵԼԻՔՆՅԱՆ ՖՈՆԴԻ  
ՅԵՐԵՎԱՆ 1934

102

Պատմության սպարան  
Գլավիտ № 9264 (P)  
Պատվեր № 2380  
Տիրամ 1500



3684

18638

## Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն

«Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին» աշխատությունը մենք ձեռնարկել ենք կազմելու՝ ոգտագործելով այդ նպատակի համար վրացերեն լեզվով մեզի հասած թե տպագիր և թե (ըստ կարելիության) անտիպ աղբյուրները, ինչպես զուտ պատմագրական և ժամանակագրականը, նույնպես և վարքաբանական-վկայաբանականն ու այսպես կոչված հայրախոսականը, նաև վիճական տարեգիրն ու ժողովրդական բանահյուսությունն ամենալայն իմաստով, մի խոսքով՝ այն ամենը, ինչ վոր իր մեջ Հայաստանի և հայերի մասին վորևե նյութ և պարունակում, ում գրվածն էլ ուղում և լինի, միմիայն թե վրաց հեղինակի գրչից չելած ինքնուրույն կամ հոմպիլատիվ (վրացերեն գրվածք) լինի այն։

Ամբողջ աշխատությունը մենք ծրագրած ունենք 4 հատորով։

I հատորում մտնելու լեն V—XII դարու հեղինակները կամ անանուն գրվածքները։

II հատորում մտնելու լեն XII—XVIII դարերի հեղինակները։

III հատորը կազմելու լեն XVIII—XIX դարերի (մինչ 1829 թ.) հեղինակները։ Վերջապես՝

IV հատորում կամփոփենք վիճական տարեգիրը, հայերենից թարգմանված յերկասիրությունների վարիանտները, ժողովրդական բանահյուսությունը, հավելվածներն ու կարևոր ցանկերը։

Ի նկատի ունենալով, վոր վրացերեն բնագրից կատարած մեր թարգմանություններին մենք կցում ենք ներածություն-ծանոթություններ, վորոնք մեծ մասամբ մեր իսկ նեթագոսությանց արդյունքներն են կազմում, մենք լիահույս ենք, վոր այս մեր աշխատությունը պիտանի կարող և լինել վոչ միայն հայ ընթերցողի համար, վորը առաջին անգամն և հնարավորություն ստանում է

մտոտ ծանոթանալու վրայ աղբյուրների հետ, այլև վրացագետ-  
ների համար:

Հայերեն թարգմանությունները մենք տալիս ենք համաձայն  
«վերականգնած» բնագիրների, վոր մենք ենք կատարել, յերբեմն  
նույնիսկ մեր խակ ձեռքով տպագրության պատրաստած նյութի  
հիման վրա (ըստ ձեռագիրների), վորը բավականին տարբերվում  
է ցարդ գոյություն ունեցող հրատարակություններից:

Ընդ սմին, թյուրիմացությունների տեղիք չտալու համար,  
անհրաժեշտ ենք գտնում մասնանշել, վոր թարգմանության ժա-  
մանակ մենք միշտ աշխատել ենք հատուկ անուններն (թե աշ-  
խարհագրական և թե անձանց) ու այսպես կոչված «հիթնիկական»  
տերմինները ներկայացնել «հայկական հարադատությամբ» կոչ-  
քին, կլոր փակագծի մեջ, դնելով այն և վրացերեն բնագրի ար-  
տասանությամբ. իսկ անկյունավոր փակագծերի մեջ գտնում ենք  
այն բառերն ու նախադասությունները, վորը մենք ենք ավե-  
լացնում իմաստը հասկանալի դարձնելու համար:

Ինքնըստինքյան հասկանալի չե, վոր՝ քանի վոր այնպիսի  
տերմինների գործածությունը նախնական շրջանի նկատմամբ,  
ինչպիսի չեն «Հայաստան» կամ «Վրաստան»-ը, կոտարչալ անա-  
քրոնիզմ կլիներ, մենք առհասարակ այդպիսիներից խուսափում  
ենք՝ գործածելով դրանց փոխարեն 1) «Հայք» (→ «Հայոց»),  
ինչպես եկվիվալենտ վրացերեն «Սոմխիթ»-ի և 2) «Վիրք»  
(→ «Վրաց»), ինչպես եկվիվալենտ «Քարթլ»-ի գլխատառ գրու-  
թյամբ. իսկ «հայ»—«հայեր» (→ «հայոց») և «վրացի»—«վրացի-  
ներ» || «վրացիք» (→ «վրաց») զուգընթացաբար գործածում ենք  
իրբև լով «հիթնիկական» տերմիններ (փոքրատառ գրությամբ):

\* \* \*

Մեր ներկա աշխատության առաջին հատորի առաջին պրակի  
մեջ մենք ամփոփել ենք համապատասխան նյութեր վրայ գրա-  
կանության զարգացման նախնական օրջանի յերկասիրություննե-  
րից, վորոնք գրեթե բացառապես վարքաբանական-վկայաբանական  
հայրախոսական, յեկեղեցա-պատմական կամ ժամանակագրական  
բնույթ են կրում, ընդամենը 15 հեղինակությունից կամ 19 յեր-  
կասիրությունից քաղած, վորոնք V—XI դարերին են պատկա-  
նում կամ այդ դարերին վերագրվում: Ինքնըստինքյան հասկանալի  
չե, վոր նյութերը դասավորված են իրբև առանձին-առանձին  
համվածներ, բացի մի-յերկու դոկումենտից, վոր մենք առաջ ենք

բերում կամ ամբողջությամբ (IX դարու անանուն հեղինակների  
համառոտ Հայոց «պատմության» փորձերը), կամ չնչին կրճա-  
տումներով (IX դարու հեղինակ Արսեն Սափարացու «Հայոց և  
Վրաց բաժանման մասին»), վորոնք առանձնապես հետաքրքիր  
են իրբև զուտ գրական դործեր և վոչ ժամանակակցի ձեռքով  
կատարած պատմական անցքերի նկարագրություններ կամ պատ-  
մագրական յերկասիրություններ, վորոնք վրաց գրականության մեջ  
վիսիայն XI դարումն են ծնունդ առնում (XI—XII դարումն չե-  
րևան չեկած վրաց պատմիչներին հատկապես նվիրվում է առաջին  
հատորի յերկրորդ պրակը):

Ինչպես ընթերցողը կնկատի, ներկա (առաջին) պրակում  
դեռեղած նյութը կարճես թե գլխավորապես յեկեղեցական պատ-  
մաբյանն է վերաբերում, մասամբ՝ հայոց և վրաց բաժանման  
նաքցի հետ կապված դավանաբանական վեճերին, վորի կողքին  
աննշան տեղ ունին գրաված Հայաստանի պատմական աշխարհա-  
գրության, ժամանակագրական պատմության և այլ և այլ պատ-  
մական անցքերի ու անձանց վերաբերչալ տեղեկությունները,  
իսկ անտեսականի մասին և վոչ մի խոսք: Բայց սա հո մեր մեղքը  
չե, յերբ ինքը նյութը հեց այդ է մեզ մասակարարել...

Սակայն հայոց պատմության համար բոլոր այդ ավյալներն  
արժեք ունին այն տեսակետով, վոր՝ սեղեկեցիկ լինելով հանդերձ՝  
բղխում են իդեոլոգիայի հակառակ, այսինքն հույն-լուդան-  
դական անտեսական-քաղաքական որիննացիային չենթակա քաղ-  
կեդոնիկ (գիտֆիզիկ կամ յերկարնակ) միջավայրից, մինչդեռ  
ամբողջ հայ գրականությունն այն ձևով, ինչպես էլ այն հասել  
է մեզ՝ լինելով նույնպես տեղեկացիող՝ ասորա-պարսկական որի-  
ենտացիային չենթակա, պարզապես հակաքաղկեդոնիկ (մոնոֆիզիտ  
կամ միաբնակ) իդեոլոգիայի գրոշմն և կրում. և հետևապես պետք  
է չենթադրել, վոր հայերեն լեզվով յերբեմն գոյություն ունեցող  
քաղկեդոնիկ իդեոլոգիայի դրականությունն, մեծ մասամբ հունա-  
կան աղբեցություն կրող կամ հունարենից թարգմանվածը, հակա-  
քաղկեդոնականության հաղթանակով խալառ վոչնչացրած է: Յեվ  
հենց այդտեղ է համապատասխան վրայ աղբյուրների արժեքը, նա-  
մանափանդ, վոր վերջիններն՝ յերբեմն դավանաբանական վեճերի հե-  
տևանքով անհետացած և մեզ չհասած հայկական աղբյուրների վրա  
չեն հիմնված: Համենայն դեպս, այնպիսի դոկումենտների հրատարա-  
կումով, վորոնք հայ քաղկեդոնականության զարգացման հնագույն  
շրջանին են վերաբերում, հարց է ծագում հայ հին գրականությունն

վերագնահատելու մասին\*)։ Յեւ իրոք, հայ և վրաց սլաոմագիրները սովյալներն տարածախոսութունը չէ վոր արդյունք է այն հակասութունների, վոր նկատելի չէ հին Հայաստանում և Վրաստանում շնորհիվ առաջավոր Ասիայում միշտ մարտնչող չերկու տարբեր քաղաքական-տնտեսական սխտեմների (Մարք, Պարթևք, Պարսիկներ, Արարացիք՝ մեկ կողմից, Հուլնք, Հռոմայեցիք և Բյուզանդացիները՝ մյուս կողմից)։

Ինչ վերաբերում է նույն V—XI դարերին սլաոմանոց այն գրվածքներին, վորոնք հայերենից վրացերեն թարգմանությամբ են հասել մեզ (ի նկատի ունենք Աթոնի Իվերոն վանքի X դարու «վարք հարանց»-ի «հայոց» կամ «ասորվոց» սրբերի վարքերը) և վորոնց հայերեն ընադիրները կամ տարբերվում են թարգմանութունից կամ կորած են (որինակ Դավիթ և Տիրիճանի վկայաբանութունը), ուր՝ ընադիրները համեմատ, տարբեր կամ լրացուցիչ տեղեկութուններ կան Հայաստանի և հայերի մասին, այդպիսիները մենք մտադիր ենք գետեղել «Հավելվածների» մեջ, վոր մեր աշխատության IV-հատորն է կազմելու։

Լ. Մ.-Բ.

Տիդիս  
7. III. 1933

\*) Վորքան այս տեսակետից շահեկան են Ն. Մառի, Իվ. Ջավախիշվիլու, Կ. Կեկելիճեյի յեվ Ն. Ալիևյանի համապատասխան ուսումնասիրութունները, վոր մենք բավականին ոգտագործած ունենք, նույնքան մեզ համար վրե է արժեքից գուրկ են այնպիսի աշխատութունները, ինչպիսի յեն Ադեմանդր Պալցյանի «Պատմութիւն կաթողիկէ վարդապետութեան ի Հայս» (Վիէննա 1878), S. Weber-ի Die Katholische Kirche in Armenien (Freiburg in Breisgau 1903) և այլն։ Մի կողմն ենք թողնում Կարապետ Տեր-Մկրտչյանի գոհտորական շարադրութունը՝ Die Paulikianer im Byzantinischen Kaiserreiche und verwandte Ketznerische Erscheinungen in Armenien, Leipzig 1893:

Ա.

ՀԱԿՈՒ ՅԵՐԵՑ (V Դ.)

«ՇՈՒՇԱՆԻԿԻ ՎԿԱՅԱՐԱՆՈՒԹՅՈՒՆԸ»

«Շուշանիկի վկայաբանութուն»-ը, վոր հայտնի չէ հայերեն և վրացերեն լեզուներով, հասել է մեզ գույզ-գույզ խմբագրությամբ՝ ընդարձակ և համառոտ։ Հայերենը հրատարակված է «Սոփերք Հայկականք»-ի Թ. հատորի մեջ (Վենետիկ 1853), ընդարձակ խմբագրութունը 11—47 էջերում, իսկ համառոտը 49—55, չերկուսի ծանոթութունները 57—61 էջ. (համառոտի կրկնութունը տես նաև՝ Լ. Մեյիֆսեր-Բեկ «Ծաղկաքաղ ըանից նախնի հայերէն հանդերձ հայ-վրացերէն բաղդովք», հատուած առաջին. Ծաղկաքաղ, Տիդիս 1920, էջ 100—103)։ վրացերենի ընդարձակ խմբագրութունը հրատարակել են նախ Միք. Սաբինինը իր «Վրաստանի դրախտ» կոչված ժողովածուի մեջ (Մ. Պ. Բ. 1882), էջ 181—192, ապա Ս. Գորգանեցի առանձին գրքույկով՝ «Սուրբ Շուշանիկի վկայաբանութունը» (Տիդիս 1917), էջ 1—23, ծանոթութուններն և հավելվածները 25—44, իսկ համառոտը հրատարակեց, ըստ Աթոնի Իվերոն վանքի X դարու «Վարք հարանց» ժողովածուի. Ալ. Խախանովը (Խախանաւիլի) իր աշխատության մեջ «Материалы по грузинской агрологии» [«Труды по востоковедению», изд. при Лазаревском институте вост. языков, вып. XXI] (Москва 1910), էջ 49—51։ Հետագա (XVIII դարու) վրացերեն խմբագրութուններից կատարած ուսուերեն թարգմանութունը տես՝ (Մ. Սաբինին «Полное жизнеописание святых грузинской церкви», ч. I, СПб. 1871, стр. 141—152)։

Վաղուց Ն. Մառը (Из поездки на Афон, — «Журнал Министерства Народного Просвещения», 1899, март, стр. 19—20) այն կարծիքն էր հայտնել, վոր վկայաբանության վրացերեն համառոտ խմբագրութունը բառացի թարգմանութուն է համապա-

տասխան հայերեն խմբագրութունից, իսկ ինչ վերաբերում է նույն վկայաբանության ընդարձակ խմբագրութուններն առնչությանը իրար հետ, դրա մասին նույն Ն. Մառք վոչինչ չէր ասել։

1917 թվին, ապրիլ Ծուշանիկի վկայաբանության վրացերեն ընդարձակ խմբագրության գլխավոր հրատարակութունը, Ս. Գորգաձեին իր գրքուկի վերնագրի վերևից անհրաժեշտ էր գտել գնելու և հեղինակի անունը՝ «Հակոբ Յերեց, Վ դար»։ Սույն գրվածքն Վ դարու Հակոբ Յերեցին վերագրելը վոչ մի առարկություն չգտավ պրոֆ. Իվ. Ջավախիսիլիու կողմից՝ 1921 թվին լույս ընծայած ուսումնասիրության մեջ՝ «Հին վրացական պատմական գրականությունը (V—XVIII դ. դ.)», չերկրորդ լրացրած հրատարակություն», էջ 13—26, ապա և պրոֆ. Կ. Կեկելիձեի կողմից՝ «Վրաց գրականության պատմություն» I հատորում (Տիգրիս 1923), էջ 119—124, վորոնք ավելի ևս պարզեցին վկայաբանության ավանդից հարցը։ Մասնավորապես Իվ. Ջավախիսիլիին ջանաց ապացուցել, վոր՝ մինչդեռ վկայաբանության համառոտ վրացերեն խմբագրությունը բառացի թարգմանություն է հայերենից, նույն հեղինակության մյուս՝ ընդարձակ վրացերեն խմբագրությունն ինքնուրույն գրվածք պիտի ճանաչել, վորն պարզուր է ծառայել հայերեն խմբագրության համար, մի խոսքով, վրացերեն ընդարձակ խմբագրությունը հիմք է ծառայել (ա. աստիճան) հայերեն ընդարձակ խմբագրությանն (բ. աստիճան), վորը հետագայում համարումի է (դ. աստիճան) և ապա թարգմանվել է վրացերեն (դ. աստիճան)։

Այս կարծիքն այժմ վրաց գրականության մեջ ընդունված է ու ապրածված, և գրեթե վոչ մի առարկություն չէ հանդիպում։

Այժմ անսենք, թե ինչ ավյալների հիման վրա չեն վրացագետներն (Ս. Գորգաձե, Իվ. Ջավախիսիլի, Կ. Կեկելիձե և ուրիշները) ապացուցում Ծուշանիկի վկայաբանության ինքնուրույն վրացերեն գրվածք և այն էլ Վ դարու հեղինակ Հակոբ Յերեցի հորինվածք լինելն, վորը միաժամանակ վրաց գրականության հնադույն հիշատակարանն է համարվում։

1. Իմելով մի ինչ վոր հեղինակավոր անձի՝ վկայաբանություն կազմողը մի ինչ վոր հատվածից հետո, վորը նույն վկայաբանության սկզբնական մասն պիտի կազմեր կամ գուցե ներածությունը, ասում է (էջ 1). «Յեզ անհ հաստատապես պատմեմ Ձեզ սուրբ և չերանելի Ծուշանիկի մահվան մասին» (սրանով է սկսվում վրացերեն տեխստը)։ Ապա՝ խոսելով Վարդան Մամիկոն-

ցանի մասին՝ նա մատնանշում է (նույն տեղ). «Վորի մասին չես Ձեզ գրեցի»։ Մի ուրիշ տեղ՝ ըզեշխի դրան չեպիսկոպոս Ափուտի (Ափոցի) անունը տալով՝ հեղինակն ավելի վորոշակի ասում է (էջ 3). «Յես էլ՝ Ծուշանիկ տիկնոջ (Թագուհու) չերեցն՝ այն չեպիսկոպոսի մասն էյի»։ Յեզ անհ այստեղից պարզ է, վոր հեղինակը՝ առաջ բերելով իր և Ծուշանիկի միջև տեղի ունեցած բազմաթիվ դրույցները (դիալոգները)՝ միշտ ընդգծում է, թե վերջինս ինչպես էր գիմում իրեն, հեղինակին՝ «Յերեց», «Այ չերեց» ասելով։ Վերջապես, վրացերեն բնագրում կա և մի այնպիսի տեղ (էջ 9—10), ուր մի վորն պատանի՝ փնտսելով Յերեցին Ծուշանիկի բնակություն տեղում՝ հարցնում է. «Հակոբն այդտեղ է», վորին ինքը՝ հեղինակը, պատասխանում է. «Ինչ կուզես», և նա ասում է. «ըզեշին կանչում է»։

Ըստ չերեցի, այժ ավյալների հիման վրա չե, վոր նախ Մ. Սաթիհիեր (1882) և ապա Ս. Գորգաձեին (1917) վկայաբանության հեղինակ համարեցին Հակոբ Յերեցին, վորը նույն գրվածքի հայերեն վերստի մեջ անսանուն «դրան քահանա» չե կոչվում (Սոփերը, թ., էջ. 29)։ Իսկ Իվ. Ջավախիսիլիին մանրամասն ապացուցեց այս կետը՝ հիմնվելով ինչպես վերև բերած ավյալների վրա, նույնպես և ամբողջ հորինվածքի, կազմվածքի և վոճի վրա՝ «Հակոբ Յերեցի գրվածքը, — ասում է բազմաշխատ վրացագետը, — ինչպես իր պատմական, աշխարհագրական [ու] ժամանակագրական տեղեկություններով, նույնպես և նիստուկացի նկարագրությունը, պատմական բնույթով ու վոճով և, վերջապես, հեղինակի պատմվածքի հոգեբանական ճշտությունը իրոք վոր ժամանակակցի, ակնաստեսի և համադործակցի կողմից գրված չերկասիրություն պիտի ճանաչվի» (Հին վրացական պատմական գրականությունը, 19)։ Մոտավորապես նույն միտքն է արտահայտում և Կ. Կեկելիձեին, չերք պնդում է, վոր Ծուշանիկի վարքը գրի չե առել «վոչ թե սովորական ժամանակակցին ու ակնաստեսը, այլ [ըզեշխի] ապարանքին շատ մերձեցած և, միաժամանակ, համեմատաբար պատրաստված անձն՝ Հակոբ Յերեցն, վորը դրան քահանա չեր և Ծուշանիկի խոստովանահայրը. Հակոբն այն անձնավորություններից մեկն էր, վորը վոչ մի բույե չեր հեռացել իր հոգևոր գավակից անտանելի տանջանքի և նեղության ժամանակ, նրա հետ էր ապարանքում և ապարանքից դուրս՝ չեկեղեցում ու բերդում» (Վրաց գրականության պատմությունը, I, 119—120)։ Ընդ սմին, նույն Կ. Կեկելիձեին՝ ի նկատի առնելով վկայաբանության մեջ

յեղած զանազան թվականները՝ գտնում ե, վոր այն հորինված պիտի լինի 474—484 թվականներին (ibid., էջ 123):

2. Իվ. Զավախիլիլու հետազոտութեամբ, հայերեն և վրացերեն ընդարձակ խմբագրութեանները (վորից ծագած են համառոտները), ակնհայտնի կերպով իրարից տարբերվում են գլխավորապես հետևյալ կետերում. Ա. մինչդեռ վրացերենը գրված ե առաջին դեմքով, հայերենում հեղինակը սկի չի չերևում, և պատմվածքն չերբորդ դեմքով ե ներկայացրած. Բ. վրացերեն տեկատի ավագուչն տեղերը, ուր այն ժամանակվա նիստուկացի ճշտագուչն պատկերն ե ներկայացրած, հայերենում բաց են թողնված: Գ. թվականները վրացերենում ավելի մանրամասնորեն և ճշտորեն են առաջ բերված, քան թե հայերենում, ուր ալգալիսիններն չերբեմն (որինակ Շուշանիկի մահվան մասին) նուչնիսկ բաց են թողնված: Դ. ժամանակագրական տվյալներն ու գործող անձանց անունները (որինակ՝ բղեշխի դրան չեպիսկոպոսի և դրան չերեցի) վրացերենում ամենայն բարեխղճութեամբ են առաջ բերված, մինչդեռ հայերենում այդպիսիները բաց են թողնված: Ե. Հայերենում պակասում են մի շարք այնպիսի տեղեկութեաններ, վորոնք այն ժամանակվա պատմութեանն ու աշխարհագրութեանն են վերաբերում (որինակ Հերթի և Յուրտավի մասին), ինչպես և Շուշանիկի անձնավորութեան, բնավորութեան, մտածելակերպի և բնորոշ առանձնահատկութեանների նկարագրութեանը: Զ. հայերեն տեկատը՝ համեմատաբար վրացերենի հետ ավելի կրճատված լինելով հանդերձ՝ ավելի ընդարձակ ձևով ե ներկայացնում զանազան աղոթքները, վորոնք վրացերենում քիչ տեղ ունեն գրված, և այլն:

Շուշանիկի վկայարանութեան վրացերեն ընդարձակ խմբագրութեանից ստորև քաղած տեղեկութեանները, ճիշտ ե բուն Հայաստանին (Հայքին) չեն վերաբերում, քանի վոր ի նկատի ունեն Հայոց (Հայքի) և վրաց (Քարթլիի) սահմանակից Հերթի=Ռանը, բայց և այնպես մենք այդպիսիներն առաջ ենք բերում, վորպեսզի նպաստած լինենք Գուգարքի պատմութեանը, վորն այնքան սերտ կապված ե նույն Հայոց և վրաց անցյալի հետ:

Քաղվածքների թարգմանութեաններն առաջ ենք բերում համաձայն Ս. Գուգարձի հրատարակութեան (համեմատութեամբ Մ. Սաբինիի հրատարակածի հետ), կողքին դնելով հայերեն վերսիսի համապատասխան հատվածն ըստ «Սոսիերք»-ի:

### [ՇՈՒՇԱՆԻԿԻ ԾԱԳՈՒՍԸ ՅԵՎ ԲՆԱԿՈՒԹՅԱՆ ՏԵՂԸ]

Պարսից [Պերոզ] թագավորի [Իշխանութեան] ութերորդ տարին<sup>1</sup> դեպի արքունի դուռն ուղեվորվեց Վազգեն բղեշխն (Վարսքեն պիտիախն)՝ Աշուշայի վորդին, վորը սկզբում քրիստոնյա չեր, քրիստոնյա հորեցն ու մորից ծընված: Յեվ նրա կինն եր հայոց սպարապետ Վարդանի դուստրը, վորի մասին անա գրում եմ Ձեզ հորից նա Վարդան եր կոչվել, իսկ ըստ սերոնրա անունն Շուշանիկ, աստծուց չերկյուղած, ինչպես արդին ասացինք, մանկութեանիցն իսկ...

Հեռանալով Պարսից թագավորից՝ բղեշխն (պիտիախն)... մտտեցավ վրաց (Քարթլիի) սահմաններին, Հերթի<sup>2</sup> յերկրին...

...[Յեվ նա] չեկավ Յուրտավ<sup>3</sup> կոչված ավանը...

Իսկ բղեշխն (պիտիախն) դրան չեպիսկոպոսը, վորի անունն եր Սիուա<sup>4</sup>, այնտեղ չերգտնվում, վորովհետե գնացել եր սրբբունու (Շուշանիկի) մտերիմներից մեկի տունը... և չես ել [Հակոբ]՝ Շուշանիկ տիկնոջ (թագուհու) յերեցս՝ այն չեպիսկոպոսի մոտն ելի...

Իսկ բղեշխն (պիտիախն) ուղեվորվեց Ձորդ<sup>5</sup>, բայց նրա յեղբայր Ձոջիկը չհանդիպեց նրան [այնտեղ]... և բղեշխն (պիտիախն) չետևիցն ընկնելով՝ հասավ

Եւ եղև ի ժամանակս Պարսից թագաւորութեանն՝ բղեշխն Վասգեն, որդի Աշուշայ բղեշխի, որ ի դուռն արքունի երթեալ՝ ուրացաւ դքրիստոնէութիւն, և եղեալ ընդ պարսկական օրինօքն ի կամաց և ոչ ի հարկէ և ի բռնութենէ: Եւ կինն ունէր դքուստր Վարդանայ Հայոց սպարապետի Մամիկոննէի, թոռն սրբոյն Սահակայ Պարթևի և Հայոց հայրապետի՝ ի դստերէն Սահականուշայ, և անունն նորա Վարդենի ի ծնողացն կոչեցեալ, Շուշանիկ յորջորջանօք յետոյ անուանեալ. բարեպաշտոն և երկիւղած յաստուծոյ ի մանկութենէ իւրմէ...

նրան Հերեթի սահմաններում...

[Յերկիրն, ուր գտնվում է Յուր-տավը<sup>6</sup>, նկարագրելի լեռնային անտառն պահին արևի կեծուքլուներ կրակի պես է այրում, քամիները յուր և ջրերը միասարար. այդ տեղի բնիկները լի լեն ախտով, ջրով ուռած և դեղնած են, մարմինը ծակծկած, չորացած, ըստտաբ կարմիր քամուց [փչացած], լերե-սը ուռած. և նրանց կյանքն էլ կարճատև. և վոչ մի ձեր չկա նը-րանց յերկրում ...

### ՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ըստ Ս. Գրգգանի (Ս. Ծուղանիկի վկայարանությունը, էջ 26), 458 + 8 = 466 թվին, ըստ Խվ. Ջավախիշվիլու (չին վրացական պատմական դրա-կանությունը, էջ 16), 456 կամ 457 + 8 = 464 — 465 թվին:

2. Նույն Ռանը:

3. Տես 6. ծանոթությունը:

4. Նույն Ափոցը ըստ «Գիրք թղթոց»-ի (էջ 176), վորը Յուրտավի թեմի առաջին յեղիակոսան յեղավ (Վ. Կեկելիան, Նվիրատկտական կաղմը հին Վրաս-տանում, վրացերեն, — «Bulletin de l'Université de Tiflis, X, 1930, էջ 313):

5. Չորը կոչված ավանը, ըստ յերեկոյթին, Տայբումն և յերեկ, վորովհե-տև Տայբիցն էր Չորբումանել լրջանուերի տոմար:

6. Յուրտավը դանադան հեղինակներ յերկար ու ձիւղ դարերը ընթացքում սկսած դու ելի X դարուց՝ այլ և այլ տեղերումն էլին փոխուում: Այս հարցը, անկասկած, Հայաստանի և Վրաստանի պատմական աշխարհագրության հիմնա-կան պրոբլեմներից մեկն է, քանի վոր Գուգարաց ըզեշխություն յերբեմնի կենտ-րոնի և սահմանները հարցին և վերաբերում: Ըստ Ռախտանսի, այն X դարում կոչվելիս է յերկր Գաջենք, գտնվելով «յեղը դեռոյն՝ որ կոչի յերը անուն Գա-ջենադեո, ի նահանգին որ կոչի Վրաց-դաջո, որ է միջասահման երկուց աշխար-հայն Հայոց և Վրացո... հանդէպ լերինն Կաւկասու, որ է սահմանակից... մեծի մայրաքաղաքին Տիֆլիսոյ» («Պատմություն ըստմանան վրաց ի հայոց», Վաղար-շապատ 1871, էջ 34): Ստեփաննոս Որբելյանի որոք էլ Յուրտավը կոչվելիս է յերկր «Գաջենք, զորոյ զթեմն — ասում է Ստեփաննոսը — այժմ ունի Հայաստան» («Պատմություն Նահանգին Սիսական, արարեալ Ստեփաննոսի Օրբելեան արե-պոստոսի Սիւնեայ [Ղուգիտանան մատենադարան» 7]. Թ. 1911. էջ 105):

XVIII դարու վրաց աշխարհագիր Վախուշտը փոխում էր Յուրտավը Ախ-տալա վանքից դեպի արևելք, Բերդուշ կամ Գերեղի լիսան շրջանում (Descrip-

tion géographique de la Géorgie par le Tsarévitch Wakhoucht, publiée par M. Brosset, S. P. B., 1842, p. 142, n. 1): Մեկնելով Վախուշտի խոսքերը, Մ. Բրոս-սեն յեկել էր այն յեղրակացություն, վոր Յուրտավը գտնվում է «a l'E. d' Akh- tala, sur le Berdoudj, la Kamenka de Busses» (M. Brosset, Deux historiens Arméniens, S. P. B. 1870, p. 295—296. n. 2. հմմտ. Additions et éclaircissements à l' Histoire de la Géorgie, p. 109, n. 3), վոր ասանց այլևայլություն կրկնում է և վրացագրեա Ռ. Ժորդանիան տարրինակ մեկնարանությունը՝ «Յուրտավը, այժ- մյան (?) Գաջենքը, Վախուշտը Գաջիանը (Ախտալայից մոտ, սուստան Կաменка դյուղը) գտնվում էր Գուգարքում, Հերեթի և Գարթիի սահմանում» (Բրեքիաներ, վրացերեն, I, Տիֆլիս 1892, էջ 320, ծանոթ. 42): Մ. Ջանաշվիլին (Վախուշտի աշխարհագրությունը, վրացերեն, Տիֆլ. 1904, էջ 51, ծանոթ. 92). կանգ առնելով «Չուրտակետ» անվան ստուգարանություն վրա, վորով հայտնի չէ Վարաքուլա- խի շրջանը, գտնում է «Նավանական, վոր Շուշանիկի քաղաքը հետագայում վե- րակոչվեր Չուրտակետ»: Ըստ Ղ. Ալիշանի (Յուշիք հայրենեաց Հայոց, I, 375) և սույա Ն. Ալիշանի (Կիւրիոն կաթողիկոս Վրաց, Վիեննա 1910, էջ 199), Յուր- տավը գտնվելիս է յերկր «Բողնուդը դաւառին հարաւային ցածադոյն ծայրն» — «կիսաւուր ճամբով միայն հետու» Տիֆլիսից: 1912 թվին Սարգիս Կախարանին (Սուրբ Նունեն ու նրա նշանակությունը Վրաստանի պատմության մեջ, Վրա- ցերեն, էջ 8) այն կարծիքի յեր, վոր Յուրտավը այժմյան Մանդիսից դեպի արևմուտք էր գտնվում: 1914 թվին հրատարակած իր «Վրաց ժողովրդի պատ- մություն» (վրացերեն) II գրքում Խվ. Ջավախիշվիլին ուղղակի ասում է՝ «Հերեթումն էր համարվում Յուրտավը, սակայն խիստապ վերտեղ էր այն գտնվում, չգիտենք» (էջ 307): 1916 թվին հրատարակած մեր հատուկ փոքր հոդվածում «К вопросу о местоположении Цуртава» (Известия Кавк. отд. Рус. Геогр. Об-ва, т. XXIV, № 3) մենք՝ ամփոփելով հարցիս դրականությունը՝ այն միտքն էլինք հայտնել, վոր «Յուրտավը պիտի վորոնել կամ այժմյան Ախ- տալայի մոտերը, Բերդուշի կամ Գերեղա-Հայի (Յամենկայի) շրջանում, կամ ինչ Գաջիանի տեղում՝ Գցիա կամ Սրամ դեպի այ ավին» (էջ 341—345, համ. նաև մեր «Гадженк-Гачиан», — «Христ. Восток», т. VI, нгр. 1918, стр. 94-95): Չհամաձայնելով մեղ հետ՝ Սարգիս Կախարանին (Վրաց պետականության դեմե- ղիսը հարցերը, վրացերեն, — «Bulletin Historique», Տիֆլիս 1924, Գ. 3, էջ 74- 75) գտնում է, վոր Յուրտավը Գալիեփիշի արջավանքի քարտեղում, վոր Ուշա- կովն էր կաղմեր, Չորտու և կոչվում՝ գտնվելով Սրամ դեպի ձախ ավին, վոր, ըստ յերեկոյթին, Յուրտավ անվան ազգագրումն է. նույնը Ս. Կախարանին կրկ- նում է և 1928 թվին (К истории названия города Тифлиса. — «Историче- ский сборник» II, 67) հետևյալ խոսքերով. «Эквивалент названия Гачиан-и —Цуртав (Ухтанес, как известно, считает эти названия идентичными) на- ходит объяснение на арм. яз. именно *յուրտ ցոլոդնայ* (само слово прап- ского происхождения) с суффиксом-ав. встречающимся и в других древ- них географических названиях на Юго-Кавказе (например, Тел-ав, Ман- ав, Зап-ав, Парт-ав и пр.). В этом же значении Гачиан-и при сопостав- лении с аварским коачан-*холоднայ* вполне покрывает термин Цурт-ав, который, таким образом, представляется простым переводом термина Гачиан-и в его аварском, так сказать, аспекте. Гачиан-и — Цуртав, повиди- мому, находился в районе нынешнего Хоша-Килиса на правом берегу р. Храм (притока Куры), у слияния с ним р. Машавер:

Վերջապես, 1928 թվին հրատարակած «Վրաց ժողովրդի պատմությա (վրացերեն) I հատորի Գ. հրատարակության մեջ Իվ. Ջավախիշվիլին նորից պնդում է 1914 թվին արտահայտած այն դրույթը, վոր Յուրտավը Հերեթումն էր դանվում:

1928—1932 թվականները ընթացքում մենք հնարավորություն ունեցանք պրատուններ կատարել գրեթե ամբողջ Գուգարքում (Լոռի-Տաշիր, Թրխալիթ-Մալկա, Ջուրտակիթ-Ղարաբուլախ և այլն) և ամենայն մանրամասնությամբ հետազոտեցինք Յուրտավի հարցն իր բոլոր յեղեկներով՝ հաշվի առնելով գրականության մեջ արտահայտված գրեթե բոլոր կարծիքներն ու ցուցմունքներն այդ մասին, և յեկանք այն վերջնական յեզրակացություն, վոր Յուրտավ-Գաղանքը (Բաշխանը)՝ Գուգարաց ըզեղանները մայրաքաղաքը՝ Բորչալուի (այժմյան Լյուկ-սեմբուրի) ըրջանի թուրքական Առըխլո դուղն է, վոր յերբեմն վրացերեն «Նախիդուրի» և կոչվել, այսինքն կամրջատեղ (ըստ Վախուշաի քարտեզներին)՝ Պրամ կամ Գյուր դետի աջ և ձախ ավերին, ուր վոռողիչ առուներն են սկիզբ առնում և, ի միջի այլոց, «Վախտանգ թագավորի արխ» կոչվածը XVIII դարում\*)։ Իսկ Ուխտանեսի Գաղանգեղ վոչ այլ ինչ է, բայց յեթե նույն Պրամը և հենց այստեղ էն մնացել բաղնաթիվ յեկեղեցիները ավերակներ, վորոնց մեջ աչքի յե ընկնում Վաղարշապատի Ս. Գայանեի ձեռով կառուցված կաթողիկեն, իսկ փոքր յեկեղեցիները մեկում աչքի յե ընկնում Մանգլյայց հինավուրց քարե խաչը (վրացերեն «Մարխամ Ջվարի»), ուստերեն՝ Каменная невеста, ոսերեն՝ «Մամիգա» կոչվածը) ակարբը՝ Այս Առըխլոյի մոտ է դանվում և XVIII դարու վերջերում վրաց Հերակլ II-ի այրելի՝ Գարեջան թաղուհու վերանորոգած ընդարձակ «Բոլաղի» և «Բալաղի» (հմմ. Կախեթի «Բոլաղի», այսինքն Բաղախտեղ) բերդը, վոր թյուրքերեն «Աղ-դալա» յե կոչվում (Գարեջանի վերանորոգության մասին տես Ն. Թաղաշվիլի, Վրաստանի հնությունները, վրացերեն, III, Տփղ. 1910, էջ 299—300)։ Ընդ սմին, այս Առըխլո-Բոլաղից վոչ շատ հեռու դանվում է և պատմական Սամշույտ-Սամշվիլի բերդաքաղաքը, յերբեմն Կորիկյանց թթուանիստը, վորի մայր եկեղեցի (VIII դարում կառուցված է) արևելյան պատի վրա փորագրված վրացերեն յերկաթաղի արձանագրության յերկրորդ տողում առված է, վոր տաճարի շինողները՝ ըզեղանների զարմից» ([նա]թեսա-վիթ պիտիախնի) են յեղել (E. Такайшвили, Археологические экскурсии, разыскания и заметки, вып. II, Тфл. 1905, стр. 42):

Յուրտավի ու նրա հետ, ամբողջ «Վրաց դաշտ»-ի տնային ղիրքին, վոր մենք գտնում ենք Առըխլոյում, միանգամայն համապատասխանում է, ի միջի այլոց, և հետևյալ յերկու հանգամանքը՝ Նախ՝ 506 թվին Գվինի (Գունայ) ժողովի մասնակիցների շարքում «[Յ]ոլ[ը]րտաւ»-ի յեպիսկոպոսի անունը հիշվում է «Բողնիս»-ի և «[Ռ]ուսթաւ»-ի յեպիսկոպոսների անվանց միջև, վորոնց արդեն հետևում են «Տփղկաց»-ն ու «Մանգլիաց»-ը ուրեմն, պարզ է, վոր իր աշխարհագրական ղիրքով Յուրտավը Բողնիսի և Ռուսթավ-Գարդաբանի կամ Հերեթի մեջտեղն պիտի լիներ, վորպիսին միմիայն Պրամ դետի ավազանը կարելի յե համարել իր ներքին մասում, ուր Առըխլոյից (Նախիդուրից) դատ վոչ մի ուրիշ՝ փոքր լը շատե նշանավոր կենտրոն չի յերևում։ Յերկրորդ՝ կարծեցյալ «Յուրտավներից» և վոչ մեկը — վոչ Ախտալայի ղիմաց գտնվող լեռան

\*) «Նախիդուրի»-ի նկարագրությունը տես՝ Ս. Գ. Ջալալեանց, Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, II, 92-93):

վանքը, վոչ Կամենկան, վոչ Ջուրտակեղ և վոչ էլ Մանգլիսի ըրջակայքը — կլիմայական հատկություններով սկի չեն համապատասխանում այն միանգամայն սոսկալի պատկերին, վորի մանրամասն նկարագրությունը տալիս է մեզ Շուշանիկի վկայաբանության վրացական բնագիրը:

Բացի դրանից պարզվեց, վոր նույն ըզեղաններն (պիտիախններն) ունեցել են և մի ուրիշ բնակավայր, ուր նրանք, հավանական է, «բոչնիլի» են յեղել ամառվա ամիսներին իրենց ամբողջ ըզեղաստանով, մերձավորներով, ծառաներով ու տավար-վոչխարով, և այդ յերկրորդ բնակավայրն (այժմյան) և այժմյան Վերին-Մալխալի հունական Ալբանլո || Արվանլո դուղը, վորը, յերբեմն, ըստ VI դարու քարոզիչ Աբիբու Նեկրեսեցու վկայաբանության (Սարգիս Կալաբան, Ասորի հայրերի վարուց նախատիպերը, վրացերեն, Տփղ. 1928, էջ 44-45), «Ռեխա» և կոչվել լինելով VI դարում ըզեղանների (բնագրում սխալմամբ «մարգպաններ») բնակատեղը իր հսկայական «մեգալիթիկ» կամ «կիկլոպայն» (աշխատարան) սիստեմի բերդաքաղաքի ավերակներով, ուր ամփոփված է «Աբիբու» կոչված վանքը (ըստ Վախուշաի) և նույնպես՝ ինչպես և Առըխլոն՝ Ջրաբաշխական ամբողջ սիստեմով։ Այդ «Ռեխա» անունն է, վոր այժմ կրում է Ալբանլոյից վերև, Պրամի ձախ ավին, գտնվող դուղը՝ Մյուս կողմից, հիշատակելի յե, վոր նույն Պրամի ձորը Ալբանլո || Արվանլո — Ռեխայի ըրջանում Վախուշաի քարտեզում (XVIII դար) կոչվում է «Մապիտիախն» (ուղիղ՝ «Մապիտիախն»), այսինքն ըզեղիական, վորի նշմարքը մինչև որս հասել է մեզ նույն Վերին-Մալխալի Բուրնաթի դուղի վերևից գտնվող և «Նախապատմական» դուղի մենհիրներ պարունակող մի վայրում, վոր հայերեն, հունարեն և թյուրքերեն «Մապիտաղձ» է կոչվում և վորը, անկասկած, նույն վրացերեն «Մապիտախն» — «Մապիտախն»-ի ուրույն արտասանությունն է՝ նոր քարտեզներում Յаbатагджа — «Ջաբատաղձ»-ի վերածված (այս «Մապիտաղձ»-ն այժմ հայոց Ղզր-բիլիսս դուղի էլ յայլան) և ներկայացնում) Վերջապես, Ռեխա — Մապիտաղձայից վոչ շատ հեռու գտնվում է և «Գուգարեթ» կոչված ավանը՝ «Գուգարեթի» ձորով, վոր, անկասկած, վաղեմի «Գուգարեթի»-ի, այսինքն «Գուգարք»-Գաղարից-ի արաբական — թյուրքական հորջորջումը պիտի լինի (հմմ. Н. Адопц, Армения в эпоху Юстиниана, Спб. 1908, стр. 423, прим. նակ՝ Իվ. Ջավախիշվիլի, Վրաստանի սահմանները, վրացերեն, Տփղ. 1919, էջ 16):

Վոր «Յուրտավ»-ը Ջրաբաշխական սիստեմի հետ կապված յերբեմնի կենտրոնի և միամասնակ «բիշլաղ»-ի անուն պիտի լինի, ցույց է տալիս այն հանգամանքն ևս, վոր ինչպես ինքը «Յուրտավ» անունն, նույնպես և «Ռեխա»-ն (նույնիսկ այժմյան «Առըխլո»-ն, վոր «արխ», առաւ արմատն է պարունակում) կառված են ջուր իմաստ ունեցող արմատներից։ 1) վրաց «Յուրվա» լողալ՝ «Յուրվա» քամի (հմմ. հայի ծոր, ծորան, ծորել, ծորենի, ծորում և այլն) և 2) ուսու. pe-ka, 6e-pe-r, 03e-ro, py-челі, py-слю, py-сажа, բու-ба, mo-pe, 0b-pa-r, Pā Rā (Bozra), Pexы; յեվրոպ. mare, rivus, rivulus, riviere, ruisseau, Renos || Reyn, Rona և այլն. (հմմ. Մանսկը. ri-na): Հարցիս վերաբերյալ մանրամասնությունները տես մեր աշխատության մեջ՝ «Թրխալիթ-Մալխալի անցյալից» (վրացերեն), վորը հանձնված է ապագրության:



ԱՆԱՆՈՒՆ (IX Դ.)

«ՎՐԱՅ ԴԱՐՁԻ [ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ]»

«Վրաց (Քարթլիի) դարձը» կամ «Վրաց (Քարթլիի) դարձի պատմութունը», վրացերեն «Մոքցեկալ Քարթլիսայ», resp. «Քարթլիս մոքցեկալ» կոչվածը, վրաց գրականության պատմության մեջ նույն նշանակութունն ունի, ինչ վոր «Հայոց դարձի պատմութունը» կամ «Աղաթանդեղայ պատմութիւնը» հայ գրականության պատմության մեջ: Այն հասել է մեզ չերկու վարիանտով, վորոնցից մեկը 973—976 թ. թ. գրված Շատրերդ վանքի հայտնի ժողովածուի մեջն է (այս պատճառով ել կոչվում է «Շատրերդի վարիանտ»), իսկ մյուսը՝ համեմատաբար ավելի ուշ ժամանակվա, այսպես կոչված Ճելիշի վանքի ձեռագրում (վորն ըստ այսմ «Ճելիշի վարիանտ» է կոչվում): «Պատմութունը» բաղկացած է չերկու մասից. առաջինը ներկայացնում է իրենից «Վրաց դարձի» ժամանակագրականը կամ քրոնիկոնը, իսկ յերկրորդ՝ հատկապես ա. Նունեյի (Նինոյի) վարքը, վորոնք, հավանական է, տարբեր հեղինակների կազմածն են, սակայն մեկի ձեռքով ի մի հավաքած. չուրաքանչյուր մասն, իր հերթին, պարունակում է, անշուշտ, հնագույն գրվածքներ այլևայլ հեղինակների (որինակ վոմն Գրիգոր սարկավազի VII դ., վորը, համենայն դեպս, «Պարձի պատմության» հորինող չի կարող համարվել. և այլն), վորոնք, սակայն, նրանից անկախ դեռ հայտնագործված չեն: Յերկու մասերից և վոչ մեկը մեծ պատմական արժեք ունեցող գրվածքներ չեն ներկայացնում, վորովհետև լի չեն սխալներով, անաքրոնիզմներով և այլն: Հրատարակվել է «Վրաց (Քարթլիի) դարձի պատմութունը» մի քանի անգամ: Սկզբներում, չերբ այն հայտնի չեր միակ՝ Շատրերդի ձեռագրում, նրա բնագիրը փոքրիկ ուսումնասիրությամբ և ծանոթություններով հանդերձ լույս ընծայեց

Ն. Թաղայեվիլին՝ առաջին մասը ժողովածուի մեջ «Յերեք պատմական քրոնիկա» (վրացերեն), Տփղիս 1890, էջ 1—115, իսկ չերկրորդը առանձին գրքուչկով՝ «Ս. Նունեյի վարուց նոր վարիանտը կամ Վրաց դարձի [պատմության] չերկրորդ մասը» (վրացերեն), Տփղ. 1892, էջ 1—74. Նույն 1892 թվին Թ. ժորդանիան նորից հրատարակեց «Պարձի» միմիայն առաջին մասն իր աշխատության՝ «Քրոնիկաներ»-ի I հատորում, էջ 11—79: 1900 թվին վերոհիշյալ Ն. Թաղայեվիլին ներկայացրեց «Պարձի» ամբողջ տեկատի (այն է չերկու մասերի) ուսակրեն թարգմանությունը իր հայտնի աշխատության մեջ՝ վերնագրով Источники грузинских летописей — Три хроники („Сборник материалов для описания местностей и племен Кавказа“, вып. XXVIII, отд. I, стр. 1—116, և առանձին), ուր այն առաջին տեղն ունի գրաված. I. Обращение Грузии (в христианство), իսկ անգլիացի հայտնի վրացագետներ Marjory Wardrop and Y. O. Wardrop լույս ընծայեցին «Պարձի» չերկրորդ մասի, այն է Ս. Նունեյի վարքի, անգլիերեն թարգմանությունը՝ Life of st. Nino („Studia Biblica of Ecclesiastica“, Volume V, Part. I, Oxford 1900 p. p. 1—88). Ճելիշի վարիանտը հայտնագործելուց հետո նույն Ն. Թաղայեվիլին «Պարձի» տեկատն ամբողջությամբ կրկին հրատարակեց ղուգընթացաբար՝ ըստ Շատրերդի և Ճելիշի վարիանտների՝ սակայն առանց թարգմանության, իր ստվար աշխատության մեջ Описание рукописей «Общества распространения грамотности среди грузинского населения, т. II, Тифл. 1906 — 1912, стр. 708/710—727 (ա. մասը) և 727—805/813 (բ. մասը): Այսպիսով, այժմ մենք ունենք Շատրերդի վարիանտի ա. մասի չերեք, իսկ բ. մասի չերկու հրատարակություն, հանդերձ ուսակրեն թարգմանության չերկու մասերի ևս, և անգլիերենի՝ չերկրորդ միմիայն մասի, իսկ Ճելիշի վարիանտինը միմիայն մի հրատարակություն՝ չերկու մասերինը՝ առանց վորևե թարգմանության:

Ինչ վերաբերում է այն հարցին, թե ով է «Պարձի» հեղինակն և չերբ է այն գրված, ղրա մասին դեռ ելի վերջնական լուծում չկա: Հեղինակի անունը կատարյալ մթության մեջ է: Իսկ գրության ժամանակի վերաբերյալ գոյու թյուն ունի մի քանի կարծիք. մինչդեռ հեղինակների մի մասն, այն է Ն. Թաղայեվիլին (Յերեք պատմական քրոնիկա, XCII—XCIV) և Ս. Կակաբաձենի (Պատմական պրպատմներ, վրացերեն, Տփղ. 1924, էջ 56—92, К истории названия города Тифлиса, — «Исторический Сборник»

II, 1928, էջ 69—70), վերագրում է այն VII դարուն, մյուս մասն, այն է Իվ. Չավախիովիլին (չին վրացական պատմական գրական-նությունը, էջ 85—91, 73—85) և Կ. Կեկելիանին (Վրաց գրական-նության պատմություն, I, 569—579), համարում են այն IX դարու գործ, վերջինս նույնիսկ IX—X դ. դ. (համեմայն դեպս. վոչ ուշ քան 882—912 թ. թ.): Հիշատակելի չէ նաև «Դարձի» տարբեր մասերի նախատիպի մասին գոյություն ունեցող հետևյալ կարծիքները. ըստ Ս. Կակաբաձեյի (op. cit., 67—71), ա. մասի սկզբնական հատվածը հավանական է հունարեն լինելը գրված 365—400 կամ 380—400 թ. թ., իսկ ըստ F. C. Conybeare-ի («Studia Biblica et Ecclesiastica», 1900), բ. մասը կարծես թե ասորերեն լինելը գրված:

Ստորև բերած քաղվածքների թարգմանությունը կատարված է համաձայն Ս. Թաղալովիլու 1906—1912 թ. թ. հրատարակություն:

Ա. ՄԱՍԻՑ

[ՎՐԱՑ ԴԱՐՁԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ]

Այն որվանից (Կոստանդիանոս կայսեր պարտվելուց 310 թ.) տասերորդ տարին<sup>1</sup> գնաց Հեղինե [կայսրուհին] Յերուսաղեմ [Քրիստոսի] պատվական խաչը փնտռելու, և տասնուչորսերորդ թվականին<sup>2</sup> մի ինչ վոր պատճառով փախուստի ղրմեց արքունի կանանցից մեկը՝ անունով Հռիփսիմե, իր գաչակով հանդերձ:

Յեվ նրա հետ գտնվում էր վոմն գեղեցիկ գերուհի անունով Նունե (Նինո), վորի գործ[ունեություն]ը հետազոտել էր Հեղինե թագուհին, և եր նա (Նունեն) իշխանուհի Հոսմից, վորը ինքն էր սկսել իր ճանապարհորդությունը՝ բուժելով [հիվանդներին]՝ և հասել Հունաստան. նա [ինքն] ուսուցանում էր իր իշխանուհի Հռիփսիմեյին:

Անցնելով ծովով՝ Հռիփսիմե, Գայանե, Նունեն ու նրանց ուղեկիցները մտան Հայքի (Սոմխիթի) սահմանները, Տրդատ (Թրդատ) թագավորի բնակատեղը, և բոլորը մարտիրոսացան այնտեղ<sup>3</sup>:

Մնաց միայն Նունեն, վորն ուղեվորվեց հյուսիսային լեռների ուղղությամբ:

[ԱՅԼ ՅԵՎ ԱՅԼ ԴԵՊԲԵՐ ՎՐԱՑ ԴԱՐՁԻՑ ՇԵՏՈ]

Յեվ թագավոր նստեց նրա (Բակուրի) չեղբայր Տրդատը (Թրդատը), իսկ չեպիսկոպոսապետ էր Ներսես (Ներսե) հայոց կաթողիկոսի Յոր սարկավազը...

...Ապա պարսից թագավորի բղեշխ (պիտիախը) Քրամ-խուար-Բոր-Ջարդը մտավ Տիգրիս քաղաքաբերդն, և Քարթլին նրա հարկատու դարձավ, նույնպես և Հայքը (Սոմխիթը) և Սյունիքը և Վասպուրականը...

Յեվ նրանից (Փարսմանից) հետո թագավորում էր Բակուրը և կաթողիկոսն էր Մակարը. այս պահին էր Վազգեն բղեշխը (Վարսքեն պիտիախը և Շուշանիկը վկայեց Յուրտավում...<sup>4</sup> Այս Բակուրի որոք վերջ չեղավ վրաց (Քարթլի) թագավորությունը...<sup>5</sup>

Պարսիկները տիրապետում էին Քարթլիին և Հայքին և Սյունիքին և Վասպուրականին...

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ուրեմն 310+10=320 թ.
2. Ուրեմն 310+14=324 թ.
3. Անկախ «Վրաց դարձի պատմություն»-ից, Հռիփսիմյանց և Գայանյանց պատմությունը գոյություն ունի վրացերեն գանազան վերսիաներով. ա. իբրև մասն Գրիգոր Պարթևի վարուց (տես Ա. Меликсет-Бекоев, Грузинская версия Агафангелия и ее значение для грузинской историкографии, — «Христ. Восток», т. IV 1915, стр. 155—170, հատկապես 168—169. Vita S. Gregorii Parthianensis, edidit Leo Melikset-Bek [Monumenta georgica, I, Scriptores ecclesiastici, № 2], Tiflis 1920), և բ. իբրև ուրույն վկայաբանություն Հռիփսիմեյի, Գայանեյի և այլոց (տես А. Цагарели, Сведения о памятниках грузинской письменности, т. I, в. 3, стр. 160, М. Джанашивили, Каталог предметов церковного музея грузинского духовенства, Тфл. 1914, стр. 1, А. Меликсет-Бекоев, Новый список «Жития свв. Рипсимии, Гаянии и сподвижниц» на грузинском языке, — «Христ. Восток», т. III, 1915, стр. 313—314, Robert P. Blake, Catalogue of the Georgian Manuscripts in the Cambridge University Library, — «Harvard Theological Review», vol. XXV, July 1932, Number 3, p. 216, 220—221. E. Takajchvili, Les manuscrits Géorgiens de la Bibliothèque Nationale de Paris, etc, Paris 1933 p. 26):
4. Ի դեպ, անհրաժեշտ է մատնանշել, վոր «Հռիփսիմյանց» հիշատակության մասին վրաց դարձի պատմության մեջ՝ գոյություն ունին տարբեր կարծիքներ. վոմանք կարծում են, վոր սա արտահայտություն է հնագույն ավանդության, ըստ վորի հայերն ու վրացիները բրիտանացի են Գրիգոր Պարթևի քարոզությունը, թեև ինքը Գրիգորը «Դարձի» պատմության մեջ սկի չի հիշվում, մինչդեռ նա ծանոթ է, ինչպես իր տեղում կտեսնենք, Արսեն Մափաբացու «Վրաց

և Հայոց բաժանման» մեջ, ուր, մյուս կողմից, Հռիփսիմյանց մասին վոչ մի հիշատակութիւն չկա, իսկ մյուսները այն կարծիքին են, վոր սա հետագա դարերում հորինված դասակարգային-իդեոլոգիական վորոշ մթնոլորտի արտահայտութիւն է, ի հարկի, քաղկեդոնականութեան հաղթանակների հետ կապված (համաձայն Կեսարիա-բյուզանդական թեորիայի): Հմմ. հինգերորդ դլիի 7 ծանոթութիւնը:

4. Ըստ այսմ, Շուշանիկի վկայութիւնը վերաբրում է VI դարուն, վոր, ի հարկի, անաբրոնիզմ է (հմմ. Իվ. Զավաթիշվիլի, Հին վրացական պատմական գրականութիւնը 90):

5. Համաձայն 532 թ. «հավիտենական դաճնադրութեան», (Իվ. Զավաթիշվիլի, վրաց ժողովրդի պատմութիւնը, I, 1928, էջ 226—227):

### Բ. ՄԱՍԻՑ

#### [Ս. ՆՈՒՆԵՆ ՆԱՅՔՈՒՄ]

Հասնելով Կիսոթ չերկրի Բողի\* ավանը, [Նունեն] հիվանդացավ և ապա վախճանվեց...

Իսկ [մինչ նրա մահը] ժողովեցան նույն չերկրի թագավորն և իշխան-իշխանուհիները, և ժողովրդի հոծ բազմութիւնը...

Սալոմե Ուշարմացի տիկինն (թագուհին) և Պերոժավր Սյունեցին և նրանց հետ գանձող բոլոր իշխանները դիմեցին Նունեչին հարցնելով. «ճվ ես դու և ի՞նչպես յեկար մեր չերկիրը...»

Ապա Նունեն պատասխանեց. «...յեթե ցանկանում եք գիտեալ [թե ինչպիսի եք] իմ ձեր խեղճ աղախնու՝ ուղին, կասեմ...»

Ապա Սալոմե Ուշարմացին և Պերոժավր Սյունեցին բերին թանաք ու գրիչներ, և Նունեն սկսեց պատմել իսկ նրանք գրում էին: Նա (Նունեն) սկսեց պատմել իր ծնողների մասին...

«...Իսկ պատրիարքն իմ մորս հանձնել եր թշվառ և հիվանդ կանանց ծառայելու, իսկ յես ծառայում էիս պառավ հայուհի Նիափորա\*\*) Դիփնեցու մոտ չերկու տարի...»

«[Սյու Նիափորան, ի միջի ալոց], ինձ ասաց. «հյուսիսային չերկիրը [ուր Մցիսեթում Բրիստոսի շապիկն է թաղված], գտնվում է Հայոց [չերկրի] լեռնաստանում. այն հեթանոս չերկիր է, հունաց և խուժկաց պետութեանն ստորագրչալ...»

«[Կոստանդիանոս կայսեր մկրտվելուց] չթերորդ տարին տեղի ունեցավ Նիկիո ժողովը և մեր փախուստը Հունաստանից: Հռիփսիմե տիկինն (թագուհին) և Գայանե դաջակը, և հիսուն հոգի [ուրիշները] չեկանք առաջին ամսվա տասն և հինգին:

\*) Var. Բողիս: \*\*) Var. Միափորա:

«Յեվ չեկանք Հայքի (Սոմխիթի) սահմանները Տրդատ (Թրդատ) թագավորի պարտեզը, ուր նրանք և սպանվեցին առաջին ամսվա չերեսունին՝ ուրբաթ օրը:

«Իսկ չես մնացի վարդենիի փշերի մեջ... և յես չեկա հասա Ուլոպորեթ\*1, ուր և մեծ թշվառութեան մեջ անցկացրի ձմեռը:

«Յեվ չորրորդ ամսին անցա Ջավախքի (Ջավախեթի) լեռների կողմը, վորպեսզի տեղեկանամ, թե ուր է Մցիսեթը...»2...

### ՄԱՆՈՔՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ուլոպորեթի դիրքը գեոևս անհայտ է, համենայն դեպս, այն չպետք է շփոթել Ալան-Ուրբան-Ալբանոպոլիս, Ուրբանոպոլիս-Քորբոնոպոլիս-Արևբան-Աղբակի հետ:

2. Առհասարակ «Վրաց դարձի պատմութեան» մանրամասնութիւնները նորագույն լուսաբանութեամբ կարելի չէ գտնել Կորն. Կեկելիձեյի համապատասխան աշխատութեան մեջ, «Վրաց դարձի դիտարկ պատմա-ժամանակագրական խնդիրները», վրացերեն, — «Միմոսիլիկի», I, 1926, էջ 1—53, դերմաներեն ռեզյումեյով. նույնը գերմաներեն՝ K. Kekelidze, Die Bekehrung Georgiens zum Christentum [«Morgenland», Darstellungen aus Geschichte und Kultur des Ostens, Heft 18], Leipzig 1928, S. S. 1—51. Նաև, Իվ. Զավաթիշվիլի, Վրաց ժողովրդի պատմութիւնը, վրացերեն, I, 1928, էջ 162—215 (ուր, ի միջի ալոց, կարելի չէ գտնել և Կեկելիձեյի յեզրակացութիւնները քննադատութիւնը):

\*) Var. Աւիպորեթա:

ԱՆԱՆՈՒՆ (IX Դ.)

«ԿՈՆՍՏԱՆԴ-ԿԱԽԻ ՎԱՐՔԸ»

Կոնստանդ-Կախը վրաց այն իշխաններիցն էր, վորը «Ափ-խաղաց» թագավորի զորաբանակումն եր գտնվում Բուղայի 853 թվի ոգոստոսյան արշավանքի պահին Գարթլիի վրա և վորին՝ Տփղիսի ամիրա Սահակի պարտվելուց հետո, նույն թվի 26 ոգոստոսի ձերբակալեցին ու տարան Տփղիս Բուղայի մոտ, իսկ այստեղից Ա. Ասիայի Սամարիա քաղաքը, ուր և գլխատեցին նույն 853 թվի 10 նոյեմբերի:

Յեվ ահա այս պատմական անձնավորութւյան «վարք»-ն է, վոր գրվել է նրա ժամանակակից անանուն հեղինակի կողմից, Բյուզանդական «Թեոդորա թագուհու որոք», մինչ վերջինիս Մի-քայել վորդու չափահաս դառնալը, ուրեմն 853—856 թ. թ. (Վ. Կե-կեյիձէ, Վրաց գրականութւյան պատմութիւն, I, 566—567. հմմ. Իվ. Չավախիւի, Հին վրացական պատմական գրականութիւնը, 52—58):

«Վարք»-ի մեջ առաջ բերած տեղեկութիւնները միանգամայն զուգահեռում են այն տվյալներին, վոր տալիս է Ատենի (Գորու մոտ) Սիոն հինավուրց տաճարի 853 թվի հազվագլուտ արձա-նագրութիւնն (տես *И. Джавахов, К вопросу о времени построения грузинского храма в Атене по вновь обследованным эпигра-фическим памятникам.—«Христ. Восток», т. I 1912, стр. 277—285*) ու Թովմա Արծրունի (Պատմութիւն տանն Արծրունեաց, գլորու-թիւն Գ, գլուխ ԺԱ), մասամբ նաև արաբացի մատենագիր Ալ-Տարա-րին (հմմ. Բ. Խալաբյանց, Արաբացի մատենագիրները Հայաստանի մասին [«Ազգային մատենադարան», ԶԴ], Վիեննա 1919, էջ 98—101):

Ատենի արձանագրութիւնն ուղղակի նշում է, վոր «ոգոս-տոս ամսի 5-ին, շաբաթ ուրը, քրոնիկոնի 73 [=780+73=853],

արաբական 239 թվին, Բուղան ավերեց Տփղիս քաղաքն և ձեր-բակալեց ու սպանեց Սահակ ամիրային, և նույն ոգոստոս ամսվա 26-ին, նույնպես շաբաթ ուրը, Զիրաքը ձերբակալեց Կախային ու նրա վորդի թարխուշին» (*И. Джавахов, op. cit., 278—279, հմմ. Իվ. Չավախիւի, Վրաց ժողովրդի պատմութիւնը, II, Տփղ. 1914, էջ 376*):

Թովմա Արծրունուն (հրատ. Դուկասյան Մատենադարանի № ԺԶ, Տփղիս 1917, էջ 304—305) ևս ծանոթ է «Կախայ վերին աշխար-հեցին», վորի մասին պատմագիրն ասում է, թե ինչպես նա և «Սողովմոն ուր Սևորդին ճանաչի»՝ չկամենալով ուրանալ «աստուա-ծային օրինացն»՝ «մեծաւ համարձակութեամբ» պատասխանում էլին թագավորին, վորի հրամանով չենթարկվեցին չարչարանքի ու «նահատակեցան արիարար»։ «Լե եղեալ ի վերայ փայտին զերանելին Սողմոն, — ասում է պատմագիրը (էջ 305—306), — և մօտ առ փայտն կացուցին զսուրբն Կահայ \*), զի գոնեայ մինն ի միւսոյ տանջանացն երկուցեալ հնազանդիցի հրամանի թագա-ւորին»: Այս պատմվում է, թե ինչպես «նույն ժամայն էլ հրա-ման չարքունուստ, զի զսուրբն Սողմոն ի նմին փայտի սպան-ցեն... իսկ զսուրբ Կահայ հրամայեաց սրով սպանանել» և այլն:

Կոնստանդ-Կախի «վարք»-ի վրացերեն ընագիրը հրատա-րակել է Մ. Սաբինիցի («Վրաստանի գրախոսը», էջ 363—370). նույնը հրատարակած ունի և «վարք»-ի ռուսերեն թարգմանու-թիւնը (*Полное жизнеописание святых грузинской церкви, ч. III, СПб. 1873, стр. 89—96*) \*\*: Դժբաղդարար վերոհիշյալ միակ հրա-տարակութիւնը դուրկ չե ակներև ազգավաղուհներէրց, վորոնց մեջ առանձնապես աչքի չե ընկնում «Կախ» անվան փոխարեն «կացի» բառի ընթերցումը, ինչպես վաղուց մատնանշեց *Y. Mar-quant-ն* (*Osteuropäische und Ostasiatische Streifzüge, Leipzig 1903, S. 413, B. 1*), թեև վերջինիս միանգամայն իրավացի ուղղումը միմիայն նորերս ընդունելութիւնն գտավ վրացագետների կողմից (տես՝ Իվ. Չավախիւի, Հին վրացական պատմական գրակա-նութիւնը, էջ 54, ծան. հմմ. *И. Джавахов, К вопросу о време-ни построения грузинского храма в Атене etc. стр. 283, прим. 1*).

\*) Անկասկած, նույն «Կախայ»-ն է

\*\* Իսկ *P. Peeters-ը* տվեց վրացերեն տեղատի յատկներն թարգմանու-թիւնը համապատասխան ուսումնասիրութամբ հանդերձ (*De S. Constantino, martyre in Babylonia, commentar. praevius.—«Acta sanctorum», Novembris, t. IV. Bruxellis 1925, p. p. 363—370*):



բաժանման մասին չերկասիրությունը» (Պատմական պրպտում-  
ներ, վրացերեն, հջ 38—55) և ապա մի շարք այլ գրություննե-  
րում (Պատմության ժողովածու, վրացերեն, I, 1928, հջ 124,  
Ասորի հաշրերի վարուց նախատիպերը, վրացերեն, 1928, հջ 11)  
արծարծեց այն դրույթը, վոր Արսենը VII դարու գործիչ է:

Ինչպես 1920 թվին, նույնպես և այժմ մենք այն կարծիքի  
լինք, վոր Հայոց և Վրաց բաժանման պատմության հեղինակ Ար-  
սեն կաթողիկոսը IX դարու Մեծն Արսեն կոչվածն է՝ Գրիգոր  
Խանձթեցու (վախճանված 861 թ.) աշակերտը: Այդ չերևում է  
հետևյալ տվյալներին:

Արսեն կաթողիկոսի չերկը կրում է հետևյալ ընդարձակ վեր-  
նագիրը. «Մեր սուրբ հոր՝ Մցխեթի կաթողիկոս Արսեն վարդա-  
պետի, վորը ծագումով Սափարայի շրջակայքիցն էր, վոր է Սամց-  
խե, ճառ Վրաց (Քարթլի) և Հայոց (Սոմխիթի) բաժանման մա-  
սին»: Այսպիսով, այս վերնագրից կարելի է չեղբակացնել, վոր  
Արսենը ծագումով Սամցխե, այսինքն Մեսխք (ապագայում Ախալ-  
ցխեի) գավառիցն է չեղել: Սա անկասկած, այն Արսենն է, վոր  
քանիցս հիշատակված է Գրիգոր Խանձթեցու «Վարք»-ի մեջ (տես  
Георгий Мерцуг. житие св. Григория Хандзтийского, грузинский  
текст, введение, издание, перевод Н. Марра [„Тексты и Размы-  
кания по армяно-грузинской филологии“, VII] Спб. 1911): Խո-  
սելով Գրիգորի բարեկամների՝ Թեոդորոսի և Քրիստափորի մասին,  
«Վարք»-ի հեղինակ Քեոզ Մեռչուլը (վախճ. 951 թ.) նկատում  
է, վոր նրանք՝ «գալով Սամցխե՝ աստծու հրամանով աշակերտ  
վերցրին իրենց մոտ մեծն Միհրան (Միրիան) աղատի (ազնվա-  
կանի) վորդուն Արսեն անունով, վորն ըստ արժանվուցն կոչվեց  
մեծն Արսեն՝ կաթողիկոս վրաց (Քարթլի) և Մցխեթի աթոռի  
անթառամ պապ» (ibid., հջ Վրաց. տեկատի կր = ուուս. թարգմ.  
100, գլուխ XIX): Բայց Քեոզ Մեռչուլը հաղորդում է Արսենի  
մասին ավելի մանրամասն տեղեկություններ: Այսպես, նույն  
«Վարք»-ից մենք տեղեկանում ենք, թե ինչպես Արսենը՝ Սամց-  
խեյի «մեծ Միհրան աղատի (ազնվականի) վորդին» նախ քան կա-  
թողիկոսանալը ստանձնած ուներ Ածղուրի չեպիսկոպոսական  
աթոռը և թե ինչպես նույն «մեծն Արսեն ապագայում չեղավ  
Վրաց (Քարթլի) կաթողիկոս, Մցխեթի կաթողիկե չեկեղեցում՝  
Քրիստոսի շապիի ոթևանում» (ibid., վրաց. մե = ոուու. 119, գլուխ  
XLII): Նույն «Վարք»-ից մենք տեղեկանում ենք նաև, թե ինչ-  
պիսի հանգամանքներում Արսենը դարձավ կաթողիկոս, ինչպես

բեկանվեցին առաջին ընտրությունները, վոր՝ վրաց չեպիսկոպոս-  
ների ու Տեր Գուրամ Մեծն Մամիալին հակառակ՝ անց երկաց-  
րել նրա հայր Միհրանը (Միրիանը) միմիայն Սամցխեյի ուժեղ  
զինվորության աջակցությամբ ու մի քանի չեպիսկոպոսների ներ-  
կայությամբ, և թե ինչպես ծագեց անհրաժեշտություն հատուկ  
չեկեղեցական ժողով հրավիրելու չեպիսկոպոսներին կանոնավոր  
թվի մասնակցությամբ, վորպիսի ժողովը, վոր իսկապես հրավի-  
րել էր հիշյալ Գուրամ Մամիալը, Գրիգոր Խանձթեցու կրակոտ  
ճառից հետո վորոշեց վավերացնել առաջին ընտրությունն Արսե-  
նի ի կաթողիկոսություն: Հաղորդելով, վոր Արսենը «կամօքն  
աստուծո չե կաթողիկոս» (ibid., վրաց. մգ = ոուու. 121, գլուխ XLII),  
Գեոզ Մեռչուլը ապա մատնանշում է, վոր այս Արսենը «ափոնց  
ուրախություն Վրաց (Քարթլի) բոլոր չեկեղեցիների վրա, վո-  
րովհետև հայրապետական աթոռը զարդարեց կառարեկապես և  
[ինքը] դարգարվեց շնորհք» (ibid., վրաց. մր = ոուու. 123, գլուխ  
XLII): Ընդ սմին Գեոզ Մեռչուլը ավելացնում է. «[նա] կաթողի-  
կոսեց քսան և չոթ տարի և ապա փոխվեց այս աշխարհից» (ibid):

Այս բոլոր տեղեկությունները Գրիգոր Խանձթեցու «Վարք»-  
ից մենք առաջ բերինք միմիայն այն նպատակով, վորպեսզի  
պարզելինք վորքան արդյոք հնարավոր է այս «Վարք»-ում հիշ-  
վող Սամցխեյի Միհրան (Միրիան) աղատի (ազնվականի) վորդի,  
մեծն Արսեն Մցխեթի կաթողիկոսին նույնացնել հայ-վրացական  
չեկեղեցական բաժանման պատմության հեղինակի հետ, վորը  
կոչվում է «Մցխեթի կաթողիկոս Արսեն վարդապետ, ծագումով  
Սափարայի շրջակայքից, վոր է Սամցխե»: Ի նկատի ունենալով,  
վոր «Սափարա»-ն, իրոք, Սամցխե (Մեսխք) չեկրուսն էր գտնը-  
վում, վոր ապա մայրավանքի վերածվեց և այժմ էլ գոյություն  
ունի (Ախալցխեյից մի քանի կիլոմետր հեռավորությամբ), այս  
հարցը մենք լուծում ենք դրական խմաստով:

Ինչ վերաբերում է այն հարցին, թե վոր ժամանակվա հեղի-  
նակ է Արսենը, սա շատ հեշտ լուծվում է նույն «Վարք»-ի տրվ-  
յալներով: Ըստ վերջինի, Գրիգոր Խանձթեցին ապրեց մինչև 861  
թվականը, իսկ Արսենի մասին ասված է, վոր նա Աշոտ Կյուրա-  
պողատի մահվան թվին (826) 6 տարեկան հասակում մտավ վանք,  
ուրեմն ծնված պիտի լիներ 820 թ., նաև այն, վոր նա հայրա-  
պետեց 27 տարի: Յեթե ի նկատի առնենք, վոր Արսենը իբրև  
կաթողիկոս անձամբ ոժեց Խանձթայի մենաստանի հին չեկեղե-  
ցին դեռ ելի իր ուսուցիչ Գրիգոր Խանձթեցու կենդանության

որոք և, բայց զբանից, ներկա չեղավ վերջինիս թագմանը, վոր տեղի ունեցավ 861 թվին, իսկ կաթողիկոս կարող եր դառնալ, համաձայն չեկեղեցական կանոնների, առնվազն 35 տարեկան հասակում, այն և մոտավորապես 855 թվին, միանգամայն հասկանալի չե, վոր նույն Արսենի կաթողիկոսության ժամանակաշրջանը 855—882 թ. թ. մեջ պիտի ամփոփել, և ուրեմն «Վրաց (Քարթլի) և Հայոց (Սոմխիթի) բաժանման մասին» չերկասիրությունը գրված պիտի լինի վոչ ուշ քան 882 թ., ըստ Կոնս. Կեկելիձեյի (op. cit., 137) հավանական և մինչև 862 թ.: Մի խոսքով, Արսեն Սափարացին պիտի համարվի IX դարու չերկրորդ կիսի հեղինակ: Այժմ տեսնենք, թե վոր ավանդներ հիման վրա չե Սարգիս Կաղարածեն ապացուցում Արսեն կաթողիկոսի VII դարու հեղինակ լինելը: Ըստ Ս. Կաղարածեյի, հայ-վրացական չեկեղեցական բաժանման պատմության հեղինակը «VII դարու վերջերում կաթողիկոսական աթոռի վրա բազմած՝ մինչ այժմ անհայտ Արսեն Վրաց (Քարթլի) կաթողիկոսը պիտի լինի» (Պատմական պրպումեններ, 1924 թ., էջ 55): Այսպիսի դրույթի զլխավոր հեղինակն այն և, վոր Արսենի «պատմությունն ընդհատվում և Իսրայել կաթողիկոսով (667—683 թ. ըստ Կիրակոսի, 667—677 թ. ըստ Ասողիկի) և Գրիգոր մարզպանի (+ 682) շրջանով» (ibid., 43): Ապա նույն Ս. Կաղարածեն ավելացնում և. «Ջարմանավի չե, թե ինչպես պատահեց, վոր հեղինակը, չեթե նա Զ-երորդ դարումն եր ապրում, վորը կուսակցորեն, կարելի չե ասել, շահագրգռված եր պատմությունը շարունակելու, ընդհատեց իր աշխատությունն մի այնպիսի անհարմար տեղում, մինչդեռ Հայոց չեկեղեցի 8-երորդ դարու պատմությունը նրան ավելի ձեռնտու նյութեր եր տալիս, որինակ Հովհան կաթողիկոսի շրջանը, չերբ 726 թ. գումարվեց Մանադկերտի ժողովը, վորը կրկին և արդեն վերջնականապես հաստատեց Հայոց չեկեղեցի ընդունած գիծը» (ibid.): Մի ուրիշ տեղ իր այս կարծիքը Ս. Կաղարածեն կրկնում և հետևյալ խոսքերով. «Այժմ պարզված և VII դարու վերջերում հայտնի գրող՝ Վրաց յեվ Հայոց բաժանման մասին չերկասիրությունն հորինող Արսեն կաթողիկոսի գոյությունը: Հիշյալ չերկասիրությունը, բնագրում բերած տեղեկությունները համաձայն, հասցրած և մինչ 680 թվականը: Այսու չենթադրելի չե, վոր չերկասիրությունը գրված պիտի լինի մոտավորապես 685—700 կամ 690—700 թվականներին: Յեվ իրոք, իր ընդհանուր բնույթով, իր ներքին իմաստով և, վերջապես, վոճով ել չերկասիրությունը շատ լավ համապատասխանում և նշած շրջանին» (Ստորի հայերի վարուց նախատիպերը, 1928 թ., էջ 11):

Ս. Կաղարածեյի դրույթն ջրելու համար բավական և մատնանշել, վոր, նախ՝ Արսենի չերկասիրությունն ընդհատվում և վոչ թե VII դարու վերջերի դեպքերի արձանագրությամբ, այլ VIII դարու, չերկրորդ՝ նույն Արսենը 726 թվի Մանադկերտի ժողովի մասին վոչ թե չի լուծւմ, այլ վորոշակի հիշատակում և այն, ինչպես և Հովհան Ոճնեցուն, և չերրորդ՝ մի վորեւ չերկասիրության VII կամ VIII դարով ընդհատվելը դեռ ելի չի նշանակում, վոր այն անպայման նույն VII կամ VIII դարու հեղինակի հորինվածք լինի (չե՞ վոր XX դարումն ևս կարելի չե գրել VII դարու պատմությունն՝ չհասցնելով մինչ մեր որերը):

Վոր Արսեն Սափարացին վոչ մի դեպքում չի կարող լինել VII (յեվ վոչ ել VIII) դարու հեղինակ, այլ միմիայն IX դարուն և պատկանում, կարելի չե ապացուցել նաև նրանով, վոր նրա չերկասիրությանն աղբյուր եր ծառայել այնպիսի դործեր, վորոնք VIII դարումն եր գրված:

Ինչպես իր ժամանակին Իվ. Չավախիւլիի (չին վրացական պատմական գրականությունը, էջ 67) մատնանշեց, «Վրաց և Հայոց բաժանման մասին» չերկասիրության հեղինակը ձեռքի տակ և ունեցել զանազան աղբյուրներ, առաջին հերթին, բացի վրացերենից, հայերեն, նաև հունարեն, վորպիսիները նա, սակայն, չի հիշատակում: Վաղուց II. Goussen-ը (Die Georgische Bibelübersetzung, — «Oriens Christianus», VI, Roma 1906, S. 315) այն միտքն եր հայտնել, վոր նույն չերկասիրությունը շատ կետերում շփվում և Combefis-ի հրատարակած Historia haeresis Monothelitarum-ի և մեծն Միքայելի «Ժամանակագրության» հետ: Իսկ Ն. Ակիմյանը (Կիւրիոն կաթողիկոս Վրաց, 289—290) կարծում և, վոր «Արսեն հիմնուած է ընդհանրապէս... Narratio de rebus Armeniae գրութեան վրայ, որուն թէև այժմ միայն չունարէնն կայ, բայց եղած է երբեմն նաև հայերէնը»: Իսկ Narratio de rebus Armeniae-ն թեև ըստ նույն Ն. Ակիմյանի (ibid., էջ 99, ծանոթ. 1) «է դարու բ. կիսէն կ'երկայ», բայց իրոք VIII դարու գործ և (S. Weber, Ueber die Versuche, den Verfasser der Invektiven gegen die Armenier.—Migne, Patrologia graeca 132, S. 1154 ff., zu bestimmen, — «Յուշարձան», Վիեննա 1911, էջ 175—180):

Առանձնապես հետաքրքիր և Արսենի չերկասիրության՝ հայկական աղբյուրների հետ առնչության հարցը, վորի մասին մանրամասն խոսում և Իվ. Չավախիւլիի (չին վրացական պատմական գրականությունը, 67—72):

Մատնանշելով միմիայն միջերկու որինակի վրա, չերը Արսենը վորեւ վրացական կամ հունական աղբյուրների աղբյուրների տակ և գտնվում, Իվ. Ջավախիսիլիին ասում է. «Ինչպես պարզվում է, մեր պատմաբանը (Արսենը), համեմատյալ գեպս, գլխավորապես հայկական աղբյուրներով և ոգտվել. վոր նա տեղյակ է հայերենին, հաստատվում է այն հանգամանքով, վոր Արսենը չերբեմն առաջ է բերում հայերեն բառեր, թեև վրացերեն էլ ուղիղ թարգմանված, որինակ՝ Ներսես կաթողիկոսին անվանում էլին ռուս, վոր է հայերեն միջին, Վարդան Մամիկոնյանին անվանում էլին չոֆլիս, վոր է ուր» (եջ 67): Բայց նույն գիտնականը ուղում է ապացուցել էլ ավելին: Նրա ասելով, «Արսեն կաթողիկոսի տեղեկությունները հաճախ միանգամայն համաձայն են հայ պատմագիրների տեղեկություններին, իսկ հաճախ նրա խոսքերը հաստատվում են առանց այլևայլություն» (եջ 67):

Գալով այն հարցին, թե հատկապես վոր աղբյուրներով է ոգտվել Արսենը իր չերկասիրությունները գրելիս, նույն Իվ. Ջավախիսիլիին ասում է. «Իսկապես պարզվում է, վոր Արսեն կաթողիկոսը կամ գուցե նրա հայկական գրավոր աղբյուրները Քաղկեդոնի ժողովին հետևող հայ կաթողիկոսների մասին վոչինչ վատ բան չեն ասում, նույնիսկ գովասանություններ էլ են նրանց դարձրում, իսկ հայ պատմագիրները, վորոնց չերկասիրությունները պահպանվել են, չեթե այս չերեցապետներին հիշատակում են ամթալից դատ վոչինչ լավ բան չեն ասում: Հավանական է, վոր վրաց պատմագիրն էլ, կամ գուցե նրա աղբյուրը, կողմնապահություն են վերաբերում իր գովանակիցներին, իսկ հանդեպ միաբնակ հայ պատմագիրների՝ իրենց գովանական հակառակորդների՝ ցույց են տալիս անվտանգ լի վերաբերմունք» (եջ 70): «Իր հերթին, — շարունակում է նույն գիտնականը, — Քաղկեդոնի ժողովին հետևող «ուղղափառ» վրաց պատմագիրը է, հավանական է, նրա աղբյուրն էլ սկի չեն վստահանում հակառակորդ «հերձվածող» միաբնակ հայ չերեցապետներին. շահամոլությունից ու քաղաքական բռնադատությունից կամ կողմնապահությունից դատ Արսեն կաթողիկոսն ու նրա աղբյուրները նրանց գործունեություն և ուղղություն մեջ ուրիշ վոչինչ չեն տեսնում» (եջ 70—71): Այս, քննություն չենթարկելով Արսենի հաղորդած տեղեկությունները հայ միաբնակ կաթողիկոսների մասին՝ նա ասում է. «Պարզ է, վոր այս տեղեկություններն վրաց պատմագիրը քաղած պիտի լինի հայ պատմական աղբյուրներից, սակայն այս պատմական

աղբյուրներն անպայման Քաղկեդոնի ժողովին հետևող «ուղղափառ» հայ հեղինակները գրածը պիտի լինի, և հենց այս պատճառով է, վոր այնտեղ Քաղկեդոնի ժողովին հակառակ միաբնակ հայ հոգևորականությունն այսպիսի ստորացուցիչ տեղեկություններով է առատ դարձրված. [Իսկ] քանի վոր մեզ հասած հայ պատմական գրականության մեջ, վորն ամբողջապես միաբնակ հեղինակներին է պատկանում, այսպիսի տեղեկություններ չեն գտնվում, մնում է չենթարել, վոր նրանից հետո, չերը հայ միաբնակությունը վերջնականապես հաղթող դուրս չեկավ, հակառակորդ չերկբնակ քաղկեդոնիկ գովանությունների չերկասիրություններն իսպառ վոչնչացվել են» (եջ 71—72):

Իր տեսությունը Իվ. Ջավախիսիլիին վերջացնում է Արսենի չերկասիրությունն այսպիսի գնահատումով. «Անաչառ և անառիկ պատմական չերկասիրությունն փոխարեն Արսեն կաթողիկոսի գրվածքը, ինչպես և հայ հեղինակները չեկեղեցական պատմական աշխատությունները, դասակարգային կողմնապահություններ և գովանական ատկություններ են թելադրված և սողորված» (եջ 72):

Միանգամայն համաձայնվելով Իվ. Ջավախիսիլիու հետ, վոր Արսենը՝ չհիշատակելով իր աղբյուրները՝ «ձեռքի տակ է ունեցել վրացերեն, հունարեն և, մասնավորապես, հայերեն աղբյուրներ», Կ. Կեկիլիսեն (op. cit., 138—139) գտնում է, վոր «հայկական աղբյուրներից նա (Արսենը) ոգտվել է, մասնավորապես, վրաց և հայոց բաժանման ժամանակվա գրագրությունից (Գիրք բղթոց), նաև Ղազար Փարպեցի պատմությունից, քանի վոր Ղազարն էլ, ինչպես Արսենը, պարսից քաղաքականությունն է ընդգծում վրաց, հայոց և աղվանից գովանական հալածանքների ժամանակ: [Իսկ] նրա հայկական աղբյուրների մեծագույն մասը քաղկեդոնական Ֆրակցիայիցն է բղթում և այս պատճառով Արսենի աշխատությունն մեջ հարուցած հարցը կատարյալ անաչառություն է լուսաբանված»:

Ավելորդ համարելով «ժամանակագրական անհամաձայնություններ և այլն մատնանշել, որոնք այնպես կարկառուն կեցած են» Արսենի չերկասիրությունն մեջ՝ «տեսանելի ամէնուն», Ն. Ակիմյանը (Կիւրիոն կաթողիկոս վրաց, 291) վաղուց այն չեղրակացություններն էր յեկել, վոր «Արսեն ուղածին պէս հասկացած է յոյն անանունի պատմաճները և իւր ճառը յօրինած՝ ինչպէս թելադրած է իրեն ազգասիրութիւնը»:

Ըստ մեր հետազոտությունների, վորի արդյունքները իրենց ար-

առհասարակ թշուհն ունին գտած ստորև հրատարակվող մեր թարգմանութեանը կցված բազմաթիվ ծանոթութիւններն մեջ, Արսենը իր աշխատութեանը գրելիս ոգտագործել է, մի կողմից, Աբեղոսի և նմանորինակ հայ պատմիչների գործերը, վորոնք X դարուց աղբյուր են ծառայել, ի միջի այլոց, Հովհան Գրասխանակեցցուն և Ասողիկին, իսկ մյուս կողմից և, առավելապես, հուլի-բյուզանդական գրականութեան մեջ հայտնի անանուն (վորն «Սահակ՝ Հայոց Մեծաց կաթողիկոսին» վերագրվող) գրվածքը, վորը Narratio de rebus Armeniae յե կոչվում: Ընդ սմին, վերջինս էլ, հավանական է, ոգտագործված լինի հայերեն թարգմանութեամբ, քանի վոր հայկական հատուկ անունները՝ թե անձանց և թե աշխարհագրականը, չնչին բացառութեամբ, ներկայացրած է հարադատութեամբ և վնչ թե հունարեն բնագրի աղավաղումներով հանդերձ:

Ի նկատի ունենալով, վոր Արսեն Սափարացու «Վրաց և Հայոց բաժանման մասին» յերկասիրութեան միակ հրատարակութեանը, վոր տվի է Թ. Ժորդանիան իր «Քրոնիկաներ»-ի I հատորում (եջ 313—332), հեռու յե կատարյալ գիտական հրատարակութեան լինելուց, ստորև մենք տալիս ենք նույն յերկասիրութեան հայերեն թարգմանութեանը՝ գրեթե ամբողջապես կամ ուղիղ ասած, չնչին կրճատումներով (վոր դավանաբանական ֆորմուլաներին են վերաբերում), ըստ վերականգնած բնագրի, վոր մենք ունենք պատրաստած տպագրութեան՝ համաձայն մինչ որս հայտնագործված 3 ձեռագիրների, այն և Տիգրիսի նախկին յեփեղեցական թանգարանի հավաքածուի № 691 (XVII դ.), եջ 129—152, և 735 (XVII դ.), եջ 1r—10r, նաև Վրաց մեջ գրագիտութեան տարածող նախկին ընկերութեան հավաքածուի № 3270 (XIX դ.), եջ 1—16, վորոնցից լավագույնն է № 735-ը:

**ՎՐԱՑ (ՔԱՐՔԼԻԻ) ՅԵՎ ՀԱՅՈՑ (ՍՈՄԻԹԻ) ԲԱԺԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ**

... Բայց թե ինչպես հեռացան հայերը ուղիղ դավանութեանից՝ պատճառն այս է...

Հունաց (բերձենների) Արկադ թագավորի և Հայոց (Սոմիթի) Արշակ թագավորի որոք<sup>2</sup> հայերն հաստատապես հունաց (բերձենների) կրոնին ելին մասնակից, ինչպես նրանց ուսուցել էր սուրբ Գրիգոր Պարթևացին, և [հուլները] արիարար [ու] բազում ջանքերով զբաղած ունելին նրանց (հայոց) յերկիրը [աղաճեալով] պարսից ծառայութեանից, իսկ հունաց (բերձենների)

թագավորներն ոգնում ելին [նրանց] զորքով և յերբեմն էլ մեծ ուժով պաշտպան ելին կանգնած նրանց մոտ. և այսպես եր նրանց գործը: Իսկ Արկադ թագավորը, Թեոդոսի վորդին, անուշաղիբ չեղավ նրանց (հայոց) գործերի վերաբերմամբ, և պարսիկները հաղթեցին հայերին ու քշեցին իրենց յերկիրը, իսկ փախըտականները Յեկեղյաց (Ելեկեցի) [զավառից] բազմիցս անցել են հարևան յերկիրները և աղաչել Արկադին, վորպեսզի զորք ուղարկի՝ իրենց յերկիրը նվաճելու համար, սակայն տերը չլսեց նրանց աղաչանքը: Ապա հայերը հնար գտան և հարկատու դարձան պարսիկներին, և յերգումով ու յերաշխավորութեամբ հավաստիացրին պարսից թագավորին, վոր անջատվում են հուլներից (բերձեններից) և միանում նրանց (պարսիկներին). և այսու շատ ուրախացավ թագավորը, վորը մեծ խնդութեամբ և նվիրատվութեամբ վերագարձրեց նրանց յերկիրը<sup>3</sup>: Յեվ մնացին հայերը մի առժամանակ խաղաղ [և] ուղիղ հավատով:

Իսկ սատանան, վորը մահով է պաշքարում մարդկային սեռի հետ, անաստված Նեստորի աղանդակից մի ազգին զրգեց, վորպեսզի վոսկու մեծամեծ կաշառներով խնդրե թագավորից բարվոք դարձնելու Հայքը (Սոմիթի) դեպի իրենց կրոնը. և փոխեցին թագավորի սիրտը՝ հավատացնելով, վոր հայերը հենց վոր գտնեն [բարեպատեհ] ժամանակ, նորից հուլների (բերձենների) կողմն կանցնեն... Յեվ Պերոզ թագավորը<sup>5</sup> ստիպեց հայերին պաշտել անաստված Նեստորի կրոնը. իսկ հայերը կտրականապես հանձն չառան այս և դեսպանի միջոցով դիմեցին թագավորին՝ [հայտնելով.] վոր «այս չի իրագործվի վոչ միայն յերկիր, այլ և մեր և մեր դավակների գերութեան ու մահվան [զնով նույնիսկ]»: Իսկ թագավորը նորից այլ նենգութեան դիմեց և հայտնեց իր վճիռը [հայերին] հուլներից (բերձեններից) բաժանելու՝ մասին և՛ վերագարձնելով դեսպաններին՝ [առաջարկեց] անել յերկուսից մեկը. «կամ ընտրեցեք ասորական բոլոր կրոն[ներ]ից [վորևե մեկը] բացի մեկը՝ աներկիրը<sup>6</sup>, վորոնք կրոնով հուլն (բերձեն) են, կամ թողեք ձեր յերկիրը և հեռացեք մեզանից»: Ապա հայերը շատ ախրեցին այս յերկու առաջարկութեան առթիվ, վորը նրանց հոգսեր պատճառեց, և խորհրդակցութեաններ ունեցան նրանք բազում որերի ընթացքում, և հանձնեցին այս գործը Ներսես (Ներսե) կաթողիկոսին, վոր կոչվում էր «Միջին»<sup>7</sup>: Յեվ ասաց Հայոց

\* Բերած և հայերեն, սակայն վրացերեն տառերով և առանց վորևե թարգմանութեան նույնը կրկնվում է և ներքև, բայց արդեն վրացերեն հոմանիշով հանդերձ:

Թագավորն ու ամբողջ ժողովուրդը հետևյալը. «Մեզանից լավ դու  
[ինքդ] գիտես. ինչ վոր լավագույնը հրամայես հողից անքննու-  
թյան համար, կհնազանդվենք քո հրամանին»:

Իսկ նա՝ վորորմեկին (Ներսեսը)՝ հողիները հնազանդեցրեց  
մարմիններին... և ասաց. «Մեզ համար ավելի լավ է մահը, քան  
թե այս պահին կրկին վերադառնալ հունաց (բերձենների) [կողմն]  
և նորից թողնել չերկիրը և բնաջինջ լինել պանդխտությամբ»:  
Յեզվ ամբողջ նրա մտածել[ակերպ]ը բողոքական հր և դոճոզամիտ:  
Յեզվ [դեսպաններ] ուղարկեցին արտոնությամբ Թագավորի մոտ՝  
խնդրելով հակաբեկները կրոնը, քանի վոր բոլոր մյուսներին  
առավել նդովեցին: Իսկ փոքր մեղքը վերածվում է մեծի՝ պոր-  
տարուծության մեջ, ինչպես գրված է:

Իսկ Թագավորն վստահացավ և ուղարկեց նրանց մոտ հակո-  
բիկ չար[ամիտ] վարդապետներին [թվով] ինն, իբրև նենգ աղվես-  
ների, ինչպես ասաց Սողոմոն՝ իմաստունն աստուծո. և նրանք  
ապականեցին Հայքում (Սոմխիթում) սուրբ Գրիգորի վաստակը,  
վորը վոռողված էր նրա բազում չեռանդով ու արցունքներով. և  
սրանց անուններն են՝ Աբղիշո (Աբղիթո\*)<sup>8</sup>, Պետրոս Թափիչ<sup>9</sup>,  
չար[ամիտ] Սիմեոն, Հակոբ,—վորոնք իրենց հետ բերին Փիլոքսե-  
նոսի (Փիլաքսոսի)[և] Հուլիանոս Աղիկառնացիո գրությունները,—  
նաև Տիմոթեոս Կուզ<sup>10</sup>, Սևերոս [և Փիլոքսենոս] Նարբոկային\*\*<sup>11</sup>:  
Յեզվ ժողով դումարեցին քաղաք Դվինում, ուր և ընդունեցին  
«խաչեցար»ը<sup>12</sup>... և այսու հետո անուղիղ և ճշմարիտ դավանու-  
թյունից և ոտարացան սուրբ և մեծ առաքելական կաթողիկե  
չեկեղեցուց... և նույն Դվինում հաստատեցին առաջ[ավ]որ»-ն<sup>13</sup>,  
ասելով. «Այս է մեր հավատո առաջին որը»<sup>14</sup>: Յեզվ չարը չարին  
ավելացրին ու նդովքով անիծեցին իրենց [գլուխը], քանի վոր  
չմիաբանեցան Քաղկեդոնի ժողովին<sup>15</sup>...

Յեզվ չարը Վրաց և Հերաց կաթողիկոսն Կյուրիոն (Կվիրիոն)  
Մցխեթացին<sup>16</sup> տեսավ, վոր հայերն Աբղիշո (Աբղիթո) Ասորվո

\* Յեկեղեցական վրացերեն այբուբենում ք և շ տառերն իբրև նման են.  
ուստի և հաճախ շփոթության հետևանքով տեղի ունի անունների ազավազույն.  
Աբղիշո-Աբղիթո, Աբղակ-Աբբակ, Արտաշիր-Արտաբիր և այլն:  
\*\* Բնադրում՝ «Տիմոթեոս Կուզ և Սևերոս Նազիկեցի (Նազիկեի)», sic.  
յեթե «Նազիկեի»-ն կարգավ «Նաբիկեի», կստացվի «Նաբիկեցի», վորը մոտ է  
«Նարոկա» և «Նարբոկա»-ին, այսինքն «Նարբոկացի»-ին. իսկ վերջինս վոչ թե  
Սևերոսի, այլ Փիլոքսենոսի հիշատակության հետ պիտի կապել, վոր բացակա-  
յում է վրացերեն բնագրում և վորը մենք վերականգնել ենք, անկունավոր փա-  
կագծի մեջ գնելով:

ձեռքով ժողով դումարեցին քաղաք Դվինում և նդովքով հեռացան  
ս. կաթողիկե չեկեղեցիո դավանությունից ու բաժանվեցին չորս  
պատրիարքությունից, և դրժեցին այն ուխտին, վոր սուրբ Գրի-  
գորը դրել էր Կեսարիայի չեկեղեցուց հավիտյանս չբաժանվելու՝  
այնտեղից առնելով չեպիսկոպոսական ձեռնադրությունն չորից  
Հայոց (Սոմխիթի) համար<sup>17</sup>, Հայքն (Սոմխիթն) հրաման ստա-  
ցավ պարսից Թագավորից, վոր [իրենց] չեպիսկոպոսները իրենք  
ձեռնադրեն: Աբղ, յերբ այս ճշմարտությամբ լսեցին Կյուրիոն  
(Կվիրիոն) [Վրաց և Հերաց] կաթողիկոսն, Աբաս (Աբազ) Աղվա-  
նից (Հերաց sic) կաթողիկոսն<sup>18</sup> և Գրիգոր Մյունչյաց չեպիսկո-  
պոսն<sup>19</sup>, մեծ վեճ ծագեց Հայոց (Սոմխիթի) և Վրաց (Քարթլիի)  
միջև: Վրացիք ասում էին, վոր «սուրբ Գրիգորը Հունաստանից  
բերել ավեց մեզ [այն] հավատքը, վորը՝ իբրև նրա սուրբ դա-  
վանություն՝ դուք թողեցիք և չենթարկվեցիք Աբղիշո (Աբղիթո)  
Ասորվույն և այլ չար հերձվածողներին... և չհնազանդվեցիք սուրբ  
Գրիգորի դավանությանը»<sup>20</sup> և կիրք հատկացրեք անչարչարելի  
չերբորդությանը, ինչպես ձեզ ավանդեց ամբարիշտն Պետրոս Թա-  
փիչ Անտիոքացին»: Ապա հայերն ամբաստանեցին վրացիներին  
(Քարթլին) պարսից Թագավորի մոտ, թե նրանք հոռոմոց հա-  
վատքն են դավանում: Յեզվ մեծ վեճ տեղի ունեցավ հայոց և  
վրաց միջև Ներսես (Ներսե) հայոց կաթողիկոսի որոք և [նույն]  
Ներսեսի մահվան պահին: Ներսեսը (Ներսեն), վոր կոչվում էր  
միջին (չուալ), չարությամբ փոխվեց այս աշխարհից (կյանքից),  
և նրա աթոռը գրավեց Աբրահամը<sup>21</sup>: Յեզվ քշեց Կյուրիոն՝ Վրաց  
(Քարթլիի) կաթողիկոսն՝ Մովսես Յուրտավացուն<sup>22</sup> իր աթոռից,  
վոր հաստատված էր սուրբ Շուշանիկի մասունքներին կից՝ Հայ-  
քում (Սոմխիթում)<sup>23</sup>, և Աբրահամը պահանջեց Կյուրիոնից նրա  
աթոռը. բայց վերջինս չխոնարհվեց<sup>24</sup>: Յեզվ խորացավ վեճը նրանց  
միջև<sup>25</sup>, և դիմեց Աբրահամը Աբարատյան [չերկրի] քահանա-  
ներին, ասելով. «Կամ նդովեցեք ժողովն Քաղկեդոնի, կամ հե-  
ռացեք ձեր բաժնից»: Յեզվ վորոնք հնազանդվեցին, ինչպես  
գրված է, մեծարելի դարձան... իսկ վորոնք չհնազանդվեցին,  
հանվեցին իրենց բաժիններից և ոտարության մեջ մահացան: Աբ-  
րահամից հետո [կաթողիկոս] նստեց Կոմիտասը (Կոմիտոսը)<sup>26</sup>,  
վորն ընչավետ էր և հարկատու զգեստների և գրաստների և վորն  
ազնիվ բյուրեղաքարով էր զարդարում իր դավազանի ծայրն  
(գլուխն): Սա ամենից առավել ևս խորացրեց վեճը Քաղկեդոնի  
ժողովի մասին և յոթն չեպիսկոպոսություն գիջեց Աղվանից (Հե-

րաց) կաթողիկոսին, վորի [սիրտ]ն գրավեց և մերժել տվեց ժողովը Բաղկեդոնի. և խաչ շնորհեց Սյունյաց չեպխակոպոսին, վորպեսզի խաչով ընթանան նրա առաջ՝ ինչպես կաթողիկոսի<sup>27</sup>, և ընդարձակեց նրա բաժինը, և ապա այլ չեպխակոպոսներին ել ընդլայնացրեց նրանց բաժինները, և ոչսպես ամբողջ Հայքը (Սոմխիթը) միացրեց Բաղկեդոնի ժողովի ընդդեմ: Յեվ Մայրագոմեցի (Մայրեգուեմեցի) վոմն անիծյալ Հովհաննիս, վորն, չերեակալեցեք, վարդապետ կոչվեց, հակաճառական գրություններով զինեց Բաղկեդոնի սուրբ ժողովի ընդդեմ<sup>28</sup>: Յեվ սրան ուխտեց [Կոմիտասն] բազմել իրենից հետո իր աթոռի վրա<sup>29</sup> և մեկնաբանեց հերձվածողական գրություններն Տիմոթեոս Աղեքսանդրացիո, վորը Կուզ կոչվեց<sup>30</sup>, և Պետրոս Թափեչինը, վորը Գալլ կոչվեց<sup>31</sup>, և Սեբրոսի (Սեբրոսի) և այլ հերձվածողների. և [այս գրություններն] մակագրեց [այնպես], իբր թե ուղղափառ վարդապետները՝ սուրբ Սահակի և Մովսիսի՝ ճառերն են, և այսպիսի կեղծիքով հավատացրեց ամբողջ չերկիրն Հայոց (Սոմխիթը)<sup>32</sup>:

Յեվ շատ ընթերցվածքներ հորինել տվեց [Կոմիտասն] և իր անվանը վերագրեց<sup>33</sup>, նուչնպես և առաջին [հայտերի] կանոններն ու կարգերը փոխեց, նրանց տեղը դնելով շեղը, վորով հինը խանգարվեց և նորն ել չհաստատվեց. սակայն ամեն մարդ իր համար ե հոգս քաշում՝ մինչև այժմ: Յեվ այս բոլորը [Կոմիտասն] իրագործեց կատաղած Հովհան Մայրագոմեցիո (Մայրեգուեմեցի) ձեռքով<sup>34</sup>... Ապա [կաթողիկոս] նստեց վոմն Բրիտտափոր, վորը թշնամի չեր Մայրագոմեցուն (Մայրեգուեմեցիին), և տրամեց Հովհաննի: Յեվ չերբ ինչ-ինչ պատճառով գահընկեց արին [Բրիտտափորին]<sup>35</sup>, Հովհանն ուրախացավ, սակայն այս դեպքումն ել նա չարժանացավ աթոռին, քանի վոր այն գրավեց Յեզը (Եզրան), վորն առավել ևս հուզեց նրա (Հովհանի) նենգ հոգին... Յեվ այսպիսի նենգությամբ մեծարեցին վերոհիշյալ Կոմիտասին (Կոմիտասին), վորն տիրեց սուրբ Գրիգորի մասունքներին. և Մայրագոմեցիո (Մայրեգուեմեցիին) ձեռքով Հայոց (Սոմխիթի) չերկիրը լցվեց մահուչափ խաբրայական ուսմունքով<sup>36</sup>:

Այստեղ արգեն կատարվեց սուրբ Գրիգորի տեսիլքը, վոր նրան հայտնագործեց սուրբ հոգին, իբր վոչխարների մի մասը՝ կերպարանափոխվելով և գայլերի վերածվելով՝ հարձակվեց վոչխարները վրա և անողորմ պատառտեց նրանց: Նմանապես կատարվեց սուրբ Սահակի տեսիլքը, վորը տեսավ վոսկե գունդ և նափորտ սուրբ սեղանի վրա, քանի վոր Արշակունյաց (Արբակ-

յան\*) թագավորության անկումով բարձավ ե քահանայ[ապետ]ությունն սուրբ Գրիգորի զարմիցն<sup>38</sup>... Այսպես նրանք հարեցան Մայրագոմեցիո (Մայրեգուեմեցիին) վարդապետությանն:

Սակայն վոչ աննշան ուխտ տվեց Սոսրով (Սուսարո) թագավորը Ներսես (Ներսես) կաթողիկոսին, վորը կոչվում եր Շուալ, այսինքն ե հայերեն «միջին», վորով խախտեց նրա [առանց այն ել] անխոհեմ սիրտը: [Յեվ Ներսեսը] գումարեց առաջին ժողովը Դվինում, վորով [հայերը] հեռացան կրոնով հուչներից (բերձեններից) ու Յերուսաղեմից:

Իսկ ամբողջ Բարթիլիս և Չորրորդ Հայքը (Սոմխիթը) հրաժարվեցին հայերից քահանայական ձեռնադրությունն առնելուց: Իսկ աղվաններն (հերացիք) ու սյունեցիք մի առժամանակ հեռացան և կրկին հարեցան Ներսեսին<sup>39</sup>, վորն իր մարուքը վոսկվով եր ներկում<sup>40</sup>: [Ապա] ժողով գումարեց հայոց Հովհան կաթողիկոսն Մանազկերտում և ջրախառն [գինին] ու խմորահացը վտարեց սուրբ խորհրդից՝ հաստատելով բաղարջն ու անխառն [գինին]<sup>41</sup>...

Յեվ բազմատեսակ ելին նրանց (հայոց) հերձվածքները՝ Սաբելիանոսի, Հակոբի և Տիմոթեոս Կուզի հետևողների, վորոնց ախար չուրացրել էին մանիքեյացիք...

Յեվ լուր տարածվեց, վոր Հայքը (Սոմխիթը) հեռացավ սուրբ Գրիգորի զավանությունից և Կեսարիայից ձեռնադրությունն [առնելուց]. ինչպես վերջինս եր ուսուցել<sup>42</sup>: Յեվ [դեսպաններ] ուղարկեցին [հայերն] Ներշապու Տարոնի չեպխակոպոսի մոտ, վորին պարսից թագավորն եր նշանակել հանդերձ չերկու ընկերներով, և հայտնեցին, վոր «բոլորը [դավանա]փոխ են չեղել՝ ընդունելով Նեստորի աղանդն և հաստատելով Բաղկեդոնի ժողովը, և մենք չունինք աթոռ, ուր ձեռնադրություն կատարենք. ուստի և դիմում ենք թո բարեպաշտությանն, վոր մեզ չեպխակոպոսներ նշանակես, քանի վոր բոլորը ճանաչեցին նրանց՝ աղանդի մեջ ընկնելը»:

Յեվ քանի վոր պարսից թագավորները ստիպում ելին հայերին, վոր հեռանան հուչաց (բերձեններին) զավանությունից, ինչպես վերև հիշեցինք, և վորպեսզի կրոնափոխությամբ նրանց միջև թշնամությունն ընկնի, և այսու առավել ևս հնազանդ լինեն պարսից պետությանն, մեծամեծ կաշառներ խոստացան հայոց վար-

\* Տես 36-րդ յերեսի \* ծանոթությունը:

դապեհաներին իրագործելու այս, յերբ բարձավ քահանայապետությունն Գրիգորի զարմիցն<sup>43</sup>:

Յեվ հենց վոր ներշապու չեպիսկոպոսը տեղեկացրեց ներսես (Ներսես) կաթողիկոսին, վոր եր Աշտարակեցի (Աշխարակեցի?)<sup>44</sup> և չար հերձվածող, և վոմն Պետրոս Քերզողին<sup>45</sup>, այլ և ուրիշ յեպիսկոպոսներին և ազատներին (ազնվականներին), հրամայեցին յերկրորդ մեծ ժողովն դումարել նույն Դվինում<sup>46</sup> նույն Ներսեսի [կաթողիկոսության] յերկրորդ տարին, Հուստինիանոս (Իստվինիան) թագավորի տասնուչորսերորդ տարին, Սոսրով (Սուսարո) պարսից թագավորի յերկրորդ տարին, այն տարին, յերբ վկայեց սուրբ Յիդաիրուզիստը (Աղիւք-բուզիստը)<sup>47</sup>. և կրկին նշովեցին նույն սուրբ ժողովն Քաղկեդոնի<sup>48</sup>, վոր կոչեցին նեստորական՝ համաձայն անաստված Արքիշոյի (Արքիբոյի). և նույն թվին յերևան հանեցին մեկնողական գրությունն Տիմոթեոս և Փիլոքսենոս (Փիլաքսոն) հերձվածողների, վորոնք ասորի եյին և առաջինները յեղան, վոր գրեցին Քաղկեդոնին ու Քրիստոս աստուծո յերկու բնությանն ընդդիմադրելու մասին. և Կուզի գրվածքին<sup>49</sup> ստորադրվեցին իրենց իսկ մեռցնելու համար և ասացին «մի բնություն բանին աստուծո և մարմնոց», և անմահական բնությամբն խաչեցյալ և մեռյալ Քրիստոսն քարոզեցին, այսինքն՝ «խաչեցյալ» ավելացրին «սուրբ աստված»-ի մեջ, վոր ե «խաչեցար», համաձայն Պետրոս Անտիոքացի<sup>50</sup>, վոր Սարգիստի (Սարգիս) ախտով եր վարակված: Յեվ նշովքով կրկին սահմանեցին ուղիղ դավանությունից բաժանումը և վերոհիշյալ հերձվածող վարդապետներին ուղարկեցին՝ ամբողջ Ասորիքում ավետելու, վոր միաբանությամբ հավիտյանս ընդունել են նրանց ազանդն<sup>51</sup>:

Յեվ իրենց մետրապոլիտ կացուցին մահագործ (մահաձեռն) Աղիկառնացի և մասամբ Արքիշոյի (Սրբիբոյի) կողմնակից [համարվող] մեկին:

... [Յեվ] հեռացան ճշմարտությունից, վոր ուղիղ սովորել եյին սուրբ Գրիգորից:

Յերեք տարի անց Քաղկեդոնի ժողովից հետո սուրբ Սահակն ու Մաշտոցը (Մաստոցն)<sup>52</sup>, Գրիգորի շառավիղները (թոռները), և նրանց բոլոր աշակերտներն ու վարդապետներն՝ առաջինները մեկնաբանեցին Դևոնդ (Լիոնտի) և Հովսեփ Հայոց (Սոմխիթի) վարդապետների և այլ անթիվ սրբոց [վկայա]բանությունները (գրքերը), վորոնք բարի (սուրբ) սերմ[եր] ցանեցին նրանց (հայոց) մեջ<sup>53</sup>. Իսկ նրանք (հերձվածողները) ատրաշեկ տատասկով դիտ-

մամբ խոցեցին նրանց հոգիներն ու անմեղ ժողովրդին. և ինքն Մովսես Քերզողն [նախա]գգուշացրեց նրանց կործանումը<sup>57</sup>, բայց [հերձվածողները] նրան ել չլսեցին:

Սրանից հետո անցավ մի քանի ժամանակ, [և] մեռավ Վահան Մամիկոնյանը (Մամիկոնիին), վորն իր քաջագործությամբ գրավեց պարսիկներից մարդպանությունն, ձեռք բերեց քրիստոնյաների իրավունքները, Տրդատ (Թրդատ) թագավորից սահմանված՝ յեկեղեցական և չքավորաց կարգերն, գավառներն վերադարձրեց ու առանց հարկի ազատեց<sup>55</sup>: Այս ժամանակից պարսից մարդպանները գրավեցին Հայքն (Սոմխիթը), և քրիստոնյական կարգն արհամարհեց ու յեկեղեցական վարչապետությունն վերացավ, և ազատների (ազնվականների) իշխանությունն սապալվեց պարսից մարդապաններից, և կաթողիկոսներն ու յեպիսկոպոսները ճըջմարտությունից շեղվեցին և հանդգնություն սովորեցին պարսիկներից ազատների (ազնվականների) ընդդեմ [գործելու], և գավառների հարկն [եւ] իրենք եյին վճարում՝ հանձնելով յերկիրն յեպիսկոպոսներին ու քորեպիսկոպոսներին, վորպես պարսից թագավորության հյուներին:

Յեվ կաթողիկոսներից ու յեպիսկոպոսներից վոմանք վորդեգրեցին պարսից թագավորներին և վորդեգիր եյին անվանում կավատին ու Սոսրովին (Սուսարոյին), վորի պատճառով կառավարության իրավասությունն յուրացրին և վարվում եյին վոչ թե համաձայն ճշմարտությանն որինաց, այլ ըստ իրենց քմահաճույքի, և յեկեղեցիների պետքերը սկի յեկեղեցիների համար չեյին սահմանված, այլ իրենց ծառայեցնելու նպատակով, [վոր] և մարդկանց ցույց տալու համար ցիրուցան եյին անում. [և] այս [պատճառ]ով բոլոր յեպիսկոպոսներն ու բոլոր վանահայրերն՝ անաստված թագավորների հաճությամբ՝ աստուծո զայրույթն հարուցող ունայն դանձումների յետևիցն ընկան: Յեվ ապա ազատներն (ազնվականներն) ու զինվորականներից վոմանք՝ նրանց որինակին հետևելով՝ միանդամայն հեռացան սուրբ Ներսեսի<sup>56</sup> և սուրբ Սահակի<sup>57</sup> սահմանված կանոններից: [Ձե] վոր Վահան Մամիկոնյանի (Մամիկոնիի) որոք վորոշվեց՝ բոլոր մեծամեծների տներում տարին մի անգամ տոնել սրբերից մեկի հիշատակը, վորպեսզի սիրո սեղանով (ագապով)<sup>58</sup> մխիթարվեն նրանց տներում ի փառաբանություն աստուծո՝ չքավորները, տկարներն ու ցավազարները, վորերն ու տնանկները: Այս բոլորը նրանք վերացրին իրենց սեպհական գանձումների համար, և խանգարվեց ու խախտ-

վեց հոգեվորական բոլոր բարի սովորույթն ու կարգը, և որեցոր հաստատվեց չարն, և յեպիսկոպոսարանները դարձան կուսաներ. և չերը նախարարները գնում ելին յեպիսկոպոսական դուռն, ժամանակ չեյին գտնում աշնտեղ մտնելու և ամթալի վերադառնում ելին ինչպես պարսից մարդպանի դռնից և ավելին<sup>59</sup>: Այս [պատճառ]ով այս մեծ անպատվությանը չհանդուրժեց Վարդան Մամիկոնյանը (Մամիկոնը), վորը Չոխ<sup>60</sup> եր կոչվում, աչն ե «կամակոր» (sic), և նրա ազգական ուրիշ նախարարները, վորոնց անպատվել ելին, սպանեցին վոմն պարսիկ Սուրեն մարդպանին՝ նրա տունը կրակի յենթարկելով, և ընտանիքով հանդերձ փախուստի դիմեցին դեպի Կոստանդնուպոլիս: Գնալով աշնտեղ, նըրանք բարյաց[ակամ] ընդունելություն գտան Հուստինիանոս (Իստվինիան) թագավորի կողմից: Սակայն նրանք չմիաբանեցան հուլների (բերձենների) հետ. և թագավորը դարձացավ և հարցրեց պատճառը: Յեվ նրանք ասացին, վոր «վեճ չեղավ Քաղկեդոնի ժողովի մասին, վորը մեր վարդապետները չընդունեցին»: Յեվ թագավորը հրամայեց կանչել Հայոց (Սոմխիթի) վարդապետներին ու յեպիսկոպոսներին, վորպեսզի հարցուփորձի յենթարկվեն և ճշմարտան ճանաչեն: Յեվ գումարվեց մեծ ժողով Կոստանդնուպոլսում, ուր մեծ քննություն արին և ճշտվեց այն, ինչ վոր իրավացի չեր, և բոլորը միաբերան ընդունեցին ժողովն Քաղկեդոնի, և ամբողջ Հայքն (Սոմխիթն) իսկ անիծեց և նզովեց նրա կշտամբողին և՛ միանալով հուլների (բերձենների) հետ՝ ինչրեց թագավորից բարվոք [ընդունել], վոր նրա (Հայոց) ծախքով շինվի Սոփիայի արևմտյան դուռն, վորն աչն պահին ելին կառուցում: Յեվ թագավորն [իրավունք] շնորհեց կատարելու նրանց (հայերի) բաղձանքը, և նրանք տվին շինության գինը՝ մաքուր արծաթ հարյուր հազար (տասը բյուր) և կոչեցին այն «դուռն Հայոց», [ինչպես աչն կոչվում ե և] մինչ որս<sup>61</sup>:

Յեվ՝ վերադառնալով նույն ժողովից՝ [ժողովական հայերը] հասան Հայք, և վոմանք ջերմեռանդությամբ ընդունեցին [այն] և հնազանդվեցին միաբանությանն, իսկ վոմանք՝ իբրև ոճեր՝ առավել ևս ուժ տվին ժողովրդի գրգռմանն ու վրդովմունքին՝ Մալբազոմեցի (Մալբազոմեցի) գրգամբ. և այս յեղավ Հովհան կաթողիկոսի որոք:

Մրանից հետո Մորիկ (Մավրիկ) կայսրն<sup>62</sup> [Պոստոլի մոտ] ուղարկեց Հայոց (Սոմխիթի) մեծ գորավար Մուշեղ (Մուշեղ) Մա-

միկոնյանին (Մամիկոնյանին), և Հայոց (Սոմխիթի) թագավորությունը տվեց Պոստոլին (Պուսարոյին)<sup>63</sup>:

Իսկ ամբողջ [Հայքը՝ սկսած] Դվինից՝ Պոստոլը (Պուսարոյը) յենթարկեց կայսեր, և խաղաղություն ընկավ նրանց միջև. իսկ Մուշեղին (Մուշեղին) մեծամեծ ընծաներ տվեց և ուղարկեց արքայանիստ [քաղաքն]: Յեվ հասավ Մուշեղն (Մուշեղն) Կոստանդնուպոլիս խաչվերացի տոնին<sup>64</sup>, և [ինչպես] ինքը, [նույնպես] և նրա ուղեկիցները չհաղորդվեցին հուլների (բերձենների) հետ. և հարցրեց թագավորը [պատճառի մասին] և պատասխանեցին, վոր «Քաղկեդոնի ժողովի և Քրիստոսի յերկու ընդթյան համար ե»:

Իսկ թագավորն ասաց. «Քեզանից (Մուշեղից) առաջ Վարդանն ու նրա [կողմն]ից ազատները (ազնվականները) ձեր իսկ քահանայապետների ձեռքով ու գրոց բազմազան քննությամբ ընդունեցին [ժողովն Քաղկեդոնի]»: Մուշեղն (Մուշեղն) պատասխանեց. «Քուցե՞ տգիտությամբ կամ ձեզանից յերկու կրելով [արին այդ]. իսկ յեթե քրիստոսասեր արքայությունդ հրամայե և ճշմարտությամբ լինիս միջնորդ, դու սրա մասին մեր վարդապետներից ճշմարտոն կգանես»:

Յեվ հրամայեց թագավորն Հայոց (Սոմխիթի) կաթողիկոս Մովսիսին<sup>65</sup> և բոլոր յեպիսկոպոսներին, վորպեսզի դան Կոստանդնուպոլիս և նորից քննեն ու հաստատվի ճշմարտան:

Բայց Մովսես կաթողիկոսը չհամաձայնվեց դնալու, այլ այսպես պատասխանեց դեսպաններին. «Չեմ անցնի Ազատ դետն<sup>66</sup>, վոր ե սահման պարսից, չեմ ուտի հուլաց (բերձենների) թըխվածքը և չեմ խմի նրանց թերմոնը<sup>67</sup>»: Նույնպես և Վասպուրականի յեպիսկոպոսները, վորոնք պարսից պետության ներքո ելին, չկամեցան գնալ: Միմիայն Տարոնի յեպիսկոպոսն ու բոլոր [այն] յեպիսկոպոսները, վորոնք հուլաց (բերձենների) ձեռքի տակ ելին, շտապ կերպով ուղեվորվեցին դեպի արքայանիստ [քաղաքն] և՛ կրկին անգամ քննելով՝ նորից հաստատեցին ժողովն Քաղկեդոնի բոլորը միաձայն Մորիկ (Մավրիկ) թագավորի առաջ, և խոստովանեցին յերկու ընդթյուն Քրիստոսի ճշմարտ, նույնպես և միաբանության յերկու մեզրեցին, և վերադարձան: Բայց չերը նրանք չեկան Հայք (Սոմխիթ), նրանց [վորոշումն] չընդունեց[ին] Մովսես կաթողիկոսն ու այլ յեպիսկոպոսները, վորոնք պարսից մասունքն ելին<sup>68</sup>:

Յեվ բաժանվեց Հայքը (Սոմխիթը), և սրանք (քաղկեդոնիկները) կաթողիկոս կացուցին Հովհան Կողովրտեցուն<sup>69</sup>, և սրանից

հետո տասնէկերկու տարի՝ մինչև Մորիկ (Մալրիկ) թագավորի մահը՝ բազում ընդդիմադրութեամբ եր ընթանում [Հայքը] Քաղկեդոնի ժողովի ու մեր տեր աստված Քրիստոսի չերկու բնութեան պատճառով:

Յեւ վերոհիշյալ Արբաճամ կաթողիկոսն քեց Ա[յ]րարատից [Քաղկեդոնի ժողովի կողմնակից] քահանաներին և Հովհան՝ վանահորն սուրբն կաթողիկեցին, վոր կոչվում է նաև Շողակաթ (Շուլկաթ), և [վանահայրերին] սուրբն Հռիփսիմեցի, և՛ Ոչականի (Ուշականի) և՛ Յեղվարդի (Ելիվարդի) և՛ Արամոնաց և՛ Գառնիի և բոլոր վանքերի ու ամբողջ Ա[յ]րարատի, իսկ վոմանց հարկադրեց նորովի սուրբ ժողովի [Քաղկեդոնի] 70:

Յերեք տարուց հետո պատերազմ ծագեց Բասնում (Բասիանում), ուր հուլները (իոնները) պարսկեցին պարսկեցիներից, և [վերջինները] գրավեցին Կթուրի քաղաքն [Հաշտենից. իսկ չորրորդ տարին անաստված Փոկա կայսեր, վորը սրով սպանեց Մորիկ (Մալրիկ) թագավորին ու նրա] վորդոց, Կարնո (Կարնու) քաղաքն [ևս] հանվեց ասպարեզից:

Սուլն թվին Ահմադը գրավեց [նույն] Կարնո (Կարնու) քաղաքն [գերելով նա] և Հովհան կաթողիկոսին, վորը [Հայքի] հունաց (բերձեններ) մասունն եր 71, և սուլն թվին Մովսես կաթողիկոսը բաց թողեց (քեց) իր ձեռքից Հովհանի կողմնակից քահանաներին, վորոնք գնացին՝ մի մասը հուլների (իոնների) մոտ, մյուսը՝ Տայք (Տաո) 72, և սրանց կոչում են (?) «Շողակաթ» (Շուլկաթ):

Ինչպես սուրբ Գրիգորին չերևաց տեսիլքում, վոր չերկինքը բացվեց և լույս իջավ այն տեղում 73 [նույնը կատարվեց այժմ]: Յեւ մի առժամանակ անց Հերակլ կայսրը 74 չեկավ Հայք (Սոմխիթ) և՛ տեսնելով Հայոց հերձվածքն՝ շատ ցավեց նրանց կործանման առթիվ, [վոր հետևանք եր նրանց իսկ] ահամա շեղման. և հրամայեց գումարել մի մեծ ժողով Հայոց (Սոմխիթի) յեպիսկոպոսներին ու վարդապետներին, և գիր գրեց Յեզր (Եզրա) կաթողիկոսին 75 ու ազատներին (ազնվականներին), վորպեսզի ժողովեն Կարնո (Կարնու) քաղաքն 76 և քննեն հավատքը, Քաղկեդոնի ժողովի առթիվ, և հայերը ճշմարիտ ճանաչեն Քրիստոսի չերկու բնութեանը:

Յեւ չեկան բոլորը միասին թագավորի մոտ և յերրորդ անգամ մանրամասն քննեցին ու հաստատեցին ճշմարիտն և հնագանդվեցին հայերն չերդումով [ու] ստորագրութեամբ, վոր նրա

(Քաղկեդոնի) մասին վիճելով՝ վոչվոքի չեն ընդդիմադրի. բայց չերբ Դվին վերադարձան, նույն կործանիչ աղանդին չենթարկվեցին, վորովհետև նրանց (աղանդավորների) վարդապետութեան տեղն այն եր, ուր ամեն ինչ ճշմարիտն խեղաթյուրելով է ասվում:

Իսկ նույն Մայրագոմեցին (Մայրեգուեմեցին) գրգռում եր վոմն հերձվածող վանականներին (մոնողոմներին) և Ստեփանոս (Ստեփանն) Գարդմանից յեպիսկոպոսին 77 և Մաթուսաղա (Մաթուսալա) Սյունյաց քերդոլին 78 և այլ պատահական մի վոմն քահանայի, վորոնք ներկա չեյին չեղել այն (Կարնո) ժողովին, վորպեսզի չհաղորդվեն Յեզր (Եզրա) կաթողիկոսից և [բոլոր ներանցից] վորոնք նրա հետ եյին միացել: Մի քանի որից հետո Ստեփանոս (Ստեփանն) յեպիսկոպոսն ու Մաթուսաղան (Մաթուսալան) չեկան Յեզր (Եզրա) կաթողիկոսի մոտ և հաղորդվեցին նրա մոտ: Հենց վոր չար[ամիտ] Մայրագոմեցի (Մայրեգուեմեցի) վանականը լսեց, վոր նրանք միացան Յեզրին (Եզրային) և Մաթուսաղան (Մաթուսալան) Սյունյաց յեպիսկոպոս ձեռնադրվեց, մեծ վիրավորանքով հայնոյում եր Ստեփանոսին (Ստեփաննեցին) և Քերդոլին, ասելով. «Փոքր է Յեզրի (Եզրայի) ուրացումը ձեր սխալմունքի հանդեպ, քանի վոր նա՝ թագավորից չերկուց կրելով կամ գիտուն մարդկանց հետ մերձենալով՝ ուրացավ կրոնը, իսկ դուք սնափառութեան ու շողոքորթութեան համար անբուժելիորեն կործանվեցիք»:

Հենց վոր Յեզրը (Եզրան) իմացավ այս, գլուխը այն չար[ամիտ] վանականին և բոլորի ներկայութեամբ ասաց. «Յես չերեք անգամ կանչեցի քեզ և չերեք անգամ Մաթուսաղային (Մաթուսալային) և Ստեփանոսին (Ստեփաննեցին), — քանի վոր դուք եք չերկրիս] վարդապետներն ու գիտնականները, — վոր դուք և պատասխան տայիք թագավորին, բայց դուք չեկաք, և այժմ մեր վորոշմանը հանդիմանորեն ընդդիմադրում ես, մեր [դեմ], վորոնք գրեքից ու վարդապետներից ճշմարտապես քննեցինք արդարացին, ընդունեցինք տեր մեր Հիսուս Քրիստոսի չերկու բնութեանը կատարյալ աստվածութեամբ և կատարյալ մարդկայնութեամբ, մի դեմք և մի պատկեր, նախախնամութեամբ անբաժան. և առաջին սուրբ հայրերի գրությունները, վոր կարդացինք, նույնն եյին վկայում. և մենք հնագանդվեցինք նրանց (հայրերի) հրամաններին և տրամադրվեցինք դեպի բարին. և այժմ վոչինչ չե անցած՝ աստվածային գրությունները մեզ մոտ են, վերցնենք և ճշմարիտն սովորենք»:

Յեւ վրոյց վկայութեամբ փակեց նա (Յեղըը) բերանը թե վոչ, [վանականը] գարշահոտութեամբ վորձկաց՝ նման չար հերձվածքին, և ասաց. «Ի վիճակի չեմ ընդունել այդ գիրը, վորովհետև սուրբ գրքերին նստորականներն են այդ ավելացրելը»: Յեւ գնաց բազում մարդկանց գալթակղեցնելու, և նրա աշակերտներն իր գյուղի անունով «Մայրեվանեցի» (Մայրենեի) եյին կոչում նրան<sup>79</sup>:

Իսկ նա (Մայրագոմեցին) գնաց Հունաստան նույն ընդդիմադրութեանն ցուցց տալու համար և մի փոքր [հունարեն] լեզուն [եւ] սովորեց, վորպեսզի գրանով ավելի ևս հալատացնել տա [իրեն] հայերին, և վերադարձավ Հայք (Սոմխիթ). առաջվանից վատթար տարածում եր հերձվածքն և աշխատում եր՝ մեծամեծ մարդկանց աշակցութեամբ ու հերձվածողների ցանկութեամբ՝ Յեղըից (Եզրայից) հետո գրավել նրա աթոռը, վոր նրան խոստացել եյին Քաղկեդոնի ժողովին ընդդիմադրութեան ցուցց տալու համար<sup>80</sup>:

Իսկ Յեղըից (Եզրայից) հետո աթոռը գրավեց Ներսես (Ներսես) Իշխանցին, վորը կամոքն աստուծո արժանի և ուղղահավատ մարդ եր. և բոլորովին հուսախար չեղավ այն նենգ[ամիտ] Հովհան վանականը, նամանավանդ նրա համար, վոր Ներսեսին (Ներսեսին) տեսել եր Հունաստանում հաղորդվելիս Կոստանդին Փոքր թագավորի հետ, և վոչվոք չեղավ ընդդիմադրելու և ասելու, վոր «Քաղկեդոնից հետո Ներսեսն (Ներսեսն) եւ Յեղըի (Եզրայի) պես սխալվեց»: Այս պատճառով եւ Ներսեսը (Ներսեսն) կանչեց նրան, և բազում յեպիսկոպոսների և վարդապետների ու ազատների (ազնավականների) ներկայութեամբ մեծ քննութեան արին նույն վեճի առթիվ, և նրանք բոլորը վճիռ կայացրին կարգալուծ անել նրան (Մայրագոմեցուն) [և քշել] յերկրից իբրև խաբրբայի. և սուրբ Ներսես (Ներսես) կաթողիկոսն ցասմունքով արտաքսեց նրան [Հայքից]<sup>81</sup>:

Յեւ թեոզորոս՝ Ռշտունյաց տերն, իշխանն Հայոց (Սոմխիթի), պղնձե աղվեսն տաքացրած նրա ճակատին կայցրեց իբրև նշան հերձվածքի, հանդերձ նրա չերկու ընկերակից — վանականներով (մոնողոններով): Ապա նա փախուստի դիմեց դեպի Կովկասյան լեռները և այնտեղից շուտով վերադարձավ, վորովհետև լեռնականները նրան չեյին ընդունել, քանի վոր վերջինները կռապաշտներ եյին, և անցավ Կամբեչ[ովան]՝ տիրելով փոքր ձորին, վոր «Հայոց (Սոմխիթի) ձոր» ե կոչվում, և շատերին աշակերտ վերցրեց վոչ այնքան այդ [ձոր]ում, վորքան Կուր [գետի] հայկուլս՝

Ալլրարատում, Գարդմանում, Չորոփորում (Չորոթորում) և Սոմխիթում և շատերին վանական (մոնողոն) դարձրեց նույն անկանոն վարդապետութեամբ. և լցվեց չերկիրը վորոմով:

Յեւ Ներսես (Ներսես) կաթողիկոսի մահից հետո, Անաստաս կաթողիկոսի որոք<sup>82</sup>, [Մայրագոմեցին] յեկավ Ալլրարատ՝ աշակերտալնեբով հանդերձ:

Յեւ Անաստասի մահից հետո [նույնը] դադանի պես ներսխուժեց Հայք (Սոմխիթ)՝ առաջին [հերթին] իր իսկ դավառն Բջնի (Բիջնի) և Մայրեվանքը՝ նույն ընդդիմադրութեան [փափագով] լի. և հերձվածքով մեռավ այնտեղ այդ՝ լիտին ու Հայքն (Սոմխիթն) ապականող՝ քոփակ շունը, վատ որում ձևի թվին<sup>83</sup>: Իսկ նրա աշակերտները՝ մի առժամանակ վանականներ լինելով Մայրեվանքում, Յեղվարդում (Ելիվարդում) և Սուրբ-Թեոզորոսում՝ Իսրայել կաթողիկոսի և Գրիգոր իշխանից քշվեցին և ցրուցան յեղան ամբողջ Հայքում (Սոմխիթում), այս ու այն տեղ՝ քաղաքներն ու գյուղերը, գայթակղեցնելու բոլոր մարդկանց որեցոր և մինչև այսօր<sup>84</sup>:

## ՇԱՆՈՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Վրաց պատմիչի խոսքերը՝ «Հայերը հեռացան ուղիղ դավանութեանից» արդեն ցուց են տալիս, վոր նա սկզբից և յեթ վորոշած ունի, թե Վրաց (Քարթլի) և Հայոց (Սոմխիթի) բաժանման խնդրում ո՞վ ե իրավացի և ո՞վ անարդար, ճիշտ այնպես, ինչպես, մյուս կողմից, հայ պատմիչ Ուխտանեսը տալիս ե մեզ «պատմութիւն բաժանման Վրաց ի Հայոց» (և վոչ «Վրաց և Հայոց»), հմմ. Իվ. Ջավախչի, Հին վրացական պատմական գրականութեանը, եջ 64 և ծանոթ. \*.

2. Հունաց Արկադ թագավորի (395—408) և Հայոց Արշակ թագավորի (378—387), իբրև ժամանակակիցների, միասին հիշատակելը, անկասկած, այն անարբոնիղձներեցն ե, վորով առհասարակ լի յե Արսենի յերկասիրութեանը:

3. «Հունաց (քերձենների) կրոն» ասելով հեղինակը հասկանում ե քաղկեդոնի կամ յերկաքնակ (դիոֆիլիտ) դավանութեանը, վոր նա համարում ե «ուղղահավատ» և «ուղղափառ»՝ հակադրելով «Ասորիոց» կրոնին, վորը հակաքաղկեդոնի կամ միաքնակ (մոնոֆիլիտ) լինելով՝ նրա կարծրքով, «չարափառ» ե և հերձվածողական (հմմ. Իվ. Ջավախչի, op. cit., 66, 65):

4. Ինչպես Կ. Կեկելիձեմ (Վրաց գրականութեան պատմութեան, I, 139) իրավացիորեն մատնանչեց, այս դեպքը տեղի ունեւր վոչ թե IV դարու վերջում, այլ V-ի կիսում՝ 450 թվին: Համմ. Յեղըիցի համապատասխան վկայութեանը

և զիջելի պատմութիւն Վարդանանց [«Առեկասեան Մատենադարան» ԺԱ], Թիֆլիս 1913, էջ 89—93)։

5. 158—184 թ.թ.

6. Այսինքն քաղկեդոնիկ-ասորիներէ։

7. Տարրերնակ է, վոր այստեղ ներսես կաթողիկոս Միջինի մասին խոսվում է իբրև Պերողի (158—184) ժամանակակիցը մասին, մինչդեռ մի ուրիշ տեղ, ստորև, նույն ներսեսի մասին խոսվում է իբրև Վրաց Կյոբրեոն կաթողիկոսի (VI—VII դ.) կամ նաև Խոսրով Ա.-ի (577—579) ժամանակակիցը մասին. հմմ. Կ. Կեկելիմ, op. cit. 139։

8. Սա այն «Արզիսոյ եպիսկոպոս Ասորոց»-ն է, վոր քանիցս հիշատակվում է «Փիրք թղթոց»-ի մեջ (էջ 54, 55, 57, 59, 62, 66, 68, 73, 78, 81, 344 վերջնում «Արզիսոյ») և վորի թղթերից մի քանիսը ամփոփված են նույն ժողովածուի մեջ (էջ 59—69)։ Հմմ. նաև Narratio de rebus Armeniae (Migne) Patrologiae cursus completus, series graeca, t. CXXXII, col. 1244 et pass)։

9. Պատրոս Թափիչի (Καπαζός) մասին հատկապես տես. Ա. Меликсет-Бекоев, Грузинский извод сказания о посте «араджавор»,—«Христианский Восток» изд. Р. Академии Наук, т. V, Пгр. 1917, стр. 100—108։

10. Տրմոթէոս Կուզի մասին հատկապես տես. Տրմոթէոս եպիսկոպոսի Աղէք-անդրեայ՝ Հակաճառութիւն առ սահմանախնի ի ժողովոյն Բաղկեդոնի, հրատ. Կարապետ Վ. Տէր-Մկրտչեանի և երուանդ Վ. Տէր-Մինասեանի, Էջմիածին 1908 (նույնը գերմաներէն առջարանոյ՝ Timotheus Älteruss' des Patriarchen von Alexandrien Widerlegung der auf Synode zu Chalcedon Festgesetzten Lehre. Armenischer Text mit deutschen und armenischen Vorwort, herausgegeben von lic. Dr. Karapet Ter-Mekertschian und lic. Dr. Ervand Ter-Minassiantz, Leipzig 1908). Գալուստ Տէր-Մկրտչեան, Տրմոթէոս Կուզի հակաճառութեան հայ թարգմանութեան ժամանակը և սուրբ գրքի երրորդ կամ «նորաբեր» հայ թարգմանութիւնը, — «Արարատ» 1908, էջ 564—589, 707—708. Ներսէս Վ. Ակիմեան, Տրմոթէոս Կուզ հայ մատենագրութեան մէջ, և Հրաչեայ Աճառեան, Հայերեն նոր բառեր Տրմոթէոս Կուզի հակաճառութեան մէջ [երկուսը սիւսին «Ազգային Մատենադարան»-ի ԾԸ դրքում], Վիեննա 1909. Հ. Աճառեան, Տրմոթէոս Կուզ և ս. գրքի նորաբեր թարգմանութիւնը, — «Շողակաթ», I, Վաղարշապատ 1913, էջ 1—22. Н. М[арр], Сирийская версия Возражений Тимофея Элура против Халкедонского собора, — «Христ. Восток», т. II, 1913, стр. 405—406, հ.մ. Изв. Акад. Наук, 1914, стр. 437. հմմ. նաև Լ. Միլիֆանթ-Բեկ, «Վարդապետը Հայոց հիւսիսային կողմանց» etc, վրացերէն, Տիֆլ. 1928, էջ 70—71։

11. Պերող թաղավորի կողմից 9 հարյուրիկ վարդապետները ուղարկելը Հայք անհերք անաբրոնիզմ է այն պարզ պատճառով, վոր այս հատվածում հիշատակված Սեկրոսը, ինչպես և Փրոլոքսենոս [Մարուզցի] ու Հուլիանոս Աղիկառնացի (Հայիկառնացի) ՎՊ դարու գործիչներ են (հմմ. Կ. Կեկելիմ, Վրաց գրականութեան պատմություն, I, 139)։

12. «Խաչիցար»-ի մասին մանրամասն խոսվում է Narratio de rebus Armeniae-ի մեջ (Migne, PG, t. CXXXII, p. p. 1240, 1242, 1245). բոս Կարապետ եպ. Տէր-Մկրտչեանի, այն ընդունված է հայոց մեջ V դարու վերջում. տես՝ Կսիք հաւատոյ, հրատ. Կարապետ եպիսկոպոսի, Էջմիածին 1914, էջ LXXIII—LXXV, հմմ. Ա. Меликсет.-Б[екоев], Теисис Θεός έσταυρωθή у армян, — «Христ. Восток», т. III, 1915, стр. 198—199. Գույնը, Грузинский извод сказания о посте «ара-

джавор», т. V, стр. 105—108. հմմ. նաև Исповедание христианские веры Армянския церкви, переведенное с Армянского на Российский язык и изданное тщанием преосвященного Иосифа Архиепископа всего Армянского народа обитающего в России и Кавалера Князя Аргунинского-Долгорукого Спб. 1799, стр. 73—75. И. Троицкий, Изложение веры церкви Армянския, Спб. 1875 стр. 203—210

13 Հայ մատենագրութեան մեջ գոյութիւն ունին այլ և այլ վկայութիւններ «առաջավորաց» պատի մասին հետեւյալ հեղինակներէ. 1) Ջեմր Գլաիլի Գրքք պատմութեանց երկրին Տարծոյ, որ կոչի Ջեմր, Կ. Պոլիս 1708, էջ խդ, 2) Պոլոս Տարոնցվո (Յաղագս առաջաւորացն պահոց... Պաւղոսի ասացեալ չհրատարակված), տես՝ Յակովբոս Վ. Տաշեան, Յուդեակ հայերէն ձեռագրաց մատենադարանի Մխիթարեանց ի Վիեննա, 1895, էջ 769, Գ. Զարբախեան, Հայկական, հին դպրութեան պատմութիւն, Բ. տպ., Վիեննա 1897, էջ 605. հմմ. Լ. Միլիֆանթ-Բեկ, «Վարդապետը Հայոց հիւսիսային կողմանց» etc., էջ 160, 3) Ներսես Ծնորեայի (Փիր հաւատոյ խոստովանութեան Հայաստանեայց եկեղեցւոյ... ի նորոյ գերապատիւ փեսայի ինքնակալ թագաւորին Հոռոմոյ Մանուէլի Ալէքսի մեծի պոստոստատոսի... տես «Թուղթ ընդհանրական», Էջմիածին 1865, էջ 126—127, 141—143, 4) Մխիթար Գոշի (Գծագրութիւն... յաղագս Վրաց, տես [Կարապետ Վ.] Թուղթ Մխիթար վարդապետին, որ Գոշի կոչուր, — «Արարատ» 1901 թ., էջ 60. հմմ. Լ. Միլիֆանթ-Բեկ, op. cit., 246), 5) Հովիթանես վանականի Տալուշեցվո (Պատճառը վան առաջաւորացն պահոցն, արարեալ Վանական վարդապետի՝ Վան հակառակացն և այլանորոցն զսուրբ պահս [չհրատարակված], վոր մենք պատրաստած ունենք սպաղարութեան. տես Յ. Կարիմեանց, Մայր ցուցակ ձեռագրեր մատենից գրադարանի սրբոյ աթոռոյն Էջմիածնի, Տիֆլիս 1863, էջ 65, 129, Գ. Զարբախեան, op. cit., 735, Հ. Համազատի Ոսկեան, Յովհաննէս վանական և իւր դպրոցը [«Ազգային Մատենադարան» ԶԳ], Վիեննա 1922, էջ 31. հմմ. Լ. Միլիֆանթ-Բեկ op. cit., 253), և այլն Հարցիս վերաբերյալ գրականութեանը տես հետեւյալ մեծագրութիւններէ մեջ՝ Ա. Меликсет-Бекоев, Грузинский извод сказания о по-сте «араджавор»,—«Христ. Восток», т. V, стр. 73—111, ուր, ի մէջի այլոց, ամփոփած է վրաց գրականութեան տվյալներն «առաջավորաց»-ի մասին, վորը վրացերէն «աւաջոր» յի կոչվում. հմմ. Մեարոյ Վ. Մախալյանցի գրախոսականը այս մեր աղիստութեան մասին, — «Արարատ» 1918, հունվար-մարտ, էջ 148—150, Դոկտ. Հ. Աղիֆանցի Վ. Մատիկեան, Արայ գեղեցիկ. համեմատական-քննական ուսումնասիրութիւն [«Ազգային Մատենադարան» ՃԻԶ], Վիեննա 1930, էջ 153—170 (նույնը տես նաև՝ Ա. Մատիկեան, Դիւցաբանական զուր յարաբերութեամբ Մի-քայէլ-Գարբիէլ հրեշտակներու և ս. Սարգսի, — «Հանդէս ամսօրեայ» 1927 թ., էջ 43—55)։ Հույն գրականութեան տվյալներէ, ուր այս պատը կոչվում է 'Αρτζήβουριος, առանձնապես հիշատակելի յի Sancti patris nostri Isaaci Magnae Armeniae catholici Oratio invectiva adversus Armenios գրվածքը, ուր այս հարցին հատկապես և մանրամասն նվիրված է առաջին «ճառի» (Oratio I contra Armenios-ի) XIV դուրսը, վոր կրում է հետեւյալ վերնագիրը՝ Περί τής σατανικής νηστείας τοῦ 'Αρτζήβουριος — De satanico jejunio, quod Artzeburii vocant (Migne, PG, t. CXXXII, p. 1197—1209) և յերկրորդ «ճառի» (Oratio II contra Armenios-ի) 23-րդ կետը, վոր կրում է հետեւյալ վերնագիրը՝ Περί τής έσποτισμένης νηστείας τοῦ 'Αρτζήβουριος — De obscuro Artzeburii jejunio (ibid p. 1233—1235). հարեանցի կերպով նույնը հիշատակվում է նաև հատվածում.

Quomodo recipiendi sunt Armenii haeretici (ibid., 1257—1260): *Տես նաև* *И. Троицкий*, Изложение веры церкви Армянския, СПб. 1875, стр. 215—220. *И. Мансветов*, О постах православной восточной церкви, Москва 1886, стр. 46—53 (*վերջիններում, ի միջի այլոց, ամփոփված են և սլավոնական գրականությունից առկա մասին, վոր կոչվում և «арцивур» կամ «арцивурнев»*): *Ինչպես պարզվում և, «առաջավոր»-ը բավականին տարածված և յեղել հնում կոպտերի, հարաշների և այլ քրիստոնյաների միջև* (*В. Болотов*, Из истории церкви сиро-персидской, СПб. 1901, стр. 172, «Исторические Известия», издаваемые Историческим Обществом при Московском университете, 1917. г. № 2, стр. 209), *ինչպես և ծանոթ և յեղել քուրդերին* (*С. А. Елизаров*, Краткий Этнографический очерк курдов Эриванской губернии, — «Записки Кавк. Отд. Рус. Геогр. О-ва», кн. XIII, вып. 2, Тифл. 1894, стр. 190 и прим. *Н. Марр*, Еще о слове «челеби». К вопросу о культурном значении курдской народности в истории Передней Азии, — «Записки Вост. Отд. Рус. Археолог. О-ва», т. XX, в. 2—3, 1911, стр. 130, прим. 2).

14. *Այստեղ միանգամայն հասկանալի յե Կ. Կեկելիսի (op. cit., էջ 139—140) տարակուսանքը յերբ նա գրում և. «խաչեցար»-ն ու ալաբար-ը հայոց մեջ մտցրեց, ասում և Արսենը, Ներսես կաթողիկոս Միջինը, և այս նորոգությունը կարծես թե Դվինի առջին ժողովում և կատարվել 527 թ. [պիտի լինի 507 թ. Լ. Մ.-Բ.], սակայն մի այլ տեղում մատնանում և, վոր այս տեղի ունեցավ Դվինի յերկրորդ ժողովում (551 թ.) [ուղիղ 554 թ. Լ. Մ.-Բ.], բայց «խաչեցար»-ն իսկապես ընդունված և հինգերորդ դարու վերջը, իսկ ալաբարը հնագույն պատ և արևելքում, վորը արժամանակը հեռավոր անցյալում պիտի փնտրենք»:*

15. *Վրացի հեղինակն ի նկատի ունի Դվինի 554 թ. ժողովը, վորի կանոնները քանիցս հրատարակվել և. տես. Ներսես վ. Մելիք-Թամգեան, Հայոց եկեղեցական իրավունքը, I, Շուշի 1903, էջ 370—389, Արսեն վ. Ղլանեան, Կանոնք Ներսեսի Բ. կաթողիկոսի և Ներշապուհ Մամիկոնեից եպիսկոպոսի, — «Արարատ» 1905 թ., հոկտեմբեր, հավելված, էջ 943—968. Ուլյևը, Կանոնգիրք Հայոց [«Ղուկասեան Մատենագրարան» ծ. Բ], Թիֆլիս 1914, էջ 107—116, լատիներեն թարգմանությունը՝ Ang. Maius, Scriptorum veterum nova collectio e Vaticanis codicibus edita, t. X, p. 2, Roma 1838, p. 272—276 (մանրամասն բերվող գրաֆիան համ. *А. Меликсет-Бекоев*, Об источниках армянского права, — «Христ. Восток», т. II, 1917—1925, стр. 155, 156, прим. 2, 157): Սակայն ժամանակագրական անհամաձայնություններն այս կետում բավականին ակնհայտ են»:*

16. *Կյուրերունի մասին, բացի Ն. Ալիմյանի ուսումնասիրությունից (Կուրերունի կաթողիկոս Վրաց), տես նաև՝ Ի. Джавахов*, История церковного разрыва между Грузией и Арменией в начале VII века, — «Известия И. Академии Наук», 1908, стр. 433—446, 511—536.

17. *Չորս պատրիարքություն և Գրիգոր Պարթևի Կեսարիայից ձեռնադրվելը՝ Հայոց յեկեղեցի մասին հորինած այն թեորրիաներիցն և, վորոնք սկիզբ են առնում VI—VII դարուց. «Կեսարիայի» թեորրիայի մանրամասն վերլուծություն տես. *Н. Марр*, Крещение армян, грузин, абхазов и аланов святым Григорием (Арабская версия), СПб. 1905, նույնը հայերեն՝ Միտությունն Հայոց, Վրաց, Աբխազաց և Ալանաց ի սբրոյն Գրիգորէ, թարգմ. Յուսիկ արքեպիսկոպոս, Վաղարշապատ 1911, ուր, ի միջի այլոց, կարդում ենք. «Հայ գրականու-*

*թեան մէջ ազգային հոսանքի երևան դարուց առաջ տեղի է ունեցել յունական եկեղեցական զորեղ ազդեցութիւն, որը, բնականաբար, կարող էր առաջ մղել կեսարիական քարոզչի գործունէութիւնը: Յոյն եկեղեցական հոսանքը կարող էր տեղական քարոզչից, որ գործում էր բիւզանդական անմիջական ազդեցութեան սահմաններում մի որևէ տեղ, ստեղծել համահայկական լուսաւորչի տիպ. զիտմամբ չտեսնելու տարով սիրիական եկեղեցական ազդեցութիւնը՝ հեռանքին նայելով, յունական ազդեցութիւնը ոչ միայն ստեղծել է իսկապէս հարկաւոր սրիպը, այլև կարողացել է յաջողցնել որ բոլոր հայերը ձանաչեն նրան. այնպէս որ, ազգային ուղղութեամբ գործներին մտում էր Ս. Գրիգորը, որպէս համահայկական լուսաւորչի, փոքրը, որ իրանց ժամանակին արդեն հաստատուած էր, առուել ևս հոչակել: Ս. Գրիգորի պատմութեան զարգացման առաջին շրջանից, երբ նրա քարոզչական գործունէութիւնը դեռ տեղական էր, ժամանակը չի պահել որևէ ժամանակակից մշակուած զրոյց: Չեմ վիճում, թէ դեռ կարող է այն էլ խնդիր լինել, եղև է արդեօք այդպիսի սկզբնական զրոյցի ձև, դրէ առնուած է, թէ միայն բերանէ բերան էր խօսուում: Առ այժմ կարելի է գուշակել, թէ սկզբում, այդ մի աւանդութիւն էր Կապադովկիայի յոյն եկեղեցու նահատակ քարոզչի գործունէութեան մասին Լաղիքի և Իմեռեթի (թարգմանություն մեջ՝ Իմեռեթիայի. sic. Լ. Մ.-Բ.) սահմանակից, արևմտեան Հայաստանում, հոովմէական կայսերությունների մերձաւոր ազդեցութեան շրջանում: Բոլոր խմբազրութիւններն էլ պահպանել են թէ Գրիգոր լուսաւորչից և անգամ նրա սերունդը կենդանացած էին Հայաստանի այդ մասում... Կապադովկիական Կեսարիայի եկեղեցու սան և այդ եկեղեցու կարգած մի նման տեղական քարոզչի համատարած ստեղծագործող գերի վերայ կարող էին ի հարկէ պնդել իրանք յոյները, իսկ հայերը նրանք՝ որոնք ընդհանրապէս յունական եկեղեցականութեան կուսակիցներն էին և լամբուած էին ամենից առաջ, բնականաբար, բնականաբար կայսերությունների և լամբուած էին դանուղ հայ գաւառներում և ընտելացած էին յունական կուսակցության անմիջապէս Այսպիսի յունահայկական միջավայրը կարող էր տեղական քարոզչական գործը ընդհանրացնելու առաջին փորձը տալ...» (էջ 95):*

*Մասնավորապես այս կետում վրացի հեղինակն, ըստ յերևույթին, ոգտագործած ունի Quomodo recipiendi sunt Armenii haeretici (կամ սրա նման մի փորեկ այլ դրվածք), ուր, ի միջի այլոց, կարդում ենք (Migne, PG, t. CXXXII, col. 1264). «Εν οίς και ο άγιος και θεοφόρος Πατήρ ήμών Γρηγόριος ο της μεγάλης Αρμενίας χειροτονηθείς τή άγιοτάτη μητροπόλει Καισαρείας, όρους και κανόνας έθετο τοϋ μη έχειν έξουσίαν άλλαχού χειροτονηθίαι τόν τής μεγάλης Αρμενίας άρχιερέα, ει μη έν τή έκκλησία τών Καισαρέων»:*

*Ինչ վերաբերում և «չորս պատրիարքություն» խնդրին, դրա մասին խոսում և Կյուրերունը Աբրահամին ուղղած թղթի մեջ (Թերթ թղթոց, 179): Նույնը հայ մատենագիրութեան մեջ արծարծում և VIII դարու գործիչ Սողամոն կարողիկոս Մաքեմազի, վորի գրությունը բառացի առաջ և բերում Մովսես Կաղանկատվացի X դարում և, ըստ վերջինիս՝ Անանիա Սանահնեցի XI դարում (մանրամասնությունները այս հարցին վերաբերյալ Մովսես Կաղանկատվացի և Անանիա Սանահնեցի համապատասխան հատվածները զուգընթաց հրատարակություններ, տես՝ Լ. Մելիքեթ-Բեկ, «Վարդապետը Հայոց հիւսիսային կողմանց» etc., էջ 110—120 (ուր 112—120 էջերի վրա դասկարծ են լուի հայերեն բնագրերները):*

18. Այս Աբասը լավ հայտնի յե Աղվանից պատմութիւնսց (Մովսէսի Կահանապատեացւոյ Պատմութիւն Աղուանից աշխարհի [«Ղուկասեան Մատենադարան», Ը], Թիֆլիս 1913). Էնչես դաւանութիւնս այս (ժողովոյն Քաղկեդոնի) և յաշխարհս Աղուանից ի ժամանակս տեառն Աբասայ կաթողիկոսի, որ յոյժ քննութեան առնելով իւրով եպիսկոպոսօք... նորօք հանդերձ հալածեաց ի ասնէն Աղուանից զվարդապետս կրօնին այնմիկ...» (եջ 142—143 [հատոր յերկրորդ գլուխ Ը]). նաև «Տէր Աբաս, որ ի սկզբան թուականս Հայոց փոխեաց զաթոս հայրապետութեանն ի Չորայ ի Պարտաւ՝ հալեալ ամս քառասուն և չորս, եպիսկոպոսութեանն Մեծիրանց կոչեցեալ Առ սոփաւ կայան սովորութիւն գրել ի պարուակի թղթոյն «Աղուանից, Լիկնաց և Չորայ կաթողիկոսի»։ Եւ առ սա գրեցին ի ժողովոյն Գունայ՝ սասել «Մի բնութիւն աստուածութեան և մարդկութեանն Քրիստոսի», և յաւելուլ ի Սուրբ Աստուածն «անմահ և խաչեցար» (ibid., եջ 391—392 [հատոր երրորդ, գլուխ ԻԳ]): Բացի դրանից, նա (Աբասը) հայտնի յե այլ և այլ գրադրութիւններով, փորոնցից մեկին Մովսէս Կաղանկատվացիմ նվիրում և իր «պատմութիւն» յերկրորդ հատորի ամբողջ է գլուխը հետևյալ վերնագրով. «Թուղթ Յովհաննիսի Հայոց կաթողիկոսի առ տէր Աբաս Աղուանից կաթողիկոս սակս հաւատոյ հաստատութեան երկնաւոր շնորձօք առկեալ» (ibid., 137—142), իսկ մյուսը հրատարակել և Կարապետ Վ. [Տեր-Մկրտչյանը] առանձին գրքով կով. «Երուսաղիմի Յովհաննէս եպիսկոպոսի թուղթը առ Աբաս Աղուանից կաթողիկոս», Վարդապետ 1896 (= «Աբարատ» 1896 թ., եջ 252—256): Հմմ. Narratio de rebus Armeniae-ի (Migne, PG, CXXXII, 1245) վկայութիւնը նույն Աբասի մասին և... «Εγγραψαν τοίνυν επιστολήν προς τον Ἀπῆς τὸν καθολικὸν Ἀλβανίας γῶρας, περιέχουσαν οὕτως...» (հմմ. Ն. Ալիմեան, Կիւրիոն կաթողիկոս Վրաց, 99—100):

19. Ըստ յերևույթին, Գրիգոր Քերզոզն և, փոքր հայտնի յե «Գիրք թղթոց»-ից (եջ 153—160). «Սրբասիրի տեառն Աբրահամու Հայոց կաթողիկոսի ի Գրիգորէ նուաստէ Քերզոզէ». հմմ. Ն. Ալիմեան, op. cit., 152—155:

20. Այստեղ կրկնված և այն գրութիւնը Գրիգոր Պարթևի Հայոց և Վրաց լուսավորիչ լինելու մասին, փոքր ընդհանրապես արձարձված և «Գիրք թղթոց»-ի մեջ (նաև Ուխտանեսի մտտ). «Եւ ճշմարտապատում սուրբն Գրիգորիոս զնոցայն ուսոյց մեզ» (Պատմաբ. Գ. ժողովոյն երկարեակացն Մովսէսի Վրաց ուղղափառ եպիսկոպոսի, եջ 123), «չիւղեցուցանելով գտարբ և զուղիղ հաւատն զոր մեծին սրբոյն Գրիգորի սերմանեալ էր յայս ի Կաւկասային կողմանս» (Պատասխանի թղթոյն տեառն Վրթանիսի, եջ 132), «ժիւ եղիցի նորոգածութիւն հաւատոց ի մէջ երկուց աշխարհացս, որ սքանչելի հիմնադրութեամբ տնկեցաւ յանդամգիտոյ և ի քաջ նահատակէն Տեառն Գրիգորի» (Տեառն Կիրովիսի ի Վրթանիսի, եջ 138), «վասն հաւատոյ զրիալ էր, թէ հարքն մեր և ձեր աղաբանս ունէին յորմէհեաէ և սուրբն Գրիգոր զուղղափառ հաւատ կարգեաց» (Պատասխանի թղթոյն Սմբատայ Վրկան մարդպանի ի Կիրովիսի Վրաց կաթողիկոսի, եջ 171), «հարքն մեր և ձեր զերուսաղէմի հաւատն ունէին, և սուրբն Գրիգոր զայն ետ նոցա, և մեք զնոյն ունիմք» (Պատասխանի թղթոյն տեառն Սմբատայ ի Մովսէսի, եջ 174), «չուք այժմ ևս պարծելով գրեցէք առ մեզ, թէ հարքն մերոց և ձերոց սուրբն Գրիգորիոս զերուսաղէմի հաւատն ետ, և մեք զնոյն ունիմք» (Թուղթ երկրորդ տեառն Աբրահամու Հայոց կաթողիկոսի առ Կիւրիոն Վրաց կաթողիկոս, եջ 176), «եւ միաբանութիւն էր Վրաց և Հայոց ընդ միմեանս, և

ամենայն իսկ վիճակիս սրբոյ տեառն Գրիգորի միաբանութիւն էր ընդ հաւատոյն երուսաղէմի, որով Հոռոմք վարին» (Պատասխանի թղթոյն տեառն Աբրահամայ Հայոց կաթողիկոսի ի Կիւրիոնէ Վրաց կաթողիկոսի, եջ 179), «աւրջ մի հեղապոսութեան զսէրն հոգևոր, որ կայր ի մէջ երկուց ազգացս, նորոգել զայն, որ ի միջէ աղբերէ առեալ էր զվարդապետութիւն... որպէս ուսուցին... նախ երանելին սուրբն Գրիգոր և ապա Մաշտոց և զզրոց ծանաթութիւն ի պնդութիւն հաւատոց, և այժմ աղաթեսցոք նովմք կալ մեզ» (Թուղթ երրորդ տեառն Աբրահամու Հայոց կաթողիկոսի առ Կիւրիոն Վրաց կաթողիկոս, եջ 180 [հմմ. Կիւրիք հաւատոյ, Եջ 139]), և այլն:

Ն. Մառը (Крещенне армян, грузин, абхазов и ажанов св. Григорием, 153—154 = Միտութիւն Հայոց, Վրաց, Աբխազաց և Ալանաց ի սրբոյն Գրիգորէ, եջ 91—92) առանձնապէս կանչ և առնում վրաց զրահանութիւն մեջ պահպանված նյութերի վրա «Գրիգորի մասին», փորոնք, նրա սակով, բաւական առատ են». «Կան վարձագրութեան զանազան վերսխաներ, հետաքրքրի օրհներգներ»:

միա (Սամիսո) ավանիցն էր, և [կաթողիկոսեց] 17 [տարի]: Յեւ  
սրա որոք [հաստատվեց այն կարգը], վոր պարսից թագավորի  
հրամանով էր կատարվում Հալոց (Սոմխիթի) չեպիսկոպոսների  
[և] կաթողիկոսների ձեռնադրութունը, [վոր շարունակվում է]  
մինչ այսօր<sup>4</sup>:

Իսկ սրանից հետո [կարգվեց] Հովհան Մանդակունին՝ 6 տա-  
րի, և սրանից հետո Բաբգեն (Պապնիկեն) [Ոթ]միա (Միսո) ավա-  
նից՝ 5 տարի, Սամվել (Սամոել) Արտաղ (Արտաղ) ավանից՝ 11  
տարի, Մուշեղ (Մուսիլի) Այլարերդ (Այլար) ավանից՝ 50 տարի,  
Իսահակ (Իսակ) Ուղկեցին (Ավկեցին)՝ 7 տարի, Քրիստափոր  
Տիրառձեցին (Կուրավիցեցին)՝ 6 տարի, Ղևոնդ (Լեոնտի) Առես-  
տեցին (Արեթեցին)՝ 3 տարի, Ներսես (Ներսես) Արպարակեցին՝  
9 տարի<sup>5</sup>:

Սրա որոք կալացալ ժողով քաղաք Դվինում Աբդիշո (Ավ-  
սիստո) ասորի հաղորդիկի ձեռներեցութչամբ: Յեւ քանի վոր ուրա-  
ցել [էին] սուրբ Գրիգորի և այլ հայրերի ավանդներն, ուստի [ուղիղ]  
հավատքն ու Քաղկեդոնի ժողովը [նդովելով], Քրիստոսի աստվա-  
ծայնի և մարդկայնի մի բնություն դավանողները չերեքսրբյան  
«սուրբ աստված» սրբասացութչանը ավելացրին «վոր խաչեցար»<sup>6</sup>.  
և չերդումով ու նդովքով, նաև փոխադարձ դրազրութչամբ իրենց  
իսկ ձեռքով հաստատեցին չհեռանալ այսորինակ դավանութչու-  
նից հավիտյան: Իսկ եվտիքեսը (Եվտեքին), հաղորդիկներն ու  
չերկու էլ ուրիշ համախոհները, մեկը կարծես հուլիանիա, իսկ  
մյուսը՝ մի այլ հերձվածքի ներկայացուցիչ, չեպիսկոպոս ձեռ-  
նադրվեցին և ուղարկվեցին Միջագետք<sup>7</sup>:

Սրանից հետո Հովհան (Հահեն) Գարեգենացին (Կապելինե-  
ցին)՝ 17 տարի, Մովսես Յեղիվարդեցին (Ելիվարեցին)՝ 30 տա-  
րի, Աբրահամ Ռշտունյացը (Արխատնեցին)՝ 23 տարի, Հովհան  
Բազարանցին (Կապրանայեցին)՝ 26 տարի, Կոմիտաս (Կոմիտա)  
Արագածոտնեցին (Արկացուցեցին)՝ 8 տարի, Քրիստափոր Ապա-  
հունեցին (Աբրամեցին)՝ 13 տարի, Յեղը (Եղրա) Նիգայեցին՝  
10 տարի, Ներսես (Ներսես) Իշխանցին՝ 8 տարի, Անաստաս Ակո-

ուեցին (Ակորայեցին)՝ 6 տարի, Իսրայել Ութմիսեցին (Սամիսո-  
յեցին)՝ 10 տարի<sup>8</sup>:

Հալոց քաղալորենր. — Վազարշի (Վազարբի) թագավորու-  
թյունից մինչ Արտաշիր 21. և սրանից հետո իշխանները՝ Գնունի  
(Կինունի) պատրիկը՝ 4 տարի, Դավիթ Մահարունին (Մարունին)՝  
3 տարի, Թեոդորոս (Տոսորոս) Ռշտունյաց (Ռուստունի)՝ 10 տա-  
րի, Համազասպ (Ամազասպ) կուրապալատը՝ 4 տարի, նրա չեղբայր  
Գրիգորը՝ 24 տարի, Աշոտ Բագրատունին՝ 3 տարի, Ներսես (Ներ-  
սես) Կամսարականը՝ 3 տարի, Մմբատ (Սումբատ) Բագրատունին  
(Բագրատունիանը)՝ 12 տարի<sup>9</sup>:

Իսկ Դվինի ժողովից հետո չերկար ժամանակ անց Սուրեն  
(Սվիրեն) պարսից իշխանին սպանող վոմն Վարդանը՝ հայերից  
հալածվելով՝ գաղթեց Կոստանդնուպոլիս Խոսրովի (Սուսարոյի)  
[թագավորութչան] 40 թվին և Հուստինիանոսի՝ 30 թվին, վորը  
ուրբ Մոսիան կառուցեց: Հենց վոր թագավորը նկատեց Վար-  
դանի չհաղորդվելը [հույներին հետ], հրամայեց ժողով գումարել, և  
հրավրեց հայոց չեպիսկոպոսներին ու վարդապետներին<sup>10</sup>: Յեւ  
հայերը հավատացին ու նդովեցին Որբեհնեպին, Յեվազրին, Դիդ-  
վիմոս նեստորականին, հաղորդիկներին, հուլիանիաներին և գա-  
լանիաներին և եվտիքեսի աղանդի բոլոր մասնակիցներին: Բայց  
չերբ վերադարձան Հալը (Սոմխիթ), վոմանք հաստատուն մնացին  
[Քաղկեդոնին]: իսկ վոմանք չեղվեցին՝ Հովհան կաթողիկոսի որոք,  
և [վերջինները] դիբ զրեցին աղվանից կաթողիկոսին և Վրթանես  
(Վորտանես) Սյունյաց\*) չեպիսկոպոսին, վոր՝ «ինչպես Պետրոսն  
ու Գրիգորը, մեր առաջին չեպիսկոպոսներն, ուսուցին հավատքի  
մասին, նաև սուրբ աստված-ը, վոչ կկրճատեմ և վոչ էլ կավելաց-  
նեմ»: Նմանապես [զրեցին] և վրացիներին, բայց նրանք զայրա-  
ցան [և] չընդունեցին<sup>11</sup>:

Յեւ նորից՝ Մորիկ (Մավրիկ) թագավորի որոք՝ Կոստանդ-  
նուպոլիս հրավիրված Մուշեղ (Մուսիլ) հալը չհաղորդվեց [հույ-  
ներին հետ], և նորից քննութչուն արին, և նորից զրով հաստա-  
տեցին ու չերդումովին չուրանալ [հույներին]: Իսկ Հալը (Սոմխիթ)  
վերադարձաները չընդունվեցին Մովսես կաթողիկոսի և չեպիս-  
կոպոսների այն մասի կողմից, վորոնք Պարսից և Հալոց (Սոմ-  
խիթի) սահմաններումն էլին գտնվում: Իսկ նրանք իրենց կաթողիկոս  
կացուցին Թեոդորոս Կոզովիտեցուն (Կոկուսաեցուն) Բազարան

\*) Բնագրում՝ «Սուրոս» — Սուրոյին (sic):

(Պատրանության) չերկրից: Յեւ բազում ընդդիմադրութիւն յիզով չերկուսի միջև Քրիստոսի չերկու բնութեան ու Քաղկեդոնի ժողովի մասին [ամբողջ] 14 տարվա [ընթացքում], մինչ Մորիկ (Մալբիկ) կալսեր մահը: Յեւ Ստորով (Սուսարո) թագավորը գրավեց Հայքը (Սոմխիթը) ու Արրահամին կաթողիկոս նշանակեց, և ստիպեց [կամ] նորովի Քաղկեդոնի ժողովը կամ հետևել նրան: Յեւ նրանք (հայերը) նորովեցին<sup>12</sup>:

Ապա Հերակլ կալսրը իր թագավորութեան 23 տարին՝ հասնելով Հայք (Սոմխիթ)՝ հրամայեց մեծ ժողով դուժարել, մի սրով, Հայոց (Սոմխիթի) բոլոր լեպիսկոպոսներէից ու վարդապետներէից Յեզը (Նզրա) կաթողիկոսի և բոլոր ազատների (ազատթա) հետ թեոքոսիուսուում, [և] քննեցին չերկու բնութեան ու Քաղկեդոնի ժողովի [հարցը], և հալատացրին հայերին սուրբ գրվածքները, և չերգվեցին և իրենց իսկ ձեռքով գրեցին, վոր աչլ ևս սրա հալաակ չեն լինի, և ալսպես վերադարձան Դիլին: Իսկ Հովհանն [Մալբադոնեցին] ճնշում եր գործ զնում աչն լեպիսկոպոսների վրա, վորոնք [աչն ժողովին] ներկա չեցին գտնվել, վորպեսզի չհալատային Յեզրին (Նզրային), բայց նրանք ել հալատացին: Ապա Հովհանն կշտամբում եր նրանց և թշնամութիւն զուլց ատախ նրանց հանդեպ, և Յեզրի (Նզրայի) մահից հետո հալատացած եր, վոր ինքը կսասնա աթուր՝ իշխանների աջակցութեամբ<sup>13</sup>:

Իսկ յերբ Ներսեսին (Ներսեսին) վիճակից [գրավել] աթուները, և նա այնքան ել չեր վրդովվում, [Հովհանը] նրան ել սկսեց կշտամբել: Ապա [Ներսեսը] բերեց նրան բազում լեպիսկոպոսների ու վարդապետների առջ և նրա բամբասանքը քննութեան յենթարկեց: Յեւ ազվեսի ձևի դրոշմ կպցրին նրա ճակատին: Յեւ ալսպես [Ներսեսը] աքսորեց նրան ընկերներով հանդերձ դեպի Կովկաս: Չընդունվելով նրանց (լեռնականների) կողմիցն ել [Հովհանը] Անաստասի մահից հետո կրկին վերադարձավ Հայք (Սոմխիթ), [ուր և] վախճանվեց ձերութեան մեջ: Իսկ նրա գալթակղված բոլոր աշակերտները շեղվեցին ճշմարտութեանից, և նրանց աղանդը ցանկեց նուլն (Հայոց) չերկրում մինչ Հուստիսիանոս (Բուստիանոս) կալսրը<sup>14</sup>:

Ապա նա (Հուստիսիանոս) կալսրը կանչեց Իսահակ կաթողիկոսին<sup>15</sup> իր լեպիսկոպոսներով հանդերձ Կոստանդնուպոլիս և միացրեց նրանց մեր տեր Հիսուս Քրիստոսի չերկու բնութեան՝ աստվածալին ու մարդկայինը՝ մի դեմքում անխառն ու անբաժան դավանողների հետ, և սրա մասին գրով չերգվեցին, վորպեսզի

նրանց (հուլների և հայերի) միջև սրա մասին ալսու չլինի հալաակութեան: Իսկ չերբ կրկին վերադարձան իրենց չերկրը՝ [գտան, վոր] Հայքում (Սոմխիթում) մնացածները տիրել կին նրանց վրա հուլաց վերահսկողութեան [հաստատման] առթիւ, [և] ալս սլատառով հալաակողները քննութեան չենթարկեցին Իսահակի ու նրա հետ գնացածների [վարմունքը], ասելով՝ «Յեթե չեք վերադառնա [մեր] գովանութեանը, և չեք նորովի նրանց (հուլներին), ալ ևս չենք ընդունի ձեզ ձեր տեղերում»: Իսկ նրանք՝ [քանի վոր] մարդկային փառքը [գերադասում կին] աստծո փառքին, կրկին նորովեցին իրենցից հաստատվածը, վորով հաղորդվել կին հուլներ (բերձենների) հետ: Սրանից հետո հուլները (բերձենները) գտան, վոր [հայերը] չարիքներից անբուժելի չեն<sup>16</sup>:

### ՄԱՆՈՔՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ամբողջ արգացր կրթի բառացի թարգմանութեան և Catholici Armeniae-ի (Migne, PG. CXXXII, col. 1253, 1256) հետևյալ հատվածի, միմիայն այն տարբերութեամբ, վոր թվական նշանները վրացի հեղինակը յարատեսակ կերպով ունի հասկացած և ըստ այնմ, աղավաղած (հմմ. 16-րդ ծանոթութեան հավելվածը). «Օ ἅγιος Γρηγόριος ὁ φωστὴρ, ἔτη λ'. Ὁ ἅγιος Ῥωστάνης ὁ υἱὸς αὐτοῦ, ἔτη β'. Ὁ Βαρτανῆς, ἔτη γ'. Ὁ Γρηγόριος, ἔτη ια'. Ὁ Ἰουστῆ, ἔτη ζ'. Ὁ Φαρνεσὲν ἀπὸ τῶν Ἀσπραίων γῶρας, ἔτη δ'. Ὁ ἅγιος Νορσέστη, ἔτη λδ'. Ὅν ἀπέκτεινε Φάρμη. Εἰθ' οὕτως Ἰουστῆ, ἔτη γ'. Ὁ Ζαρένης, ἔτη δ'. Ὁ Ἀσπουρακίση: ἔτη ζ'. Οὗτοι οἱ τρεῖς τῆς Ἀχάρκ γῶρας ἐπισκοποὶ ἦσαν, ὄνομα μόνον ἔχοντες καθολικόν. Ἐπίσκοποι χειροτονεῖν οὐκ ἐτόλμων, ἐπειδὴ διὰ τὸν θάνατον τοῦ ἁγίου Νορσέστη, ἐκωλύθησαν παρὰ τοῦ ἀρχιεπισκόπου Καισαρείας αἱ χειροτονίαι τῶν ἐπισκόπων τῆς μεγάλης Ἀρμενίας»:

2. Այս՝ յերբորդ աղացն ևս կրթի բառացի թարգմանութեան և Catholici Armeniae-ի (Migne, PG. CXXXII, 1256) հետևյալ հատվածի, վոր նախորդի անմիջապես շարունակութեան և. «Εἶτα ὁ ἅγιος Ἰσαὰκ ἔλαβεν ἐξουσίαν χειροτονεῖν εἰς Ἀρμενίαν ἐπισκόπους, ὅς καὶ ἐπισκόπησεν ἔτη μ'. Μετὰ δὲ χρόνους τινὰς βιαβῆλλοντες τῷ Περσῶν βασιλεῖ, τῷ Βράμ Σαπῶ, τὸν ἴδιον βασιλεῖα Ἀρτασῆρ, καὶ τὸν ἅγιον Ἰσαὰκ, ὡς ὁμοφρονήσαντας ἐν τῇ βουλῇ αὐτῶν, κατέβαλον αὐτὸν ἀπὸ τοῦ θρόνου αὐτοῦ. Καὶ μετὰ τὴν ἐκπτώσιν τοῦ Ἰσαὰκ, τὸν Σορμάγ (Σορμάν. sic. l. V.-B.) ἀπὸ τοῦ Ἀρτζակῆ, τῇ προστάξει τοῦ τῶν Περσῶν βασιλέως, καὶ τῇ ἰδίᾳ αὐτῶν βουλῇ, ἐκάθισαν αὐτὸν καθολικόν, διαβῆλλοντες τὸν Ἰσαὰκ. Μισήσαντες δὲ αὐτὸν, κατέβαλον ἀπὸ τοῦ θρόνου αὐτοῦ, [καὶ] αἰτήσαντες τῷ τῶν Περσῶν βασιλεῖ, λέγοντες: «Δὸς ἡμῖν ἐκ τῆς γῶρας σου, καὶ μὴ ἔστω ἡμῖν Ἀρμένιος». καὶ ἔδωκεν αὐτοῖς ὁ βασιλεὺς τὸν Περκισὸν (Περσικόν. sic. l. V.-B.) τὸν Σύρον. καὶ μετὰ τρία ἔτη μισήσαντες καὶ αὐτὸν, κατέβαλον. Πάλιν ἔδωκεν αὐτοῖς τὸν Μουσοῦλιον τὸν Σύρον. Κάκεινος δύο χρόνους καθίτας, ἐν πολλῇ θλίψει κατέλυσε τὸν βίον»:

3. Տես կրթիբորդ գլխի 52-րդ ծանոթ:

4. Այս՝ յերբորդ աղացն ևս կրթի բառացի թարգմանութեան և Catholici Armeniae-ի (Migne, PG. CXXXII, 1256) հետևյալ հատվածի, վոր նախորդի



ιηλιακη ζωοποιωδρι. «Οἱ δὲ μαθηταὶ αὐτῷ πληθυνθέντες, πάντες ἐξέκλιον ἀπὸ τῆς ἀλη-  
θείας. καὶ διεσπάρη ἡ ἄρεσις αὐτῆ ἐν τῇ γῶρᾳ ἐκείνῃ, ἕως Ἰουστίνου Καίσαρος τῷ ἐ-  
ταί, ἐν ᾧ καιρῷ καλέσας τὸν Ἰσαάκ τὸν καθολικὸν σὺν τοῖς ἐπισκόποις εἰς Κωνσταν-  
τινούπολιν, ἤνωσεν αὐτοὺς τοῖς ὁμολογοῦσι τὰς δύο φύσεις τοῦ Χριστοῦ καὶ Θεοῦ ἡμῶν,  
τῆς Θεότητος καὶ τῆς ἀνθρωπότητος, ἐν μιᾷ ὑποστάσει, ἀφύρτως, ἀδιαίρετως, καὶ διὰ  
τοῦτο ἐγγράφως ὤμοσαν, τοῦ μηκέτι γενέσθαι εἰς αὐτοὺς ἀντιλογία. Πάλιν δὲ, ὑποστρε-  
ψάντων αὐτῶν, οἱ καταλειφθέντες ἐν τῇ Ἀρμενίᾳ, ἐδυσχέρανον τῇ τούτων ἐπιστάσει, ὡς  
ὁμοφροσάντων μετὰ τῶν Ῥωμαίως. Καὶ λοιπὸν στάσεις καὶ συζητήσεις ἐποίησαν μετὰ τοῦ  
Ἰσαάκ καὶ τῶν συναπελθόντων αὐτῷ, λέγοντες, ὅτι «Ἐάν μὴ στραφῆτε καὶ ἀναθεμα-  
τίζητε αὐτοὺς, οὐ δεχόμεθα ὑμᾶς εἰς τόπον ἡμῶν». Αὐτοὶ δὲ ἀγαπήσαντες τὴν δόξαν  
τῶν ἀνθρώπων, ἢ τὴν δόξαν τοῦ Θεοῦ, πάλιν ἀνεθεμάτισαν πρῶτον ἑαυτοὺς, ὡς κοινω-  
νήσαντας τοῖς Ῥωμαίοις. Εὐρέδωσαν δὲ ἀνίανσι ἐν ταῖς κακίαις»:

— *Ի վերջո, գիտւմ ենք «Պատմիածք Պատմարիին-ից» յերկասիրութիան  
մեջ հիշված վարդ և արքի աշխարհագրական և անձանց անունները (Ortsnamen  
und Personennamen-ը) համեմատական աղյուսակը վրացերեն, հայերեն և հու-  
նարեն.*

Վրացերեն	Հայերեն	Հունարեն
Ռոստակե	Արխատակես	Ῥωστάκης
Ռրթան	Վրթանես	Βαρτανές
Գրիգոր	Գրիգորիս	Γρηγόριος
Ոսիկ	Հուսիկ	Ἰουσίχ
Փարսեհրուխ	Փարսեհրուհ	Φαρνեսχ
Ապրահամելիթա	Ապրահուելյաց	τῶν Ἀσπραχων γῶρας
Ներսես	Ներսես	Νορσέσης
Սահակ    Սաակ	Սահակ	Ἰσαάκ
Վրամշարուհ	Վրամշարուհ	Βράμ Σαπῶ
Սուսերմադ	Սուսերմակ	Σορμάχ
Ծաղիկելի	Ծաղիկեցի	τοῦ Ἀρτζանե
Բրբրեշ (Բրբրեթ ?)    Պեր- կիսո	Բրբրիշ	Περκισῶ (Περσικῶ ?)
Սամուել	Շմուել	
Մուսրելի	Մուսրելի	τὸν Μουσοῦλιον
Մաստոց	Մաշտոց	Μαστήγτζη
Կիս	Գյուս	Κίτ
Առմիսո	Ութմիս	Ἄτμχρῶ
Մանդակուհու	Մանդակուհու	Μαρτακουνης
Պապիկիկ	Բարգին	ἌΠουῖπκένης
Միսո	Ութմիս	Μισῶ
Արտաշ	Արտադ	Ἄρτᾶς
Մուսրիլի	Մուշուդ	Μουσέλης
Ալպիլ	Ալարեբդ	Ἄρπիր
Ավիկելի	Ուղիկեցի	τοῦ Ἀρχάν
Կուրավիցելի	Տիրառեցի	τοῦ Κουβαρτζε
Լեոնտի	Հեոնդ	Λέοντιος

Արեթիլի	Առասուցի	τοῦ Ἀρέν
Արագրակելի	Արագրակեցի	τοῦ Ἀσπαραξ
Գլին	Գլին	Τιβή, Τίβη
Ավարիսո	Արդիշո	Ἄπτουῶ
Հանես	Հոսհան	Ἰβανեսχ
Կապիկիկելի	Գապիկեցի	ἀπὸ Καπελικής
Երվարակելի	Յերվարեցի	τοῦ Ἐλιβάρετ
Արխատուհի	Ռշտուելյաց	ἀπὸ Ἀραστουνης
Կապրանուհի	Բարաքանուցի	τοῦ Πακρانا
Կոմիսո	Կոմիսոս	Κωμηράς
Արխածուհի	Արախածուհեցի	Ἐλτζηστρακուτζῶ
Արրամիլի	Արամուհեցի	ῶ Ἀβραμίτης
Եզդրս	Յեզր	Ἴεծրας
Ներսիլի	Ներսեցի	τοῦ Νικᾶ
Իշխանիլի	Իշխանեցի	τοῦ Ἰσχᾶ
Ակորակիլի	Ակոռեցի	τοῦ Κορᾶ
Առմիսուհի	Ութմիսեցի	ἀπὸ Τμησοῦ
Վարարշ	Վարարշ	Βαλαρέως

(Վարարշ ?)			
Արտաշիլ	Արտաշիլ	Τασῆρ	
Կիսուհի	Գիսուհի	Κοινουνης	
Սարսիլի	Սահասուհի	ῶ Σαρωνης	
Տարսուս	Թեոդորոս	Τοτρούσης	
Որուսուսուհի	Ռշտուհի	ῶ Ρουσταχης	
Ամագասո	Համագասո	Ἄμαζάπης	
Աշոս	Աշոս	Σώτης	
Բագրատուհի    Բագրա- տուհանի	Բագրատուհի	Πακρατουνης	
Ներսես	Ներսես	Νερσέχης	
Կամսարական	Կամսարական	Καμψαρακάν	
Սուսրատ	Սմրատ	Συμπάτιος	
Սվիրիկի	Սուրեհն	Σουρτέν	
Վարդան	Վարդան	Βαρτᾶς	
Խուսարո	Խոսարով	Χοσρῶ	
Կոկուսուհի	Կոկովիսեցի	Κωκυστᾶ	
Պարսուսի	Բագրարան	Παγκράτον γῶρα	

Ողովերով առիթից, ստուգում ենք և ժամանակագրական աղյուսակն քսո  
վրացերեն բնագրի և հունարեն աղբյուրները՝

	Բանի տարի		Բանի տարի
Գրիգոր	21 30	Փարսեհրուհ	4 4
Արխատակես	20 2	Ներսես	4 34
Վրթանես	3 3	Հուսիկ	— 3
Գրիգորիս	11 12	Սահակ	4 4
Հուսիկ	6 6	Ապրարակես	7 7

Սահակ	40	40	Յեզր	10	10
Գյուլստ	17	17	Ներսես Իշխանցի	8	20
Հովհան Մանգակունի	6	6	Անաստաս	6	6
Բարզեն	5	5	Իսրայել	10	10
Սամվել	11	12	[Իսահակ]	—	—
Մուշեղ	50	50	Վարդաշ	—	—
Իսահակ	7	7	Արտաշէր	—	—
Քրիստափոր	6	6	Գնունի պատրիկ	4	4
Ղևոնդ	3	3	Դավիթ Մահարունի	3	3
Ներսես	9	9	Թեոդորոս Ռշտունի	10	10
Հովհան Գաբելինացի	17	17	Համազասպ կուրապագատ	4	4
Մովսես	30	30	Գրիգոր	24	24
Աբրահամ	23	23	Աշոտ Բագրատունի	3	3
Հովհան Բագարանցի	26	26	Ներսէս Կամսարական	3	3
Կոմիտաս	8	8	Ամբատ Բագրատունի	12	—
Քրիստափոր	13	3			

է.

## ԴԱԶԻ (IX—X Դ.)

### «ՅԵՊԻՓԱՆ ԿՅՈՒՊՐԱՑՎՈ ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՂՄՈՍԱՑ ԴԱՎԹԻ»

«Մեզի հասել է Յեպիփան Կյուլրացվո «Մեկնությունն սաղմոսաց Դավթի», վոր փոխադրել է հայերենից վոմն Դաշի-ն», — այսպես է սկսում Կորն. Կեկելիձեն (Վրաց գրականության պատմություն, I, 140) իր տեսությունը Դաշիի գրական գործունեության մասին, և ապա շարունակում. «Ո՞վ է այս Դաշին, մենք չգիտենք, սակայն միայն մի բան պարզ է, վոր նա իններորդ դարու վերջերի և տասերորդի սկզբները գործիչ է», և «այս այնտեղից է յերևում, վոր իր չերկասիրությունը նա ուղարկել է Ստեփան Տրեթցուն (Ստեփանն Մարելարիին), վորը... առաջին յեպիսկոպոսը չեղավ նշանակված Աշոտ Կուխի († 918 թ.) հիմնած Տրեթի աթոռի վրա»: Ըստ Ն. Թաղայեվիլու (Յերեք պատմական քրոնիկա, XVII), նա ժամանակակից է Ստեփան Տրեթցու 881—923):

Այս մեկնության կցված գրությունից հանուն Ստեփանին՝ Դաշին բացատրում է, թե ի՞նչ պայմաններում նրան վիճակվեց կատարել հիշյալ թարգմանությունը, վորտեղից և քաղել ենք մենք մեզ հետաքրքրող հատվածները, վոր առաջ ենք բերում թարգմանաբար՝ համաձայն վրացերեն բնագրի, վոր քանիցս հրատարակվել է, այն է. 1) Ն. Թաղայեվիլի — «Յերեք պատմական քրոնիկա». վրացերեն, Տիլիս 1890, էջ X—XIII. 2) Թ. Ժորդանիս — «Քրոնիկաներ», վրացերեն, 1892, էջ 99—101. և 3) նույն Ն. Թաղայեվիլի — «Описание рукописей Общества распространения грамотности среди грузинского населения», т. II, 1906—1912, стр. 640—643 (վերջինում հանդերձ ուսերեն թարգմանությանը):

[ՀԱՅԵՐԵՆ ՔԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՆՎՍՏԱՀԵԼԻ ՅԵՆ]

...Յերկար ժամանակ շերմեռանդությամբ փնտռում եյի սաղ-  
մոսները մեկնությունն այն գրքում, վոր գրեց մեր սուրբ հայրն,  
Կյուպրացի չեպիսկոպոս Յեպիփանը, բայց չգտա այն վրացերեն.  
այն գտա հունարեն, սակայն չկարողացա վերծանել, քանի վոր  
այն [ինձ համար] անմատչելի և անգնահատելի աղբյուր եր. ապա  
[նույնը] գտա հայերեն՝ գրված նույն կարգով և նույն թվով, ինչ-  
պես և հունարենը, նախանձեցի հայերին, սակայն վախեցա թարգ-  
մանել, վորովհետև անդգուչը թարգմանությունները մեծ կշտամ-  
բանք են առջացնում<sup>1</sup>:

Իսկ յեթե վոր առաջին անգամ լրիվ թարգմանե, չերկրորդ  
թարգմանությունը կերևա նրան հակառակ...

Դաչին և թարգմանել այս հայերենից. աստված, փառաբանիր  
նրա հոգին:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ

1. Հմմ. տասնչորսերորդ գլխի 3-րդ ծանոթությունը:

Ը.

ՍՏԵՓԱՆ ՏԲԵԹՅԻ (IX—X Դ.)

«ԳՈՐԲՈՆԻ ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ»

Ինչպես Իվ. Զավախիցիի (Հին վրացական պատմական  
շրահանությունը, 91—92) և Կորն. Կեկելիձեյի (Վրաց գրականու-  
թյան պատմություն, I, 143) հետադոտություններից չերևում է,  
Ստեփան Տբեթցին (Ստեփանե Մաբեվարին) իններորդ դարու  
վերջերի և տասերորդի առաջին քառյակի գործիչ է: Յերբ Աստ  
Իշխանաց-Իշխանն, վորը Կուխի մականունով եր հայտնի, Տբեթի  
չեպիսկոպոսական աթոռը հիմնեց, վերջինիս անդրանիկ չեպիսկո-  
պոս Ստեփանին կարգեց, հետևապես՝ տասերորդ դարու սկզբում,  
քանի վոր Աշոտ Կուխին 918 թվին վախճանվեց. «Ստեփանը,— Կ. Կե-  
կելիձեյի (ibid.) ասելով, — իսկապես հուշակավոր և բեղմնավոր  
գրող է չեղել. նրան, ինչպես չերևում է, հետաքրքրում եր մեկ-  
նաբանական (եզդեզեսիկ) գրականությունը, վորովհետև Իսախն Յե-  
պիփան Կյուպրացու Սաղմոսաց մեկնության իր թարգմանությունը  
նրան եր ուղարկել ծանոթանալու, այսինքն խմբագրելու և գնա-  
հատականը տալու (ոեցենդիայի) համար... բայց Ստեփանը ավելի  
հայտնի չեր վորպես վկայաբան (հագիոգրաֆ)», և «սրա մասին  
մենք տեղեկանում ենք [ի միջի այլոց] ...այն չերկասիրություն-  
նից, վոր կոչվում է Վկայաբանություն Գորբոն սուրբ վկայի, վորին  
հանեցին Ղ.Վիլի բերդից»:

Իր չերկասիրության մեջ Ստեփան Տբեթցին նկարագրած  
ունի ամիր Աբու-Ղասիմի արշավանքը Հայաստան, Հայաստանի  
ավերումն և արևելյան Վրաստանի հալածակումը, վորի ժամա-  
նակ ձերբակալեցին և նահատակեցին Գորբոնին» (Իվ. Զավախի-  
ցիի, op. cit., 92): Միաժամանակ տրվում է տեղեկություն և  
Սմբատ խոստովանողի նահատակության մասին, վորը տեղի  
ունեցավ, ըստ հայկական աղբյուրների, 914 թվին: Ըստ այսմ

և ի նկատի ունենալով այն հանգամանքը, Վոր այս յերկասիրութիւնը Ստեփանը գրել է, ինչպես ինքն է ասում («Վրաստանի գրախտը», 393), «Աշոտ իշխանաց-իշխանի հրամանով» պարզ է, Վոր այն պետք է վերագրել 914—918 թ. թ. (հմմ. Ի. Ջալալսի-ովի, օր. cit., 91—92, Կ. Կեկելիան, օր. cit., 144):

«Բացի նրանից, Վոր մեր պատմիչը, — Իվ. Ջալալսիովի (օր. cit., 96) ասելով, — Վրաստանի և Հայաստանի քաղաքական կացութեան ու Աբու-Դ'ասիմի արշավանքի կենդանի և ճիշտ պատկերն ունի նկարագրած, նրա յերկասիրութիւնն ուշադրութեան արժանի չէ նաև իբրև վրաց հոգևորականութեան և Մեսխեթի կառավարիչ շրջանների զգացմունքներն բնորոշող մի հիշատակարան»: Յեվ իրոք, «Ստեփան Տրեթցու յերկասիրութիւնը, — նույն գիտնականի ասելով (ibid., 95), — այն ժամանակաշրջանին է վերաբերում, յերբ Վրաստանում տեղի ունեւր անշեղ պայքար միավորման համար: Այս պահին վրացիների և հայերի միջև մրցումն ու թշնամութիւնն էլ ընկալի: [Յեվ] այս պատճառով է, Վոր Ստեփան Տրեթցու կրքոտ՝ ալեկոծութեամբ լի՝ զգացմունքը գեպի հայերը և կրօնական ատելութիւնն էլ ազգայնական-քաղաքական գունավորում ունի»:

Գրեթե նույն կարծիքն է արծարծում Ստեփան Տրեթցու յերկասիրութեան մասին և Կ. Կեկելիան (օր. cit., 144). «Այս յերկասիրութիւնը տիպիկ ներկայացուցիչ է այն զրական արտադրութիւնների, Վորոնք մեղանում (վրացոց մեջ) դոյացան սկսած տասերորդ դարուց և Վորոնք լի չեն ազգայնական-կրօնական ատելութեամբ և դաշրութով գեպի հայերը»: Այլա թե Վոր՝ ինչ՞ի բացատրել այն հանգամանքը, Վոր Հայաստանի գերադրութիւնը Ստեփանը կապում է նրա «մեղապարտ» բնակիչների բացասական հատկութիւնների հետ՝ միանգամայն մոռանալով, Վոր այդպիսի դժբաղդութիւնից դուրկ չի մնացել և Վրաստանը:

Ստորև ներկայացրած քաղվածքների թարգմանութիւնը կատարված է համաձայն «վկայաբանութեան» բնագրի միակ հրատարակութեան, Վոր տիպ է Մ. Սաբինից իր «Վրաստանի գրախտ» աշխատութեան մեջ (եջ 393—400), հմմ. ուսուներն համառոտութիւնը նույնի Полное жизнеописание святых грузинской церкви աշխատութեան II մասում (Спб. 1872, стр. 57—63):

Բաղվածքները գլխավորապես հետաքրքիր են իբրև նյութեր, Հայաստանի պատմական աշխարհագրութեան վերաբերյալ:

[ՀԱՅԲԻ ՎԵՃԱԿԸ X ԴԱՐՈՒ ՍԿՉԲՆԵՐԻՆ ՅԵՎ ՍՄԲԱՏ ԽՈՍՏՈՎԱՆՈՂԸ]

[Ուրիշ հերձվածողները հետ միասին] մեղանչեց նաև Հայոց (Սոմխիթի) մեծ Տունն, ինչպես ասաց Յերեմիա մարգարեն իր վողբի մեջ...

Յեվ չենթարկվից այն (Հայքը) [հրի և] սրի՝ չարաբար, գերութեանը՝ [ան]ողորմ, սովա[մահ] ախտին և մահացու [և] անգութ բնաջնջման, Վորոնց առաջն առնող (վրկիչ) Վոր Վոք չկար, և նրանք (հայերը) ընկան ինչպես ծառերը դեռնի վրա, համաձայն Յեսայա մարգարեյի խոսքերին... Վորովհետև նրանք դեն շարտեցին առաքյալների կողմից քարոզած սուրբ կաթողիկե չեկեղեցի ուղղափառ՝ դավանութիւնը և անպատվեցին վարդապետները կողմից սուրբ ժողովներում ասածո [ներ]շնչմամբ հաստատված չեկեղեցական որինքը:

Այս [խկ] պատճառով դառնութեան արմատը տնկվեց նրանց (հայերի) մեջ և չարութեան Վորոմը բուսավ, և հերձվածողական՝ մեղքը զարգացավ և կործանման պտուղն ավելացավ նրանց գլխին, քանի Վոր մոտեցավ նրանց, Վորովհետև Հայոց (Սոմխիթի) այն հողը հպարտացել է և նրա բնակիչները վատամիտ, ագահ[ասիրտ], հանդուգն և մեղանչկոտ, հպարտ, անգութ, ատեցող և ամեն տեսակ չարութիւններով լի յեն, Վորի մեջ ապավեն չգտավ Գրիստոսը և Վորի համար վատ մեռավ Գրիստոսը՝:

Յեվ այս են նրա (Հայքի) սահմաններն և [այլ և այլ] կողմանց (ձորերի) անունները. Վան[ան]դ (Վանդի), Աշորնիք (Աշորենա), Ապահունիք (Արապունիսի), Ծաղկոտն (Կալկոտնի), Ծակատք (Ծակատի), Կոգովիտի (Գոգովիտի) չերկու ձորը, Շարուրը (Շարուր), [Վ]աս[պ]ուրականի (Ասուրականի) տասնհերկու ձորը, Վալոց ձորի (Վալոցի) չորս ձորը, Դիլինադաշտի (Դալին, Ադաշտի?) յերեք ձորը, Գեղարբունայ (Գեղբունիա) չորս ձորը, Սյունաց տաս ձորը, Տաշիրն ու Կողբոսի (Կաղբաքարը)՝:

Այս ութսունհետթ ձորերն՝ ասածո անեծքով ավերվեցին՝ իբրև հետևանք նրանց (հայոց) մեղքերի, քանի Վոր այս ձորերում՝ չգտնվեց [և Վոր մի] աթոռ ուղղափառ՝ չեպիսկոպոսների, և Վոր էլ ուղղափառ՝ վանք[եր] հավատացյալ կրօնավորների (մոնաղոնների), ինչպես հարցրեց Աբրահամը ասածուն... Յեվ ասածո

\* Բնագրում «խկթա» — մեղքով (sic), պիտի լինի «խկթա» — ձորերով:

հաճությամբ տեղից շարժվեց արարացոց (սարկինոզները) թաղա-  
վոր Աբուլսաճ ամիրայի վորդի Աբուլ-Ղասիմ կոչեցյալը և սլա-  
սից տերը, վորին հպատակ ելին վաթսուն մեծամեծ քաղաքներ  
և հնազանդ ելին չոթն հզոր թաղավորներ:

Սրանց բոլորին տալով զորք՝ բազում [և] ընտիր հաղարա-  
պետներով (կահաններով)<sup>8</sup> հանդերձ, վորոնք ղեկավար ելին հա-  
ղարանոց և տասնհաղարանոց վաշտերի, [Աբուլ-Ղասիմը] մտավ Դվին  
քաղաքը, և նրա զայրույթին հետևող հեծությունը նախազուշակում  
էր Հաչքի (Սոմխիթի) ավերմանը, ինչպես Նինուեցվոց կործանմանը,  
վորպեսզի սրանք ել զղջան: Իսկ նրանց (հայերի) սրտերը տա-  
քացած ելին՝ ինչպես յերկաթը, և սառած՝ ինչպես տիեզերքը (?),  
քանի վոր նրանց հերձվածողական մեղքը աղամանդյա չեղուն-  
գով էր [փորա]գրված չերկաթե տախտակի վրա:

... [Յեւ] նմանվեց Հայոց (Սոմխիթի) այդ Տունն այն անմիտ  
մարդուն, վորը [իր] հիմքը դայթակղության և փխրուն ավազի  
վրա դրեց, և հենց վոր շինվածքը բարձրացրին՝ այն [խկույն  
և եթ] փլավ, և մեծ էր փլչումը...

Ինչպես սովորություն ունին, նրանք (արաքները) նախ և  
առաջ ապառիկ [մնացած] հարկերը պահանջեցին, [նաև] ձիւր (նվեր)  
և ընծաներ իրենց հաղարապետներին, քանի վոր [հայերը] նրա [նց]  
հարկատու ելին: Այս անցյալի բեգարը խնդրեցին... և այսպիսի  
մեքենա [յազան յեղանակներ]ով ծծեցին նրանց նյութական մի-  
ջոցները, վորպեսզի հեշտությամբ տիրեն, վոր և չեղավ այսպես:

Յեւ չերը արարացին (սարկինոզը) սկսեց հաղթահարել, Հհան-  
դիպեց վոչ մի փորձի (հնարի), վոր հայոց թագավորը<sup>9</sup> ընդդի-  
մադրություն ցուցց տար կամ փրկություն վորոնք, քանի վոր  
աստված ճեղքել էր նրա թագավորությունը. ապա նա փախավ  
Աբխազաց (Աբխաղեթի)<sup>10</sup> լեռների կողմը, ուր վերջ ի վերջոյ  
չխուսափեց մահից, իսկ [արարացոց] այն արքան մեծ զայրութով  
սկսեց նրան փնտռել, վորպեսզի մահվան դատապարտի:

Յեւ չեկան նրանք (արաքները) Գուրգեն իշխանաց-իշխանի  
մոտ Ղուեկի բերդն<sup>11</sup>, ուր գտնվում ելին աղատները (ազնվական-  
ները) ու նրանց հետ Քրիստոսի վկա՝ չերանելի Գորբոնը...:

Իսկ չերը Սմբատ (Սումբաթ) թագավորը սուրբ Գորբոնի  
մարտիրոսությունից հետո վերադառնում էր իր չերկիրը, վոչ մի  
հնարավորություն չգտավ բացի նրանից, վոր մասներ կապույտ  
(կապոետ) բերդը: [Այս Սմբատին] այն ժամանակվա բոլոր մար-  
դիկ իմաստնազուշյն ելին համարում: Բայց չերը ասածո ոգնու-

թյունը նրանից հեռացավ և ամբողջապես ուժասպառ չեղավ, նա  
անել փակվեց [ամբողջում] և հետո ուներ բազմություն զորաց:  
Բայց [Աբուլ-Ղասիմը] այդ բերդին ել մոտեցավ, վոր և պայքա-  
րից հետո գրավեց, և Հայոց (Սոմխիթի) բոլոր իշխաններին, իշ-  
խանուհիներին և աղատներին (ազնվականներին) գերեց:

Յեւ [Սմբատ] թագավորին յերկար տանջանքից հետո սպա-  
նեց և զլխատած կախաղանի հանեց քաղաք Դվինի կենտրոնում<sup>12</sup>:

### ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Այսինքն քաղկեդոնիկ կամ յերկաքնակ (գլոֆիլոլա):
2. Այսինքն հակաքաղկեդոնիկ կամ միաքնակ (մոնոֆիլոլա):
3. Տես հինգերորդ գլխի 12-րդ ծանոթությունը:
4. Հայաստանի աշխարհագրության այս պատկերը վերին աստիճանի հե-  
տաքրքիր է, վորքան ել այդ՝ X դարու սկզբներին նկատմամբ՝ չենք դատում վոչ  
արաքական աշխարհագիրներ և վոչ ել հայ պատմիչները նկարագրությանց  
մեջ, հմմ. M. Brosset. Histoire de la Géorgie. t. I, p. 276, n. 3:
5. Տես նախորդ ծանոթությունը:
6. Տես I ծանոթ.:
7. Նույնը:
8. Վրաց «Կատա»-ը, ըստ Իվ. Ջավախիշվիլու (Վրաց իրավունքի պատմու-  
թյունը, վրացերեն, դ. II, մ. 1, Տիֆլիս 1928, էջ 142), նույն արար «դարեգ»-ն  
վոր հազարապետ է նշանակում:
9. Սմբատ խոստովանողի մասին և խոսքը:
10. Աբխաղիա (Աբխաղեթ) ասելով, վրացի հեղինակը, անկասկած, հաս-  
կանում է արևմտյան Վրաստանը:
11. «Ղվիկի բերդ» (Ղուեկիս ցլիկ) հատուկ անունը վոմանք՝ կապելով  
հասարակ «Ղվիկի» բառի հետ, վոր վրացերեն պնիր է նշանակում՝ մեկնել են  
ըստ այնմ և հասկացել «Պանրի բերդ» կամ «Պանրաբերդ». և այս և պատճառը,  
վոր Կոնստանդին Միքաեմիդի էր De administrando imperio-ի XLVI գլխում  
(Migne, Patrologiae cursus completus, series graeca, t. CXIII, 357) այդ բերդը  
կոչում է Τυροζαζορον: Նույնը Ասողիկը, ինչպես ստորև կտեսնենք, անվանում է  
«Կուեկոյ բերդ»: Ինչ վերաբերում է այդ բերդի աշխարհագրական դիրքին, հայտնի  
է, վոր այն գտնվելիս և յեղել Սամցխե-Մեխիթում (Իվ. Ջավախիշվիլի, Վրաց  
ժողովրդի պատմություն, II, 1914, էջ 323):
12. «Գորբոնի վկայարանության» մեջ նկարագրած անցքերը մասին հայ  
մատենագրության մեջ, յեթև հաշվի չառնենք Հովհան Գրասխանկերտեցվո, Սամ-  
վել Անեցվո և Ստեփանոս Որբեյանի կցկտուր տեղեկությունները, փոքր է շատ  
մանրամասն խոսում է Ասողիկը (Ստեփանոսի Տարոնեցույ Ասողիան Պատմու-  
թիւն տիեզերական, էջ 164—165) ... Ասրնիբուհ Վրաց թագաւոր և Գաղիկ  
իշխան Վասպուրականի, որ էր քեռորդի Սմբատայ, և Աշոտ որդի Ծապհոյ, կո-  
բոր Սմբատայ, ամենայն դորօքն իւրեանց միարանին ընդ նմա (Յուսուփայ), թող-  
լով ի բաց զթագաւորն Սմբատ՝ նենգագործն նախանձեալ ի շինութիւն աշխար-

հին Հայոց: Չոր խնայեալ թագաւորն Սմբատ գննեալուոր խորհուրդս նոցա՝ հանգերձ տերամբք Հայոց և ամենայն զօրօք գնաց ի դաւանն Տաճրաց ի դիւզն Օձուն, և անդուստ յԱփխազս անցանէ: Եւ Յուսուփ հետամուտ լինի մինչ ցածուրն, և մարտուցեալ ընդ Կուելոյ բերդին՝ առնու գնա: Եւ յետ այնորիկ ի Տփղիս անցանէ: Իսկ թագաւորն անդրէն ի Շիրակ դառնայ: Եւ ի դալ ամին միւսոյ դարձեալ սաստիպոյն զօրու ելանէ Յուսուփ յերկիրս Հայոց: Արդ ընդդէմ երթեալ ամենայն զօրուն Սմբատոյ ... և մարտուցեալ ընդ միմեանս .. պարտեալ զօրն Հայոց՝ ի փախուստ դառնայ: Իսկ թագաւորն Սմբատ փախտեալ ամրանայ յամուրն Կապուտայ: Եւ հետամուտ ելեալ տաճիկ զօրուն՝ գան ի դաւանն Բագրեանդայ: և ապա երթեալ հասանն յամուրն Կապուտայ: Իսկ թագաւորն ի դաւայ ազատացն, որք առ իւրն էին մնացեալ, զարհուրեալ՝ ցուպ ի ձոնն առեալ [երթայ] առ Յուսուփնո բղի Սբուսաճի: Եւ անօրնն Յուսուփ հանգերձ թագաւորան ի Դուին չուեաց, և երթեալ մարտնչէր ընդ գրեակ բերդին, որում երնջակ կոչեն, յորում ամրացեալ էին կանայք ազատացն և գանձք նոցին. և առեալ զամբոցն՝ անդրէն դառնայ ի Դուին: Եւ ապա զթագաւորն Սմբատ զփայտէ յախեալ սպանանէ ի Դուին քաղաքի յՅԿԿ թուականին»:

Թ.

## ԱՆԱՆՈՒՆ (ՄԻՆՉ X Դ.)

### ՈՐՆԵՐԳՆԵՐ ԳՐԻԳՈՐ ՊԱՐԹԵՎԻՆ

Մի որհնեբգի մեջ, վոր պահված է Աթոնի Իվերոն կոչված մայրավանքի վրացեբեն ձեռագրաց հավաքածուի X-րդ դարու մի գրչագրում, վրացիները դիմում են Ս. Գրիգոր Պարթևին (լուսավորչին) իբրև «լցնողի հայ աշխարհը աստվածային ուսման անուշահոտությամբ», այս բառերով.

«Հավատով դեպի բոլորի աստվածը հաստատեցիր Բրիստոսի յեկեղեցին անդրգլիլի ժայռի վրա»:

Մի ուրիշ որհնեբգի մեջ հին վրացիները Գրիգորին մաղթանք են ուղղում.

«Ո՛վ Գրիգոր, դու, վոր Հայաստանի աստղն ես, հիշիր քեզ հետ քո հոտին — փրկչի առաջ. շնորհիբ մեզ վողորմություն և ծավալիր աշխարհում խաղաղություն»:

(Տես II. Մարթ. Крещение армян, грузин, абхазов и аланов св. Григорием (Арабская версия), — Спб. 1905, стр. 154 = նույնը, Մկրտութիւն Հայոց, Վրաց, Աբխազաց և Ալանաց ի սբբոցն Գրիգորէ, թարգ. Յուսիկ աբխախսկոպոս, Վաղարշապատ, 1911, էջ 92):

Ա Ն Ա Ն Ո Ւ Ն (X Դ.)

«ԴԱՎԻԹ ԳԱՐԵՉԵՑՈՒ ՎԱՐՔԸ»

Դավիթ Գարեջեցին (Դավիթ Գարեջեցի), վորի անվան հետ են կապված Տփղիսի «Մամա-Կավիթ» կամ «Մթածմինդա» (Մթածմինդա) կոչված վանքը՝ նույնանուն լեռան լանջին, և «Գարեսջի բաղմալերանց» (Գարեսջիս մրավալթա) այլևիվանքերից մեկը, այն և Ս. Դավթի մայրավանք-անապատը — Ղարաչաղ կայարանից մոտ 30 կիլոմետր հեռավորությամբ դեպի այսպես կոչված «Տվարածատափ» (Իվ. Չավախիշվիլի, Վրաց ժողովրդի պատմությունը, II, Տփղիս 1914, էջ 308) = «Տոփարածատափ» (Н. Адонн, Армения в эпоху Юстиниана, стр. 314), այն և 5 վերստանոց քարտեզի «Տաուրատափ»-ն, — այն գործիչներիցն և, վորոնց սովորաբար «ասորի հայեր» են կոչում և վորոնք VІ դարումն են մուտք գործել արևելյան Վրաստան (Քարթլ-Կախեթը) քարոզչական նպատակով: Այս «ասորի հայերի» մասին մինչև վերջին ժամանակները այն կարծիքն էր տիրապետում, վոր նրանք իբր թե 13 հոգուց բաղկացած խմբով ելին միաժամանակ չեկել Վրաստան քրիստոնեությունն հաստատելու նպատակով: 1925 թվին հրատարակած իր հատուկ ուսումնասիրության մեջ «Ասորի գործիչների Քարթլի գալու հարցի մասին» (Bulletin de l'Université de Tiflis, № 6, էջ 82—107, գերմաներեն ռեզյումեով) Կոռն. Կեկելիանն ըստ վրաստանի հայոց կերպով ապացուցեց, վոր այդ «հայերը» չեկել են արևելյան Վրաստան վոչ թե 13 հոգուց բաղկացած մի խմբով, այլ զանազան խմբերով և ընդհանուր թվով վոչ պակաս քան 17 հոգի, և այն ել վոչ թե միանվագ, այլ զանազան ժամանակներ, և նրանց թվում առաջին հերթին Դավիթ Գարեջեցու խումբը բաղկացած իրեն՝ Դավթից, Ղունկիանոսից (Լուկիանոս) և Դոգոյից, մոտավորապես 520 թվին: Ինչ վերաբերում և այդ

«հայերի» ազգային (տոհմական) ծագմանը, զրա մասին տեղի ունի տարածաշուկուն. մինչդեռ վրացագիտներն ընդհանրապես և Կ. Փերսանն (Die Anfänge des Mönchtums in Georgien, Gotha 1927, S. 39—40) ու Իվ. Չավախիշվիլին (Վրաց ժողովրդի պատմությունը, I, 1928թ., 347) մասնավորապես այն կարծիքի չեն, վոր դրանք «ասորիներ» են չեղել, Կ. Բաբրանն (Վրաստանի պատմություն, վրացերեն, Տփղիս 1889, էջ 183) ու Կ. Կեկելիանն (op. cit., 102—105) նրանց բուն վրացիներ են համարում՝ Ասորիքում կրթություն ստացած: Նույնպես տարածաշուկուն և նկատվում այն հարցի վերաբերմամբ, թե միջեր ելին «ասորի» կոչված հայերն ըստ զավանության: Ընդհանուր տարածված կարծիքն այն և, վոր նրանք քաղկեդոնյան յերկարնակներ են չեղել, վոր չեկել են վրաց միաբնակների դեմ պայքարելու (G. Peradze, Die Anfänge des Mönchtums in Georgien, S. 37—38. Իվ. Չավախիշվիլի, op. cit., I, 342—343), մինչդեռ Կ. Կեկելիանն (op. cit., 88—97) ջանում և ապացուցել, վոր նրանք հակաքաղկեդոնյան միաբնակներ էլին, վորոնք ապաստան ելին դեպ Վրաստանում՝ Ասորիքում ընդհանրապես միաբնակների դեմ սկսած հալածանքներից փախչելուց հետո:

«Ասորի» կոչված «հայերի» վարքերը գրված են զանազան հեղինակների ձեռքով, վորոնց թվում Դավիթ Գարեջեցունը, իբրև անանուն գրվածք, ըստ Կ. Կեկելիանի (op. cit., 84—85), X դարու առաջին կիսի գործ է, թեև Կ. Փերսանն (op. cit., 6—8) կարծում է, վոր այն գրել յե առնված վոչ առաջ քան 1074 թ. և վոչ ուշ քան XII դարու առաջին քառյակը:

Դավիթ Գարեջեցու «վարքը», ի թիվս այլ «վարքերի» հնագույն խմբագրությունների, հրատարակեց 1928 թ. Սարգիս Կապրանն իր հատուկ աշխատության մեջ «Ասորի հայերի վարուց նախատիպերը» (վրացերեն, էջ 36—42): Իսկ հետագա խմբագրությունը հայտնի յեր վաղուց համաձայն Մ. Սարխիսի 1882 թ. վոչ գիտական հրատարակության («Վրաստանի զրախոսը», էջ 265—286): Վերջինիս ուսերեն թարգմանությունը ներկայացրած է նույն Մ. Սարխիսի գրքում Полное жизнеописание святых грузинской церкви (ч. I, Спб. 1871, стр. 133—140):

Ստորև բերած հատվածի թարգմանությունը կատարված է ըստ Ս. Կապրաննի հրատարակության:

# [ԴԱՎԻԹ ԳԱՐԵՉԵՑԻՆ ՅԵՎ ՀԱՅԵՐԵՆ (ՍՈՄԽՈՒՐԻ)՝ ԼԵՉՈՒՆ]

... Տեսնելով սուրբ [Դավիթ]ին, ինչպես նա կանգնած ազոթում էր և կաքաչվը նստած էր նրա վրաների կողքին, ոտարազվին (բարբարոսը) դիմեց նրան՝ ասելով. «Ո՞վ ես դու». և նա (Դավիթը) սրտասխանեց հայերեն (սոմխուրի) լեզվով. «Յես մարդ եմ մեղապարտ, ծառա մեր աստված Հիսուս Քրիստոսի...»<sup>2</sup>

## ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. «Սոմխուրի»-ի մասին մանրամասն տես Բ. սրբակի 2 գլխի 8-րդ ծանոթությունը:

2. Կանգ տանելով այն հարցի վրա, թե սվեթեր կլին իրենց ազգային (սոմախան) ծագումով «ստորի հայրերը», Ս. Կախարաձեն (օր. ԲԻ, 16), ի միջի այլոց, հայտնում է. «Այն մասաը, վոր Դավիթ Գարեջեցին բարբարոսի հետ հայերեն էր խոսում, վոր հելլասական է համասպատասխան վարուց ինչպես նախատվայ, նույնպես է մետաֆորատ խմբագրությունաց մեջ, ինքնըստինքյան վոչինչ չի աղացուցում»: Իսկ մենք, ընդհակառակը, կարծում ենք, վոր այս հանդամանքը վորտը բան կարող է աղացուցել, յեթե, ի հարկե, ի նկատի ունենանք այսպես կոչված «Կախիթի և Հերեթի գլուխածոց» այն տեղը, ուր X դարու անցքերի նկարագրության ժամանակ ասված է, վոր «մինչ Գինար թողուն հին ու սրա վորդի Իջևանիկն Հերեթը հերձվածոց էր» և այս Գինար թողունին փոխադրեց (ուղղեց) Հերեթը հայոց հերձվածքից գեպի ուղղափառություն» (Վրաց ասորիզությունը, վրացերեն, Կ. Ս. Չուրիձովի խմբ., ՍՊԲ. 1854, էջ 97, հմմ. Կ. Մորր, Арк'аун. Монгольское название христиан в связи с вопросом об армяно-халкедонитах, — «Визант. Временник», т. XII, 1905, стр. 7): Վորտը բան կարող է աղացուցել, ըստ մեր հետազոտության, նաև այն, վոր Դավիթ Գարեջեցու մայրախնքը հնում «հալատացյալ» հայերի ամենասիրված ուխտատեղին և յեղև, վորը հրապուրել է գեպի իրեն ուխտավորներին վոչ միայն Տիգրիսից ու Կախիթից, այլև Հայաստանից, և սրա աղացուցը և 20-ի չափ հայերեն արձանագրությունները XIII—XVIII դարերի (սրանց թվում մի քանիսը հայերեն-վրացերեն, իսկ մեկը՝ 1352 թ.՝ վրացերեն-հայերեն-պարսկերեն-ուլդուերեն), վոր մենք յերևման ենք հանել այդ մայրախնքի գանաղան այրերում գեռ կլի 1921 թվին և ստուգել 1929 թվին և վորը սրտարատած ունինք սոխադրության աշխատությունս մեջ «Հայերեն արձանագրությունները Վրաստանում» (այդ արձանագրություններից մի քանիսի մասին առայժմ տես Լ. Մելիքսեթ-Բեկ, Տիգրիսի վանքի հիմնադրության հարցի շուրջը, վրացերեն, — «Bulletin de l'Université de Tiflis», IV, 1924, էջ 87 et pass. Լ. Մելիքսեթ-Բեկ, Սոխադ-նովա, վրացերեն, Տիգրիս 1930, էջ 27, 60, ծանոթութ. 1): Ի դեպ, արժանի յե հիշատակել, վոր այս «Գարեջե» մասնային է, վոր հիշվում է Ստ. Որբեյանի պատմության Կե գլխում («Մամթավարն Գարշուղացն», Տիգրիս 1911 թ. հրատ., էջ 355) «Գարս-ջեուցն» → «Գարշուղացն»:

ԺԱ.

## ԳԵՈՐԳ ՄԵՐՉՈՒԼ (X Դ.)

### „ԳՐԻԳՈՐ ԽԱՆՁՁԵՑՈՒ ՎԱՐՔԸ“

Գեորգ Մերչուլը (Գեորգի Մերչուլին), վորն ասորում էր X դարում, հեղինակ է «Գրիգոր Խանձձեցու վարք» կոչված հագվադյալ յերկասիրության, վոր գտնվում է Յերուսաղեմի Հուշաց պապերաբարանի մատենադարանի վրացերեն ձեռագրերից մեկում (իրրե unicum): Այդ յերկասիրությունը վերստին հրատարակ հանեց և լույս ընծայեց հանդերձ ուսուիրեն թարգմանությամբ Ն. Մառ իր սովար աշխատության մեջ „Георгий Мерчул. Житие св. Григория Хандзтийского. Грузинский текст. Введение, издание, перевод“ [Тексты и Разыскания по армяно-грузинской филологии, кн. VII], Спб. 1914: Իսկ Ն. Մառի աշխատության համաձայն նույնը լատիներեն թարգմանությամբ հրատարակեց Paul-Peters-ն իր Histoire monastique Géorgiennes-ի մեջ [Extrait des „Analecta Bollandiana“, t. XXXVI—XXXVII], Bruxelles 1923:

Ինչպես ինքը հեղինակը՝ Գեորգ Մերչուլն ասում է (էջ պ), նա իր յերկասիրությունը գրել է Գրիգոր Խանձձեցու մահվանից ինսուսն ասորուց հետո: Բայց քանի վոր վերջինս, ըստ նույն հեղինակի, վախճանվել է 861 թվին (ib.), ուրիմն այդ յերկասիրությունը գրված պիտի լինի 861+90=951 թվին: Բացի սրանից, ուրիշ վոչ մի տեղեկություն Գ. Մերչուլի մասին գոյություն չունի: Նույնիսկ նրա մականունը՝ «Մերչուլ» գեռ լուսաբանած չէ. այսպես Ն. Մառը վոչ մի խոսք չի ասում նույնիսկ նրա մասին, թե ինչ է այս վերջինս նշանակում՝ աղգանուն թի մականուն, իսկ P. Peters-ը՝ համարելով այն աղավաղման հատկանք՝ առաջարկում է (օր. ԲԻ, 209—210) ուղղել «Մերչուլ»-ը «Մերկուլի»-ի\*,

\* Սրա գեռ տես Կ. Դոնդա, Творение Мерчула в латинском переводе белгийского ориенталиста, — „Тексты и Разыскания по кавказской филологии, т. I, Липр. 1925, стр. 15, прим. 2:

հասկանալով Վերջինիս տակ, ըստ յերևույթին, տեղի անդանր ցուցիչ (Մերէ — Մերէուլի Մերէցի): Վերջապէս, Պ. Միրխանաւովիին՝ Ն. Մառի աշխատութեան վրա գրած իր գրախոսականում («Մախալիս դաղեթի» 1912 թ. № 503) առաջարկում և կապել այն «բչուլ-ի» (= «բջուլ-ի» || «սջուլի» || «շջուլ-ի») բառի հետ, զոր նշանակում և կրնի, և ըստ այսմ մեկնել այն իբրև կրօնագիտ, կանոնագիտ (կանոնիկոս):

Գեորգ Մերչուլի գրվածքի նշանակութեանը հայադիտական տեսակետով բավականին հաջող արված և Ն. Մառի աշխատութեան մեջ, ուր, ի միջի այլոց, կարգում ենք. «Житие Григория Хандзтийского впервые открыло, что грузины никогда не прерывали в древности близкого общения и в церкви со всем армянским миром. Они ослабили связь лишь с одною его частью, конфессионально разномыслящею. Что же касается конфессиональных единомышленников, армян-халкедонитов, грузины подерживали с ними интимную дружбу и самое тесное общение, завершавшееся постепенно полным слиянием этих армян с грузинами вплоть до утраты ими своей национальности. Из Жития Григория Хандзтийского узнаем, с каким уважением продолжали грузины относиться к памяти армянского католикаса Персеса, с каким благоговением вспоминали об его постройках, очевидно, в виду халкедонитских взглядов этого армянского патриарха»<sup>\*\*</sup>:

Ստորև մենք բերում ենք մի հատված Գեորգ Մերչուլի գրվածքից՝ Բշխանի աթոռին և Ներսես Բշխանցուն վերաբերյալ համաձայն Ն. Մառի հրատարակած բնագրի:

### [ԻՇԽԱՆԻ ԱՅՈՒՇ]

Կամօքն աստուծո Սարան յեպիսկոպոս կարգվեց Բշխանու՛ յերանելի Ներսես (Ներսէ) կաթողիկոսի կառուցած կաթողիկէ յեկեղեցում ու նրա աթոռին, զոր յերկար տարիներ այրիացած էր<sup>1</sup>:

<sup>\*\*</sup> Գեորգ Մերչուլի և նրա յերկատիրութեան մասին ընդհանրապէս տես, բացի վերև հիշած գրականութեանից՝ Իվ. Ջավախիշվիլի, Հին վրացական պատմական գրականութեանը, 96—111. Կ. Կեկելիձե, Վրաց գրականութեան պատմութեան, I, 148—153. մասամբ Н. Марр, Батум, Арцаган, Карс — исторический узел межнациональных отношений Кавказа, Пгр. 1922, стр. 13—16:

### ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ

1. Ներսես Բշխանցու մասին առհասարակ տես հինգերորդ գլխի 81-րդ ծանոթութեան մեջ: Ինչ վերաբերում և Բշխանին, որա մասին հետաքրքիր և հիշելի Հակոբ Կարնեցու (Կ. Կոստանեանց, Յակոբ Կարնեցի. Տեղագիր վերին Հայոց-Յիշատակարան ժէ. գարու. Վաղարշապատ 1903, էջ 17—18) հետեւյալ նշանակալից խոսքերը. «Նւ կայ ի մէջ ձորոյն [ձորոխի] մեծամեծ վանորայք վրաց ի դիւզն Սախուլի, Ոշլի և Բշխան, որ յար և նման ոչ գոյ նոցա, բայց թէ լինի միայն սուրբ Սոփի ի Կոստանդինուպոլիս: Եւ էին բնակիչք երկրիս կէան հայ ազգաւ և կէան կրօնիւք վրացի, բայց հայի լեզուաւ խօսէին»: Բշխանի յեկեղեցու վրացիներն արձանագրութեանները, զոր բնորոշնակել էր Վենեակի միթիարքան Է. Ներսես Սարգիսանը, հրատարակել և M. Brosset — Notices concernant les inscriptions géorgiennes, recueillées par le P. Nerses Sargissian («Mémoires de l'Académie Imperiale des sciences», VII sér., t. VIII, № 10, p. p. 14—20, tabl. III, IV ibid.): Մանրամասնութեաններն ու հարցիս բերվող բանական տես մեր հասուկ հոդվածում. Ա. Меликсет-Бекоев, Местечко Пшхан Эрзерумского вилайета (Историческая справка), — «Тифлисский Листок» 1915 № 107:

ՅԵՓԻՄԻՈՍ ԱԹՈՆԵՅԻ (X—XI Դ.)

VI ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ԿԱՆՈՆՆԵՐԸ (ՎՐԱՑԱԿԱՆ ՎԵՐՍԻԱ)

Յեփիմիոս Աթոնեցին (եքզիստիս Աթոնեցին) կամ Սեկոնեցին (Միթամիդեցին) վրաց սքոլաստիկ-յեկեղեցական գրականություն խոշոր գեմբերից մեկն է, Վորը վախճանվել է 1028 թվին 65 տարեկան հասակում, ծնված լինելով, ուրեմն, 963 թվին: Յեվ նրա մասնակցությունն այդ գրականությունը գրեթե բոլոր բնագավառներում այնքան բազմակողմանի չէ, Վոր Վ. Կեկելիձենի (Վրաց գրականություն պատմություն, I, 182—211) նույնիսկ նպատակահարմար է գտնում սալ այդ մասնակցություն մանրամասն աեսությունը, բաժանելով 9 ճյուղի. 1) բիրրիտրոյա, 2) աղոթքիֆներ, 3) եկեղեցախա (մեկնարանական), 4) գավանաբանական-հակաճառական, 5) աակետիկա և միատիկա, 6) համբլեախիկա (ներբողյաններ), 7) հագրոգրաֆիկա (վարքարանական), 8) լիտուրգիկա (աստվածաշարական կամ ծիսակատարություն) և 9) յեկեղեցական իրավունքը: Միթամանակ՝ Յեփիմիոսը հայտնի է մոչ միայն իբրև հեղինակ բազմաթիվ ինքնուրույն գրվածքների, այլև իբրև թարգմանիչ հունարենից վրացերեն և, նույնիսկ, վրացերենից հունարեն: Նրա «Վարուց» (կենսագրություն) հեղինակ՝ Գեորգ Աթոնեցին (Սեկոնեցին) ուղղակի ասում է (Աթոնի իվերոն վանքի 1074 թ. գրչագիրն ազագյներով, վրացերեն, Տիգրիս 1901, էջ 4—«Վրաստանի գրախոր», 403), Վոր Յեփիմիոսը «թարգմանից վրացերենից հունարեն Բարսիլաթե ու Աբուկուրան և մի քանի ուրիշ գրություններ»: «Բարսիլաթը»՝ դա, անկասկած, Բարսիլաթի և Հովասաֆի գրույցն է, իսկ «Աբուկուրայ»-ի հարցը մինչ օրս լուծված չէ (Ն. Մելիքսեթ-Բեկով, К вопросу о Феодоре Абукуре в древнегрузинской литературе. — Известия Кавказ-

ского Историко-Археологического Института», т. IV, 1926, стр. 41—50):

Առանձնապես ուշագրավ է Յեփիմիոսի գործունեությունը յեկեղեցական իրավունքի բնագավառում: Այստեղ նրա անվան հետ կապված է մի շարք «կանոնական» գրությունների թարգմանությունը հունարենից վրացերեն, Վորոնց թվում—1) այսպես կոչված՝ Հովհան Պանոպի կանոնագիրքն (Н. А. Заозерский и А. С. Лаханов, Помокачон Иоанна Постника в его редакциях грузинской, греческой и славянской, Москва 1902) ու 2) VI ախեղերական ժողովի կանոնները (А. С. Лаханов, Правила VI вселенского собора, в грузинской редакции, Москва 1903) Վերջինս Յեփիմիոսն վերամշակել է և յուրատեսակ գասաղորել՝ այնպիսի նյութեր մտցնելով մեջը, Վոր հունարեն բնագրում չկա և չի յեղել\*: Այսպիսի նյութերիցն է, ի միջի այլոց, 68-րդ կանոնը, Վոր հատկապես վերաբերում է հայերին և Վորի մասին Ա. Խախանովը (Ա. Խախանովի) գրում է հետևյալը (Правила VI вселенского собора, стр. 84, 87): «В груз. тексте правило 68 предлагает чтение, не имеющее параллели в греко-слав. тексте. Оно объясняется результатом религиозных прений между грузинами и армянами... Сличение грузинского перевода Правил с греко-славянским текстом показывает их разницу в составе, распределении и деталях материала; некоторые правила первого отсутствуют во втором и обратно. Это обстоятельство в связи с другими фактами дает основание предположить, что грузинский перевод или восходит к особой неизвестной греческой редакции, или же представляет самостоятельную переработку их на грузинской почве. Внимательное рассмотрение грузинского текста склоняет меня ко второму предположению. Самостоятельной переработкой следует объяснить устранение полемики против римской церкви и усиление состава правил против церкви армянской»:

Ստորև մենք գտնում ենք այլ և այլ կանոնների թարգմանությունը բազմաթիվ համաձայն Ա. Խախանովի (Խախանովի) հրատարակության:

\* Հմմ. նաև՝ Իվ. Ջավախիշվիլի, Վրաց իրավունքի պատմությունը, վրացերեն, գ. I, Տիգրիս 1928, էջ 30—31:

„ՀԵՐՁՎԱԾՈՂ ՀԱՅԵՐԸ“

[Կանոն] 16... Հարկավոր չե պահել յոթնյակի այն պատը, վորին առաջ[որ<sup>1</sup> են կոչում [և] վորը պահում են հակորթիները...

[Կանոն] 17. Նույնպես լսեցինք, վոր Հայոց (Սոմխիթի) յերկրում սուրբ պատերի շարավ-կերակլի [որերը] ուտում են պանիր և ձու և ամեն [տեսակ] կաթնեղին. սա անթույլատրելի յե և անկանոն<sup>2</sup>...

Յեղ այս ել լսեցինք, վոր Հայոց (Սոմխիթի) յերկրում կաթնեղինը և ձուկը և գինին միա[տեսակ] են դնահատում, և սա անմատթյուն և և հիմարություն<sup>3</sup>...

[Կանոն 33]. Այս ել լսեցինք, վոր Հայոց (Սոմխիթի) յերկրում և մի քանի ուրիշ յերկրներում «սուրբ աստված» սրբատաջությանն ալիւրացնում են՝ «սուրբ [և] անմահ, վոր խաչեցար վասն մեր, վորսմայ մեզ», վորը նրանց լեզվով «խաչեցար» և կոչվում, ... վորը [սակայն] Քաղկեդոնում ժողոված հայրերը... հանեցին<sup>4</sup>...

[Կանոն] 34. Այս ել լսեցինք, թե [ինչպես] Հայոց (Սոմխիթի) յերկրում քահանայության [աստիճանները] բաշխում են [նրանց], վորոնք քահանաների ազգակից եյին, և այս որինքը յերբայական և...

[Կանոն] 68. Այս ել հասավ մեր ականջին, վոր Հայոց (Սոմխիթի) յերկրում չեն ընդունում սուրբ և պատվական պատկերներին նկարում և վոչ ել յերկրապագում են նրանց (պատկերներին)<sup>5</sup>...

Վորովհետև անորին Պետրոս Թափիչն ինչպես «խաչեցար»-ն ուսուցեց նրանց (հայերին), նույնպես ել այդ չար հերձվածքը ցանկեց նրանց մեջ<sup>6</sup>...

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Տես հինգերորդ գլխի 13-րդ ծանոթությունը
2. Տես Ա. Мелуксет-Бекоев, Грузинский извод сказания о поете «араджавор», стр. 87—88, 103—105:
3. Ibid.:
4. Տես հինգերորդ գլխի 12-րդ ծանոթությունը
5. Հարցիս վերաբերյալ տես Արիտակէս եպ. Սեդրակեան, Հայաստանիայի եկեղեցու պատկերապագութիւնը, Պատմական տեսութիւն. ՄՊՖ 1904:
6. Պետրոս Թափիչի մասին տես Ա. Мелуксет-Бекоев, ibid., էջ 100—108:

ԺԳ.

ՅԵՓԻՄԻՈՍ ՅԵՐՈՒՍԱՂԵՄԱՑԻ (X I Դ.)

ՀԱՎԱՃԱՌՈՒԹՅՈՒՆ ԸՆԴԴԵՄ ՍՈՍԹԵՆԵՍ ՄԱՐՄԱՇԵՆՑՈՒ

Յեփիմիոս Յերուսաղեմացին կամ Յեփիմիոս Յերկարը (Եփիմիմե Գրձեղին) հայանի յե իրրե ժամանակակից Բագրատ IX վրաց թագավորի (1027—1072), վորի պատվերով նա հատկապես կանչվել և Անշալից (Տալք-Կղարջքից)՝ մասնակցելու 1046 թվի այն բանակովին հայոց Սոսթենես վարդապետ Մարմաշենցու հետ, վորը տեղի յե ունեցել Ղրախլայում: Այդ բանակուիւր վորոշ արտահայտություն և գտել համապատասխան գրվածքի մեջ, վորը կրում և հետևյալ ընդարձակ վերնագիրը. «Կրոնավոր Յեփիմիոս Յերկարի (Եփիմիմե Գրձեղի) հակաճառությունը Սոսթենես հայոց վարդապետի ընդդեմ» և վորը հրատարակել և Մ. Սաբինիկը իր «Վրաստանի գրախար» ժողովածուի մեջ, էջ 615—621 (հմմ. նույնը համատոտ՝ Թ. Ժորդանիա, Քրոնիկաներ. I, 126—127): Այլապես այս Յեփիմիոս Յերկարն կամ Յերուսաղեմացին վրաց գրականության մեջ սկի չի հիշատակվում և մինչ Կ. Կեկելիձեյի հատուկ ուսումնասիրության հրատարակումը (Յերկու Յեփիմիոս վրաց չին գրականության մեջ. Սեկունեցի թե՛ Յերուսաղեմացի. Վրացերեն, — «Չվնի մեցնիբերա», № 2—3, 1923 թ., էջ 102—121) նրան շփոթում եյին Յեփիմիոս Աթոնեցու կամ Սեկունեցու հետ, վորը X—XI դարումն եր գործում: Նույն Կ. Կեկելիձեյի (Վրաց գրականության պատմություն. I, 534—535) կարծիքով, Յեփիմիոսի Հակաճառությունը մեկն և այն յերկարություններեց, վորոնց ազդուր և ծառայել այսպես կոչված Պասխոբի-ին (տես այս պրակի վեցերորդ գլխի ներածությունն ու Բ. մասը):

Հայոց գրականության պատմության տեսակետից այս Հակաճառությունը հետաքրքիր և նրանով, վոր զուգադիպում և, մեկ կողմից, Անանիա Սանահնեցվո «Գիրք հակաճառութեան և

ընդդիմաբանութեան ընդդէմ երկարնակաց»-ին, վոր գրվել է 1054 — 1060 թ. թ., և մյուս կողմից, Հակոբ Բարբառնեցվո ընդդիմախոսութեանը հունաց գեմ Կոստանդնուպոլսում 1059 — 1068 թ. թ. (մանրատպանութեանները տես Լ. Մելիքեթ-Յեզ, «Վարդապետը Հայոց հիւսիսային կողմանց» ԵԼԵ., 97 — 120, ասանձնագրես 104 — 105):

Ստորև մենք գնում ենք Յեփիմիոս Յերուսաղեմացվո Հակաձառութեանից քաղած համապատասխան կտորների թարգմանութեանը համաձայն Մ. Աարիճիճի վերոհիշյալ հրատարակութեան:

### ՀԱԿԱՃԱՌՈՒԹՅՈՒՆ ԸՆԴԴԵՄ ՍՈՍԹԵՆԵՍ ՀԱՅՈՑ ՎԱՐԴԱՊԵՏԻ

Ասածո ծառա Բագրատ թագավորի որոք ժողով կայացաւ Ղըբախլալում<sup>1</sup>, վնչ իբր յեկեղեցական, ալ առավել զինվորական: Կար մի վանական (մոնողոն) ծագումով հայ (սոմեխ), վարդապետ և շատազով (առաջնորդ) նրանց (հայոց) կրօնի, անուշով Սոսթենես<sup>2</sup> (Սոսթենես), վորը ճարպիկ լեզու ուներ և հույժ գիտուն էր գրոց և նրանց (հայոց) անհավատարի ու թեք դավանութեան: Սա, ըստ սովորույթի, յեկաւ Բագրատ թագավորի մոտ, և սկսեց մեծամտութեամբ ու հոյարարեան գովել իր (հայոց) կրօնը և կշտամբել ու պախարակել մեր (վրաց) դավանութեանը: Յե՛ վ ալն պահին [Բագրատին կից] վոչոր չգանձեցաւ ու ժող ընդդիմախոս, բացի նրանցից, վորոնք՝ մի վորք տեղյակ լինելով՝ հանդիպեցին նրան (Սոսթենեսին), [այն և] Մելքաձե Ծուրծղարեցին, Սանանու Ղվեկեցին, Գրիգոր Արվիսերիձեն [և] վոմն Գարբիել Ուկիսձեն<sup>3</sup>: Սակայն սրանք չկարողացան ընդդիմադրել [Սոսթենեսին]՝ նրանց (հայոց) գրոց անտեղյակ լինելու պատճառով: Ապա Դավիթ Բիճիսձեն գիտեց թագավորին՝ ասելով. «... Գիտցիր, վոր մեր ուժերից վեր և կատարելապես ընդդիմադրել Սոսթենեսին (Սոսթենեսին), յեթև չկանչես աշտակ Յեփիմիոս Յերկարին (Եփիմիոս Գրձեխին)»: Թագավորը պատասխանեց Դավթին. «Իմ թագավորութեան վո՛ր տեղումն և գանձում նա ալմ»: Դավթը կրկին գիտեց թագավորին. «Լսել եմ, վոր նա ալմ Յերուսաղեմից յեկած է և գանձում և արքեպիսկոպոսական գրանը՝ Անչալում»<sup>4</sup>: Թագավորը, հենց վոր լսեց այս, հույժ ուրախացաւ և իսկույն և եթ գիտեց արքեպիսկոպոսին, վորպեսզի կրօնավորին իրեն մոտ բերի: Իսկ արքեպիսկոպոսն անհատալ յեկաւ կրօնավորի հետ միասին թագավորի մոտ: ... Հայոց (Սոմիթի) մեծ վարդա-

պետ Սոսթենեսն (Սոսթենեսն) էլ յեկաւ իր քվեորդու հետ միասին: ... Թագավորն կարգով վողջունեց նրանց և հրամայեց նստել ըստ ծիսի: Ապա Սոսթենեսն (Սոսթենեսն) բացեց բերանը և ասաց թագավորին... «Իսկ կանչեցիր քո թագավորութեան մեջ [գանձող] թողոր կրօնագետներին, վորպեսզի բոլորը միասին ամբողջ ինձ և ալն ժամանակ գու կհասկանաս մեր (հայոց) դավանութեան ուժը և ձերի (վրացոց) թուլութեանը: Բայց յես ձեր արքայութեանից խնդրում եմ ալնպիսի հրաման արձակել, վոր յեթև յես քո կրօնագետներին կողմից հաղթվեմ, տկար դուրս հանն ինձ քո պարտաից: Իսկ յեթև նրանք հաղթվեն ինձանից՝ կարգալույծ անես [և] ալնոր [նրանց] հանես քո պալատից»: ... Ապա կրօնավորը գիտեց [Սոսթենեսին]՝ ... «Յես սուրբ քաղաք Յերուսաղեմիցն եմ գալիս, ... վորպեսզի մերկայանեմ ձեր (հայոց) շարափառութեանը: ... Իսկ գու վո՛րտեղից ես գալիս, չգիտեմ. Արքեմայից<sup>5</sup> և Մարմաշենիցն<sup>6</sup> էս գալիս ու հետզ բերում Նեստորի, Սեբաստի և Պետրոս Թափիչի աղանդը և քեզ թույլ ես տալիս բամբասել ասածո ժողովրդին և հակառակիլ ուղիղ դավանութեանը»: ... Ապա կրօնավորը (Յեփիմիոսը) նորից գիտեց նրան. «... Իսկ (հայերը) ես տիեզերական ժողովներն հետն ելիք մինչ չորրորդ ժողովը: Իսկ յերբ դուք ձեր թագավորին և յերկիրը մտանցելք պարսիկներին և՛ բաժանվելով՝ հույներից (բերձեններից)՝ միացաք պարսիկներին հետ, Սոսթեմ (Սոսթեմոյ) ու նրա վորդի Շապուհի (Մարուրի) որոք ժողով գումարեցիք Դվիսում<sup>8</sup> և թեք դավանութեանը գծեցիք ներշնչմամբ Արքեմոյի (Արքեմոյի)<sup>9</sup>, վորը Պարսից թագավորի գործակալն (վեղիբն) էր Հակոբ Բրտանեցվո ազանդից<sup>10</sup>, քանի վոր ներշնչում էր Պարսից թագավորին թողնել կրակապաշտութեանը, իսկ հայերին՝ հունաց (բերձեններին) կրօնը: [և դուք (հայերը) յենթարկվեցիք նրա միատուններին]... համաձայնութեամբ ձեր ներսես կաթողիկոսի: վորը վոսկով էր ներկում իր մորուքը, և նրա փակակալ (լուսարար) Սարգսի, վորը նույն աղանդով էր վարակված<sup>11</sup>, և ալնպես կատարում էլին սատանայի կամքը, և վորպեսզի սերաշահեն ժողովրդի [սիրտը] պատվան շարաթ-կիրակին [հայտարարեցին] ուստ՝ կաթնեղնով<sup>12</sup>, իսկ բարեկենդանը՝ մալով], և ալնպես միացաք պարսիկներին հետ: Յե՛ վ ալն էլ կասեմ, քաղելով ձեր գրքերից, թե ինչպես և գրված Գրիգոր Լուսավորչի տեսլյան մեջ<sup>13</sup>, վոր դուք՝ վոչխարներ լինելով և ջուրն ընկնելուն պես վիրավորվելով՝ կերպարանավորվեցիք ալմերի: նաև սուրբ Ահակի տեսիլքներից<sup>14</sup> ... [ուր նախագուշակված էր], վոր փայ-

դիւր յի հյուսիսային մեծ իշխանն Դավթի զարմից<sup>15</sup>, վորն և կաճի հողովն աստուծո և բարվոք կզտի ամեն ինչ ձեր պատմութան<sup>16</sup>-ից»։ Սոսթենեսը (Սոսթենան) ասաց կրօնավորին. «Անիծյալ լինի ով վոր քեզ ծանօթացրեց պատմութանս-յի հետ...»։ Կրօնավորը պատասխանեց. «Անիծյալ լինի Պետրոս Թափեղը, վորը քեզ սովորեցրեց «խաչեցար»-ը և ազախոզեց յերկարորսն սրբասացութեանը...»<sup>17</sup> Իսկ Սոսթենեսը (Սոսթենան) նորից սկսեց զիճել կրօնավորի հետ՝ զովարանելով Պետրոսի վարդապետութեանը, և կրօնավորն ասաց. «Ձե՛ վոր նա (Պետրոսը) իրավացի և բոս արժանվույն վաճառեց և անպատուութեան յենթարկելից ու կարգալուծ յեղով յերկրագլխութեանից... ապա՛ զալով ձեր (հայոց) յերկիրը՝ Երեւն աշար ազանդով և ժողովրդեցից անկիրթ ժողովուրդը... [վորին] Միքայիլ Վրաց (Քարթլիի) կաթողիկոսն, ինչպես յերբեմն Դավթի մարգարեն Գովթաթի վրա, քարով զլուխը ջարդեց՝ բռնաբարելու և հողարատու նրա հետեւորներն ներկայութեամբ...»<sup>18</sup>։

Ապա թագավորը զիմեց Սոսթենեսին (Սոսթենային) ասելով. «Ունի՛ս արդյոք ելի վորեւ ասելիք մեր դեմ թե՛ միանգամայն պարավիցեր»։ Սոսթենեսը (Սոսթենան) պատասխանեց թագավորին. «Յես վոչ թե մարդուց հաղթիցի և վոչ ել հաղթիլ եմ, այլ ճշմարտութեանիցն [եմ պաշտպան]»։ Կրկին զիմեց թագավորը Սոսթենեսին (Սոսթենային). «Եւ ինչո՞ւ չես լինում [զալանա]փոխ»։ Սոսթենեսը (Սոսթենան) պատասխանեց. «Ինչպե՞ս թողնեմ Մարմաշենը»։ Իսկ թագավորն ասաց. «Նրա (Մարմաշենի) փոխարենը մեղանից ստացիր»։ Սոսթենեսը (Սոսթենը) պատասխանեց. «Այդպես հեշտ չե ինձ համար թողնել Մարմաշենը»։ Ապա կրօնավորը զիմեց Սոսթենեսին (Սոսթենային). «Այժմ իրագործիր այն ուխտը, վորը քո իսկ բերանով արտահայտեցիր, և մերկ ու անքողարկված մարմնով դուրս յելիր, վորովհետեւ ուզեց հավատքի քող չունիս»։ Իսկ թագավորն ասաց կրօնավորին. «Ինձ շնորհիր այդ պատիվը, և բալական և այն ամոթը, վոր թափվեց նրա (Սոսթենեսի) գլխին»։ Ապա Սոսթենեսը (Սոսթենան) վեր յելավ միանգամայն հաղթված, ընկճված ու ամոթահար բոլորի առաջ, և հեռացավ...

### ՄԱՆՈՔՈՒՅՈՒՆՆԵՐ

1. Այս Վրասիան վրացագիտներն ընդհանրապես և վերջերս Կ. Կեղեղիանն ել մասնավորապես հայտնի չե թե ինչ պատճառով ճորտի ազազանուսն կցին փնտուսմ նույնացնելով Արամուշի հետ։ Բայց դա սխալ և ինչպես դեռ 1914

թվին իրավացի մասնանշել եր Կ. Ջավախիշվիլին (Վրաց ժողովրդի պատմութեանը, II, 322), «Վրասիան նույն Իսախան և, Փարսիանա [իճից] զեպի հյուսիսարեւմուտք, վոր նշանակված և այժմյան 5 վերստանոց բարեկի վրա»։ Իրոք, Իսախան այժմյան Ջավախուսն և գտնվում Բարսիլի-Սամսար մտերբում և հայտնի է իբր հուսթեյաններով (Сборник матеріалов для описания местности и племен Кавказа, вып. XIII, Тфл. 1892, отд. I, стр. 128—131)։

2. Համաձայն Կ. Ջավախիշվիլու հետազոտութեան (op. cit., II, 438—439), Բագրատը Ջավախուսն և յեղել՝ զբաղված լինելով պատերազմական զործողութեաններով՝ մոտավորապես 1046 թվին։ Այս իսկ պատճառով նրա ձեռներեցութեամբ հրավիրված «զինորական» ժողովը, վորն մասին խոսվում է Յեփիմիոսի Հակոճառութեան մեջ, նույն 1046 թվին պետի վերաբերել (հմմ. Կ. Կեղեղիան, Յերկու Յեփիմիոս վրաց հին զբաղանութեան մեջ, էջ 114)։

3. Խոսքը Սոսթենես Մարմաշենցու մասին և, վորը հայտնի չե Մարմաշենի 1029 և 1033 արձանագրութեաններից (Надписи Мармашена. Собрал и приготовил к печати Иосиф Орбели [Памятники армянской энциклопедии]. Пгр. 1914, стр. 1, 3), նաև Գրիգոր Մագիստրոսի թղթերից (Կ. Կառամանյան, Գրիգոր Մագիստրոսի թղթերը, Աղեքսանդրոպոլ 1910, էջ 101—104), իրրե «առաջնորդ սուրբ ուխտին Մարմաշենոյ» 1033 թվից։ Տես նաև՝ Կ. Կեղեղիան, Յերկու Յեփիմիոս վրաց հին զբաղանութեան մեջ, 110—113, հմմ. Կ. Մեղիֆան-Բեկ, «Վարդապետը Հայոց հիւսիսային կողմանց» ընդ., էջ 105, ծան. 3։

4. Բոլորն ել անհայտ գեղեր են վրաց զբաղանութեան ասպարիզում։

5. Այսինքն Կյարջբուն։

6. Հայոց կաթողիկոսների աթոռանիստն եր (Շիրակում) 944—992 թ. թ., հասարակ մի վանք և ալան (Վ. Ալիշան, Շիրակ, 12—13)։

7. Մարմաշենի վանքը, վոր գտնվում է Մարմաշենի հարավարևմտյան կողմում և (ուզելով հիմնադրված է) 988 թին Գրիգոր Մագիստրոսի հորեղբոր՝ Վահրամ Պահլավունու ծախքով։ Սրան ապացույց կարող է ծառայել Մարմաշենի կաթողիկոսի հարավային պատի արձանագրութեաններից մեկը, վորը սկսվում է այսպես. «Շնորհիւն աստուծոյ եւ Վահրամ իշխանոց իշխան և անթիկոստ պատրիկ որդի Գրիգորի իշխանի Հայոց Մեծացի ցեղե Պահլավունի և և զարմից սրբոյն Գրիգորի Հայոց Լուսաւորչի, որ յաղագս ի Քրիստոս յուսոյն հիմնադրեցի զսուրբ և և զաթեղիքական ուխտս Մարմաշեն սկսեալ ի ՆԱԷ թուականին Հայոց...» (Մ. Օրբելու, Надписи Мармашена, стр. 1)։ Բայց նույն Մարմաշենում կան նաև մի ուրիշ արձանագրութեան, նույն կաթողիկոսի նույն հարավային պատի վրա, վորը սկսվում է այսպես. «Շնորհիւն աստուծոյ եւ Մարիամ Ափխալացի և Հայոց թագուհի, զուստը մեծին Սենեքերիմա և և թոսն Գագիկ Հայոց արքայի, որ հասն զարթուս ի սուրբ և և թիեղիքական ուխտս Մարմաշեն առաջնորդութեամբ հաւր Սոսթենեսի...» (ibid., 3)։ Ըստ այսմ, Կ. Կեղեղիանն (Յերկու Յեփիմիոս վրաց հին զբաղանութեան մեջ, էջ 113, ծան. 2) հետեւյալ սրամիտ կարծիքն և հայտնում Մարմաշենի անվան մասին. «Ինչպես յերևում է, Մարիամ [թագուհին] շատ շահագրգռված է յեղել Մարմաշենով և կենդանի մասնակցութեան և ցույց տվել նրա հիմնադրութեան-կարգավորման զործում. կարելի չե յենթադրել, վոր Մարմաշեն անունը ինչ թե «Մարմաշեն» նշանակի, ինչպես Սեն-Մարտենն եր կարծում, այլ «Մարիամաշեն»։ Յեղ իրոք, մեր կարծիքով ել, «Մարմաշեն» անունը ավելի շուտ «Մարիամաշեն»-ից կարող եր առաջանալ, քան թե «Մարմաշեն»-ից։

8. Տես հինգերորդ գլխի 15-րդ ծանոթությունը:
9. Տես նույն գլխի 8-րդ ծանոթությունը:
10. Այսինքն հակադրելի:
11. Տես հինգերորդ գլխի 40-րդ ծանոթությունը:
12. Տես տասնույթերկուերորդ գլխի (կանոն 17):
13. Տես հինգերորդ գլխի 37-րդ ծանոթությունը:
14. Տես հինգերորդ գլխի 38-րդ ծանոթությունը:
15. Ուզում ես ասել՝ Բագրատունյաց վրաց թագավորը:
16. Տես վեցերորդ գլխի ներածությունը:
17. Տես հինգերորդ գլխի 9-րդ և 12-րդ ծանոթ.:
18. Մանրամասն տես Ա. Меликсет-Бекоев, Грузинский извод сказания о посте «араджавор», стр. 94—97, 100, 101—102. նաև հետևյալ գլուխը:

ԺԿ.

## ԱՆԱՆՈՒՆ (XII Դ.)

„ՊԵՏՐՈՍ ԹԱՓԻՉԻ ՅԵՎ ԱԼԱԶԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ“,  
 „ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ ՍՈՒԲՈՒԼՅԱՆ ՎՈՐԴԻ ՍԱՐԳՍԻ ՄԱՍԻՆ“

Անանուն վրաց հեղինակի գրչին պատկանող գրվածքը առաջախորաց պատի մասին թեև մի յերկասիրության ձևով և հասել մեղ, սակայն այն իրոք յերկու տարբեր հատվածներ և ներկայացնում՝ տարբեր վերնագրերների ներքո, վորոնցից մեկն և «Պետրոս Թափիչի և ալազի պատմությունը», իսկ մյուսը՝ «Հարգապարտություն Սուբուլյան վորդի Սարգսի մասին»: Յերկու հատվածները՝ իբրև ամբողջական յերկի՝ առաջին վոչ գլխական հրատարակությունն ըստ յերևույթին մի ձևագրի հիման վրա ավելց Մ. Սարխիևի իր «Վրաստանի գրախոսը» ժողովածուի մեջ, 1882 թվին, էջ 629—633: Իսկ յերկրորդ՝ քննական հրատարակությունը 5 ձևագրերի համեմատությամբ և հանդերձ ուստերեն թարգմանությամբ en regard ավինք մենք մեր աշխատության մեջ Գրուզինսկիի извод сказания о посте «араджавор» (Христ. Восток., т. V, в. II) 1917 թվին, էջ 85—96:

Ինչպես 1917 թվին, նույնպես և այժմ մենք այն կարծիքի յենք, վոր յերկու հատվածներն ևս՝ իբրև մեկը մյուսի շարունակությոն՝ առասպելական «ղրույցներ» են, ուր տեղ-տեղ վորոշ արձագանք ունին գտած դանազան պատմական իրողություններ, թեև այդ իրողությունների նկարագրության ժամանակագրական սակն ու վրա յե յեղած յեվ վո՛չ մի էննադատության չի դիմանում (տես ibid., էջ 97—111, հմմ. նաև Մեսրոպ վ. Մախուրյանցի գրախոսականը մեր աշխատության վրա, — «Արարատ» 1918 թ., էջ 148—150):

Ինչ վերաբերում և հեղինակի անձին, այդ հարցը կատարյալ մթության մեջ է: Իզուր հանդուցյալ Մեսրոպ վ. Մախուրյանցը

[ՊԵՏՐՈՍ ԹԱՓԻՉԸ ՀԱՅՔՈՒՄ]

[Կոտտանդնուպոլսից] նա (Պետրոս Թափիչը) գնաց Հայոց (Սոմխիթի) յերկիրն իր բազում համախոհներով և աշակերտներով հանդերձ, և սկսեց քարոզել հերձվածոց կրոնն ու բամբասել հունաց (բերձհնների) կրոնը, վորն ընդունել էյին սուրբ և մեծ ժողովներն ու աստվածագրեատ հայրերը: Յեղ բոլորը հավատում էյին նրա խոսքերին, քանի վոր աստվածաման հրեշտակ էյին տեսնում նրա մեջ՝ ասելով: «Ահա այս մարդն արքայանիստ քաղաքի պատրիարքն է»:

Ապա Պետրոսը սատանայի ներշնչմամբ սկսեց կախարհութուններ անել և պատմել ամեն տեսակ հերձվածոցական գործերի մասին, ուսուցանելով ժողովրդին թե ինչպես պահել կաթողիկե պատերը... Յեղ այսպիսով նա (Պետրոսը) անրիժ հայ ժողովրդին թեթևացնում էր կրոնը և հերձվածքն ուսուցանում ու իր միտումներին յենթարկում:

[ԱՊԱ ՊԱՏՄՎՈՒՄ Ե „ԱԼԱՋ“ ԿՈԶՎԱԾ ՇԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ, ՎՈՐ ԿԱՐԵԼԻ ՅԵ ԱՄՓՈՓԵԼ ԱՅՄՊԵՍ]

Պետրոսը հեան ունենում է մի շուն ալաջ անունով<sup>1</sup>, վորին վարժեցրել էր գնալու վորտեղ հրամայեր: Մի անգամ Պետրոսն արաջին ուղարկում է մի քահանայի մոտ, վորն իր աշակերտների ձեռով սպանել է տալիս շանը: Պետրոսը գալիս է և հարցում իր շան մասին: Քահանան չիմանալ և ձեռացնում: Պետրոսը կարգադրում է հինգ որ պահք պահել, վորպեսզի աստված հայտնե ալաջի տեղը: Ժողովուրդն սկսում է պահել և ալաջն յերևում է Պետրոսին տեսիլքում՝ ասելով: «Ահա այս ձորումն եմ ընկած մահացած»:

Ապա Պետրոսը կանչեց ժողովրդին և ասաց. «Ահա հրաջք մի մեծ և զարհուրելի. այսուհետև պաս պահեցեք ալաջի համար այն սրերին, վոր յես ձեզ համար սահմանեցի»:

Այսպիսի յե առաքյալների կողմից նշոված և ժողովների կողմից մերժած Պետրոսի որենքը, և թող նշովյալ լինին ալաջի ու սուրբ Սարգսի համար բոլոր պաս պահողները:

(Եջ 148) մեզ վերագրում էր կարծիք (յենթադրուած յուն), վոր «աստապիլը... «աստաջաւարաց» պահքի նկատմամբ վրաց եկեղեցու մէջ... ծագած է 1103-ից յետոյ, երբ վրաց Ռուխա-Ռւրնիսի ժողովում հայրերը պաշտօնապէս յայտարարում են հերեմակոս: Ռւրիշ խոսքով ասած, սա նշանակում է, վոր վերոնշիւյալ «զրույցները» գրի յեն անելով 1103 թվից հետո: Այսպիսի կարծիք կամ յենթադրուած յուն համապատասխան աշխատութ յան մեջ մենք հայտնած չունինք և այժմ ել վոր մի հակումն չունինք այսպիսի բան արտահայտելու: Բայց լսենք, թե ինչ և այս հարցի մասին գրել 1923 թ. Կ. Կեպիլիձեկն (Վրաց գրականութ յան պատմութ յուն, I, 539). «Այս աշխատութ յունը (աստապիլը, Լ. Մ.-Բ.) փոխադրված պիտի լինի վրացերեն, ըստ լեզվի, այն ժամանակ, յերբ Արսեն Վաչես-ձեն կողմում էր իր Գոլմասիկոնը, հաշիւնակսն և նրա լեզ ձեւքով լինի վերամշակված, վորովհետեւ, թեև սակաւ, բայց կան այնպիսի ձեռագրեր, ուր Գոլմասիկոնից քաղած հոգվածներն հետ միասին սրան ել ենք հանդիպում»:

Մեր կարծիքով, վոր մի անհրաժեշտութ յուն չկա աստապիլի հեղինակին քաշել XII դարու առաջին քառյակը (Արսեն Վաչես-ձեն, վորն ավելի հայտնի յե Արսեն Իդ'ալմոյեցի անվամբ, իրոր, XII դարու առաջին քառյակի գործիչ է), քանի վոր այն մի շարք մանրամասնութ յուններում շփվում է նախորդ գլխից ընթերցողին արդեն ծանոթ Յեփիմիոս Յերուսաղեմացիո Հակա-ձառութ յան հետ\*. այնպես վոր, յեթե մենք ունինք վորեւ հնարավորութ յուն վերագրելու այս աստապիլը վորեւ ժամանակաշրջանին, հարցն, անկասկած, պիտի լուծվի հոգուա XI դարու առաջին կիսի, կապվելով այն՝ առայժմ յենթադրարար՝ Յեփիմիոս Յերուսաղեմացիո հեղինակութ յան հետ:

Ստորև մենք տալիս ենք յերկու հատվածներից քաղած համապատասխան կտորները համաձայն մեր հրատարակութ յան:

\* Որեւակ, ընդդիմ Սուքենեի Հակոբաբոյան մեջ կարգում ենք. «Միքայել վրաց կաթողիկոսն, ինչպես յերբեմն Գովիթ մարգարեն Գովիթի վրա», Սուրբույան վորդի Սարգսի մասին Հաղորդագրութ յունն գրում է. «Սուրբ հոգին զինսից Միքայելին, ինչպես յերբեմն Գովիթին Գովիթի վրա», ևն:

## ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ

1. Հավանական է, Վոր այս «ալաջ»-ն առաջացած լինի «առաջ[այր]» կամ «առաջ[այրաց]»-ի աղավաղումից: Հմմ. նաև «ալաջ» արմատն արևազերեն «ալը» (→ «ալը[կինոր]») -ի հետ (Լ. Մեղիբեք-Բեկ, Մի քանի խոսք առկոյր պաշտամունքի մասին, — «Արարատ», 1918 թ., էջ 125—128):

### Բ. ՀԱՏՎԱԾԻՅ

#### [ՍՈՒՐԲ ՍԱՐԳԻՍԸ]

Նույն ժամանակներն ապրում էր մի վանն դուռացու (հերոս), Սուրբուրի<sup>1</sup> վորդի Սարգիս անունով, վորն՝ ընդունելով կուսակերո- նուլթյուն (գառնալով մոնոզոն)՝ մենաստան կառուցեց Արարատի ստորոտում, ուր և գեղեցիկ-ցերեկ աղոթում էր: Իսկ այս մենաստանը կառուցված էր քաղաք Իվինի մոտերում<sup>2</sup>:

Այս պահին յեկավ աղարացվոց սպասարարը<sup>3</sup> և՛ մոտենալով [այր] քաղաքին՝ գրավեց այն: Ապա այդ քաղաքի մարդիկ յեկան քաղաքից և սասցին Սուրբուր Սարգսին. «Իուրս յեկ քո մենաս- տանից և մարանչիր Քրիստոսի թշնամի ազարյան զավակների հետ. և յեթև հաղթես ու խաղաղ վերադառնաս, մենք բոլորը քո ծառաները (ստրուկները) կգառնանք, իսկ յեթև սպանեն, քո փո- խարեն՝ ի հեշտակ քո՝ խաչ կգնենք»: Ապա Սարգիսը դուրս յեկավ պայքարելու ազարացիների հետ և հաղթեց և վերադար- ձավ՝ նետով վիրավորված:

Մի քանի ժամանակից հետո նորից գլուխ բարձրացրեց (դին- վեց) Սպահանի սպասարարը և մոտեցավ քաղաք Իվինին: Յեվ նրանց (ազարացիների) դեմ նորից դուրս յեկավ Սարգիսը: Յեվ հենց վոր սկզբից պայքարը, Սարգսին գրավեցին և ամբողջ Հայքը (Սոմխիթը) ավերեցին ու ամայի դարձրին: Իսկ Սարգսին բազում գերբնների հետ միասին Սպահան տարան սուլթանի<sup>4</sup> մոտ: Իսկ սուլթանը տեսավ թե վոր Սարգսին՝ շատ ուրախացավ, վորովհե- տև լսել էր նրա արիության և բարեմեծության մասին, և խնա- յեց նրան, քանի վոր ծերացած էր: Յեվ սկզբից և եթ սկսեց նրան [գայթակղեցնել]՝ մեծ վարձատրություն և քաղաքներ ու գյու- ղեր խոստանալով և ասելով. «Ամբողջ Հայքն (Սոմխիթն) և Խանը ու նրանց թագավորությունները կթողնեմ քեզ, յեթև խոնարհվես ինձ և՛ ուրանալով խաչեցյալին՝ ընդունես Մահմեդ (Մուհամեդ) ստաքյալից՝ մեզ տված կրոնը»: Իսկ նա ամենևին հանձն չառավ

այդ, և քանի վոր նա (Սարգիսը) ծեր էր, [սուլթանը] հրամայեց անողտախարար մերկացնել նրան և ամիլել, փշրել ստամոսերն և անդթարար ձեծել, ծակծակել վոտները կոճերը և՛ գլխի վայր կախելով ուղտից՝ սլոտեցնել ամբողջ քաղաքը: Յեվ այս բոլորից հետո նորից նրան (Սարգսին) պեցին արգելանոցը, ուր՝ արժանանա- լով հրեշտակի տեսլան՝ միանդամայն բուժվեց: Ապա նրան նորից ներկայացրին բռնավորին, վորն և հարցրեց կրոնի ու հավատքի մասին: Իսկ նա ամենայն հանգզությամբ հայնոյեց (մերկացրեց) սուլթանին, և անա վերջինիս հրամանի համաձայն վճու կայա- ցավ գլխատել նրան սրով: Յեվ այն վայրերի մարդկանց մեջ ծագեց հավատք, վոր այնտեղ, ուր նա (Սարգիսը) մահացած ընկած էր, յերևաց հրեղեն մի սյուն:

Յերկար տարիներ անց Սպահան դնացին [ուխտավորներ] Հայոց (Սոմխիթի) բոլոր քաղաքներից և բազում սլատիքներով հանեցին նրա (Սարգսի) մասունքները, և նրա աջը գրին Գագի յեկեղեցում, վոր Պետրոսն էր շինել<sup>5</sup>:

Յեվ լուր տարածվեց Յերուսաղեմում, Կոստանդնուպոլսում, մետաքսաբայում, Ադիքսանդրիայում և Հոմում, նաև ամբողջ աշ- խարհում, վոր Պետրոսը հերձվածողական կրոնին հիմք գրեց Հայոց (Սոմխիթի) յերկրում: Յեվ ժողովեցան չորս պատրիարք- ներն ու Հոմի պապը և նպովեցին Պետրոսին, նմանապես բոլոր նրանց, ով պաս կղանե ալաջի համար կամ կաղթե Սուրբուր Սարգսին, կամ վերջինիս որենքով կընթանա:

...[Այս] անորեն Պետրոս Թափիչը, վորն իր մորուքը վոսկով էր ներկում՝ և՛ քանիցս բազմելով Անտիոքիայի աթոռի վրա՝ իր չար հերձվածքի պատճառով սուրբ հայրերից յենթարկվել էր նպովքի ու գանձնեկեցության, յեկավ Հայք (Սոմխիթ) և արևելք...

Իսկ գալով մեր (Վրաց) յերկիրը՝ նա (Պետրոսը) բոլորին յարմարեցում էր շքեղությամբ ու հպարտությամբ...

Ապա դոռոպացյալ այն [Պետրոսը] յեկավ Կանդաք և իրեն մոտ կանչեց յերանելի Միքայել Վրաց (Քարթլի) կաթողիկոսին<sup>6</sup>, վորպեսզի վերջինս կամ նրա վարդապետությունը (կրոնը) ըն- դունի կամ՝ յեթև հրաժարվի՝ հեռանա աթոռից: Իսկ սուրբ հոգին պինեց Միքայելին, ինչպես յերբեմն Դավթին Գողթաթի վրա: Յեվ յեկավ [Միքայելը] Մցխեթից իրեն յեթևակա յեպիսկոպոսներով և քահանաներով ու հավատացյալ ժողովրդով հանգերձ. և մոտեցան Կանդաքացի յերկիրն: Յեվ հրեշտակի ցուցմունքով ազգ յեկավ, վորպեսզի նա (Միքայելը) ինքն և նրա ուղեկիցները սուր քարեր

Ջոկին մերձակա ձորից և մոտենան թե վոչ [ուր հարկն է], հանն գլխարկները և լցնեն այն քարերով: Իսկ շնորհազարգ (աստվածային) Միքայելը սովորեցրեց բոլորին այսպես. «Ինչ վոր կտեսնեք ինձ անելիս, նույնը արեք և դուք»:

Ապա Միքայել կաթողիկոսն յեկավ [Գագ] և յերկրպագեց Պետրոս Թափիչի աթոռին: Իսկ նա (Պետրոսը) ձգեց իր զգեստի թևքը, վարդազրի Միքայելն և համբուրի այն ըստ նրա սովորութան: Իսկ աստուծով քաջալերված Միքայելը՝ բռնելով թևքից՝ ուժով քաշեց այն դեպի իրեն և քարշ ավեց ու վայր գցեց [Պետրոսին]՝ հողի վրա, ապա զարկեց քար[եր]ով, վոր լժողված՝ ունեք գլխարկում և ձգմեց այն անտրեն և գուռով [Պետրոսին]՝ մահացու վերք հասցնելով նրան: Ապա նրա հետ յեղած բոլոր յեպիսկոպոսներն ու համախոհները պատեցին նրան (Պետրոսին) քարերով<sup>10</sup>: Յեղ այսպես սպանեցին այն գայլին<sup>11</sup>:...

## ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. «Սուբուլ», անխակած, հայերեն «սուբը» բառի ազգագրումն և հետևապես «Սուբուլ Սարգիս»-ը նույն «Սուբը Սարգիս»-ն է, վորը հայոց հավատալիքներում հունադավանների կամ հռոմեների թշնամի յի. «ս. Սարգիսը հոռոմ պիտ խրդկէ», resp. «ս. Սարգիսը հոռոմ չխրդկած չիլալ», կամ «ս. Սարգիսը հոռոմ պիտ փառացուենէ», resp. «ս. Սարգիսը հոռոմ չը փառացած չիլալ» (Ն. Ես-հազիգ, Նոր-Նախիջևանը և Նոր-Նախիջևանցիք. — «Ազգագրական Հանդէս», գ. IX, 1902, էջ 14—16. հմմ. Ն. Կալայեան, Բորչալուի դաւառ, — նույնտեղ. գ. X, 1903, էջ 257), հմմ. Ա. Меликсет-Бекоев, Грузинский извод сказания о поете «араджавор», стр. 110—111:

2. Այս տեղեկությունը՝ քաղաք Գլինի մոտ մենաստան կառուցանելու մասին՝ անհրաժեշտ և համեմատել Կիրակոսի (Պատմութիւն Հայոց արարեալ Կիրակոսի վարդապետի Գանձակեցոյ, 58) հետեյալ հաղորդագրութեան հետ Ներսես Իշխանացու (641—661) շինարարութեան մասին նույն Գլինում. «Յեաւեղրի առնու գկաթուղիկոսութիւն տէր Ներսէս ամս քամս: Սա շինեաց գկալարան սրբոյն Սարգսի՝ որ ի Գուլին. ի կոտորելն Իսմայէլի գբազաքն Գուլին երկոտասան հազար՝ արեամբ կոտորելոցն ծածկեցաւ սուրբ սեղանն և աւազանն, և զայլնն դերեցին աւելի քան դերասուն և հինդ հազար և և զոսկերս սղանկոցն ամփոփեաց հայրապետն ի նոյն վիայաստանն». հմմ. Ա. Меликсет-Бекоев, op. cit., 97—98:

3. Մեարայ Վ. Մախուդյանցն իր գրախոսականում մեր աշխատութեան վրա («Արարատ», 1918 թ., էջ 149—150), ուշադրութեւն դարձնելով այս՝ ապագար բառի վրա, շոր երկիցս գործածուած է վրացերէն բնագրում, երկրորդին՝ Սպահան քաղաքի անուան հետ միասին», հարց և առլիս. «Արգեօք այս գուտ պարսկական տխորոսը Սպահան քաղաքի նման գուտ պարսկական մի կենտրոնի հետ

կապուած՝ իրուունը չի առլիս մեղ կենթադրելու, [որ] Հայաբացւոց մասին կգած հիշատակութիւնը թիւրիմացութեան արդիւնք է, մինչդեռ պարսկական արշաւանք բրիտանեայ Հայաստանի վրայ հանդերձ պարսկական ճնշումներով ընդդէմ բրիտանեութեան միանգամայն պիտի համապատասխանէր Ն. դարու անցքերին»: Այս առթիվ մեղ միմիայն մնում և մատնանշել, վոր մեր աշխատութեան մեջ (էջ 100) խնդիրը հենց այսպէս էլ լուծված է: Հմմ. նաև հետեյալ ծանոթութիւն:

4. Այս՝ «սուլթան»-ի հիշատակութեւնն ևս ահնարե անաբրոնիզմ և V դարու անցքերի նկարագրութեան մեջ (տես. Թ. Ժորդանիս, Քրոնիկաներ, I, էջ 318, ծան. 26., Ա. Меликсет-Бекоев, Грузинский извод сказания о поете «араджавор», стр. 100):

5. Հմմ. նախորդ ծանոթութիւն:

6. Վոր Գագի յեկեղեցին ս. Սարգսի պաշտամունքի հետ և յեկեղ կապված, սրա մասին վիայում են և հայ պատմիչները: Կիրակոսը (Պատմութիւն Հայոց արարեալ Կիրակոսի վարդապետի Գանձակեցոյ, 238) ասում է. «Էր ի Գագ խաչ մի սքանչելագործ առ ամենայն նեղեալս, և մանաւանդ առ դերիս. զի որք սպաւինէին բոլորով սրտիւ, ինքն իսկ սուրբ վիայն Սարգիս բանայր գրուան թանկից և արդեյանաց, և լուծանէր զերկաթն, և առաջնորդէր մարմնաւոր տեսեալեամբ ի տեղիս իւրեանց. և համբաւ սքանչելեայն տարածեալ էր ընդ ամենայն ազգս, զոր կանգնեալ աւելին սրբոյն Մեսրոպայ վարդապետին՝ մերայ»: Վարդանը (Հատարումն պատմութեան Վարդանայ վարդապետի լուսաբանեալ, 145) հիշատակում է. «Գագ անուանի բերդ և գաւառ ի Գագկայ թագաւորէ շինեալ, ուր կայ հոշակաւոր և սուրբ ուխտն խաչ և եկեղեցի յանուն սրբոյն Սարգիսի դորովարին, օրհնեալ ի սրբոյն Մեսրոպայ վարդապետին և թարգմանչէն Հայոց, որ կայ ի դուխս Գագայ, և հայի ի դաշտն լայնանիստ և երկայնատարած»: Իսկ ս. Սարգսին նվիրված շարահանում (Շարահան, էջմիածին 1861, էջ 113) ասված է. «Առաւել պայծառ ի զըլուխ Գագայ, ի գագաթնան տեղւոջն օրհնեալ սրբոյն Մեսրոպայ, երազահաս սուրբը Սարգիս բազանայ կործանիչ»: Գագի հնութիւններին նկարագրութեւնը տես՝ Ղ. Իցինեան, Սարգսութիւն հին Հայաստանի, Վերնտիկ 1822, էջ 513—514. Ս. Զալալեան, Ժանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, I, 1842, էջ 157—158. Մակար Բարխուդարեան, Արցախ, Բարսու 1895, էջ 4, 393, 436, էլն: Հմմ. Ա. Меликсет-Бекоев, op. cit., 98—99:

7. Տես հինգերորդ գլխի 40-րդ ծանոթութեւնը:

8. 471, 475—478, 485—488 թ. թ.:

9. 449—472 թ. թ.—բառ այս, պարզ և վոր այստեղ ևս անաբրոնիզմի հետ ունինք գործ, քանի վոր Պետրոսը Հայաստան և Վրաստան կարող եր գալ վոչ առաջ քան իր վերջնական գահնկեցութեւնը, վորը տեղի ունեցավ 488 թ. ի դեղ, հիշենք, վոր այս Միքայելին «Վրաց գարծի պատմութեւնը» (E. Такай-ашвили, Описание рукописей, II, 722) վերագրում և Վախտանդ Գորգասայ թագավորի յերեկն վոտրով զարկելու «քաջագործութեւնը»: Հմմ. Ա. Меликсет-Бекоев, op. cit., стр. 100.

10. Հմմ. տասնույերկուերորդ գլխի 18 ծանոթութեւնը:

11. Այստեղ, անխակած, շփոթած են իրար հետ Պետրոս Թափիչ Անախոբային (V դ.) և Պետրոս հայոց յեպիսկոպոսը (VI—VII դ.): Այս իսկ պատճառով ամբողջ չի լինի լսել, թե ինչ են ասում հայ պատմիչները վերջինս մասին: Ուխտանիքը (Պատմութիւն բաժանման Վրաց ի Հայոց, էջ 91) հաղորդում

և հեռեցար. «Պետրոս այս եպիսկոպոս լեալ ի տան գրան եպիսկոպոսին յաւար: Արքահամու հայոց կաթողիկոսի, այլ կարովամյա, և ճորտիսս, և ճարտարաբան, և բանիբուն գպիր: Չսա առաքեալ Արքահամ առ Կիւրինս գինի թղթոյն իւրոց հանդերձ ազատ արամբք, զոր յերկրորդում նուազի սնոց սպասնացեալ նմա իշխանքն Վրաց՝ եթէ մի աննը երթեկել ի մեզ վասն հուստոյ ինչ իրաց սպա եթէ ոչ՝ մեռանիս ի ձեռաց մերոց: Եւ կամ զի այդպէս յարձակեալ ես ի վերայ մեր գայլարար գալով քո առ մեզ գրով և պատգամաւ. զոր յայսմ բանէ պարծին զեռ ես բնակիչք վրաց աշխարհին, ուսանդութեամբ ի միմյանց ասնելով սրգի ի հօրէ ուսեալք, եթէ զձեր Գայլ Պետրոսն սպանին իշխանքն մեր ը վերայ լեբինն՝ որ կոչի Կանգաբք. բայց մեր ոչ զխեղձ աշխարհս լեալ որպէս նորայն ասեն: Եւս հաստք կոչեն Գայլ զՊետրոս Անտիոքացին, որ փախեալ ի չար ժողովոյն Քաղկեդոնի...»: Եւ յնը կրկնում և և Կիրակոսը (Պատմութիւն արարեալ Կերակոսի վարդապետի Քանձակիցոյ, 46)՝ յերբ՝ հեռեցար Ուխտանեսի վրա՝ ասում և, զոր վերջնս (Ուխտանեսը) «զրեաց... զքաջաբառութիւնն Պետրոսի եպիսկոպոսի, որ պատգամաւոր էր տեսն Արքահամու առ Կիւրինս, զոր վերք վասն համարձակութեան նորա՝ Գայլ կոչեցին զնա»: Իսկ Թեոդոր Ստուդիոսը իր *Doctrina chronica monasterii Studii huius Catechisis chronica կոչված գրվածքի մեջ* (Migne, Patrologiae cursus completus, series graeca, t. XCIX, p. 1700) անվանում և նրան «Πέτρος ἐπισκόπος Ἀρμενίων, ὃν καὶ Λυκόπετρον οἰδοῦν ὁ λόγος καλεῖται»: Հմմ. *А. Меликсет-Бекон*, op. cit., 100—101.

ժն.

ԳԵՈՐԳ ԱԲԵՂԱ (XI Դ.)

„ԳԵՈՐԳ (ԳԻՈՐԳԻ) ՍԵՎԼԵՆՆԵՑՎՈ ՎԱՐՔԸ“

Գեորգ (Գիորգի) արեգան կամ կուսակրոն քահանան (խույրեմ-մանուկոնի) հոշակավոր Գեորգ (Գիորգի) Սելեննեցվո կամ Աթոնեցվո աշտկերան էր, զորը գրի յի ասել իր ուսուցչի վարքը հեռեցար վերնագրով. «Սուրբ և յերանելի մեր հոր Գեորգ (Գիորգի) Սելեննեցվո վարքն ու գործերը»: Այս յերկասիրությունն, ըստ Իվ. Ջավախիւզի (Հին վրացական պատմական գրականությունը, էջ 125—137, հասկապես 137), «վաստնության ասովել արժանի» աղբյուր և, զորն, ըստ Կ. Կեկելիձեյի (Վրաց գրականություն: պատմություն, I, 257—259), 1065—1068 թ. թ. պիտի լինի գրված: Հրատարակվել և այն 3 անգամ. նախ՝ 1846 թ. — Վ. Չուբինով, Վրացերեն քրեստոմաթիա, վրացերեն, ա. հրատ., մասն I, ՍՊԲ 1846, էջ 255—301, ապա՝ 1882 թ. — Մ. Սարխիև, Վրաստանի գրախոսը, էջ 437—488, և վերջապես՝ 1901 թ. — «Աթոնի Իվերոն վանքի 1074 թ. ձեռագիրն ազատներով», վրացերեն, Տիպիս, էջ 282—351. ուսուցիչն թարգմանությունը (վոչ ճիշտ, ազավազուսներով և հապավումներով)՝ *М. Сабункин*, Полное жизнеопи-сание святых грузинской церкви, II, 161—212:

Ստորև մեր բերած քաղվածքների թարգմանությունը կա և արված և համաձայն 1901 թ. հրատարակության:

[ՀԱՅՈՑ ԴԱՎԱՆՈՒԹՅԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ Կ. ՊՈԼՍՈՒՄ]

...Սկզբից և ետ մենք (վրացիներս) ունի յինք գրականություն (գրվածքներ) ու ճշմարիտ և ուղիղ գավառություն. բայց մեր յերկիրը հեռու յեր հունաստան յերկրից (Իերձեհնաստանից). [այդ պատճառով] մեր յերկրում իբրև վերոմ ցանկեցին հայոց (սամեխների) չար սերմերը՝ բմրտա և հենդ...

Յեւ ի սոսր Սոփի ի յամբինն նստեր ընդ ամենայն վարդապետն Հոռոմոց եւ յայնման Առոմ եւ Ապուսանչ զազա խնդիր հանին Գաղկայ ի Կարճակապան: Իսկ թագաւորն Տուկիժ արար քննութիւն հաւատոյ իւր առաջի, եւ Յակորոս վարդապետն որ առ Սանահնայի, արար զիմացութիւն բողոքմ յամենայն հարցմունսն ընդդէմ Հոռոմոց: Բայց սակաւ մի վասն երկրնութեանն Քրիստոսի ի կողմն Հոռոմոց զարձաւ: Եւ յամենայն պատճառն հաւատոցն հաճեալ թագաւորն եւ հրամայեաց յայնք վերայ զիր միարանութեան զրել ընդ Հայք եւ ընդ Հոռոմք: Եւ վարդապետն Հայոց Յակորոս զրեաց զիր միարանութեան Հայոց եւ Հոռոմոց: Եւ հաճեալ թագաւորին ի զիր հաւատոցն, հրամայեաց զնկ զղիւրսն ի սուրբն Սոփի, զի ահա յայտ հետէ կղիցին ի միասին միարանեալ Հայք եւ Հոռոմք: Եւ ի նոյն ժամայն իբրև զարծիւ թողեցեալ նստանէր Գաղիկ ի Կոստանդնուպոլիս, եւ լուեալ թագաւորն՝ ուրախ եղև յոյժ, եւ իբրև մտաւ առ թագաւորն, հրամայեաց ըրել զղիւրս միարանութեանն: Եւ առեալ ընթերցաւ Գաղիկ եւ իբրև ծանեաւ զգրեալսն Յակորոսի, պատասեաց զնա առաջի թագաւորին յերկուս ծուէնս եւ ընկէց զնա յերկիր: Եւ թագաւորն տեսեալ ամաչեաց յոյժ: Եւ առէր Գաղիկ ցթագաւորն վասն վարդապետին, եթէ «Ահա սա այր կրօնաւոր է, եւ այսպիսի բազումք կան յայնքսն Հայոց, որք ոչ ընդունին: Եւ ոչ որ հնազանդի զրոյ սորա, եւ մեր ընդ կատարեալ վարդապետն Հայոց ոչ ունիմք զսա»: Եւ յայնժամ առաջի թագաւորին յանդիմանեաց զՅակորոս եւ առէր թէ «Զիսնդ համարձակեցար զայդ գործել, մտանկ թեղ յաւերանութիւն, զի այր կրօնաւոր երևա: Եւ սաայ Գաղիկ ցթագաւորն Տուկիժ: «Ահա ես այր թագաւոր եմ՝ որդի թագաւորացն Հայոց, եւ ամենայն Հայք հնազանդին հրամանաց լինոց, եւ ամենայն կտակարանացն աստուծոյ հնոյ եւ նորոյս հմուտ եմ, եւ ամենայն Հայք վիպին բանից իմոց, զի հաւատար վարդապետացն ընդունին զիս: Եւ ահա ես խօսեցայց այսօր ընդ Հոռոմոց վասն հաւատոյ ազգիս Հայոց»: Եւ զրեաց Գաղիկ զիր հաւատոյ ձեռամբ իւրով այսպէս եւ սայր զնա ի թագաւորն եւ ի պատրիարքն: Եւ ունէր զիրն պատճէն այսպէս...» (եջ 160—163): Ապա առաջ եւ ըրեալս այսպիսի խօսեցաւ ի Կոստանդնուպոլիս ընդ իմաստասերն Հոռոմոց ի յաւերսն թագաւորին Տուկիժն, յորժամ զնաց զհետ Սենեքարիմայ սրբւոցն, սորա խօսեալ վասն հաւատոցն Հայաստանեայցս, եւ հաճեալ ի բանս նորա ամենայն տունն Յունաց» (եջ 227): Հմմ. Լ. Միլիբեր-Բեկ, Վարդապետք Հայոց Տիւրքաստանի կողմանց, օր. cit., 97—99:

զի սա ի սուրբ Սոփի ի յամբինն նստեր ընդ ամենայն վարդապետն Հոռոմոց եւ յայնման Առոմ եւ Ապուսանչ զազա խնդիր հանին Գաղկայ ի Կարճակապան: Իսկ թագաւորն Տուկիժ արար քննութիւն հաւատոյ իւր առաջի, եւ Յակորոս վարդապետն որ առ Սանահնայի, արար զիմացութիւն բողոքմ յամենայն հարցմունսն ընդդէմ Հոռոմոց: Բայց սակաւ մի վասն երկրնութեանն Քրիստոսի ի կողմն Հոռոմոց զարձաւ: Եւ յամենայն պատճառն հաւատոցն հաճեալ թագաւորն եւ հրամայեաց յայնք վերայ զիր միարանութեան զրել ընդ Հայք եւ ընդ Հոռոմք: Եւ վարդապետն Հայոց Յակորոս զրեաց զիր միարանութեան Հայոց եւ Հոռոմոց: Եւ հաճեալ թագաւորին ի զիր հաւատոցն, հրամայեաց զնկ զղիւրսն ի սուրբն Սոփի, զի ահա յայտ հետէ կղիցին ի միասին միարանեալ Հայք եւ Հոռոմք: Եւ ի նոյն ժամայն իբրև զարծիւ թողեցեալ նստանէր Գաղիկ ի Կոստանդնուպոլիս, եւ լուեալ թագաւորն՝ ուրախ եղև յոյժ, եւ իբրև մտաւ առ թագաւորն, հրամայեաց ըրել զղիւրս միարանութեանն: Եւ առեալ ընթերցաւ Գաղիկ եւ իբրև ծանեաւ զգրեալսն Յակորոսի, պատասեաց զնա առաջի թագաւորին յերկուս ծուէնս եւ ընկէց զնա յերկիր: Եւ թագաւորն տեսեալ ամաչեաց յոյժ: Եւ առէր Գաղիկ ցթագաւորն վասն վարդապետին, եթէ «Ահա սա այր կրօնաւոր է, եւ այսպիսի բազումք կան յայնքսն Հայոց, որք ոչ ընդունին: Եւ ոչ որ հնազանդի զրոյ սորա, եւ մեր ընդ կատարեալ վարդապետն Հայոց ոչ ունիմք զսա»: Եւ յայնժամ առաջի թագաւորին յանդիմանեաց զՅակորոս եւ առէր թէ «Զիսնդ համարձակեցար զայդ գործել, մտանկ թեղ յաւերանութիւն, զի այր կրօնաւոր երևա: Եւ սաայ Գաղիկ ցթագաւորն Տուկիժ: «Ահա ես այր թագաւոր եմ՝ որդի թագաւորացն Հայոց, եւ ամենայն Հայք հնազանդին հրամանաց լինոց, եւ ամենայն կտակարանացն աստուծոյ հնոյ եւ նորոյս հմուտ եմ, եւ ամենայն Հայք վիպին բանից իմոց, զի հաւատար վարդապետացն ընդունին զիս: Եւ ահա ես խօսեցայց այսօր ընդ Հոռոմոց վասն հաւատոյ ազգիս Հայոց»: Եւ զրեաց Գաղիկ զիր հաւատոյ ձեռամբ իւրով այսպէս եւ սայր զնա ի թագաւորն եւ ի պատրիարքն: Եւ ունէր զիրն պատճէն այսպէս...» (եջ 160—163): Ապա առաջ եւ ըրեալս այսպիսի խօսեցաւ ի Կոստանդնուպոլիս ընդ իմաստասերն Հոռոմոց ի յաւերսն թագաւորին Տուկիժն, յորժամ զնաց զհետ Սենեքարիմայ սրբւոցն, սորա խօսեալ վասն հաւատոցն Հայաստանեայցս, եւ հաճեալ ի բանս նորա ամենայն տունն Յունաց» (եջ 227): Հմմ. Լ. Միլիբեր-Բեկ, Վարդապետք Հայոց Տիւրքաստանի կողմանց, օր. cit., 97—99:

**ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

1. Կոստանտնոսի Տուկիժը 1059—1068 թ. թ.:
2. Հայոց դավանութեան քննութեան մասին, վերջ տեղի չի ունեցել Կ. Պոլսում Կոստանդին Տուկիժի որոք հայոց Գաղիկ թագաւորի ներկայութեամբ, մանրամասն տեղեկութեաններ եւ հաղորդում Մատթեոս Ուսնայեցին (Մատթեոս Ուսնայեցի. Ժամանակագրութիւն, Բ. տպ., Վաղարշապատ 1898). «Յայտ ամ. (շժդ = 1065) Տուկիժ թագաւորն Հոռոմոց եւ պատրիարքն եւ ամենայն կղերիկոսքն եւ ամենայն դասը ներքինեացն լծակիցք լեալ չարաշունչ եւ պիղծ խորհրդոյ անօրէն թագաւորին եւ ամենայն մեծամեծ իշխանքն Հոռոմոց ձեռն տուեալ խաւարէն խորհրդոցն. վասն զի կամէր թագաւորն չար միարանելովք իւրովք բոռնալ զհայոց հաւատոյ դաւանութիւնն եւ խորհէին կոծանել զհաւատս սուրբ Հուսաւորչին Քրիզոստ. եւ կամեցաւ զիր զիւարուն եւ զխառնափնդոր եւ զՄեթափատար զհաւատն հաստատել ի Հայք...» (եջ 159—160): Եւ... եւ արդ ահա առաքեաց թագաւորն Տուկիժ ի Սեբաստիա քաղաքն եւ կոչեաց զորդեան թագաւորաց Հայոց զԱռոմ եւ զԱպուսանչ զալ ի Կոստանդնուպոլիս եւ նորա ծանեան առ սակաւ մի զչար խորհուրդն եւ առեալ ընդ ինքեանս զՅակորոս վարդապետն բառ աւելի անուանն Քարափնեցի, այր զիսնական զրոց բանից, եւ զնացին ի Կոստանդնուպոլիս: Եւ թագաւորն զառաջինն բարով ընկալաւ զորդիք թագաւորացն Հայոց եւ զկնի սակաւ աւուրց սկսաւ յայտնել զչար խորհուրդ մտաց իւրոց եւ առէր, եթէ «Հրամանք է թագաւորութեանս մերում՝ զի դուք եւ ամենայն իշխանք Հայոց աշխարհին անուր յանձինս ձեր զկնուեր հաւատոյ ազգիս Հոռոմոց»: Եւ յայնժամ նորա ի մէջ Հոռոմոց անկան ի մեծ տաղտուածնք եւ սասցին ցթագաւորն Առոմն եւ Ապուսանչն. «Մեր առանց Գաղկայ Աշոտոյ որդւոյն ոչ ինչ կարեմք անել, զի նա այր քաջ է եւ թագաւոր եւ մեր փեսայ. ստաքեա եւ կոչեա զնա այսր, զի եթէ մեր առանց նորա իբր անեմքք, հրով այրէ զմեզ ի դաւան մերս: Եւ լուեալ թագաւորն՝ ոչ կամեցաւ զգալն Գաղկայ, վասն զի այր հօգոր էր յիմաստասիրական ջակն եւ անյայթ ի պատասխանին»:

\* Բնագրում «Գաղիկաղիկ» (Գաղիկ Կարսեցի):

ԵՓՐԵՄ ԿՐՏՍԵՐ (XII Դ.)

„ԸՆԴԴԵՄ ԱՐԻԱՆՈՍԱՑ ՅԵՎ ՅԵՎՆՈՄԻԱՆՈՍԱՑ ԳՐԻԳՈՐ ԱՍՏՎԱԾԱԲԱՆԻ ՃԱՌԻ ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆԸ“

Յեփրեմ Կրտսերը (Յեփրեմ Մցիբեն) վրաց սքոլաստիկ-յեկեզեցական գրականութեան խոշոր գեղեցիկ մեկն է XI դարում (Խվ. Ջավախիբալիի, Հին վրացական պատմական գրականութեանը, 145—169. Կ. Կեկելիձե, Վրաց գրականութեան պատմութեան I, 259—283): Նրա մասնակցութեանն այդ գրականութեան գրեթէ բոլոր բնագավառներում, ինչպէս և Յեփրեմի Աթոնեցունը X—XI դարում, այնքան բազմակողմանի չէ, զոր Կ. Կեկելիձե (օր. cit.) նույնիսկ նպատակահարմար և գտնում առ այդ մասնակցութեան մանրամասն տեսութեանը, բաժանելով 11 ճյուղի. 1) բիր-խոշորի, 2) եկեղեցական (մեկնաբանական), 3) դավանաբանական-հակաճառական, 4) սակերիկա և միտաբիկա, 5) հաղթողափիա (վարքաբանական) և պատմութեան, 6) հոմիլետիկա (ներքողականներ), 7) թղթակցութեաններ, 8) եպիտափիաներ, 9) խմատատիրական, 10) քերական, 11) լիտուրգիկա (աստվածաբանական կամ ծիսակատարութեան), 12) տաղեր:

Յեփրեմի բազմակողմ գործերից մեկ համար աւանձնապէս հետաքրքիր է մի գրվածք, զորը կոչվում է «Ընդգեմ արիանոսաց և յեփրեմիանոսաց Գրիգոր աստվածաբանի ճառի մեկնութեանը»: Այդ գրվածքին հեղինակը կցած ունի մի հիշատակարան, ուր իր կարծիքն է հայտնում հայերենից վրացերեն թարգմանութեաններ կատարելու մասին, կարծես թէ վորոշ նախապաշարմունքով:

«Մեկնութեանը» գեղեցիկ հրատարակված չէ, բայց մեկ հետաքրքրող հիշատակարանը քանիցս in extenso սպասարժեղ է վրաց գրականութեան մեջ (Թ. Փարզանիս, Քրոնիկաներ. I, 227. Խվ. Ջավախիբալիի, օր. cit., 147. Կ. Կեկելիձե, օր. cit., 166—167), զորն և հիմք է ծառայել սուրբ Բերամ մեր թարգմանութեանը:

[ՎՐԱՅԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԵՐԵՆԻ ՎՈՐԳԻ ՅԵՎ ՀՈՒՆԱՐԵՆԻ ԹՈՒՆ Ե]

Սրբա[կրոն] և քրիստոսակերպ, ազոթեցեք Յեփրեմ թարգմանչի՛ մասին, զորը յերկրորդ անգամ թարգմանեց այս ընթերցվածքը. վերաբնակեց յերանելի Գրիգոր Ոչկեցվո՞՞ ձեռքով հայերենից թարգմանվածն այսպէս [անբարարար] գատ. իսկ յես հարկադրվեցի, հայերենի փոխարեն, կրկին թարգմանել հունարենից, քանի զոր հայերենի վորդուն և հունարենի թոսան փոխարեն, զորը սակավին անկասկած չի, անկասկածելի ու սեփական վորդիս գերազանցի՞:

ՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Բնագրում «թարգմանի», զոր նշանակում է ինչպէս «թարգմանիչ» նույնպէս և «մեկնիչ», թեև այս գեղարու կարելի չէ հասկանալ առաջին իմաստով, քանի զոր Յեփրեմը, իրոք, թարգմանչ էլ է յեղել նույնիսկ հայերենին բախտանի տեղակի վերաբնակ հովհան Գամաակեցու Օժղոճի մեկնութեան մեջ առում է, զոր մի խոսք «Էրբսի» վրացերեն անփոխադրելի չէ, իսկ հայերենի գա նշանակում է «քերական» (տես E. Takaiyuzumi, Oniscanie rukopisei, I 720. Ք. Մ. Ելաճիկ, О древнегрузинских версиях Ветхого Завета. По поводу Codex Zordaniae Грузинского Университета. — «Известия Кавк. Отд. Моск. Арх. Общ. в. VI, Т. III, 1921, стр. 37): Բայց կրանից, «Ընդգեմ արիանոսաց և յեփրեմիանոսաց ճառի» մեջ հայերեն «հրապարակ»-ը Յեփրեմը փոխադրել է «սուրբապարակի»-ի (Ք. Մ. Ելաճիկ, ibid):
2. Գրիգոր Ոչկեցին X դարու հեղինակ է, Տայք-Կղարջյան գործի ներկայացուցիչ, հայազեմ (տես Կ. Կեկելիձե, օր. cit., 166—167): այս Գրիգորի մասին անտիկ աշխատություն ունի Պ. Բեգրովի վանձ կարգադրված գեղ 1918 թ. 15. XII վրաց Պատմա-Ազգագրական ընկ. հրատարակական նիստին (սրա մասին տես Մ. Ա. Меликсет-Бекоев, Из истории культуры взаимоотношений армян и грузин в IX—X в. в. — «Тифлисский Листок» 1918, № 273. Ք. Մ. Ելաճիկ, օր. cit., 37): Տայք-Կղարջյան գործի մասին հայերեն տես Կ. Կեկելիձե-Բեկ, Հայերը վրաց հին գրականութեան մեջ—«Գեղարուկոս», գ. VII. Թիֆլիս 1921, էջ 34—35:
3. Ուզում է ստել, զոր յեթե հայերենից թարգմաներ, զորն իր հերթին հունարենից է փոխադրած, այն ժամանակ վրացերենը հունարենի թոսն է հայերենի վորդին կլիներ, ուստի և թարգմանել և անմիջապէս հունարենից, զոր պեղեց վրացերենը հունարենի հարազատ վորդին լինի: Հմտ. այս պրակի յսթի-բորդ գլուխ:

ժ.:

### ՌՈՒՒՍ-ՈՒՐԲՆԵՍԻ ՅԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ (1103 թ.) ԿԱՆՈՆՆԵՐԸ

Ռուխ-Ուրբնիսի յեկեղեցական ժողովը վրաց մասնավոր յեկեղեցական ժողովներից մեկն է, վոր կայացել է Գալիիլ II Շինող թագավորի հրամանով 1103 թ. բացթյա՝ Ռուխ և Ուրբնիս յեպիսկոպոսանիստ գյուղերի միջև սարածվող դաշտում (այժմյան Գորու շրջանում, Սկրա կայարանի դիմացը, հայնուլա Կուր գետի):

Այս ժողովի կանոնները յերկու անգամ է հրատարակված. նախ՝ 1882 թ. Մ. Սաբինիսի «Վրաստանի դրախտ»-ում, հջ 518—530, իսկ յերկրորդ անգամ 1897 թ. Թ. Ժորգանիայի «Քրոնիկաներ»-ի II գրքում, հջ 54—72\*:

Կանոններից հայերին հասկապես վերաբերում է 12-րդ կեսը (կանոնը), վորը ստորև մենք դնում ենք քաղվածաբար:

### [ԽԱԶԵՑԱՐ - ՀԱՅԵՐԸ]

[Կանոն] 12... հերձվածողներից խաչեցարները<sup>1</sup> հայերն են... Սրանց մասին սահմանում ենք, վոր [ուղղափառություն ընդունելու դեպքում] սրանց լիովին մկրտեն ինչպես հեթանոսներին. վորովհետև դասնր, վոր այլ մեծ յեկեղեցիներն աչապես են անում, ինչպես որինակ Անախոքի պատրիարքական աթոռն ու նրան հետևող ամբողջ արևելքի յեկեղեցիները<sup>2</sup>:

\* Կանոնների ուսումնասիրությունը տես Իվ. Ջալալիջիի Վրաց իբրավանքի պատմությունը, I, վրացերեն, Տփղիս 1928, հջ 39—46, հմմ. բազիլանին հնագույն և գիտական արժեքից միանգամայն գուրի զբոսչիք. *Андроник Газелиев*, «Дзегинѣ цера» (Хартія) грузинского царя Давида III Возобнови телы. Тифлис 1898:

### ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Հմմ. հինգերորդ գլխի 12-րդ ծանոթ. «Սաչեցարներ», իբրև հայերի մականուն, վրաց գրականության մեջ մտած է հունարենի աղբյուրից, ուր մենք ունենք *χαίρειοι*, ինչպես այդ կարգում ենք *Quomodo recipiendi sunt Armenii haeretici*-ի մեջ (*Migne*, PG. CXXXII, 4257), կամ *χαίρειοι*, ինչպես կարգում ենք այլուր, ճիշտ այնպես, ինչպես այն նույն հունարենից մտած է սլավոներենում «ханзири» ձևով (*И. Мансветов*, О постах православной восточной церкви, 50). տես նաև՝ *А. Меликсет-Беков*, Грузинский пзвод еказанія о поста «араджавор», стр. 106—107, 81, 73:

2. Այս խոսքերը վորոշ արձագանք են վրաց յեկեղեցու՝ նախնական շրջանում Անախոքի աթոռից կախման և նույն Անախոքից ինքնադիսուսություն (սովտոկեփալիան) ստանալու մասին հորինված թեորիայի, վորի աղբյուրը Յեփրեմ Կրասերի (տես նախորդ գլուխը) յերկասիրությունն է հետևյալ վերնագրով «Հաղորդագրություն [այն՝ մասին], թե վրաց դարձի պատճառը վոր զբրերումն է հիշված» (ե. Թաղաշչիլի, Ս. Նունելի վարուց նոր վարիանտը կամ վրաց դարձի [պատմություն] յերկրորդ մասը, 1891, հջ XXXVIII—LVI = Թ. Ժորգանիայ, Քրոնիկաներ, I, 1892, էջ 33—37 et pass.). հմմ. *Н. Марр*, Исторический очерк грузинской церкви с древнейших времен. — «Церковные Ведомости», 1907 г., прил., стр. 122.

Հ Ա Վ Ե Լ Վ Ա Ծ

Կանգ առնելով վրաց դավանարանական-վիճաբանական գրա-  
կանություն վրաց, վորն առանձնապես սկսեց զարգանալ IX դա-  
րուց ու իր գաղափրական հասարակության XI—XII դարերում, Կ. Կե-  
կելիձեմ (Վրաց գրականություն պատմություն, I, 539—540)  
գրում է. «Առհասարակ պետք է նկատենք, վոր հայերի ընդդեմ  
ուղղված վիճաբանական գրականությունը հունարեն լեզվով, վորն  
իններորդ դարուցն է սկսվում, առանձնապես սուր կերպարանք  
ստացավ XI—XII դարում: Այժմ հավաքում են ի մի յեկեղեցական-  
դավանական բոլոր այն սովորությունները, վորով հայերը տարբեր-  
վում են հույներից, քննադատության բռնվել են անցկացնում այդ  
և հաճախ այնպիսի պամփիլոսներ հորինում, ինչպիսի յե առա-  
ջ[ավ]որի (ալաջորի) մասին առասպելը: Այսպիսի հորինվածներից  
մի քանիսը վրացերեն էլ է թարգմանվել»:

Ապա նույն դիտմանը մատնանշում է (ibid.), վոր Արսեն  
Վաչեձեմ իր Գողմասիկոնի մեջ ունի մացրած 3 այսպիսի  
հորինվածքներ. 1) «Հայոց հերձվածքի յերեսուն զուգներ»<sup>1</sup>,  
2) Յերուսաղեմի թոմաս պատրիարքի թուղթը Հայոց հերձվածոյ-  
ների դեմ, վորը գրի յե ասել թեոդորոս Յեպիկուբան (Արուսե-  
րան) Սարանի յեպիսկոպոսը, և հունարեն թարգմանել Միքայել  
յերեցն՝ Յերուսաղեմի աթոռի միարանը<sup>2</sup>, և 3) Նիկիտա Սախթա-  
տի՝ Սաուզի վանքի արևգայի՝ Յեղծ հայոց հերձվածքի (Ծ ճառ)<sup>3</sup>:  
Բացի դրանից գոյություն ունին վրացերեն նաև. «Ամենայերա-  
նելի թեոդորոսի (Յեպիկուբայի [Արուսեղուբայի] ?) հակաճառու-  
թյուն ընդդեմ հայոց»<sup>4</sup>, «Մաքսիմիոսի ընդդեմ հայոց»<sup>5</sup> և «Թե  
սուրբ կաթողիկե յեկեղեցին ինչու յե նզովում հայերին»<sup>6</sup>:

Այս գրվածքներից և վոչ մեկը ինքնուրույն չէ, այլ բոլորն  
էլ թարգմանված են հունարենից. հեռապես դասել նրանց վրաց  
աղբյուրների շարքում անհնարին է: Այնուամենայնիվ, մենք նպա-

տակահարմար դասնք տալ նրանց ցուցակը, և ի վերջո կուզե-  
լինք անել մի նկատարություն էս:

Ըստ մեր հետազոտություն, «Հայոց հերձվածքի յերեսուն զուգնե-  
րն» և «Թե սուրբ կաթողիկե յեկեղեցին ինչու յե նզովում հայե-  
րին» գրվածքները, վորնք հասել են մեզ, առաջինը՝ Վրաց մեջ  
գրադիտություն տարածող ն. ընկերություն հավաքածուի № 1463  
և Տվիլիսի ն. յեկեղեցական թանգարանի № 205 ձեռագիրներում,  
իսկ յերկրորդը՝ Վրաց մեջ գրադիտություն տարածող ընկ. հավա-  
քածուի № № 312 և 248 ձեռագիրներում, փոխադրված են հու-  
նարենից (թեև վոչ բառացի, այլ թեթև վերամշակված ձևով)<sup>7</sup>  
հույն-բյուզանդական գրականություն մեջ հայտնի հետևյալ արակ-  
տասաններից. 1) Narratio de rebus Armeniae-ին կցված Quomodo  
recipiendi sunt Armenii haeretici-ի (Migne, PG. CXXXII, 1257—  
1265)<sup>7</sup>, և 2) Oratio invectiva adversus Armenios-ի Oratio I Contra  
Armenios-ին կցված Capita quorum ratione Armenii devoventur-ի  
(ibid., 1209—1217):

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Հրատարակված չէ:
2. Նույնը: Առաջմ տես Ա. Меликсет-Бекоев. К вопросу о Феодоре Абукуре в древнегрузинской литературе.—«Известия Кавк. Инст.-Арх. Института», т. IV, 1926, стр. 43—45:
3. Նույնը: Առաջմ տես. Ա. М.-Б. Никиты Стифата, перомонаха Ступицкого, «Опровержение армянской ереси» (грузинская версия).—«Христ. Восток», т. VI, 1918, стр. 92—93:
4. Նույնը: Առաջմ տես. Ա. Меликсет-Бекоев. К вопросу о Феодоре Абукуре в древнегрузинской литературе, стр. 45:
5. Հրատարակված չէ:
6. Հրատարակել է Մ. Սախիճիցը, «Վրաստանի գրախառը», էջ 633—635:
7. Հմմ. Կ. Կեկելիձե, op. cit., էջ 540, ծան. 7:

Մեր ներկա աշխատութեան առաջին հաստի յերկրորդ պրահում մենք ամփոփել ենք քաղվածքներ XI—XII դարու վրայ պատմիչների այն յերկասիրութեաններէ, վորոնք ի մի յեն յեղել ժողոված գեւ ելի XII դարում՝ հիմք ծառայելով ուրույն խմբագրութեան, վորն ալ յերկասիրութեանների ձուլման և ապա համառոտութեան վորձն և ներկայացնում, ասել և՛ այն խմբագրութեան, վորը հասել և մեզ միմիայն հայերեն թարգմանութեամբ և հայոսի յե՛ «Պատմութիւն Վրաց» կամ «Համառօտ պատմութիւն Վրաց» վերնագրով, նույնը M. Brosset-ի կողմից ֆրանսերենի վերածած (հայերենից) Chronique Arménienne վերատառութեամբ (և ըստ այսմ՝ սուսերեն Армянская хроника և վրացերեն Սոմխուրի խրոնիկա) կոչված): Տարակուսանքն այն առիթով՝ կատարվել և արդյոք հիշված համառոտութեանը վրայի խմբագրի ձևքով և ապա թարգմանվել հայերեն, թե՛ հայ խմբագիրն և ուղղակի կատարել ալ աշխատանքը, լուծվում և հայերեն տեկտի մեջ ներմուծած հեռեկալ հիշատակարանի հիման վրա. «Եւ գտաւ պատմութիւնս համառօտ՝ ի ժամանակա շիտիման, և եղաւ ի զիրքս՝ որ կոչի Քարթլիս Յիօրէպա, որ է՝ Պատմութիւն Քարթլայ. և եզիա գտա Ջուանշեր (բնագրում՝ Ջուանքեր. Լ. Մ.-Բ.), գրեալ մինչև ցՎախթանգ թագաւոր, և մինչև ցայսվայր ինքն յաւել Ջուանշեր (բն.՝ Ջուանքեր. Լ. Մ.-Բ.), և զգալոցն՝ յանձնեաց տեսողացն և պատահելոցն ի ժամանակին» (էջ 104):

Ուրեմն պարզ և, վոր «Պատմութիւն Վրաց»-ը թարգմանութեան և վրացերեն լեզվով հնում գոյութեան ունեցող վրաց տարեգրութեան այն՝ նախնական՝ խմբագրութեանից, վորը «Քարթլիս ցխորեբա», այսինքն «Պատմութեան Վրաց (Քարթլիի)» յի կոչվել, թեև այս անունը հետագայում իբրև terminus technicus տարածվել և վրաց տարեգրութեան վրա ընդհանրապես՝ սկսած հնագույն ժամանակներից մինչ XIX դար, վորը վրացերեն նույնպէս «Քարթլիս ցխորեբա» (Քարթլիս ցխօրերբա) անունով և

հայանի, իսկ ֆրանսերեն թարգմանութեամբ M. Brosset-ի Histoire de la Géorgie depuis l'antiquité jusqu'au XIX<sup>e</sup> siècle (սուշն գիտնականի հորինածն է և Chronique Arménienne վերնագիրը):

Կար ժամանակ, յերբ գիտական աշխարհում այն կարծիքն էր տիրում, Վոր իբր թե «Քարթլիս ցխորերա» կոչված վրաց տարեգրութեանը միմիայն XVIII դարու առաջին կեսումն է կազմվել և խմբագրվել Վախտանգ VI թագաշորի կոմիտիայի ձեռքով: Բայց նրանից հետո, յերբ հրատարակ հանվեց, մեկ կողմից, այսպես կոչված «Պատմութիւն Վրաց»-ը (Chronique Arménienne-ը), իսկ մյուս կողմից՝ նույն տարեգրութեան այսպես կոչված «Մարիամ թագուհու վարիանսը», վորը հաղթվ մինչ XVII դար և հասնում, ուրեմն նախաշխարհայն շրջանին և պատկանում, գիտական աշխարհում նույն «Քարթլիս ցխորերա»-ի հանդեպ հեղաշրջում կատարվեց և այն կարծիքը հաստատվեց, Վոր վրաց տարեգրութեանը պատմական կամ ժամանակագրական բնույթ կրող այս ու այն հեղինակներ յերկասիրութեաններ ի կոնսուլդացիայի մի վորձ և, Վոր կատարվել է հետզհետե, դարերի ընթացքում, սկսած XII դարուց:

Համենայն դեպս, Վոր «Քարթլիս ցխորերա»-ի հնագույն խմբագրութեաններից մեկը հայտնի չէ յեղել հայ պատմիչներին դեռ ելի XII—XIII դարերում, դա ակնհերե փաստ է:

Մխիթար Անեցիին, Վորը գրի չէ առել Հայաստանի պատմութեանը «ի սկզբանէ աշխարհի» մինչ 1193 թ.՝ յերեք գրքով, Վորից մեզ հասել է միմիայն սկզբնական մասը (Հանդէսք բանից աշխարհագրութեամբ գրուցաց, տիեզերապատում անցից, վիպասանալ ի քաջ գիտնականէն Մխիթարայ, աւագերիցու մեծ կաթուղիէին Անուոյ հոյակապ քաղաքի. ի խնդրոյ հաւը Հառիճայի Գրեգորոյ վարդապետի), իր յերկասիրութեան մեզ չհասած մասերում, ի միջի այլոց, հիշատակելիս չէ յեղել և վրաց աղբյուրները, Վորից ապա պատվել և Սեփանու Որբելյանը (Պատմութիւն Սերէոսի եպիսկոպոսի ի Հերակլն և սկիզբ նորագիւտ պատմութեան Մխիթարայ Անեցուոյ, ի լոյս էած Ք. Պատկանեան, ՄՊԲ. 1879, հավելված, էջ ա—բ., հմտ. Ք. Պատկանեան, Համարում տեսութիւն հայ պատմական գրականութեան, հավելված «Փորձ»-ի 1880 թ. № 1, էջ 24):

Վարդանը նույնպես ծանոթ է վրաց տարեգրութեանը, յերբ ասում է. «Իսկ յաղագս վրաց թագաւորացն սկզբանց, որ կայ ի գիրս նոցա», և մի վորք հետո. «այս ըստ Մխիթարայ երկոց

ասելցն» (Հաւաքումն պատմութեան Վարդանայ վարդապետի լուսարանալ, Վենետիկ 1862, էջ 91—92):

Մխիթար Այրիվանեցիին ևս ըստ այն տեղեկութեանները, Վոր ասելիս և Վրաց պատմութեանից, քաղում է վրաց տարեգրութեանից կամ, ուղիղ ասած, վերջինիս հայերեն թարգմանութեանից՝ նույն սխալներով և աղավաղումներով, Վորոնք հատուկ են հենց այդ թարգմանութեանը (տես հատվածները՝ «Իշխանք վրաց», «Թագաւորք վրաց» և «Եպիսկոպոսք վրաց» վերնագիրների տակ. Մխիթարայ Այրիվանեցուոյ Պատմութիւն Հայոց, ի լոյս ընծայեաց Մկրտիչ Էմին, Մոսկովա 1869, էջ 17—18):

Իսկ Սեփանու Որբելյանը, անտարակույս, ծանոթ է ինչպես Մխիթար Անեցու պատմութեան, նույնպես և վրաց տարեգրութեան հայերեն թարգմանութեան հետ, Վորոնց մասին գրում է հետևյալը. «Եւ անա զայս ծանեաք ընդ աղօտ ինչ ի Վրաց պատմութենէն... զի ժտեալ էր յիշատակ նախնական գրուցարանութեանց նոցա, նա և ամենայն արութիւնք և դորք երևելիք ի տանն Վրաց ազգին Օրբէլեանց ի նոցին ժամանակագրոցն զոր Քարթլիս-ցխորերայ կոչեն, վասն այն մեք ոչ գիտացաք զորպէսն և զկարգ բանիցն զի և ըստ կարգի շարայարեալ էաք ի մատենիս, բայց զոր գտաք ի հայկեզու զիրս սակաւ ինչ յիւստակ՝ դիցուք, ևս և զվախճան կատարածի նորա, զոր հաւաստեալ ծանոց մեզ դեղեցիկ պատմութիւնն Մխիթարայ Անեցուոյ» (Պատմութիւն նահանգին Սիսական արարեալ Ստեփանոսի Օրբէլեան արքեպիսկոպոսի Սիւնեաց [Ղուկասեան Մատենագարան IV], Թ. 1911, էջ 372—373):

Մի կողմ թողնելով «Պատմութիւն Վրաց»-ի (Chronique Arménienne-ի) տեկտը, Վորը մեզ հասել է առնվազն 3 գրչագիր որինակով (յերկուսն Եջմիածնի մատենադարանինը, Վորոնցից մեկը Կարապետ արքեպ. Բաղրատունով ձեռքի տակ չնգածն է, Վորտեղից ընդորինակված և Վենետիկի Մխիթարայանց ձեռագիրը, և մեկն էլ Լենինգրադի Գիտութեանց ձեռարանի նախկին «Ասիական թանգարանի», այժմ «Արևելագիտութեան ինստիտուտի»), բավական է ասել, Վոր սրանցից հնագույնն և Եջմիածնի մատենադարանի հին հավաքածուի № 1902 (=1792), Վորն ըստ M. Brosset-ի (Histoire de la Géorgie, Introduction, SPB. 1858, p. XVIII, Voyage archéologique dans la Géorgie et dans l'Arménie, III rap., 1849, p. 2) 1279—1311 թ. թ. է գրված: Այլ հարց է, թե ով է այդ խմբագրութեան հեղինակը կամ կազմողը, Վորին առայժմ վոր

մի գրական պատասխան չի կարելի սալ, թեև Ք. Պատկանյանը (Ванские надписи и значение их для истории Передней Азии. О древней грузинской хронике, — «Журнал Министерства Народного Просвещения», 1883, декабрь, стр. 243—244) այն անգամ մի հայ վանականի գործ եր համարում («автор древней Грузинской Летописи едва ли природный Грузин, вероятнее всего малограмотный армянский монах»): Ա. Գրեգորյանը, ապա և «Պատմութիւն Վրաց»-ին, գիտական աշխարհում միշտ կարեւոր նշանակութիւն է ընծայելի. և այս և պատճառը, վոր նրա շուրջը հասակ գրականութիւնն էր գոյութիւն ունի, այն է. 1. М. Brosset. Chronique Arménienne (Additions et éclaircissements à l'Histoire de la Géorgie, SPB. 1851) — հայերեն տեղատի ամբողջական ֆրանսերեն թարգմանութիւնը. 2. К. Патаканов. Ванские надписи и значение их для истории Передней Азии. О древней грузинской хронике (Журнал Мин. Нар. Просв., 1883, декабрь, стр. 199—274) — հայերեն տեղատի ուսումնասիրութիւնը՝ սկզբնական մասի ուղեւորներն թարգմանութիւնը հանդերձ. 3. Համառոտ Պատմութիւն Վրաց ընծայեալ Զուանշէրի պատմչի, Արամիս վ. թիւրոյեանի առաջարանով (Մասնագրութիւնք նախնեաց, Վենետիկ 1884) — հայերեն տեղատի հրատարակութիւնը. 4. Н. Марр. Из летней поездки в Армению. Заметки и извлечения из армянских рукописей. VII. Об армянском тексте Грузинских летописей («Записки Вост. Отд. Рус. Археолог. о-ва», т. V, 1890), նույնը հայերեն. Ն. Մառ. Ամառնային ուղեւորութիւնից գէղ ի Հայս, թարգմ. Ո. Անտիկան («Ազգային Մասնագրարան») է, Վիեննա 1892) — հայերեն տեղատի պարունակող եջմիածնի հնագույն ձեռագրի ուսումնասիրութիւնը. 5. Յուսիսի Արուսեան. Վրաց սարկարութեան հին հայերեն թարգմանութեան առթիվ, վրացերեն («Մոզզաութի» ամսագիր, 1901, № IV) — գիտութիւնը հայերեն տեղատի ազգագրութեան մասին. ըստ իս՝ հեղինակը հայտնում է, վոր ինքը հայերեն տեղատի «վրացերենի և վերածել IX—X դարու լեզվով» (ինչպես Աստղիս Կապարեանի իր «Պատմական պրոպոզիցիան» ժողովածուի մեջ, էջ 155, հայտնում է, վոր «[Վրաց] մասնագրութեան» այս հին վերստին» ինքն ևս «վերածել և հայերենից հին վրացերենի» 1908 թվին). և 6. Յեղիա վ. Քասուցի. Վրաց ժամանակագրութիւնը («Հանդէս Ամսօրեայ» 1921 թ. № № 9—10, 11—12, 1922 թ. № № 2—3) — հայերեն տեղատի ուսումնասիրութիւնն ըստ էջութեան:

Ինչ վերաբերում է «Քարթլիս ցխորերա»-ի բուն տեղատի, այն հեղինակ կողմից ժողովածու չի, վորը պարունակում է բազմաթիվ յերկասիրութիւններ զանազան պատմիչների՝ սկսած XI դարուց (յեթն վոչ ավելի հին) և մինչ XVIII—XIX դար: Այդ պատմիչներից հնագույններն են նրանք, վորոնց գրվածքները համառոտվել են և ի մի ձուլվել գեա էլի XII դարում՝ վորոշ արտահայտութիւն ստանալով «Պատմութիւն Վրաց»-ի (Chronique Arménienne-ի) մեղ չհասած վրացերեն բնագրի մեջ: Ահա և այդ պատմիչների անուններն այն հաջորդականութեամբ, ինչպես նրանց յերկասիրութիւնները գեաեղված են «Քարթլիս ցխորերա»-ի այսպես կոչված «Մարիամ թագուհու վարիանում». 1. Լեոնիսիս Ռուխեցի (Լեոնիսի Մարիսի) — «Վրաց թագավորներ և նախահայրերի ու սոսմերի պատմութիւնը», 2. Զուանշեր Զուանշերյան (ըստ Վ. Կեկելիանի՝ նույն Լեոնիսիս Ռուխեցին) — «Վախտանյ Գորգասալի պատմութիւնը», 3. Լեոնիսիս Ռուխեցի — «Արջիլ թագավորի վկայարանութիւնը», 4. Անտոն — «[Վրաց (Քարթլիս) մասյանը]», 5. Անտոն — «[Դավիթ] արքայից-արքայի պատմութիւնը», և 6. Ամբաս վորդի Դավիթ — «Բագրատունեաց պատմութիւնը»: Ստորե, յուրաքանչյուր հեղինակի մասին առանձին խոսելիս, մենք նպատակահարմար գտանք այս հաջորդականութեանը չհետեւել, այլ գոտաւորել նրանց ժամանակագրական կարգով՝ առաջութեան տարով Դավիթ վորդի Ամբասին, ապա միմիայն Լեոնիսիս Ռուխեցուն և Զուանշեր Զուանշերյանին և, ի վերջո, անանուն հեղինակներին:

Քաղվածքները վրացերեն բնագրերից հայերեն թարգմանութեամբ մենք տալիս ենք համաձայն հետեյալ հրատարակութիւնների.

1. Ե. Թաղայեվիի, Քարթլիս-ցխորերա. Մարիամ թագուհու վարիանար, վրացերեն, Տփղիս 1906, էջ 1—361:

2. Մ. Բրոսե, Քարթլիս-ցխորերա. վրացերեն, ՄՊՔ. 1849, էջ 15—263 (նույնը ստերեոտիպ արտատպութեամբ՝ Ն. Մառ, Քարթլիս-ցխորերա, Պետրոպոլ 1923, էջ 15—200, կիսատ մնացած):

Միտմանակ ոչապօրծած ունինք և ֆրանսերեն թարգմանութեանը վրացերենից՝ М. Brosset, Histoire de la Géorgie, I Partie. I-e Livraison, SPB 1849, ամբողջ (р. p. 15—381):

Ինչ ամին, յուրաքանչյուր համաձայն կամ քաղվածքի կողքին, յեթն այն այսպես թե այնպես զուգադիպում է «Պատմութիւն Վրաց»-ի (Chronique Arménienne-ի) հայերեն տեղատի, մենք

ամբողջապես առաջ ենք բերում և այդպիսին, Վորպեսզի դրանով մեկ կողմից, գլուխը չունի ավանդ լինինք ընթերցողին կարևոր համեմատություններ կատարելու համար, և մյուս կողմից՝ ցույց տանք, թե XIII դարու հայերեն քաղվածքները վաղից և շեղվում բնագրից և, ուրեմն, Վորպան հախտք կարելի չե ընծայել վերջինիս՝ այս կամ այն խնդիրները լուծելիս, նամանավանդ այն կետերում, յերբ հալ-վրացական փոխհարաբերություններն արձանագրելիս՝ այդ յուրներն իրենց լուսարանությունը իրարից շեղվում են և նույնիսկ ըստ ելույթյան մեկը մյուսին հակասում:

II.

## ՍՄԲԱՏ ՎՈՐԴԻ ԴԱՎԹԻ (XI Դ.)

### „ԲԱԳՐԱՏՈՒՆՅԱՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ“

Քարթլիս-ցխոբերայի Մարիամ Թագուհու վարիանտում «Դավթի արքայից-արքայի պատմությունը» (տես այս պրակի Ե-գլուխը) անմիջապես հետևում է մի փոքր յերկասիրություն հետևյալ վերնագրով. «Պատմություն և սեղեկանք մեր վրաց Բագրատունյաց (Բագրատունյան) Թագավորների մասին, թե վերսեղից յեկան նրանք այս յերկիրը կամ վեր ժամանակից ունին նրանք դրաված վրաց (Քարթլի) Թագավորությունը, վեր գրեց Սմբատ Դավթի վորդին»:

Այս յերկասիրությունն առաջին անգամ հրատարակեց Ե. Փաղաջավիին իր հայտնի աշխատության մեջ «Յերեք պատմական բրոնիկա» (վրացերեն, Տփղիս 1890), էջ 41—79, տալով առանձին և նրա ուսուցիչներն թարգմանությունը համապատասխան աշխատության մեջ՝ Источники грузинских летоисеий — Три хроники («Сборник материалов для описания местностей и племен Кавказа», в. XXVIII, 1900), стр. 117—182: Ապա յերկրորդ անգամ այն հայտնի դարձավ «Մարիամ Թագուհու վարիանտի» հրատարակումով, վերը նույն Ե. Փաղաջավիին լույս ընծայեց (վրացերեն, Տփղիս 1906), էջ 337—361: Ինչ վերաբերում է Քարթլիս-ցխոբերայի Վախտանգյան խմբագրությունը, այնտեղ այդ յերկասիրությունն առանձին-առանձին պատասխիկներով է մուծած, էջ 161—163, 188 et pass., վորոնք գիտական արժեքից միանգամայն դուրիկ են (հմմ. նույնը ֆրանսերեն թարգմանությունը՝ Histoire de la Géorgie, I, 1. p. p. 216—220, 261 et pass.):

Թե ով էր Դավթի վորդի Սմբատը, դրա մասին վոչինչ հայտնի չե. սրա մասին վոչ նրա յերկասիրության մեջ կա վորեկ սեղեկություն և վոչ էլ այլուր: Սակայն, բնչպես իր

ժամանակին և. Թաղապետի (Յերեք պատմական քրոնիկա, (CIX) նկատեց, ընտ միանգամայն անձանոթ և մեզ թեև հավանական և թվում, վոր նա Տալք-Կղարջյան Բազրատունիներից (Բազրատունիներից) լինի, և ապրում էր տասնութներորդ դարում: Յեղ իրոք, Սմբատն իր պատմությունը սկսում և Ազամից և հասցնում մինչ Բազրատ IV (1026—1062) թագավորությունը՝ կրատ թողնելով վերջինիս նկարագրությունը: Ուրեմն պարզ և, վոր նա XI դարու կիսի կամ առաջին կիսի հեղինակ պիտի լինի, նամանավանդ յեթև ի նկատի առնենք այն հանգամանքը, վոր նրա պատմությունը նույն XI դարու յերկրորդ կեսում ոգտագործած ունին Լեոնտիոս Ռուխեցին (տես այս պրակի Բ. գլուխը) և Ջուանշեր Ջուանշերյանը (տես Գ. գլուխը):

ղովեց Վրաց (Քարթլիի) զորքը, վորին  
ուժեր միացրեց Հայրից (Սոմեխիթից \*\*),  
և [պարսից] դեմ յեղով նեղ Բիկինիս-  
նեով<sup>16</sup>: Կարիճները սկսեցին կռվել,  
վորը (կռիվը) յերկար (շատ օրեր) տևեց:  
Յեւ յեթե հանգես ելին զայլս պարսից  
կարիճները, վորոնց հետ չեղին կարո-  
ղանում կռվել Վրաց (Քարթլիի) և Հա-  
յոց (Սոմեխիթի) կարիճները, նրանց դեմ  
զուրս եր զայլս ինքը Փարսման թա-  
գավորը կամ նրա սպարապետ Փառնա-  
վազը, [վորոնք և] հաղթահարուեմ ելին  
նրանց:...

... Ապա վրացիք ու հայերը (սոմեխ-  
ները) հարձակվեցին պարսից վրա, փա-  
խուստի յենթարկեցին և կոտորեցին  
նրանց և անթիվ [եղ] դերի վերցրին, և  
զնայ Միհրդատը (Միհրդատը) փախուստ-  
կան գեպի Պարսից յերկիրը:

... Յեւ [քաջ Փարսմանը] Վրաց  
(Քարթլիի) և Հայոց (Սոմեխիթի) զորքի  
առաջնորդ յեղով [ընդդեմ պարսից]...

Իսկ [Փարսմանի սպանութունից  
հետո] Փառնավազ սպարապետը տարավ  
քաջն Փարսմանի կնոջն ու վորդուն,  
և թափառեց, այս գնաց Հայք (Սոմ-  
եխիթ), քանի վոր Փարսմանի կինը հա-  
յոց (սոմեխներ) թագավորի ազջեկն  
էր...<sup>17</sup>

...և Փարսման ածեալ զօր ի Հայոց չու-  
ղաւ ընդ առաջ նոցա ի Հրինսի Սէու (ու-  
ղեղ՝ Բիկինիսնեովի), որ է երկաթածոր:

... Յայնժամ զօրքն Հայոց և Վրաց  
յանինայ գնէին զամենայն Պարսիկան  
արեան ճապողիս ընդ երես երկրին:  
Եւ գերեւալ Միհրդատ անկաւ ի Պարսու:

... և ինքն քաջն Փարսման ուժով  
Հայոց աւերէր և քանդէր զՊարսու:

Եւ սպարապետն Փարսմանայ Փառ-  
նավազ՝ տուեալ զկին և զորդիս Փարս-  
մանայ գնաց ի Հայսու:

Այս պահին հայերն (սոմեխներն) ու  
հայերը (բերձներն) համերաշխ ելին:  
Իսկ հայոց (սոմեխներ) թագավորը  
զօրք բերել տվեց Հունաստանից և զնայ  
պատերազմիւ պարսից և վրաց հետ  
[հայերն] միացան և յեղերացիք (մեզ-  
բիները) և անհամար զօրք կազմեցին:  
Ապա Միհրդատն (Միհրդատն) և պարսից  
իշխանը զօրք բերեցին պարսից յերկ-  
րից, իսկ հայերն (սոմեխներն) ու հայ-  
ներն (բերձներն) և յեղերացիք (մեզ-  
բիները) իջան ներքին Քարթլի (Շիրա-  
քարթլի), և այնտեղ նրանց հանդիպե-  
ցին պարսիկներն և վրացիք՝ Լիախի  
կոչված գետի ափին, և յեղով այնտեղ  
մեծ պատերազմ այն տեղում, վոր կոչ-  
վուեմ ե Ռեխի...

Յեւ [քաջն Փարսմանի թոռն վորդի  
Համազասպը (Ամզասպը)] ... զօրք բե-  
րելով Հայրից (Սոմեխիթից)՝ ժողովեց  
իբ բոլոր ուժերը և անցավ Ոսեթ, և  
վոչք չեղավ նրա գեմ. նա գերեց Ոսեթը  
և հաղթանակով տուն վերադարձավ:

Ապա նա հանդգնությամբ սկսեց  
վրեժխորություններ անել և յերեկոյն-  
ներից շատերին վոչնչացրեց. հենց այս  
պատճառով Վրաց (Քարթլիի) ժողո-  
վուրդը նրան առեց, և առելը զարձալ  
նա նաև հայերի (սոմեխների) համար, և  
սիրեց նա պարսիկներն: Ապա նրան  
ուրացան արևմտյան հինգ իշխանները՝  
յերկրայան իշխանները Յեղերաց (եղ-  
բիսի), մեկը Ոճրիսի, մեկը Կարջբի  
(Կարջբի) [և] մեկն [և] Ծունդայի:  
Կրակեցին հայոց (սոմեխներ) թագավո-  
րին՝ խնդրելով իրենց համար թագավոր  
նրա վորդուն, քանի վոր [վերջինս] Հա-  
մազասպի քեռրդին էր: Ապա հայոց  
(սոմեխներ) թագավորը մեծ զորքով  
(սոմեխներ) թագավորը մեծ զորքով  
յեկավ Քարթլի, և զօրք բերել տվեց  
նաև Հունաստանից, և ինդրեց ոսերին  
ե, վորոնք ուրախությամբ յեկան, քանի  
վոր Համազասպը նրանց յոխերիմ թըշ-  
նամին էր... և յեկան յեղերաց (մեզ-  
բիներ) իշխաններ ժոռու: Յեւ այս-

... եւ թագաւորն Հայոց հաւտեալ  
ընդ Յոյնս՝ չողաւ ընդդէմ Պարսից և  
Միհրդատայ, և պատահաց նոցա ի վի-  
րայ Լիսի գետոյն, և սպան զՄիհրդատ  
և զիշխանն Պարսից, և թագաւորեցոյց  
Վրաց զօրդին Փարսմանայ՝ զԱզով:

Եւ... առեալ զօր ի Հայոց Համազասպ,  
էանց յայնկոյս յերկնս ի վերայ Օտայ,  
և գերեաց զաշխարհն ամենայն, և դար-  
ձաւ ի տուն իւր:

Ձինի այսորիկ հպարտացաւ յանձն  
իւր Համազասպ, և աղտոտմեաց ի Հա-  
յոց. և սպան յերոցն արս երեկոյն, և  
ապաւինեցաւ ի Պարսու: Եւ վասն այ-  
սորիկ առեցին զնա Վերք, և խնդրե-  
ցին իւրեանց թագաւոր՝ զօրդի թագա-  
ւորին Հայոց զՎրոյն գրեոտրդի Համա-  
զասպայ: Եւ լուաւ. նոցա թագաւորն  
Հայոց, և եկն ի Վերք եւ եկին առ նս  
իշխանքն արևմտից կողմանն հնգեքեան,  
և իշխանն Ունձրիսեոյ և իշխանն Ծուն-  
դայ. կոչեցին և զզօրն Օտայ, և եկին  
խնդութեամբ վասն վրիժուց արևանն՝  
զոր պարտէր նոցա Համազասպ: Կոչեաց  
[Համազասպ] յօգնութիւն գտունն Պար-  
սից, և եղի պատերազմ սաստիկ, և յաղ-  
թեցաւ Համազասպ, և սպանաւ ի պա-  
տերազմին, և հարան զօրքն Պարսից:

\* Var. Արտաշան: Հմմ. 148 յեր. \* ծանոթութիւններ:  
\*\* Var. Հարավից:

այն ըստըն յեկան հայոց (սոմեխներէ) թագաւորի մասու... Յեւ մեծ եր հունաց (բերձեններէ) և հայոց (սոմեխներէ), ոսերի և յեզերաց (մեղրեններէ) զորքը... և տեղի ունեցաւ մեծ պատերազմ նրանց [և վրաց] միջև: Համազասպը պարտուեց և նրա զորքը ցրվեց, իսկ Քարթլին նվաճեցին: Յեւ սպանեցին Համազասպին և կոտորեցին նրա զորքը: Յեւ թողեց հայոց (սոմեխներէ) թագաւորը թագաւոր Վրաց (Քարթլի) իր վորդուն՝ Համազասպի քնտրուան վորի տնունն եր Ռե...:

Հայքում (Սոմխիթում) թագաւոր գարձավ Սոսրովը (Կասրո թագաւորը) և այս Սոսրով հայոց (սոմեխներէ) թագաւորը սիսեց պատերազմի Քասրե պարսից թագաւորի հետ, և նրան ոգնում եր վրաց Ասիադոր թագաւորը: Յեւ այս Ասիադորը \* բացեց Կավկասացիոց դուռն և դուրս բերեց ոսերին, լեզգիներին (լեկերին) և խազարներին, և դնաց Սոսրով (Կասրո թագաւոր) հայոց (սոմեխներէ) թագաւորի մաս, պարսից հետ պատերազմելու... իսկ [այս Ասիադորով] վերջացավ վրաց (Քարթլի) Փարնավազյան թագաւորների տոհմը \*\*:

Մինչդեռ հայերն (սոմեխներն) ու վրացիները և հյուսիսային ժողովուրդը փախստական գարձելն պարսից թագաւորին, [վերջինս]... դիմեց գյուղապետներին, բղերջներին և իշխաններին... և մեծ պարզե ու պատիվ խոտացավ [նրան], ով հնար կ'ընէր վրեժնորդ թշնամիակ ժողովականներին մեջ գտնվում եր մի յերեկէ իշխան՝ Անակ տնուն, վորն ազգական եր հայոց (սոմեխներէ) Սոսրով (Կասրո թագաւոր) թագաւորին: Նա վեր կացավ և ասավ. «Մեր զորքը փախստական և Սոսրով (Կաս-

... և թագաւորն Հայոց Սոսրով կոուէր ընդ նմա (Քարսէ-Շարվան, որդի Սասանայ)՝ օգնակա՛նութեամբն Ասպաբադուրայ, որ ամէր ընդ դուռն Կովկասու զԼեխս և զԼեկս և զՕոս և զՄազիրս՝ առ թագաւորն մեծ Սոսրով:...

... և փախստական լինել թագաւորն Պարսից Քարսէշտը, որ նա ինքն է Արտաշէր: Սորէք այնուհետեւ ընդ մեծամեծս իւր թէ զինչ արասցեն յերեսաց թագաւորին Հայոց, որ տասն ամ հեղէր զնոսա: Ապա յառաջ եկաց ոմն աղբային Սոսրովու, անուն Անակ կոչեցեալ, և ասաց ի լուր ամենեցուն. Պարս է քեզ ծառայել հարկադրութեամբ Սոսրովու, և հանդարտին Պարսք ի չարեաց նորա և գաղա մերձեցեալ յահանջս նորա՝ ասաց. երթայց առ նա ընտանութեամբ սիրոյ, որպէս ասլըս-

\* Var. Ասիադուր:  
\*\* Var. + և թագաւորազունք հայոց (սոմեխներէ) | + Արշակունցաց թագաւորները:

րո Կոսարոս) հայոց (սոմեխներէ) թագաւորից... այս և իմ խորհուրդը, վոր խաղաղությամբ ու աղերսով և հարկաւորությամբ հանգստացնենք Սոսրով (Կասրո թագաւոր) թագաւորին: [Յեւ] ինչ վոր ասաց Անակն, անկեղծ շատաց... Ապա [պարսից] թագաւորը պատնիսբար դիմեց Անակին. և Անակն ասաց. «Յեցցե, արքն, հավիտյանս. յես կ'դանեմ հնար վրեժն առնելու Սոսրովից (Կասրո թագաւոր), և կ'ընամ նրա մաս ընտանիքովս, և նա կ'վատահանա ինձ իբրև ազգականի, և քո բազը բարով կ'գայս կ'սպանեմ այդ (հայոց) թագաւորին և դուրս կ'դնեմ քեզ համար»:

Թագաւորը հազանեց այս մտաւորութունը, և մի քանի օրից հետո Անակը և նրա յեղբայրն ընտանիքով յեկան, իբրև ուրացյալք պարսից թագաւորին: Յեւ յեկավ Հայքի (Սոմխիթի) սահմանները Սաղխաղ (Սիլխալա) կոչված քաղաքը, ուր հայոց (սոմեխներէ) թագաւորների ձմերանոցն եր: Հենց վոր Սոսրով (Կասրո թագաւոր) թագաւորը տեսավ նրան, մեծ պատիվ[ներ]ով ընդունեց նրան, և ամենուրեք նրա բարի գալուտն եր ցույց տալիս հավատարմորեն, և թագաւորը տեսնում եր, վոր նա իր ամբողջ ընտանիքով եր յեկել Ապա թագաւորը շնորհեց նրան պատիվ և բաղմեցրեց յերկրորդ աթոռի վրա՝ ուրախությամբ և հանդիստ [սրտով]: Յեւ անցան ձմեռվա օրերը և մտեցավ ամառվա շրջանը, և մեծացան զետերը: Թագաւորը զնաց այնտեղից և յեկավ Արարատ[յան] (Արարատ ?) քաղաքը. և Սոսրով (Կասրո թագաւոր) թագաւորը պատրաստ եր նորից մտնելու պարսից յերկիրը: Ապա մի օր թագաւորը վորսի զնաց, և նրա հետն յին Անակն ու նրա յեղբայրը, վորոնք սրած սուսեր ունեյին բունած [ձեռին] դազանիաբար՝ պատմուճանի տակից, և [հարմար] ժամ[անակ] (ժամ\*) դտնելով սպանեցին թա-

տամբեալ ի քէն, և սպանից զնա նենգութեամբ Ջոր և արաքն իսի և և կն առ նա հանգերձ կզբարբն իւրով. և ի դալ միւսոյ ամին ի յորս սպան զնա, յորժամ կամէր ելանել ի Պարսա: և և մեռաւ ինքն և իւրքն ամենայն, բայց ի յերկուց տղայոց, զոր առեալ դայեկացն՝ փախեան ոմն ի կողմն Յուսաց և ոմն ի Պարսից:

\* Var. յեկանակ:

գավորին և փախան: Իսկ Հայրի (Մամ-  
խիթի) իշխանները հետամուտ չեղան  
և վրա հասան փամանց՝ կամըջի վրա, և  
փամանց՝ ծանծաղուսուս (հունում) [զեան  
անցնելիս], և ամբողջ սերնդով նեղ  
տեղն ընկնելով՝ նրանք չկարողացան  
փախչել, և ուղանվեցին: Յեւ մնաց նրա-  
նից միմիայն յերկու փոքրի, փոքրնք  
բաժանվեցին զայսինքնքի մեջև, մեկին  
տարան Հունաստան, իսկ մյուսին Պար-  
սից սահմանները:

Հենց վոր Բարսե(-Շարվան) Մասա-  
նյան պարսից թագավորը լսեց այս՝  
լցվեց ուրախութեամբ, և շարժվեց [զե-  
պի հյուսիս] ամբողջ զորքով: Ետև նա  
մտավ Հայք (Մամխիթ) և զբաղեց Հայ-  
քը (Մամխիթը), և բնաջինջ արավ ու  
զերի վերցրեց Հայց (սամեհներ) թա-  
գավորի ամբողջ ազգատոհմը: Իսկ Սոս-  
րով (Կասրոս և Կասրոս) թագավորի մե-  
կ փոքրին, [վոր] փոքր ազա յիս, ապա-  
վինել ևր Հունաստան և այնտեղ ևր  
զատարակվում, Տրդատ (Թրդատ) ա-  
նուն 18: Ապա պարսից թագավորը՝ նվա-  
ճելով Հայքը (Մամխիթը)՝ մտավ Բարսե-  
լի: [Իսկ] Ասիագուր (Ասիագուր) վրաց  
թագավորը գնաց Ոսեթ, փոքրեզդե  
զորք բերե Ոսեթից, և ամբայրեց բեր-  
զերն ու քաղաքները: Բայց յիսր [Աս-  
փագուրը] մտավ Ոսեթ, [այնտեղ] նրան  
վրա հասավ մահը և նա վախճանվեց:

Այս Ասիագուրն արև զավակ չու-  
նեք, այլ միմիայն մեկ զուտոր: Ապա  
Վրաց (Բարսիլի) ըտլոր իշխանները  
ժողովեցին Մցխեթ քաղաքում՝ սպա-  
բաստի մոտ, վորի անունն ևր Մախ-  
ժան... Ապա Մախժան \* սպարապետն  
ասաց. «... Հայքի (Մամխիթի) մեծն թա-  
գավորն սպանվեց, և Հայքը (Մամխիթը),  
վորից կախումն ունեք մեր թագափո-  
րութեանը, նվաճած է, և պարսից թա-  
գավորն ախորժակ ունի ամբողջ մեր  
յիբրկիրը կլանելու: Մեր մեջ չկա փոչոք

\* Var. Մախան

և լուեալ զայս թագավորին Պար-  
սից՝ և եկն ի Մցխիթա.

[վորը] նրա զեմ [լինի], և մեր ժողո-  
վորը վորը և մնացել ինչպես անհո-  
վիվ փոխարենք: Այժմ այս և մեր  
մտադրութեանը, վոր մեր հնազանդու-  
թեանն արտահայտենք պարսից թագա-  
վորին և ինդրենք նրանից մեզ թագա-  
վոր նրա վորդուն, և աղերսենք, վոր  
ամուսնացնե նրան մեր՝ Ասիագուր (Աս-  
փագուր) թագավորի զստեր հետ: Զե-  
կուցենք, վոր այդ ազջիկը ներբռնեան-  
ները սերնդիցն և և մեծամեծն\* Արշա-  
կունյաց \*\* և մեր Փառնավազյան թա-  
գավորների զարմից...:

... Յեկ [պարսից թագավորը] հար-  
ցրեց [զեկոտաններից] Ասիագուրի (Աս-  
փագուրի) զստեր ծագման մասին, և  
նրանք պատասխանեցին թե ներբռնեան  
և Արշակունյաց և Փառնավազյանների  
սերնդիցն և: Պարսից թագավորը հա-  
վանեց այս և բավարարեց վրաց ինդիրը,  
և ինք ել լավ և բարվոր \*\*\* համարեց  
Մցխեթում նստեցնել իր վորդուն թագա-  
վոր, քանի վոր Հայց (Մամխիթի) և Վրաց  
(Բարսիլի) և Սասնի և նրա շրջակայքի  
ըտլոր քաղաքներից այն (Մցխեթը) նա  
համարեց ամենից ավագ և ամուր...:

[ՍԱՍԱՆՅԱՆՔ]

Ընդառաջ գնալով վրաց աղերսան-  
քին՝ Բարսե(-Շարվանը) իր վորդի Միհ-  
րանին (Միլիանին) \*\*\*\* ամուսնացրեց  
թողեալ առ նմա քառասուն հազար  
յրնախր արանց Պարսից...  
... և հաս-  
վրաց թագավորի զստեր հետ, և հաս-  
տատեց նրան թագավոր և նստացրեց  
Մցխեթում, և հանձնեց Բարսիլին, Հայ-  
քը (Մամխիթը), Ռանը, Մովսիսանը և  
Հեբբը (Հերեթը)... Յեկ... քառասուն  
հազար պարսից ընտիր զինվոր... ուղար-  
կեց (Հեբբ) Հերեթ և Մովսիսան և Հայք  
(Մամխիթ)...

\* Var. սեղերից:  
\*\* Var. Արշակունյաց, հմմ. 146 յեր.՝ ծանոթ.:  
\*\*\* Var. ավելի լավ և բարվոր abs:  
\*\*\*\* Var. Միհրեանին:

... Յերբ Միհրանը (Միրիանը) քա-  
ռասուն տարեկան դարձալ, վախճանվեց  
[այդ] Միհրանի (Միրիանի) հայրը՝ պար-  
սից թագավորը, և նրանից հետո պար-  
սից թագավոր նստեց նրա կրտսեր  
յեղբայր Բարտամ կոչեցյալը... Պարսից  
մեծավորներն ու մարդպանները... պար-  
սից թագավորո թյունը հանձնեցին Բար-  
տամին, իսկ Միհրանին (Միրիանին)՝  
սիրտը շահելու համար՝ ավին Բարտա-  
մից [ման հանելով] Ջաղիբբը (Ջաղի-  
բեթը), Շամի \* կեսը, Ատրպատականը  
(Ադարբայջանը) հետը կցելով ամբողջ  
այս Բարթիլին, Հայքը (Սոմխիթը), Ռա-  
նը, Հերբը (Հերեթն) ու Մովսիսը...

... Ապա Գուլթաց թագավորը մեծ  
զորքով ներս խուժեց Հունաստան...  
Իսկ հայոց (սոմեխները) Խոսրով (Կաս-  
րո | Կասարոս) թագավորը որդին՝ Տրդատ  
(Թրդատ) \*\* կոչեցյալը, վորին վերև հի-  
շեցինք, մնվել եր Հունաստանում, և  
եր նա հսկա Այդ պահին նա հունաց  
(բերձենները) զորքի հետ եր. հունաց  
(բերձենները) ամբողջ զորքը նրան ընտ-  
րեց, հազարին նրան կայսերական զգեստ  
և զինեցին, և կայսեր տեսքով ուղար-  
կեցին նրան կովկաս Գուլթաց ընդդեմ...  
Տրդատը (Թրդատը) \*\*\* հազթեց [նրան]  
և փախուստի յենթարկեց Գուլթաց բա-  
նակը: Իսկ կայսրը զորք ավեց Տրդա-  
տին (Թրդատին\*\*\*\*) և ուղարկեց Հայք  
(Սոմխիթ)՝ իր հայրենիքը, և նա յեկավ  
Հայք (Սոմխիթ) [և] բռեց Միհրանից (Մի-  
րիանից) [նշանակված] պարսիկ \*\*\*\*\*  
իշխաններին...

... Յիվ Միհրանը (Միրիանը) ավեց  
[իր ազգական] Պերոզին իր դուստրն  
ի կնուխյուն, նաև շնորհեց յերկիրը  
Խունանից սկսած մինչև Պարտավ (Բար-

ի քառասուն ամլն սորա (Միհրա-  
նայ) մեռաւ հայր նորա Արտաշիր, և  
էառ գթագաւորութիւնն կրեւր եզ-  
բայր նորա Բարտամ: Ապա ետուն  
Միհրանայ զՋաղբեթ և զկէս երկրին  
Շամայ, և զԱտրպատական և զՀայս և  
զՄովկան և զՌան և զՀերեթ, և հառ-  
տատեցին զոր յառաջագոյն ունէր:

Յայնմ ժամանակի որդին Խոսրովու  
Տրդատէս՝ քաջութիւն մեծ ցուցեալ  
ի Յոյնս, և ըմբռնեալ անդ գթագաւորն  
Գուլթացոց զնեղիչն Յունաց, և վասն  
այսորիկ պատկեալ ի նոցանէր դանայր  
ի հայրենիս իւր, և սատակէր դամենայն  
օտարս՝ զորս գտանէր և զզօրսն Միհ-  
րանայ:

Իսկ Միհրան երբս զազգական իւր  
զՊերոզ յօգնութիւն իւր, առեալ նմա  
ի կնութիւն զգուստր իւր...

դավ) Կուրի յերկու կողմը իշխան նշա-  
նակելով նրան այնտեղ... և զորք բե-  
րելով պարսից յերկրից՝ սկսեց կովել  
Տրդատի (Թրդատի) \* հետ: Իսկ յերբ  
Տրդատը (Թրդատը) \*\* զորք և բերել  
տալիս Հունաստանից և գալիս Միհրանի  
(Միրիանի) դեմ, վերջինս ուժ չի ունե-  
նում ընդդիմադրելու, ամբացնում և  
բերդերն ու քաղաքները, և Տրդատը  
(Թրդատը\*\*\*) շրջապատում և Միհրանի  
(Միրիանի\*\*\*\*) յերկիրը. իսկ յերբ Միհ-  
րանն (Միրիանն) և ուժեղանում [աջակ-  
ցությամբ] պարսից յերկրի, այն ժամա-  
նակ չի կարողանում ընդդիմադրել Տրդ-  
ատը (Թրդատը\*\*\*\*\*), և նա (Միհրանը)  
շրջապատում և Հայքը (Սոմխիթը): Այս-  
պես յերկար տարիներ ընթացքում  
անդադար խոտովություն և լինում, և  
յերբեք վոչոք յերևան չեկավ պարսից  
մեջ միայնակ մարտնչող Տրդատի (Թրդա-  
տի\*\*\*) հետ: Յեվ նա հռչակավոր գար-  
ձավ ամբողջ աշխարհում, և ամենուրեք  
հազթահարեց իրեն հետ մարտնչողնե-  
րին, ինչպես զրված և նրա մասին «Հա-  
ոց պատմության» մեջ:

Սրանից հետո թագավոր յեկավ պար-  
սից յերկրում Միհրանի (Միրիանի)  
յեղբորորդին՝ Բարտամի վորդին: Նա  
գետազան ուղարկեց Միհրանի (Միրիա-  
նի) մոտ առելու, վոր «ժողովմենք և  
անցնենք Հայք (Սոմխիթ), և մտնենք  
Հունաստան»: Ապա զուրս յելավ պար-  
սանը (Միրիանը) և ժողովեց հոժ բազ-  
մություն՝ ինչպես խոտն դաշտի և տե-  
րեններ ծառի: Անցան [զևայի] Հայք  
(Սոմխիթ). Տրդատը (Թրդատը\*\*\*\*\*)  
չընդդիմադրեց, այլ ամբացրեց բերդերն

Յաւուրսն յայնստիկ թագաւորէր  
երբորդ եղբայրն Միհրանայ Պարտ. և  
առաքեալ առ Միհրան՝ զի առեալ զկա-  
րողութիւնն իւր՝ գնացեց ընդդէմ ի Հայս  
և ի Յոյնս: Եւ չոգաւ բնդ առաջ նմա  
ամենայն ուժով իւրով, և կոտորեցին  
ամբոխ յոյժ, որ գանցանէր զչափով  
համարու: Եւ մտին ի Հայս, և առին  
գերի յոյժի զի Տրդատ ոչ կարաց պա-  
տահել նոցա, սակս բազմութեան նոցա.  
այլ մնաց յամուրս աշխարհին: Իսկ նոցա  
առեալ զՀայս՝ անցին յաշխարհն Յու-  
նաց:...

\* Var. Բամի. հմմ. 148 յիր. \* ծանոթ.:  
\*\* Var. Թարդատ sic:  
\*\*\* Var. Թարդատը:  
\*\*\*\* Var. Թարդատին:  
\*\*\*\*\* Var. զինվորները:

\* Var. Թարդատի:  
\*\* Տես նախորդ ծանոթությունը:  
\*\*\* Var. Թարդատի:  
\*\*\*\* Var. նրա:  
\*\*\*\*\* Var. Թարդատի:  
\*\*\*\*\* Տես նախորդ ծանոթ.:  
\*\*\*\*\* Var. Թարդատը:

ու քաղաքները, և գերեցին Հայքը (Սոմ-խիթը) և մտան Հունաստան...

[Միհրանը] զհասան ուղարկեց Կոստանդիանոս թագաւորի մօտ խնդրելով հաշտութիւն, և խոստացաւ ծառայել նրան և ուրանալ \* պարսիկներին: Կոստանդիանոսը հալանից այս, քանի վոր նորից յերկրուց եր կրում պարսից թագաւորից, և ողնութիւն [ստանալու] համար հաշտից Միհրանի (Միլիանի) հետ. Միհրանի (Միլիանի) Բարսը կուչեցաւ վորդուն վերցրեց պատանդ, և Տրդատին (Թրդատին) ու Միհրանին (Միլիանին) խնամխացեց: Իբ՝ Սալոմե կոչեցաւ զուստըր Տրդատը (Թրդատը\*\*) տվեց ի կնութիւն Միհրանի (Միլիանի) Ռե կոչեցաւ վորդուն: Յեւ բաժանեց [Կոստանդիանոսը] սահմանները Միհրանի (Միլիանի) և Տրդատի (Թրդատի\*\*\*) միջև այսպէս \*\*\*\*. այն յերկիրներն, ուր գետերը զեղի հարավ են հոսում և միանում [Յե]րասխին (Ռասխին), թողեց Տրդատին (Թրդատին \*\*\*\*\*) իսկ այն յերկիրները, ուր գետերը զեղի հյուսիս են հոսում և միանում Կուրին, թողեց Միհրանին (Միլիանին). և այսպէս կարգադրելուց և նրանց միջնորդ լինելուց հետո Կոստանդին թագաւորը հեռացաւ \*\*\*\*\*: Միհրանը (Միլիանը) թագաւորում եր Քարթլիում, Ռանում, Հերքում (Հերթում) և Մովսիսանում, և ունէր նաև Յեղերքը (Եղրիսը) մինչ Եղրիս-գետն, իսկ նրա վարդուն Ռեին տվեց ի ժառանգութիւն Կախըն (Կախին) ու Կուրին (Կուրիթն) և հաստատեց նրան Ուջարմոյում: [Յեւ այսպէս] Ռեն ու նրա կինը՝ Տրդատի (Թրդատի \*\*\*\*\*) զուստը Սալոմեն սպրում եյին Ուջարմոյում:

\* Var. կոտորել:  
\*\* Var. Թարդատը:  
\*\*\* Var. Թարդատի:  
\*\*\*\* Var. յեւ բաժանեց... այսպէս] բաժանեց սահմաններն այսպէս:  
\*\*\*\*\* Var. Թարդատին:  
\*\*\*\*\* Var. և այսպէս... հեռացաւ] նրանց միջնորդ յեղաւ և հեռացաւ:  
\*\*\*\*\* Var. Թարդատի:

... և և կհալ ի միտս՝ յղէ [Միհրան] զհասան առ Մեծն Կոստանդիանոս, և խնդրէ ի նմանէ զհաշտութիւն՝ զի ծառայեացէ նմա. նոյնպէս և առ Մեծն Տրդատէս առաքեաց: և և լուան նմա, և աւարին խաղաղութիւն: Կոստանդիանոս էառ զորդին Միհրանայ զԵւրոպոս պատանդ. և Տրդատ ետ զզուստը իւր զՍոզոմէ՝ որդւոյն Միհրանայ՝ որ Բէռն կոչէր ի կնութիւն. և նստաւ յՈւջարմի:

Նախ և առջ հիշատակենք այսպիսուսը և յերանելի մեր մոր և ամբողջ Վրաց (Քարթլիի) լուսավորիչ Նունի (Նինո) առաքյալի մասին, վոր ինքն յերանելին պատմեց մահվան պահին և վերջ զբի առաւ հալատացյալ տիկին (Թագուհի) Սալոմե Ուջարմոյեցին՝ Միհրանի (Միլիանի) թագաւորի թոռն և Տրդատ (Թրդատ)՝ թագաւորի \*\* զուստըն:

... Յեւ սուրբ Նունեն (Նինոն) ծառայում եր [Յերուսաղիմում] հայուհի Նիափորա Գլինեցիոս \*\*\* մօտ յերկուսարի, և ամենուրեք հարցուփորձ եր ահում Քրիստոսի տանջանքի խաչելում թյան, թագման և հարության մասին...

... Յեւ սուրբ Նիափորը \*\*\*\*, վոր շուրջ արեւելք գտնվում և [մի] քաղաք՝ անունով Մցիսիթ (Մցիսիթա), և յերկիրն Վրաց (Քարթլիի) և Հայոց (Սոմխիթի)՝ լեռնաստանում, և նա այժմ անհավատության բովումն է՝ հունաց (բերձենեքի) \*\*\*\*\* և [ի] ուժիկները թագաւորությանց ներքոս...

... Գալով թագաւորա[նիտ քաղաքն] Հոսմ, ... [Նունեն և Նիափորան] գտան այնտեղ վոմն թագուհու և թագաւորազուն՝ Հսիփիմե անուն՝ ու նրա զայսի Գայանեյին, վորոնք գտնվում կինը (Նիափորան)՝ ներկայացնելով սուրբ Նունեյին (Նինոյին) հաղորդեց Հսիփիմե տիկնոջը (Թագուհուն) նրա մասին: Քրիստոսանք Հսիփիմեն՝ տեսնելով նրան՝ ուրախացաւ և ընդունեց իրեն մօտ: ... Նույն տարին մկրտվեց Հսիփիմեն՝ ըստ իր բաղձանքի, և նրա հետ նրա զայսի Գայանեն էլ ու բոլոր

\* Var. Թարդատ:  
\*\* Var. հայոց թագաւորի:  
\*\*\* Var. հայուհի Նափոր Գանիացի (sic):  
\*\*\*\* Var. Սարնիափորը:  
\*\*\*\*\* Var. abs. հունաց:

և մտի ևս ի սուրբ Նիափորայ հայկազոյ, ի Գունայ քաղաքէ, և սպասաւորեցի նմա զամս երկուս. և հանապազորք տեղեկանայի վամս անորէնութեանն Քրիստոսի Աստուծոյ մերոյ, և թէ որպէս եղև կատարումն, և ուր են պատանք թագման Տեառն մերոյ:...

... և և չորս ի Հոսմ...

գերդաստանցիք՝ թվով հիսուն հողի, ի ձեռն սուրբ Նուենյի (Նինոյի) և մնացին նրանք իրենց վանքումն ու նրանց հետ սուրբ Նուենի (Նինոն) ել յերկու տարի:

Այդ ժամանակ կայսրը [մարգիկ] ուղարկեց [այս ու այն կողմն] մի վա- յելչատես և գեղեցիկ աղջիկ վորոնելու, վորն արժանի դանօվեր նրա կինը լինե- լու: Յեվ յերբ փնտռողները յեկան կու- սանաց վանքը և տեսան Հոսիփիմյան, [հարցուց] փորձի յենթարկեցին նրան, և՛ հարցնելով նրա ծագման մասին՝ ճա- նաչեցին նրա ազգակցությունը թա- գավորներն հետ (նրա թագավորական ծագումը): նրանց շատ դուր յեկավ նրա գեմքն ու գեղեցկությունը, վորն նմա- նը՝ տեսքով ու վայելչությամբ՝ վոչ մի տեղ չկար. և նրա վայելուչ ու գեղեց- կատեսիլ գեմքը նկարեցին տախտակի վրա և ուղարկեցին կայսրին: Կայսրը՝ տեսնելով այն՝ շատ հավանեց [նրան] և և նույժ ուրախացավ, և վորոշեց կա- տարել հարսանիքը մեծ խանդավառու- թյամբ, վորն համարել փութով գե- սպաններ ու կուսակալներ ուղարկեց իրենց ստորադրյալ բոլոր յերկիրները, վորպեսզի բոլորը մեծ ուրախությամբ դան՝ ըստ այս նրամանին՝ արքայական հարսանիքի...

Իսկ յերանելի Հոսիփիմեն, Գայանեն և այլ սուրբ կույսերը՝ տեսնելով, վոր նրանց փորձանք և սպասում... սկսեցին վողբալ և լալ, [վոր] անորեն թագավորն համար նկատելի յե դարձել գեղեցկու- թյունն սուրբ Հոսիփիմյանի, վորն պատ- կերը նկարել էյին և ուղարկել նրան (թագավորին) ... և բոլորը միասին՝ [թվով] հիսուն յերեք հողի՝ դադոնա- բար թողնելով նույն յերկիրը (Հոռոք), գաղթեցին Հայքի (Սոմսիթի) կողմերը՝ Նոր-Քաղաք (Սխալ-Քալաք) կոչված տեղն փառակերտ, վոր և Դվին, հայոց (սոմեխներն) թագավորն [աթուա]նիս- տը: Յեվ մտան այնտեղ հնձանների

և և յարեաւ անդ ի մեր վերայ փոր- ձանք, և եկաք ի Հայս:

տաղավարներն մեջը, վորոնք կառուց- ված էյին [քաղաքի] հյուսիսային և արևելյան կողմը, և պահպանում էյին իրենց գոյությունը՝ վաճառելով իրենց ձեռագործ իրերը: Իսկ անպիտան կայս- րը՝ տեսնելով, վոր սուրբ Հոսիփիմեն ընկերակցեցնելով ազատվեց նրա ձեռքից ու սիրուց՝ լցվեց անմխիթար վշտով, և մարգիկ ուղարկեց բոլոր կողմերը նրանց վորոնելու:

Ապա կայսեր դեսպաններն յեկան Տրդատ (Թրդատ\*) հայոց (սոմեխներն) թագավորի մոտ, և ներկայացրին կայ- սեր նամակը, վորն մեջ գրված էր այս- պես. «Ինքնակալ կայսրը՝ իմ սիրելի յեղբոր և բարեկամին և աթուակից Տրդատին (Թրդատին\*\*) վողջույն... Ինձ վիճակվեց տեսնել... մի ողբորդ, և մտա- գլըրվեցի ամուսնանալ նրա հետ, բայց նա... չուզեց ինձ, և ատելությամբ և հայհոյանքով [կույսերն] անպատվեցին ինձ և դադանի կերպով փախան ինձա- նից ու քո յերկրի սահմաններն են յե- կել: Մանիր, յեղբայր իմ, և վորոնիր նրանց, իսկ յեթե դոնես նրա ընկերա- կցներին, մահվան դատապարտիր: Իսկ տեսքով գեղեցիկ՝ Հոսիփիմե կոչեցու- լին, վորին նրանք մոլորեցրին, ինձ ուղարկիր: Իսկ յեթե նրան դու հավա- նես, քեզ համար ի նկատի ունեցիր, քանի վոր նրա նման մի ուրիշն չես գտնի հունաց (իոններն) աշխարհում...»:

Տրդատը (Թրդատ\*\*) կարգաց թե վոչ կայսեր այս նրամանը, իսկույն և եթ սկսեց փութով փնտռել նրանց (կույսե- ըն) և դատավ [նրանց] վերոնշյալ հնձան- ներն մեջ: Տեսնելով Հոսիփիմյանին, [Տրդատը] լցվեց սիրով և մեծ ուրա- խությամբ, և վորոշեց ամուսնանալ նրա հետ: Իսկ յերբ սուրբ Հոսիփիմեն մեր- ժեց այս բանում Տրդատին (Թրդա-

և և յղեաց կայսրն թուղթ սո Տրդ- գատ:

և և արարեալ խնդիր, դտին զմեր ի հնձանս այդեաց: և և ջանս եղեալ թա- դաւորն՝ ոչ կարաց հարսնացուցանել ինքեան զհարսն Քրիստոսի Հոսիփիմե- և սուր եղեալ կոտորեաց ի մէջ և- բեսուն և եօթն ողիս. և այլն ցրուե- ցան: և և մնացի ես ի ներքոյ վարդինեաց՝ որ ոչ էր ծագկեալ...

\* Var. Թարգատ:  
\*\* Var. Թարգատին:  
\*\*\* Var. Թարգատը:

տին\*), այն ժամանակ նա մասնակց  
տանջանքի, նրա հետ նաև նրա գայակ  
Գայանին և այլ բազմաթիվ ընկերա-  
կիցները, ինչպես վոր այդ [մասին]  
գրված և նրանց վիրաբանությունը  
բուժում, հայոց դարձի [պատմության]  
մեջ<sup>12</sup>: Իսկ Տրդատ (Թրդատ\*\*) թագա-  
վորը, նախահամբույր ասուած\*,  
վարաց դարձալ: Իսկ սրբունիներից փո-  
մանք թագ կացան և փախան, [և] նրանց  
հետ սուրբ Նունեն (Նինոն) և թագ-  
նվից վարդենի մեջ...

Սրանից հետո սուրբ Նունեն (Նինոն)  
յեկալ Ուրբնիթ<sup>\*\*\*20</sup> Հայքի (Սոմխիթի)  
ասմանները... և այնտեղից անցավ դեպի  
Ջալալաբի (Ջալալաբի) լեռները, ուր  
յեկալ մի մեծ լճի մոտ, վորը գուրս ևր  
հոտում և կոչվում և Փառավանա<sup>\*\*\*\*21</sup>:  
Այնտեղից նա աչք ձգեց դեպի հյուսիս-  
այլին լեռները, վոր ամբան որերին  
ձյունով էլին պատած և ծանր ողով  
լիցուն: Այնտեղ նա (Նունեն) մնաց  
երկու որ և կերակուր խնդրեց ձկնորս-  
ներից, վորոնք այն լճում ձուկն էլին  
վորսում: Այնտեղ կային և հովիվներ,  
վորոնք հսկում էլին իրենց հոտերին  
գիշերվա հանգստյան կետերում՝ իրենց  
սգնական և հովանավոր համարելով ի-  
րենց աստվածներ Արմազ ու Ջաղե-  
նին... և խոսում էլին նրանք հայերին  
(սոմխուրի) լեզվով, վորին մի փոքր  
տեղյակ ևր և Նունեն (Նինոն)՝ առաջ-  
ներում սովորելով Նխափորա Գլինեցվո  
մոտ: Հովիվներից մեկին նա (Նունեն)  
գիմեց հայերին (սոմխուրի) լեզվով.  
«Վճր կողմիցն (գուղերից Վ յերկիրնե-  
րից) ևք դուք», և նա պատասխանեց. «Մենք  
Դարայիցն ենք, և Նլարբից 22 և Սա-  
փուրցից 23, և Քինձարցիք ու Ռապատ-  
ցիք մեծն քաղաք Մցիսիթից»<sup>\*\*\*\*23</sup>...

\* Var. Թարդատին:  
\*\* Var. Թարդատ:  
\*\*\* Var. Ուրբանիթա:  
\*\*\*\* Var. Փառավանա:

\*\*\*\* Var. Հայքից (Սոմխիթից): ուր աստվածներն աստվածությունն են  
անում և թագավորները թագավորում:

[Արմազի և այլ աստվածների ար-  
ջանները կործանելուց հետո] վոմանք  
ասում էլին. «Այն աստվածային զորու-  
թյունը, վորն ևր հայոց (սոմխիթի)  
Տրդատ (Թրդատ\*) թագավորին վարաց  
դարձրեց և վարազից նորից մարզ դարձ-  
րեց, նույն այդ աստվածն առաջ բերեց  
այդ...»: Յեւ այդ ասում էլին այն պատ-  
ճառով, վոր Տրդատ (Թրդատ\*) թագա-  
վորը գորությունը Քրիստոսի վարաց  
ևր դարձել և բրիտանային գորությունը  
նորից մարզ ևր դարձել...

[Հրեյական ծագումն ունեցող] Արիա-  
թար քահանան պատմում և. «...յերբ  
մենք (հրեյաներս) ցրվեցինք ամբողջ  
աշխարհում, հասմայեցիք տիրեցին մեր  
կրկրին...»:

... Միհրան (Միրան) թագավորը  
ցանկություն ուներ ընդունել հավատն  
Քրիստոսի, բանի վոր Քրիստոսի բողոքում  
սրանչևրգործությունները մասին լսել  
ևր Հունաստանից և Հայքից (Սոմխի-  
թից), և արդևր չևր հարուցում Նու-  
նեյի (Նինոյի) ու նրա աշակերտուհի-  
ների բարոգությունը զեմ...

Այդ ժամանակ թուղթ հասավ Հոս-  
մից՝ սուրբ պատրիարքից, Նունեյի (Նի-  
նոյի) և թագավորի և Վրաց (Քարթլիի)  
ամբողջ ժողովրդի [հասցելով], յեկալ և  
մի սարկավազ [ծագումով] բրանջ<sup>25</sup>...  
վորը նամակ ուներ հետն բունջաց թա-  
վորից Նունեյի (Նինոյի) հասցելին,  
քանի վոր նրա (Նունեյի) հոր մեջնցով  
ևր բունջաց ամբողջ ժողովուրդը մկրթ-  
ություն ստացել և այս բոլոր լսվում  
ևր Յերուսաղեմից ու հոստանդուպու-  
սից, վոր Վրաց (Քարթլիի) յերկրում  
սարածվից արդարություն արեղակր...

... Բրանջները<sup>26</sup> սարկավազն ամեն  
ինչ տեսավ և լսեց բոլոր այն սքանչե-  
լագործությունների մասին, վորոնք  
տեղի ունեցան Մցիսիթում, և դարմա-

\* Var. Թարդատ:  
\*\* Var. Թարդատ:

... և և կէսը ճշմարտն ասելն, թէ  
Մեծ Աստուածն՝ որ ևհար զթագաւորն  
Հայոց, և դարձեալ բժշկեաց Հայաս-  
տանօք հանդերձ, նա արար դարնչե-  
լիս...

Իսկ քահանայն Արիաթար պատ-  
մեաց ի լուր ամենեցուն... եթէ թագա-  
ւորութիւնս (Հրէից) հերձաւ ընդ և-  
րիս, և իշխեն մեզ Հոռոմք և Յոյնք և  
Հայք...

...և նրամայեաց [թագավորն Աղբրիկ]  
մի արդևրուլ զբարոգութիւնն զայն (ա-  
ւետարանին) յաշխարհէն իւրմէ. քանզի  
լուեալ էր զհրաշան՝ որ եղև ի Հայս և  
ի Հոռոմ...

Յաւուրն յայնտեղ առաքեաց թա-  
գաւորն հոստանդուպուս սարկաւազ մի.  
որ ունէր թուղթ ի Բրանջաց աղէն.  
որք ի հօրէ նորա (Նունեյի) լուսաւո-  
րեալք էին. քանզի լուան նորա եթէ  
ի Հայս և ի Վիրս ծագեաց արեղակն.  
արդարութեան մեծապայծառ ճառա-  
գայթիւք...

... ևս տուաւ ի կամեցան տեղեկանալ  
ի ձեռն Բրանջ սպասաւորին, զի զրեալ  
զամենայն ասուգութեամբ՝ տարցի առ  
նոսա, որ ինչ ի Հայս և ի Վիրս իրք եղին

չած փառարանում եր ասածուն, և տա-  
րավ նոմահները:

... [Յերը նունեն Բողի (Բուզի)  
դուզն<sup>27</sup> դնաց ու այնտեղ հիվանդա-  
ցավ], նունեյի (նինոյի) մոտ յեկան  
խաղալորի վորդի Ռեն ու նրա կին\*  
Սալոմեն, վորոնք ասլուամ եյին Ուջար-  
մոյում... Յեվ Սալոմե Ուջարմեյին, Պե-  
րոժավր Սյունեյին\*\* ու նրանց հետ  
[յեկած] իշխաններն հարցուփորձ եյին  
անում նրան...

... Ապա սուրը նունեն (նինոն) ա-  
սաց. «...Յեթե կամենում եք տեղեկա-  
նալ իմ՝ [Քրիստոսի] թշխառ աղանդում,  
այստեղ գալու մասին, կասեմ. ա՜նա հո-  
գիս կոկորդին և հասել և իմ մոր գո-  
բությամբն ննջելու յեմ հավիտյան...»...

... Ապա Սալոմե Ուջարմեյին ու  
Պերոժավր Սյունեյին\*\*\* վերցրեցին  
զբնիցն Վրացի նունեյի խոսքերը...

... Յեվ Միհրանի (Միրիանի) քրե-  
աննյանալուց քսանուհինգերորդ թվին  
մեռավ նրա վորդի Ռեք հայոց (սոմեխ-  
ների) Տրդատ (Թրդատ\*\*\*\*) թագավորի  
փեսան, վորին կենդանության որոք  
արվեց թագավորութունը...<sup>28</sup>

ի փառս Աստուծոյ Զոր լմացեալ սոր  
կուագին՝ գրեալ ի մատենն՝ տարաւ  
յաշխարհն իւր ի Բրանջս:

... Եւ Բէյ՝ որդի թագաւորին, և  
Սուզմէ կին իւր, որք կային յՈւջարմա,  
եկին տեսանել զնա (զնունէ)... Ապա  
եկն առ նա... և Պելուժավր Սիւնեյին,

... Եւ ստէ ցնտա սուրբն Զի՛ կամիք  
տեղեկանալ յաղագոս տոռապեալ աղախ-  
նոյս Քրիստոսի, որ այսուհետե կոչէ զիս  
առ ինքն, և ի մայրն իմ յաւիտենից, և  
պատմեալ է իմ յականջս Սողոմեայ,  
գտաերդ արքային Հայոց, համառօտ  
գորինակ դալոյն իմ այսր...

... Եւ յաւուրսն յայնոսիկ մեռաւ  
Բէյ՝ որդի նորա (Միհրանի), կեցեալ  
ամս երեսուն և չորս...

### [ Ս Ա Ս Ա Ն Յ Ա Ն Ք ]

(Շարունակաւրյուն)

Յեվ [Թագավոր] նստեց նրա (Միհ-  
րանի) վորդի Բաքարը... [Յեվ նրա որդի]  
Թշնամություն ծագեց նրա (Բաքարի)  
ու հայերի միջևքանի վոր հայերն աշխա-  
տում եյին թագավորեցնել Բարթիւում  
Բաքարի\*\*\*\* յեղբոր Ռեի ու Տրդատ

Բայց ոչ տային Հայք թագաւորե  
Բահաբայ, զի կամէին զորդի գտաերն  
Տրդատայ թագաւորեցուցանել Իսկ  
Բահքար ապաւինեցաւ ի Պարսո՝ տալով  
նոցա երկիր. և Պերոզի ետ ի Շամշոյ-  
տոյ մինչև ի գլուխ Աշոցաց. և նոյնպէս

\* Var. բույր:  
\*\* Բնագրում սխալմամբ՝ Պերոժ (var. Հերոժ) Ավրիսիսեցի:  
\*\*\* Բնագրում՝ Պերոժ Ավրիսիսեցի (var. Հերոժ Ավրիսիսեցի):  
\*\*\*\* Var. Թարդատ:  
\*\*\*\*\* Var. Բահքարի:

Թրդատ\*) թագավորի գտաեր Վրացուն:  
Իսկ այս Բաքարը բանակեցեց պարսից  
թագավորի՝ իր հոր յեղբորորդու հետ,  
ինամիացավ ու փոխանակեց յերկիրը,  
և նրա փեսա Պերոզին (Փերոզին),  
վորը տիրում եր Միհրանից (Միրեա-  
նից) նրան Հնորհեց Ռանր մինչ Պար-  
տավ (Բարդավ), տվեց Սամշիլիդեյից  
սկսած մինչ Աշոցքի\*\* գլուխը: Ապա  
Պերոզն (Փերոզն) ու նրա ժողովուրդը  
քրիստոնյացավ՝ ուժ ստանալով Պոսրո-  
վից. հայերը գավթեցին Չավախքը (Չա-  
վախեթը), [Իսկ վրացիք] հաղթեցին ու  
բշեցին հայերին: Ապա Բաքար թագա-  
վորը, հունաց (բերձենները) և պարսից  
թագավորների միջնորդությամբ, նա-  
մակ դրեց իր յեղբորորդոցն ու նրանց  
մորն Սալոմեյին...

... [Բաքարի վորդի Միհրդատ թագա-  
վորի որդի] մեռավ Հակոբ յեպիսկոպոսն,  
և [նրա տեղ] յեպիսկոպոս նստեց Հովիկ  
(Իոր) հայը՝ Ներսես (Ներսե) կաթողի-  
կոսի սարկավաղը...

Ահա և պարսից թագավորն ուղար-  
կեց իշխանիկեցի մեկ]ին մեծ զորքով,  
վորպեսզի հարկ դնի հայերի (սոմեխների)  
և վրացիների վրա: Ապա հայերն (սո-  
մեխներն) դեսպան ուղարկեցին [վրաց]  
Վարադ-Բաքար [Թագավոր]ի մոտ՝ ա-  
սելու, վոր ժողովեն և ոգնություն  
ինդրեն հույներեց (բերձեններեց) և՛  
Պարսու եւ կնամաղդին այն Վարդաբարք  
բացելով դուռն կովկասյաց (կապիտա-  
յաց) բերին ոտերին ու լեղզիներին (լե-  
կերին) պարսից ընդդիմադրելու: Յեվ  
նրա յերեկելներն ել խորհուրդ եյին  
տալիս ընդդիմադրելու պարսիկներին:  
հայց նա չսեց վնչ հայերին (սոմեխ-  
ներին) և վնչ ել իր յերեկելներին, վո-  
րովհետե համարձակ չեւ ու զախիտ  
եր և թաք կացավ կախիլ (կախիթի)  
ձորում... նախ և առաջ պարսիկներն  
յեկան Հայք (Սոմխիթ), վորն և ավե-

աղաչանս արձակեալ ի Յոյսս, և յամե  
նայն կողմանց ժողովեալ զօրս՝ առեի  
պատերազմ ընդ Հայս ի Չաւախեթ, և  
հալածեցին զնոսս. և թագաւորեաց  
Բահքար՝ ուժոյն Յունաց և Պարսից  
Գիր էառ ի Սողոմեայ և յորդոյ իւրմէ...

... Եւ յետ նորա (Յակոբ եպիսկո-  
պոսի)՝ Ներսէս կաթողիկոսն Հայոց  
ձեռնադրեաց զսարկաւազն իւր զՅակոբ  
(ուղիղ՝ զՅովիկ)՝ եպիսկոպոս Վրաց, և  
առաքեաց:

... Յաւուրսն յայնոսիկ եկն զօրա-  
դուխն Պարսից՝ մեծաւ ուժով ի սահ-  
ման Հայոց և Վրաց, յաւուրս Պոսրո-  
վայ՝ արքայի Հայոց, որդւոյ քաջին  
Տրդատայ, և ինդրէր հարկս ի Հայոց և  
ի Վրաց: Եւ հրամայեաց Պոսրով թա-  
գաւորին Վրաց՝ անել զբնակիչս կով-  
կասու՝ զԼեկս և զՕսս, զի կուուեցին ընդ  
Պարսս եւ կնամաղդին այն Վարդաբարք  
երկելուցից եղեալ՝ Թագեաւ ի Ձորն  
կուխեթոյ. և եկին Պարսիկք և շինե-  
ցին բերդ ի դրանն Տիֆլեսաց՝ հախառալ  
Մցիսիթոյ...

\* Var. Թարդատ:  
\*\* Բնագրում՝ Արոցի. հմմ. 148 յեր. \* ծանոթ:











ներին կարծելու, վոր իբր այդ Ջուանշերր VIII դարու պատմիչ-  
 և Այսպես եր դատում, ի միջի այլոց, և «Համառու պատմութիւն-  
 Վրաց»-ի հրատարակիչ Հ. Ալբանաթի թիւրյանը, յերբ իր հրատա-  
 րակութեան առաջաբանում («Տեղեկութիւն»-ում) գրում եր. «Առա-  
 ջիկայ Պատմութեանս Վրաց... ոչ է յայտ սվ եկաց մատենագիր»-  
 թէ և ի բողմաց հաւաստի՝ թարգմանութիւն լինել երկասիրու-  
 թեանն Ջուանշերի (Ջուանշերի) Վրաց պատմիչի, որ եկաց առ  
 ժամանակօք, որպէս թուի Արչիլ Բ-ի (688—718), զի և յիշատակի-  
 անուն նորին ի պատմութեանս: Ապա հրատարակիչն առաջ և  
 բերում համապատասխան memento-ն ըստ նույն պատմութեան,  
 վորը նա վերջ ի վերջո Ջուանշերին և վերագրում և ըստ այնմ  
 ել խմբագրում իր հրատարակութեան վերնագիրը՝ «Համառու  
 պատմութիւն Վրաց ընծայեալ Ջուանշերի պատմիչի»: Թեև Ա. Կակա-  
 բաձեմ (О древнегрузинских летописцах XI столетия, Тфл. 1912,  
 стр. 22—26, 36) սկզբում բոլորովին այլ կարծիքի յեր Ջուանշերի  
 մասին՝ համարելով նրան XI դարու պատմիչ, սակայն վերջերս՝  
 սկսած 1924 թվից՝ պնդում է, վոր «Վախտանգ Գորգասալի պատ-  
 մութեան» հեղինակն «8-րդ դարու չերկրորդ կիսին, ավելի ճիշտն՝  
 չերկրորդ քառյակին պիտի վերագրել» (Պատմական պրպտումներ,  
 1924, էջ 190, Պատմական ժողովածու, II, 1928, էջ 68): Իսկ  
 Իվ. Ջավախիճվիլիին՝ Ա. Կակաբաձեյից ել առաջ և մինչ որս՝ թե իր-  
 բանավոր յերոյթներում (դասախոսութիւն-գեղեցումներին) և  
 թե 1916 և 1921 հրատարակված «Հին վրացական պատմական  
 գրականութեան» աշխատութեան ա. և բ. սուլագրութեանց մեջ  
 ապացուցում եր, վոր Ջուանշերը վնչ թե VIII դարու պատմիչ է,  
 այլ XI-րդի, քանի վոր ոգտագործած ունի X—XI դարերում յերևան  
 յեկած աղբյուրները: Ճիշտ է, Ջուանշերի յերկասիրութեանն իբրև  
 պատմագրական գործ ցածր վորակի գրվածք է, բայց և այնպես  
 նույն Ջավախիճվիլիին այսպես և այն բնորոշում. «Ջուանշերի  
 գրած «Վախտանգ Գորգասալի պատմութեան» այնպիսի վոճով և  
 գրված և այնպիսի անհավաստի տեղեկութեաններով լցված, վոր  
 ավելի առասպելին և նման, քան թե իսկական պատմութեանը»  
 (բ. տպ., 189): «Ջուանշերի յերկասիրութեանը Վախտանգի ժա-  
 մանակվա պատմութեան համար, բացի մի քանի տեղեկութեան-  
 ներից, գրեթե պիտանի չէ և ուշագրավ և միմիայն իբրև բնո-  
 րոշող նրա, թե ինչպիսի տեղեկութեաններ և ինչպիսի պատկե-  
 րացում ունեյին XI-րդ դարում վրաց ուսյալ շրջանները Վախտանգ  
 Գորգասալի անձի և թագավորութեան մասին. թեև VII—VIII

դարերի [անցքերի] մասին [նրա մեջ] ավելի ուշագրավ տեղեկու-  
 թեաններ կան» (ibid., 194):  
 Ըստ Ա. Կեկելիձեյի («Վախտանգ Գորգասալի պատմիչն ու նրա  
 պատմութեանը, վրացերեն», — «Զվիկնի մեցնիիերբա», № 4, 1923,  
 էջ 46) նա, «Վախտանգ Գորգասալի պատմութեանն իրոր XI դա-  
 րուն և գրված, բայց նրա հեղինակը վոչ թե Ջուանշերն է, այլ  
 հենց նույն անձնավորութեանը, վորը գրել է «Թագավորների  
 պատմութեանը» և վորը հայտնի յի Լեոնտիոս Ռուխսեցվո ան-  
 վամը»:  
 Ով ուզում է լինի «Վախտանգ Գորգասալի պատմութեան» հեղի-  
 նակը, մեզ համար եյականն այն է, վոր այդ գրվածքը պատմագրական  
 լուրջ գործ չի կարող համարվել. բավական է հիշել վոր Վախտանգ  
 Գորգասալի կյանքի՝ նկարագրութեանն այնպիսի առասպելաբա-  
 նութեաններով և զարգարված, վոր ուղղակի հակասում է Ղազար-  
 նութեաններով և զարգարված, վոր ուղղակի ավայտներին: «Վախ-  
 Փարպեցվո աված միանգամայն հավաստի տվյալներին: «Վախ-  
 տանգի մասին մենք ունինք ուրիշ տեղեկութեաններ ևս», — ասում  
 է այս առթիվ Իվ. Ջավախիճվիլիին (op. cit., 191), ակնարկելով  
 Ղազար Փարպեցվո վրա և ապա շարունակում. «Ե այս տեղեկու-  
 թեանները մեզ ցույց են տալիս, վոր Վախտանգը յերեկի թա-  
 գավոր և յեղել սակայն. ուր այն Վախտանգը և ուր Ջուանշերի  
 նկարագրած Վախտանգ Գորգասալը: Ջուանշերի պատմութեանն  
 այն աստիճան առասպելական գծերով և զարգարված, վոր հետա-  
 զոտողի մեջ ակամա միտք է ծագում՝ մի գուցե Վախտանգ թա-  
 գավորի պատմութեան մեջ սխալմամբ մտցրած լինին այն դյու-  
 ցագներգութեանները, վորոնք, Գրիգոր Մագիստրոսի ասելով,  
 գոյութեան ունեյին Վրաստանում Վահրամ (Բահրամ) Պահլավու-  
 նու մասին» (ibid.)\*:

\* Տես հատուկ գրականութեանն այս առթիվ Ա. Կաստանեց, Գրիգոր Մա-  
 գիստրոսի թղթերը. Արքայապատմություն 1910, էջ 40. Н. Марр, Грузинский извод  
 сказки о трех остроумных братьях из «Вусудашнани», — «Восточные Замет-  
 ки», Спб. 1895, стр. 228. Ասլյե, Вступительные и заключительные строфы  
 Витязя в барсовой коже [«Тексты и Разыскания по  
 Армяно-грузинской филологии», XII], Спб. 1910, стр. XXXVII—XXXVIII  
 и прим. 1. стр. XXXVIII: Ինքնըստընքյան հասկանալի յի, վոր այստեղ մի  
 կողմն թողնելու յի թ. ժողովարի (Քրոնիկաներ, I, էջ XXXIV) անհեթեթ  
 կարծիքը, իբր Վախտանգ Գորգասալի պատմութեան հեղինակը վերջինիս ժա-  
 մանակակից պիտի լինի և համապատասխան անցքերի ակնատես:

[ՎԱԽՏԱՆԳ ԳՈՐԳԱՍԱԼ 1 ՅԵՎ ՆՐԱ ՇԱՋՈՐԴՆԵՐԸ]

... Վախտանգը մարդ ուղարկեց իր մորեղբայր Վառազապետին մոտ, վորն իշխան եր Ռանուհի, և հաղորդելով Ոսաց (Ոսեթի) արշավանքի մասին՝ ողնու- թյուն խնդրեց նրանից... Ապա Վախ- տանգը զլիմեց Վրաց (Քարթլի) զոր- քին, և բոլորը ժողովեցան... [Յեզ] հանձ- նելով թագավորությունն իր մոր Սա- [հա]կղուխտին (Սապուխտին) 2 խա- րանձեք երամբ հանդերձ՝ գրեց հետևյալ կտակը. «Յեթե կենդանի չվերադառնամ [պատերազմից], իմ քույր խալանձեքին ի կնություն վերցնի Միհրանը (Միլի- րանը), վորը Վախտանգի հորեղբոր վորդին եր Միհրանի (Միլիանի) վորդի Ռեի զարմից, վորը հայոց, (սոմեխներ) Տրդատ (Թրդատ) թագավորի փեսան եր...»:

... Յեզ խնդրեց [Վախտանգը] Պար- սից թագավորից տալ իր դուստրը նրան ի կնություն: Յեզ Պարսից թագավորը ավեց նրան ի կնություն իր դուստրն, վորի անունն եր Բալենդուխտ. նաև Հայքն (Սոմսիթը) և Կովկասյան բոլոր թագավոր[ություն]ները ավեց նրան ոժիտ: [Յեզ] նամակ գրեց նրան, վորի մեջ ասված եր հետևյալը. «Որմիզդ ամենայն արքայից արքայի առ Վախ- տանգ Վարանխորով-Քանգն՝ տասն թագավորներ յախոյանին: Յեզ պատ- վիրեց նրան կռիվ [Բյուզանդացիոց] կայսեր դեմ, վորովհետև կայսրը պա- տերազմ եր սկսել պարսից հետ:

Ապա Վախտանգը հաղորդեց իր բո- լոր զորքերին և Կովկասյան բոլոր թա- գավորներին, և սրանք ժողովեցան և կանգ առան Կուր [գետի] հայնկույս և հասկույս՝ ընդամենը յերկու հարյուր հազար: Յեզ նրան, Պարսից թագավորի հրամանով, միացավ նրա մորեղբայր Վարազ-Քանուհի, վորը Ռանի իշխանն եր, Ատրպատականի, Ռանի և Մովսիսի վորքով հանդերձ՝ թվով յերկու հարյուր

... և առաքեաց [Վախտանգ] առ եղբայր մոր իւրոյ Վարդաբակ[ուր] խնդրել օգնութիւն ի վերայ Օսաց... Եւ ինքն Վախթանգ ձայն տուեալ յամե- նայն Վիրտ... Եւ յանձն արար զթագա- ւորութիւնն մօրն, և թէ մեռանիմ, ասէ, ի պատերազմիս, առցէ զթագաւորու- թիւնս Միհրան՝ թոռն Տրդատայ, ա- ուեալ զքոյր իմ խորանձէ ի կնութիւնս:

... և խնդրեաց [Վախտանգ] ի թա- գաւորէն Պարսից զգուստր նորա իւր ի կնութիւնս... Եւ թագաւորն Պարսից տեսեալ զաջողութիւն նորա, ետ նմա զգուստր իւր Բալենդուխտ, և զլեան Կովկասու ի հրամանս նորա. և գրեաց զնախերզանս թղթոյն այսպէս. ՅՈՐՈՐՈՂԷ Շահիջանայ (ուղիղ՝ Շահիջանէ) առ Վախթանգ Վարանխորովթանդ, ախո- յեան տասն թագաւորաց խնդալ: Արա- ըի զոր խնդրեցիրն. այլ զօրացիր և քաջ լեր՝ կառով ընդդէմ Յունաց, առեալ զքեռին քո ընդ քեզ:

Եւ արար Վախթանգ հանդէս զօրաց երկուհարիւր հազարաց, և ել ընդ Հայս, զի և նորա ևս առեալ էին զնոյն պատու- էր: Եւ ելին նախարարն Հայոց ընդ նոսա՝ Տրդատ Արշակունի և Արև Միւ- նեաց տէր և Ջուանբեր (ուղիղ՝ Ջու- անշեր) Վասպուրեականի և Համադասպ Տարօտոյ, Գրիգոր և այլքն ընդ նոսա. և չորսն ի Կարախաղուլա, և թողին ի վերայ նորա իշխանս երկուս՝ երկու-

հաղար հեծյալ... [Յեզ] արշավանքի յելով Վախտանգն ընդդէմ Հունաց (Հունաստանի) և հասավ (ընդհուրմ՝ հասան) Հայք (Սոմսիթ) և Պերովիա- փարուս, ուր բերդ եր կառուցել վերո- նիշյալ Պերովը, նրան միացան Հայոց (Սոմսիթի) իշխանները՝ Մյունայց Արևը, [Վ]ասպուրեականի (Ասպուրագնեցի) Ջու- անշերը\*, Տարոնեցի [Հ]ամադասպը, Գրիգորաշեն քաղաքից Տրդատը (Թըր- դատը\*\*) Մեծն Տրդատի (Թրդատի\*\*) զարմիցն: Յեզ [բոլորը միասին] մոտե- ցան քաղաքին\*\*\*, վոր կռչվում եր Կարախաղուլա, այժմ Կարնոյ\*\*\*\*-քաղաք անվանյալը: Յեզ կռվում էյին նրա (Կա- րախաղուլի) դեմ, սակայն զրավել այն չկարողացան, քանի վոր վերջինս [յերեք շաբթ] բարձր պատերով եր [ըրջապատ- ված]: Յեզ թողեց [Վախտանգն] այն- տեղ յերկու իշխան [յուրաքանչյուրը] տասներկու հազար [հեծելա-]զորքով՝ այն քաղաքն պաշարելու համար: [Իսկ ինքը] Վախտանգը գնաց դեպի Պոնտոս և ճանապարհին ավերեց յերեք քաղաք- ներ՝ Անձիանոյ\*\*\*\*\*, Յեկեղեց (եկե- րց) [և] Դաստեր\*\*\*\*\*: [Յեզ] Վախտան- գը Հայոց (Սոմսիթի) զորքին և [առհա- սարակ] բոլոր զորքերին պատվիրեց, վոր կրոնավորներեցի վոչօքի չսպանեն, այլ [միմիայն] դերի վերցնեն. [այլա] ասաց. «... Առաջին ընդհարումը թագավորների միջև յեղով Անձիանոսում, ուր այժմ դանվում ե մեծն վարդապետ Գրիգորի՝ գերեզմանը... Իսկ դուք, Հայքի(Սոմսիթի) ընակրչներդ, Արշակունյաց բռեղի(պիտի- ախշ) Բյուրատյանը, միթե չեք հիշում Գրիգոր Պարթևի ու նրա հակառակորդ- ների դործերը, ինչպես Տրդատ \*\*\*\*\*

տասան հազար հեծելօք՝ պատերազմել- ընդ նմա, ուր է Կարնոյ քաղաք. և չո- դան ընդ միջերկրայս մինչ ի Պոնդոս, և առին երևս քաղաքս: Եւ պատուէր- ետ Վախտանգ զօրացն մի զօք սպա- նանել զանօրինացն պարսն (ուղիղ՝ զկրօնաւորացն [զան]պարսն) որք Գրիս- տոսի յերկրպագութս են իրրև զմեզ: Գանդի հաւն իմ յորժամ ել ընդ Պար- սից թագաւորին ի Յոնյս և հասին մինչև յԱնձիանոս, ուր գերեզման սրբոյն Գրիգորի է: Եւ մեծն Տրդատ թագա-ւորն Հայոց պատուհասեալ ի Տեսնէ, վասն տանջիւոցն դուրք Լուսաւորըն և դուրք տիկնայսն, և ծանուցեալ գրիստոս՝ ոչ յաղթահարեցաւ յումեքէ մարդոյ. զոր գետէք դուք իսկ, քաջք Հայոց, թէ որպէս հսկայն և նշանաւորն յամենայն ազգս Տրդատ՝ թիկամբք բեռնարկեալ՝ զինէր տուն աստուծոյ: Եւ թողեալ [ներքովթեանք] զքաղաքն և զաշտարակն՝ զոր շինէին, գնացին յաշխարհն իւրեանց. Թորդոմ ի Թոր- դոմեանսն, Միգոն ի Միդէթ, Բերձեանք ի Բերձանս, Յոյք ի Յունէթ, Ազ և Մադ՝ յԱզմարուղէթ (ուղիղ՝ Գաւգ և Մադ[ոդ]՝ ի Գաւգամարուղէթ), Պարսք ի Պարսս, և այլք յայլս:»

\* Var. Ջուանբեր. համ. 148 յեր.՝ ծանոթ;  
\*\* Var. Թարդատը;  
\*\*\* Var. Քաղաքաբերդին;  
\*\*\*\* Var. Տարնո;  
\*\*\*\*\* Var. Անձիանոյ, Անձորեթ;  
\*\*\*\*\* Var. և Ստեր (դա ստերի);  
\*\*\*\*\* Var. Միլդատ

Մըշակունյաց\* թագավորն ամբարտա-  
վանություննից դլորվեց և խող դարձավ,  
իսկ Գրիգորը նրան չբխստոնյա դարձ-  
րեց 5, և այնուհետև յեղավ նա յեկեղե-  
ցիներն սպասավոր (մշակ) և մեծ յե-  
կեղեցի կառուցեց Տրդատը (Թրդա-  
տը)\*\* իր թիկունքով, քանի վոր նա  
հակա յերու... Իսկ [Ներբոթյանները] բո-  
լորը թողեցին այն քաղաքը և ավեց  
հնգիերեն խոսողներն Հնդկաստանը,  
սինդացիներն՝ Սլոնդը, հոռմայեցիներ-  
ըն՝ Հոռմը, հույներն՝ (բերձեններն)  
Հուհաստանը, Գոգ և Մազոգին՝ Մա-  
զուզքը (բնագրում՝ Ազ և Մազոգին՝  
Մազուզեթը), պարսիկներն՝ Պարսկաս-  
տանը: Իսկ առաջին լիզուն ասորերենն  
եր. և այսպես Ներբոթի որոք յոթը  
լեզվով ելին խոսում 6...»:

Յեվ զարթելով քնից՝ թագավորը  
փառաբանեց աստծուն... և դիմեց [իրեն  
մոտ զանվող Գրիգոր աստվածաբանի  
աշակերտներ Պետրոս քահանային և  
Սամվել մոնողոնին, ասելով՝] «...Տես-  
նում ենք \*\*\*, վոր Պարսից զորքն ավելի  
շատ է, քան թե Հայոց (Սոմխիթի) և  
Վրաց (Քարթլիի) զորքերը, և մեր մեջ  
չկա վոչոր ճշմարիտ հավատացյալ [այն  
հավատքի, վոր սերմանեց մեր հայր Մրհ-  
րանը ((Մլրխանը) կամ՝ մորով ըմ ազ-  
դական Տրդատը (Թրդատը)\*\*\*\*... Ապա  
[Վախտանգ] թագավորը դրմեց իր մոր-  
եղբորն ու բոլոր թագավորներն՝ ասե-  
լով. «Բանակ հաստատենք ծովաց դեպի  
հարավ\*\*\*\*\*, վոր պետք մենք յեկը ունե-  
նանք աղետը և խնդությունը»:[Յեվ]  
նա հանեց այն զորքը քաղաքը շրջա-  
պատըց, և անցան հինգորոյս ճանապար-  
հով դեպի հարավ\*\*\*\*\* և կանգ  
առան Սպիերի շրջանում...»

\* Var. Արբակունյաց. հմմ. 148 յեր. ծանոթ.:  
\*\* Var. Թարգատը:  
\*\*\* Var. Գրտենբ.:  
\*\*\*\* Var. Թարգատը:  
\*\*\*\*\* Var. Դեպի Հայք (Սոմխիթ):  
\*\*\*\*\* Var. Դեպի Հայք (Սոմխիթ):

... Ապա փող փչեցին, և դուրս յեկան  
ամբողջ Հայքը (Սոմխիթը) և Պարսիկը  
և Դարբանդի թագավորը...»

Յեվ վերադարձավ Վախտանգը [Հու-  
նաստանից] Կարբջբի (Կլարջեթի) ճա-  
նապարհով, իսկ իր զորքը թողեց Հա-  
յոց (Սոմխիթի) ճանապարհով...»

Յեվ յերեք տարուց հետո Պարսից  
թագավորը պատերազմի յեկավ Վախ-  
տանգի դեմ... իսկ Վախտանգը մարդիկ  
ուղարկեց հույների (բերձենների) մոտ՝  
հաղորդելով հեռեկալը. «...Ահա պար-  
սիկները՝ թվով մոտ յերեք հարյուր  
հազար՝ ներս խուժեցին Վրաց (Քարթ-  
լիի) սահմանները. թեև նա (պարսից  
թագավորը) հուսով եր, վոր Հայոց (Սոմ-  
խիթի) և Կովկասյաններ թագավորներ  
զորքով ևս կուժեղանա, սակայն վեր-  
ջինները հանձն չառան նպաստելու  
նրան, քանի վոր նրանցից վրձանք հա-  
վատարիմ ելին խաչեցյալին, իսկ վո-  
մանք սատանայի զրգամբ (սատանա-  
յից հաղթահարվելով) Դարբանդի թա-  
գավորին միացան...»:

Յեվ ընդլայնացրեց Վախտանգը  
Մոզվթա՞ [կոչված] կամուրջն իրը  
վախտուն կանգուն՝ նրանով զորք անց-  
կացնելու համար: Յեվ ինքը թագավորը  
և Ջուանշեր\* սպարապետը կանգ առան  
Մցխեթում, իսկ Նասր և Միհրդատին  
(Մլրդատին) թողեց Հայոց (Սոմխիթի)  
և Վրաց (Քարթլիի) զորքի հետ, վորոնք  
կանգնած ելին Արմազը մոտ 8...»

... Յեվ չորս ամրո շարունակ նրանց  
(վրաց և պարսից) միջև տեղի ունեց  
սաստիկ պատերազմ. ապա [վրաց մոտ]  
հասավ կայսեր դեսպանը, վորը մատու-  
ցեց Վախտանգին ընձաններ և հասցրեց  
ուժտուն հաղաբանոց հեծկազորք հույ-  
ներից (բերձեններից), նաև կայսեր դիրն  
առ Վախտանգ, ուր ասված եր. «Վե-  
րադառնալով պատերազմից ընդդեմ խա-  
կանի, ահա ուղարկում եմ քեզ ութ-

...եւ ինքն (Վախտանգ) Հայք և  
Վրոք առանձնացաւ և մարտեան Պարսք  
և Կովկասեանք ընդդեմ կայսեր...»

\* Var. Ջուանշեր. հմմ. 148 յեր.\* ծանոթ.:

սուն հազարանոց հեծելազորք և զրել  
եմ Լեոնին 9, վոր՝ յեթե կարելք ունե-  
նաս զորքի, քո առաջն ե Մելիտինց \*10  
սկսած մինչ Համդե \*\*11 և զեպի վեր  
մինչ Կարնո-քաղաքը, և հրամայել եմ  
Լեոնին լինի քեզ մոտ»:

... Յեկ ավեց Վախտանգն ի կնու-  
թյուն պարսից թագավորին իր քույրն,  
վորն անունն եր Մինդրանդուխտ և վո-  
րին զերի ելին վերցրել ոսկրը, իսկ  
Վախտանգն աղատել եր: Յեկ թվասան-  
ձեյին չափեց այն պատճառով, վոր վեր-  
ջինս գրավ եր Հայոց (Սոմխիթի) բռնչի  
(պիտիտի) մոտ...:

Յեկ Վախտանգն հրամանատարու-  
թյան ներքո ժողովից հետուն հազար  
ընտիր հեծելազորք՝ հույնը (բերձենը),  
վրացին (քարթլին) և հայր (սոմեխը)\*\*\*:

Յեկ Պարսկաստան մտնելուց ութն-  
բորդ տարին Վախտանգ թագավորը  
հասավ Անտիոքիս, ապա յեկավ Ուր-  
հա... Յեկ Վախտանգը վողջ և առողջ  
գտավ իր մորն ու քրոջը. իսկ [նոս  
զորքը] հասավ մինչ հունաց (բերձեն-  
ների) և հա,ոց (սոմեխների) սահմա-  
նագիծը...:

Յեկ [հունաց] թագավորը մեծամեծ  
ընծաներ ուղարկեց Վախտանգ թագա-  
վորին, նաև ի կնություն ավեց նրան  
իր դուստր Հեղինեյին, վորին [և] ու-  
ղարկեց մեծ զորքով հանդերձ մինչ  
Հայքի (Սոմխիթի) սահմանները, ուր  
[հույներին] զխմավորեց Վախտանգ թա-  
գավորը. ապա հունաց (բերձենների)  
զորքը վերադարձավ, իսկ նա (Վախտան-  
գը) յեկավ Մցիսիս...:

... Յեկ նստեց ինքը Վախտանգն  
Ուջարմայում, վորը մեծ կառուցվածք-  
ներով զարդարեց, և իր քույր Սվարան-  
ձեյին ի կնություն ավեց Հայոց (Սոմ-  
խիթի) բռնչի (պատիտի) Բակուրին...:

... և ևս Վախտանգ զքոյր իւր Մին-  
դանդուխտ՝ թագաւորին Պարսից Խոս-  
րովու ի կնութիւն. զի միւս քոյրն  
Սորազնէ առ Հայոց Պատիտիսոյն  
(ուղիղ բռնչի) զբաւ էր...:

Եւ եկին ի սահմանս Հայոց և Յու-  
նաց...:

... Եւ նստաւ Վախտանգ ի յՈւջար-  
մա, և զՍորանձէ՝ զքոյր իւր զաւազ՝  
եւ ի կնութիւն Հայոց բռնչի՝ Բա-  
կուրայ:  
... . . . .

\* Var. Մելիտից:  
\*\* Var. Բնագրում՝ Լամդե (sic): Ըստ յերևույթին առաջացած է յեկեղե-  
ցական վրացերենում «ե» և «լ»-ի շփոթությունից, վորոնք իրար նման են:  
\*\*\* Var. հույները (բերձենները), վրացիք (քարթվիկներն) ու հայերը (սո-  
մեխները):

Իսկ հունաց (բերձենների) թագավոր  
[Լեոնը]՝ Վախտանգի աները՝ մեռավ, և  
թագավոր նստեց նրա վորդի (sic) Ջե-  
նոնը<sup>12</sup>, վորը զեպի Սպեր ուղղվեց Բարթ-  
լի գալու նպատակով: Յեկ լսելով [Վախ-  
տանգ] Գորգասալի ծանր վիճակը՝ նա  
կանգ առավ Կարնո-քաղաքում: Այնտեղ  
զիմեց և [պարսից] խոսքով (Սվասրո)  
[թագավորը]: խոսքովն (Սվասրոն) ու  
կայսրն [երար հետ] կովեցին Կարնի-  
փորում, ուր մեծ կոտորած յեղավ յեր-  
կու զորքիցն եւ, վորից արյան յերկու  
հոսանք կաղմվեց. և այդ պատճառով ել  
այն Կարնիփորս<sup>13</sup> կոչվեց:

... Ապա Վախտանգը՝ զգալով իր  
մահվան մերձեցումը՝... զիմեց իր վորդի  
Դաշինն. «Ի՞նչ եմ անդրանիկ վորդին  
եւ. քեզ եմ տալիս իմ թագավորության  
թագը, իսկ քո յեղբայրներին բաժին  
եմ հանել Տասիսիսից<sup>14</sup> և Մուհդից<sup>15</sup>  
սկսած մինչ Հայք (Սոմխիթ) և Հու-  
նաստան...»:

... Յեկ մեռավ Փարսմանը, և թագա-  
վոր նստեց նրա վորդի Բակուրը... Յեկ  
սրա որոք Պարսկաստանում թագավո-  
րում եր Ուրմիզդ կոչեցյալը, իսկ Հայ-  
քում (Սոմխիթում) կար մի իշխանաց  
վորդի Վազգեն (Վասքեն) անուն, վորն  
ամուսնացած եր իշխանագն Շուշանիկ  
կոչեցյալի՝ Վարդանի դստեր՝ հետ: Սա-  
կայն սատանան տիրեց այս Վազգենին  
(Վասքենին) և միտք հղացրեց կրակա-  
պաշտ դառնալու: [Յեկ Վազգենը] դնաց  
պարսից թագավորի մոտ և՛ հրաժար-  
վելով ջրխտոնեյական կրոնից՝ դարձավ  
կրակապաշտ: Իսկ պարսից թագավորը  
յետ ուղարկեց նրան (Վազգենին) մե-  
ծամեծ ընծաներով [նշանակելով նրան]  
Ռանի իշխան Յեքը նա (Վազգենը) վե-  
րադարձավ, նրա կին Շուշանիկը նկա-

Յայնմ ժամանակն մեռաւ կայսրն  
Յունաց, և թագաւորեաց Ջենոն որդի  
(sic) նորա, և եկն օգնել Վախտանգայ-  
և հասեալ ի Սպեր՝ լուաւ զբոթ վերա-  
ւորելոյն ի մահ զՎախտանգայ, և դար-  
ձաւ ի Կարնոյ քաղաք...:

Եւ մեռաւ Վախտանգ, յորով պատուի-  
րանաւ որդւոյն Դաշէի, որոյ ետ զթա-  
գաւորութիւնն...:

\* Var. + ... Սուրբ Անտոն [Միջագետքին] (խոսքը Անտոն Մարտոնիոփե-  
լու, այսինքն Մենակյացի մասին ե. Լ. Մ.-Բ.) հարցուփորձ արավ իր ուսուցչի  
ուղիղի մասին, և սովորեց ճշմարտան, և իմացավ, վոր նա (ուսուցիչը՝ Հովհան  
Ջեղազնեցին) դնացել է Հայք (Սոմխիթ), վորը հյուսիսումն է:

տեց, վոր իր ամուսինն ուրացել և քրիստոնեյական կրօնը, այլևս չի խոնարհվում նրան իբրև ամուսին, և մոռացութեան ավեց սերն առ իրեն ամուսինն, և վողջ սրտով նվիրվեց Քրիստոսին՝ նրա պատգամները կատարելու համար: Ապա Վաղգենն (Վասքենն) ամենայն ճիշդ ու ջանք դործ դրեց [վերադարձնելու սերը]՝ նախ շողորորթութեամբ և աղերսանքով ու ընծաներ տալով՝ ապա յենթարկեց նրան (Շուշանիկին) մեծամեծ տանջանքներ: Թեև սուրբ Շուշանիկի վարքը չկարողացա [նկարա]դրել վաղբաբանութեան ընդարձակ լինելու պատճառով<sup>16</sup>. [և վերջո] նա սպանվեց իր ամուսին Վաղգենն (Վասքենն) իշխանից...<sup>\*17</sup>

Ապա վրաց Բահուր թագավորը դիմեց Վրաց (Քարթլի) բոլոր իշխաններին և՛ գաղտնաբար գործ ժողովելով՝ գաղտագողի յեկավ Վաղգենի (Վասքենի) դեմ: Իսկ Վաղգենը (Վասքենը) կանգնած ևր դաշտից դուրս, Կուր [գետ]ի ափին, ուր Անեկրիտ<sup>\*\*18</sup> գետը միանում և վերջինիս, հարձակվեց նրա վրա և՛ կալանավորելով նրան՝ մաս-մաս արավ նրա մարմինը, վորն ապա ծառից կախեցին: Իսկ սուրբ Շուշանիկի մարմինն առանձին մեծարանքով բերին և թաղեցին Յո[ւ]րտավում<sup>19</sup>...

... Ապա պարսիկները՝ գրավելով ամբողջ Քարթլին, Հայքը (Սոմխիթն) ու [Վ]ասպուրականը (Ասփուրադանը)՝ սկրսեցին պատերազմել հույները (բերձենները) դեմ...

... Հերակլ կայսրն եկավ [Քարթլի] և մոտեցավ Տփղիսին...

... Ապա Հերակլ կայսրը Մանգլիսից և Երուզիթից<sup>20</sup> տարավ մեր տեր Հիսուս Բրիտտոսի վոսնիլի տախտակները և բեկեռեց, վոր Կոստանդինոս

... Ճանապարհ կախալ ընդ Հայս [կայսրն Հերակլ] եկն ի Բզնունիս, և անտի ելանէ ի Տփլիս...

... և էսու [Հերակլ] ի Մանգլիայ և յԵրուզիթոյ՝ դոտըց Տեառն տախտակն, և զբեկեռն՝ դոտեալսն ի Կոստանդիանոսէ Մըհրանայ թագաւորն...

\* Var. Ռանի իշխանից;  
\*\* Var. Անակիրտ:

[կայսրն] ևր տվել Միհրան (Միրիան) թագավորին...<sup>\*</sup>

Իսկ այդ պահին ապականյալ ևր Քարթլիի, Հայոց (Սոմխիթի) և Ռանի յերկիրն ևրը, քանի վոր վոչ մի տեղ այլևս չկար վնչ շինութեաններ և վնչ ևլ ուտելիք մարդկանց և անասուններ չամար<sup>21</sup>...

... Ապա Արշիլ թագավորը կանչեց [իրեն մոտ] Քարթլիի բոլոր իշխաններին և նրանց հանձնեց իր [հանգուցյալ] յեղբոր՝ Միհր<sup>22</sup> թագավորի՝ վորդոց. մեկին տվեց հորեղբորդի Գուրամ Կուրապալատին, վորը տիրում ևր Կղարջքին (Կլարջիթին) և Ջավախքին (Ջավախիթին), իսկ մյուսին՝ Պերոզի ազգական բղեշին (պլտիալուն), վորն իշխում ևր Թոնեղբում (Թրոնալիթում), Տաշիրում և Աչոցքում<sup>\*\*</sup>. յերբորդին՝ Երեսև (Երես) Ներսիանն, վորը Վախտանգ թագավորի ընտրյալն ևր...

... Ապա նրա (Արշիլ թագավորի) մոտ յեկավ վոմն իշխան, վորը Գավրթ մարգարեյր սերնդիցն ևր, Ատրնբոսն (Ագարնաս) անուն, Ատրնբոսն (Ագարնաս) կույրի յեղբորդուն, վորի հայրը խնամարացի ևր Բազրատտ[ե]նյանն ևրի հետ և նշանակված ևր հույներից (բերձեններից) Հայոց (Սոմխիթը) կողմանց իշխան. սա [Մուրվան] Պուլի արշավանքի ժամանակ Գուրամ Կուրապալատը վորդոց մոտ ևր անցիլ Կղարջք (Կլարջիթ) ու մնացիլ այնտեղ՝ նեվ ա.ս Ատրնբոսնը (Ագարնասեն) խնդրեց Արշիլից... տալ նրան [վորեկ] յերկրը և [Արշիլը] տվեց նրան Շուշանից<sup>\*\*\*23</sup> ու Արտահանը (Արտանը)...

... Իսկ արաբացիք (սարկինոզները) ուժեղացան Ռան յերկրում և տրեցըն Գաղիլիս և Հայքըն (Սոմխիթըն)<sup>24</sup>...

\* Var. + ... Մուրվան Պուլը դերեց Հունաստան և Հայաստան (Սասոմիսիթո) յերկիրն ևրը մընչ ծովը...  
\*\* Բնագրում՝ Աչոցքում. հմմ. 148 յեր.\* ծանոթ:  
\*\*\* Var. Շուրվիլը:

Յաւուրսն յայնոսիկ իշխան ոմն ի տանէ Գաւթի մարգարէի, Աղբնաս կոչեցեալ, եկն առ Արշիլն, որ լեալ էր ի Հայս, և զերեալ որդւոյն յայլազգեացն, և զերծեալ անտի՝ խնդրէր ի նմանէ տեղի բնակութեան. և ետ նմա դիւիս և զՇոյուեր և զկոստնէ: Եկին և ի Տար[ո]նոյ կղբարք երեք և բնակեցան մընչ և ցԳաղգաղ՝ հրամանաւ Արշիլն...

Ատրնեքսեհ (Աղարնասե) Կուլբի յեղ-  
բորբոցիք, յերեք յեղբայրները, վորոնք  
այրեցին հորեղբոր աչքերը, Տարոնից  
եյին յեկեկ Շակի\* ու հաստատվել  
այնտեղ Արշիլի հրամանով, քանի վոր  
Կովկասի բոլոր ծայրերը Ռանի կող-  
մից անընակ եյին դարձելու, և յերեք  
յեղբայրները հաստատվեցին մինչ Գուղ-  
դուղ (Գուղդուղ):

Նույն ժամանակներում բղջիկներէց  
(պատիւախոնքներէց) վրամաք, վորոնց ներս  
չթողին Կղարջը (Կլարջիթ), դրավեցին  
Տայքում (Տայքում) մի ժայռ, վոր կոչ-  
վում եր Կա[ի]մախ<sup>2</sup>, և շինեցին այն-  
տեղ ամրոց...

... և ոմանք ի նոցանէ (յերեկիլի ա-  
բանց) դնացին յերկիրն Տայոց, և դտին  
քար մի, և շինեցին զնա ամրոց, և կո-  
չեցին զնա Կամախ (ուղիղ՝ Կամախ)...

## ՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Վրջան առասպելական դժերով և ի Վախտանգ Գորգասալի ժամանակվա  
(V դարու) անցքերի նկարագրութունը, վորը տալիս և Ջուառնշերը, նույնքան  
իրական և նույն Վախտանգի պատմութունը, վորը՝ թեև համառոտ՝ տալիս և  
Ղազար Փարպեցին:

2. Այս Սահակդուխտ-Սարգսուխտ իբրև Վախտանգի մայր՝ հայտնի յե վոչ  
միայն Ջուառնշերի յերկասիրութեան մեջ, այլ և «Համառոտ պատմութիւն Վրաց»-ի  
համապատասխան տեղերում, ուր կարգում ենք. «Եւ կինն Միրզատայ հաւատաց  
ի Բրիստոս և մկրտեցաւ. և շինեաց զսուրբն Սիրիլ ի Շամոյտէ, և էր անուն  
նորա Սակդուխտ» (եջ 73). «Եւ մեռաւ Միրզատ, և մնաց Վախտանգ Խոթնամեայ:  
Եւ զահի հարաւ մայր նորա Սակդուխտ ի հօրէ իւրմէ՝ թէ քինանդիլ լինի վասն  
թողոյն իմ զմոզութիւնն և աւերմանն Պարսից՝ յառնէ նորա Միրզատայ»  
(եջ 74). «Իսկ Սակդուխտ վարէր զթագաւորութիւնն կամօք հօր իւրոյ, մինչև  
մեռաւ նա. և էա զիշխանութիւնն նորա Վարդաբոսի ուր որդի նորա, եղբայր  
Սակդուխտ» (ibid.): Վարդան պատմիչն այս առթիւ գրում և (Հաւաքումն պատ-  
մութեան Վարդանայ վարդապետի լուսաբանեալ, Վենետիկ 1862, եջ 91). «Եւ տի-  
րեցին [վրբն] ի ծովէն Պանտոսի մինչև ցծովն Կասբից՝ մինչև ցՄիհրան, և  
ցԱրբակ (ուղիղ՝ Արբակ) թռն իւր, որ էաւ կին ի Պարթեւաց՝ Սահակդուխտ  
անուն ի Պարտաւայ. որ և ամուլ գոլով հաւատաց ի Բրիստոս, և ետ նմա զա-  
ւակ՝ զՎախտանգ, որ և Գուրգասարն կոչեցաւ, որ է Գալաղուխ ի Պարսից  
բռնն: Արեւմտյան Վրաստանի Ռաճայի նախկին գավառի սահմաններում Ջվա-  
րիսա կոչված դուղում 1925 թ. յերևան հանած մի ուշագրաւ արձաթիւ լատինացի  
վրացերեն յեկեղեցական գլխատառ արձանագրութունն էս, վորը թերևս V դա-  
րուն և պատկանում, հիշատակում և այս անունը. «Սուրբ Գրիգոր Սքանչեա-  
գործ, քեզ աղոթող քո աղախին Սահակդուխտին պահպանիր ամենայն շարից»:

\* Var. Բակի համ. 148 յեր.\* ծանոթ:

(Գեորգ Բոնորիս, Ջվարիսայի հուշարձանը, վրացերեն — «Վրաստանի Արխիվ»,  
դ. III, Տիդ. 1927, եջ 205—208):

3. Տես այս պրակի Բ. գլխի 11-րդ ծանոթութունը:
4. Այսինքն Աստվածաբանի կամ Նազիրանդինի:
5. Հմմ. այս պրակի Բ. գլխի 18-րդ ծանոթութունը:
6. Հմմ. Լեոնտիոս Ռուխեցվո համապատասխան ցուցմունքը Գարթլիում  
յերբինս վեց լեզուների գործածութեան մասին («Այլ և այլ դեպքեր «Նազրաց»  
արշավանքների շրջանից» հատվածում):
7. «Մոզու»-ի || «մոզվ»-ի մոզ բառից. հմմ. նույն արձատից կազմված  
«թ-մոզվ-ի» բերդի անունը (հայերեն արդի ֆոլկլորում «թմբուկ»-«թմբկա-  
բերդ»-ի վերածված):
8. Մցխիթի և Արմազի հակադրութեան մասին տես մանրամասն. А. Ме-  
люксет-Бекоев, В поисках Страбоновой Севсаморы, Тифлис 1917, стр. 3—4:
9. Հունաց զորպետի անունն և, վորին Վախտանգը (XVIII դ.) պատրիկ  
և կոչում, իսկ «Համառոտ պատմութիւն Վրաց»-ը (եջ 86, 89)՝ «գորգուլուս»:  
Հմմ. М. Brosset, Histoire de la Géorgie, t. 1, p. 179 et n. 1:
10. Մելիտա-Մալատայի մասին տես. Y. Sandaljian, Les inscriptions  
cunéiformes Urartiques, Venise 1900, p. 396, И. Мещанинов, Халловедение,  
Баку 1927, стр. 22, 24, 34, 36, 167:
11. Հմմ. М. Brosset, ibid., p. 179, n. 2:
12. Այստեղ Ջուառնշերը շիթած և Հունաց (Բյուզանդական) կայսրների  
ճանապարհորդութունը:  
13. Այսինքն «Կարմիր փոր», հմմ. М. Brosset, ibid., p. 199, n. 2:
14. Այժմյան Բորջոմի հովիտը:
15. Կուսուրդո դյուղից ցած, Կուրի հովիտում:
16. Ակնարկում և Հակոբ յերեցի (V դ.) կազմած «Ս. Շուշանիկի վկա-  
յաբանութեան» վրա, վորի մասին մանրամասն տես մեր աշխատութեան այս հա-  
տորի առաջին մասի Ա. գլխում:
17. Տես նույնտեղ:
18. Անհայտ է:
19. Ցուրտավի մասին մանրամասն տես նույնտեղ 6-րդ ծանոթութունը:
20. Երուշիթը նույն Արտահանն և. հմմ. «Ե-բուշ-եթ»-Ոչտ-ուն-իք Aras-  
ton-ի հետ (H. Mapp, Надпись Сардура II, сына Аргистия в Даш-Керпи  
на Чалдырском озере [Записки Кавказского Музея, Серия В.—I], Пгр. 1919,  
стр. 7, 15, 36, 38):
21. Այս արգացի մեկնութունը տես՝ Խվ Ջավախիշվիլի, Վրաց ժողովրդի  
պատմութունը, վրացերեն, II, Տիդ. 1914, եջ 352:
22. «Միհր», «Միհրան», «Միհրատ» կն անունների մասին տես. Լ. Մե-  
լիսեք-Բէկ, Արտաւազդ և Մհերի հետքերը Վրաստանում, — «Բանբեր Էջմրածնի  
Գիտական Ինստիտուտի», դ. I—II, Էջմրածնի 1921—1922, եջ 98—104. Թադէս  
Աղալըզեան, Միհրը հայոց մէջ [«Ազգային Սատնադարան», ձի], Վրեննա 1929:  
23. Ըստ յերևույթի, Արտահանն սահմանակից մի վայրի (գավառի) ա-  
նուն և, վորին հանդիպում ենք նաև արևելյան Վրաստանում (նախկին Բորչալ-  
վում, այժմյան Շահուլայանը), նաև հարավային Ոսեթում, վերջինում «Շուլուր»

և «Շեղեր» ձեռնով հմհ. Լ. Меликсет-Беков, К археологии и этнологии Туальской Осип,—сборник «Юго-Осетия», Тфл. 1923, стр. 260, 276:

24. Ջուախերի տեղեկությունն արարական արշավանքների մասին, ըստ Իվ. Ջավախիշվիլու («Վրաց ժողովրդի պատմությունը, II 1914, էջ 351»), «վերաբերում է VІІІ դարու առաջին քառյակի անցքերին և վոչ թե արարացվոց առաջին արշավանքի պատմությանը»:

25. Կալմախ-Կամախի մասին մանրամասն տես. Н. Я. Марр и Я. И. Смирнов, Вишаны, Лигр. 1931, стр. 19—21 (ն. Մառի հոդվածը):

Դ.

## ԱՆԱՆՈՒՆ (XІ Դ.)

### „ՎՐԱՑ (ՔԱՐԹԼԻ) ՄԱՅՅԱՆԸ“

Քարթլի-ցխորերայի Մաբխամ թագուհու վարիանտում «Արչիլ թագավորի վկայարանությունը», ինչպես նախորդ (Գ-ը) գլխի ներածականում տեսանք, կցված է մի հիշատակարան, ուր, ի միջի այլոց, ասված է, Վոբ Վախտանգ Գորգասալի պատմությունը գրել է Ջուանդեր Ջուանդերյանը, «խկ այսուհետև թող գրեն յեկող սերունդներն՝ ինչպես դիտեն»։ Այդ հիշատակարանին անմիջապես հետևում է մի նոր՝ բավականին ընդարձակ՝ յերկասիրություն, վորը հասնում է մինչ «[Դավիթ] արքայից-արքայի պատմությունը»։ Այս յերկասիրությունը, ճիշտ է, վերնագրեր չունի, և վոչ էլ նրա հեղինակի անունն է հայտնի, սակայն ինքնըստինքյան պարզ է, վոր այստեղ մենք գործ ունինք մի նոր գրվածքի հետ, վորը տալիս է մեզ Վրաստանի անցյալի նկարագրությունը սկսած VІІІ դարուց և մինչ XI դար (Գեորգ II-ը) և, իբրև XI դարու յերկասիրություն, անշուշտ, ծանոթ է յեղել «[Դավիթ] արքայից-արքայի պատմության» հեղինակին XII դարու առաջին կեսում, վորն՝ ոգտագործելով այդ յերկասիրությունը՝ «Վրաց (Քարթլի) մատյան» (մատիանս քարթլիսա) յե կոչում այն։ Յեվ այս հիման վրա Իվ. Ջավախիշվիլին (չին վրացական պատմական գրականությունը, բ. հրատ., էջ 200) նպատակահարմար է գտնում այս գրվածքը հենց այդպես էլ կոչել՝ «Վրաց (Քարթլի) մատյան» (մատիանս Քարթլիսա)։

Անանուն հեղինակը, անտարակույս, XI դարու գրող է։ Սա յերևուս է նրանից, վոր իր յերկասիրության մեջ նա քանի հեռանում է VІІІ դարուց և մոտենում XI-ին, ավելի և ավելի ընդարձակ կերպով է նկարագրում այլ և այլ անցքերը, իսկ իրեն, ժամանակակից գեպքերի մասին պատմում է ամենայն մանրամասնությունով և բարեխղճությամբ։

«Վրաց (Քարթլի) մատյանը» գրաված ունի Ե. Թաղ՝ այսօրվիլու հրատարակութեան մեջ 216—280 էջերը, իսկ M. Brosset-ի 184—236 էջերը (ըստ Ն. Մառի միմիայն 184—200, քանի վոր Ք. Յ. հրատարակութեանն այդ 200 յերեսով առհասարակ ընդհատված է), վորին համապատասխանում է նույն M. Brosset-ի Քրանսերեն թարգմանութեան 256—345 էջերը և «Համառոտ պատմութիւն Վրաց»-ի 104—114:

[ԱՐԱԲՍԿԱՆ ԱՐՇԱՎԱՆՔՆԵՐԸ <sup>1</sup>]

... Յերկար տարիներ անց [արբացիներէց Տփղիսը գրավելուց հետո՝ Տփղիս] յեկավ հազարացից ամիրան, վորն իշխում էր Հայքում\*, Քարթլիում, Հերքում (Հերեթում)՝ Պոսրով (Պվարո) անուն, վորը խաղաղներէց ավերած Տփղիսը<sup>2</sup> [վերա]շինեցու...

Յեվ նրանից հետո յեկավ Պալիլ Յեղիզի (Իղիզի) վորդը՝ արբացին, վորը գրավեց Հայքը (Սոմխիթը), Քարթլին և Հերքը (Հերեթը)<sup>3</sup>...

Ապա յեկավ Բուդա\*\* թուրք ստրուկը Բաղդադից, վորն մեծ զորքով հանդերձ ուղարկել էր ամիր Մուսլը. սա ավերեց ամբողջ Հայքը (Սոմխիթը) և գերեց նրա բոլոր իշխաններին, ապա՝ [մտնելով Քարթլի]՝ մտեցավ Տփղիս քաղաքին, քանի վոր վերջինը նրան չէր հպատակվում, և սպանեց Տփղիսի ամիրա Սահակին. և ավերեց Տփղիսը<sup>4</sup>... Իսկ Արուստի [Ա]բաս (Արուստի) հայոց (սոմեխներէ) իշխանն և Գուարամ\*\*\* Աշոտի վորդին\*\*\*\* հաղորդեցին լեռնախաններն, վորպէսզէ նրան (Բուդային) [երեսց մտա] ներս չթողնու...

... Ապա իբրև ամիրա յեկավ Պալիլի

\* Var. Հայքում abs.  
\*\* Var. Շուդա. հմմ. 148 յեր.\* ծանոթ.:  
\*\*\* Var. + Մամփաթ  
\*\*\*\* Var. + Բաղրատ Կուրապալատի յեղբայրը:

վորդի Մոսմեզը\*, վորն ավելի ևս կամայականորեն գրավեց ամբողջ այս յերկիրը՝ Հայքը (Սոմխիթը), Քարթլին և Ռանը... Յեվ ամբար յեկավ վոմն՝ Սահակի ծառաներից\*\* մեկը՝ Գաբրուց անուն, [վորը]... մեծարեցաւ [հույներէց] և վորին հպատակեցին գարգբանեցիք. սա կովում էր իր հորեղբոր որդի\*\*\* և Գուարամի յեղբայր (sic) Աշոտի հետ: Իսկ Գուարամը՝ տիրելով Ջավախքին (Ջավախիթին), Թոնեղքին (Թրիալիթին), Տաշիրին, Առոցքին\*\*\*\* և Արտահանին (Արտանին)՝ կովում էր սարկիտոզները զեմ: Յեվ յերեսմն հաղթում էր Գուարամը և յերեսմն սարկիտոզները. իսկ Գուարամը բաժանեց յերկիրներն իր յեղբայրներին՝ Ատրներսեհի (Աղարնասեյի) և Բաղրատի միջև, և Առոցքը\*\*\*\* քաժին հանեց իր աներորդի (կնոջ յեղբայր)՝ հայոց (սոմեխների) թագավորին...

Ապա Գավիթ Կուրապալատի հետ թշնամացավ Նասրան, Գուարամ Մամփալի վորդին, վորը սույն Գավթի հորեղբայրն էր: Իսկ այս Նասրան՝ նույն Գավթի Կուրապալատի քեռորդին՝ և Գուարամը ավխազները կողմնակից էյին. և Գավթին ու Լուսպարիտն ոգնում էյին հայերին (սոմեխներին). և հայերն (սոմեխներն) ու ավխազները կովում էյին Քարթլիում: ... [Յեվ] ժողովեցան ընդդէմ Նասրայի հայերն (սոմեխները). և Լիպարիտն ու վոսցիք, և՛ Աշոտ՝ Գավթի յեղբայրը, և՛ նրանց հետ սարկիտոզները: ... [Ապա] Ատրներսեհ (Աղարնասեհ) թագավորի [կովում նույն Նասրայի զեմ] հայերն (սոմեխներն) [ևս] նրա (Ատրներսեհի) հետ էյին: ...

\* Var. Մոսմեզը:  
\*\* Var. Աղբակներէց:  
\*\*\* Var. + Հայոց (սոմեխների) Սմբատ թագավորի վորդի:  
\*\*\*\* Բնագրում՝ Արոցին. հմմ. 148 յեր.\* ծանոթ.:  
\*\*\*\*\* Նույնը:

Սյն ժամանակ, [յերբ Քարթլիում իշխում էյին ազատները (ազնվականները)] դուրս յեկավ Կոնստանդին ափսազաց թագավորը, վորը զբաղեց Քարթլին սրան թշնամացավ հայոց (սոմեխներ) Սմբատ Տ[ի]եղեղերակա՞ թագավորը, վորը մեծ զորքով յեկավ արշավանքի և մոտեցավ Ուփլիսցիքիսին... և զբաղեց այն. իսկ Սմբատն ու Կոնստանդինը բարվոք խնամխացան՝, և [Սմբատը] վերադարձրեց նրան (Կոնստանդինին) Ուփլիսցիքիսն ու ամբողջ Քարթլին<sup>9</sup>։ Սրանցից հետո յեկավ հազարացվոց ամիրան՝ Աբուլ - Կասիմ անուն, Աբու-Սաջիթ վորդին, արարացին. սրան ուղարկել էր Ամիր-Սուլեյմն մեծ և անհամար զորքով, վորին յերկիրը չեր տեղավորում։ Նա նախ մտավ Հայք (Սոմխիթ) և ավերեց ամբողջ Հայքը (Սոմխիթը), Սյուհիքը, Վայոց-Չորն ու [Վ]ասպուրականը (Ասփուրականը)։ Չղիմանալով նման ավերածությանը՝ Սմբատ հայոց (սոմեխներ) թագավորը փախուստի դիմեց և ուղղվեց Ափսազաց լեռներ կողմը, և այնտեղ ել մնաց։ Յեվ [Աբուլ-Կասիմ] Աբու-Սաջիթ վորդին յեկավ Տըփուզիս, ուր ամիրա յեր Ալի վորդի Ջափարը, ... ապա մտավ Քարթլի և ավերեց Քարթլին, ... այնտեղից մտավ Սամցխե, և ավերեց Սամցխեն ու Ջավախքը (Ջավախիթը), ապա մոտեցավ Թժոզվիլի բերդին<sup>10</sup>. տեսնելով վերջինիս անսուսկ և ամուր դիրքը, այնտեղից քաշվեց և յեկավ Ղվիլիի մոտ, վորը սկսեց պաշարել։ Նրա (Ղվիլիի) մեջ եր մի պատանի՝ Գորբոն անուն... վորին կալանավորեցին և նահատակեցին, և վորի վկայաբանութիւնը մանրամասն գրած ունի մեր սուրբ հայր Ստեփան Տըխթի (Ստեփանե Մտքեվարի) յեպիսկոպոսը<sup>11</sup>, [Ապա Աբուլ-Կասիմը] այնտեղից [եկ] քաշվեց և դնաց Գվին քաղաք. իսկ այնտեղ նրան լուր հասցրին, վոր Սըմբատ թագավորը մտած և Կասպույտ (Կասպոետ) բերդը, իսկույն և յեթ տեղից

...ի ժամանակս Սմբատայ՝ Հայոց արքայի տիեզերակալի, որ մարտ եղևալ ընդ Կոստանդեայ՝ թագաւորին Ափսաւաց՝ էառ զՔարթլ և զՈւփլիսցիքիսէ. և դարձեալ հաշտեալ՝ խնամիք եղեն, և դարձոյց անդրէն։ Յաւուրսն յայնոսիկ եկն Բուլկասիմ (ուղիղ՝ [Ա]բուլ-Կասիմ) զօրապետն Սարակինոսաց՝ ի Հայս, և ապա ի Տփլիս... և... անդէն ի Դուինս Եւ Սմբատ արքայն Հայոց խոյս ետ ի նմանէ, և եկն շրջէր ի լերինս Ափսազեթայ. իսկ բռնաւորն սպասէր նմա, քանզի պերճացեալ էր յաղթութեամբն Վրաց. քանզի տուեալ էր զամենայն Քարթլ, և յոլով բերդս, զԹժօք և զՍուրիլա, յորում եսպան զգեղեցիկ և զքաջ մանուկն Գորբոն (ուղիղ՝ Գորբոն)՝ վասն Քրիստոսի, զի ոչ ուրացաւ դնա. զորոյ վկայութիւնն գրեաց սուրբ հայրն մեր Ստեփանոս Վկայեաց և սուրբ թագաւորն Սմբատ՝ ի նոյն բռնաւորէն՝ ի Դուին քաղաքի. բոլոր տարի մի չարչարեալ, և ապա խեղդամահ սպանին և կախեցին զփայտէ, զի մահակից և խաչակից լիցի Քրիստոսի։

չարժիկց և զիմեց դեպի այն բերդը, ուր դանվում եր հայոց (սոմեխներ) Սմբատ թագավորը. և պատվիրեց իր բանակին, վորպեսզի ամեն մեկին, վորին կենդանի կգտնեն, բերեն իրեն մոտ։ [Յեվ Աբուլ-Կասիմը] յեկավ և մոտեցավ Կասպույտ (Կասպոետ) բերդին, և կալանավորեց բերդակալները կանանց, վորոնց դտավ զբոսում։ Գրավելով բերդը՝ [արաբացիք] կալանաւորեցին Սմբատին<sup>12</sup>, վորին ապա տարան Գվին, ուր և կախեցին փայտից. և նա մեռավ<sup>12</sup>։ ...

[X—XI ԴԱՐՈՒ ԱՆՑՔԵՐԸ]

...Յեվ Հերբում (Հերեթում) սկզբնորում՝ մինչ Իշխանիկի թագավորութունն՝ բոլորը հերձվածող էյին։ Իսկ Իշխանիկը Գուրգեն իշխանաց-իշխանիքով վորդին էր. և նրա մայր Գինար թագուհին զարձրեց նրան ուղղափառ<sup>13</sup>։ ...

...Յայնմ ժամանակի Իշխանիկն էր թագաւոր ի կողմանս Հերեթոյ, և ունէր նա հերձուած, և մայր իւր դարձոյց յուղղափառութիւնս...

...Յեվ իշխան եր Կլէեկարում Ռատը, վորը զբաղել եր Ատենի բերդը և Քարթլիից սկսած Կուր [գետ]ի հարավային մասը Թուրքը (Թրիալեթը), Մանգոյաց-վորը (Մանգլիսի ձորը) և Սիվիրիթը<sup>14</sup>, և չեր հնազանդվում Բագրատ թագավորին։ Ապա Բագրատ թագավորը շտապ<sup>15</sup> զորք հավաքեց և յեկավ Քարթլի։ ...Յեվ Բագրատի հայր Գուրգենն ել զորք ուներ ժողոված և միանգամայն պատրաստ իր վորդու մոտ գնալու համար։ Իսկ Դավիթ Կուրապալատն արագ դիմեց [նրանց դեմ]՝ ժողովելով իր զորքը և կանչելով Հայոց (Սոմխիթի) բոլոր թագավորներին<sup>15</sup>։ ...

...Եւ Ռատն էր ի Կարս (ուղիղ՝ ի [Կլէե]կար), և ունէր զբերդն Ատենոյ և զհարաւակողմն Կուր գետոյ. սա ոչ հնազանդէր Բագրատայ. և Գուրգեն հայր նորա եկն առ որդին, և կամեցան գնալ ի վերայ Ռատին։ Եւ քսեցին առ Դաւիթ կուրապալատն՝ եթէ զգլուխ ջո խնդրեն. և հաւատաց բանիցն, և ձեռնատուութեամբ Հայոց՝ փախոյց զզօրսն...

Սյը ժամանակ ուժեղացավ Գանձ- [ակ]ի ամիրա Փաղլոնը, վորը սկսեց հպատակեցնել իրեն Հերբի (Հերեթի) և Կախբի (Կախիթի) իշխաններին, ժամա-

...Յայնմ ժամանակի զօրացաւ Փատլուն՝ ամիրայն Գանձակայ, և հարկանէր զիշխանան Կախիթոյ և Հերեթոյ։ Եւ առաքեաց Բագրատ թագաւոր Ափսա-

\* Var. Սմբատ թագավորին  
\*\* Բնազրում՝ զարմանալի կերպով։

նակ առ ժամանակ ավագակորեն և դադարազորի ավերելով և դերելով այլ և այլ տեղեր: Իսկ Բագրատ մեծն թագավորը՝ տեսնելով նրա (Փաղղոնի) հանդիմանությունը՝ իր ամբողջ զորքով պատրաստեց [նրա վրա հարձակվելու], դեսպան ուղարկեց Գաղիկ շա[ն]ն[ի] հայոց (սոմեխներ) թագավորի մոտ, վորպեսզի վրեժխնդիր լինի Փաղղոնին: Յեվ նա (Գաղիկը) հույժ ուրախացավ [սրան], և շտապ կանչեց իր ամբողջ զորքը և գլխից Ափխազաց թագավորի մոտ, [և] յերկուսը [մրասին] ժողովեցան Ջորակերտում<sup>16</sup>, Փաղղոնի դեմ յերկուսու...<sup>17</sup>

...Իսկ նրա (Գեորգի) թագավորություն յոթնորորդ տարին հունաց (բերձեններ) <sup>18</sup> Վասիլ թագավորը հունաստանը ամբողջ զորքով՝ անթիվ այլազդիններով հանդերձ՝ յեկավ նրա (Գեորգի) դեմ: Գեորգ թագավորն ել մեծ զորքով յեկավ նրա (Վասիլի) դեմ և յերկուսն ել յերկար ժամանակ կացան Բասեն (Բասիան) յերկրում՝ կռվի չհիշելով իրար դեմ: Պուլափելով [Վասիլից]՝ Գեորգ թագավորը յեկավ և ավերեց ըստ Ուղթյաց (Ութին), ապա այնտեղից հասավ Կողա (Կոլա): Նրան հետամուտ յեկավ հունաց (բերձեններ) Վասիլ թագավորը, և ժողովեցան թե վոչ Գեորգուն հետամուտ յեղողներն ու Վասիլի առջընթաց զորքերը՝ տեղի ունեցավ մեծ ընդհարում Շիրիմք կոչված դյուղում<sup>19</sup>...

...Յերկրորդ անգամ յեկավ Վասիլ թագավորը Թոնդրով (Թրևալեթով), շրջեց Ջավախքն (Ջավախեթն) ու Արտահանը (Արտանը) ձմռան պահին՝ ապա վերադարձավ Պաղայաց (Պաղա || Պաղա) յերկիրն՝ Տրապիզոնին կից<sup>20</sup>...

...Նորից յեկավ Վասիլը Բասեն (Բասիան)՝ պահանջելով Գեորգ թագավորից դավաճներ և բերդեր, և խոստանալով համարաշխություն և խաղաղու-

ղաց, առ Գաղիկ թագաւորն Հայոց՝ երթալ ընդ նմա ի վերայ Փատուայ ամիրային: Եւ չորքան երկոքեան ի Գանձակ, և արարիալ ընդհարկաւ՝ դարձան աւարաւ...

...Ի հինգերորդ (ուղիդ՝ յեաւթնորորդ) ամի թագավորութեան սորա (Գեորգեայ)՝ եկն Վասիլ կայսրն և ընդդէմ զնաց նորա ի դաւաճն Բասենոյ: Եւ իբրև ետես եթէ բազումք են՝ դարձաւ անդրէն և Վասիլն զնաց զհետ նորա, և այրեաց զքաղաքն Ուլաւաց, և զարձաւ Գեորգի և կուռեցան, և անկան յերկուց կողմանց բազումք ի տեղուցն՝ որ կոչի Շիրիմք...

...Եւ զնաց Վասիլն ի Տրապիզոն, և կոչեցեալ առ ինքն զմեծ կաթողիկոսն Հայոց զՊետրոս՝ ի տօնի յայնսութեանն, և օրհնեաց զժուրն առաջի նորա, և ետես կայսրն մեծ սքանչելիս ի վերայ ջրոյն, և գովեաց զհաւատս Հայոց, և զնաց ի Կոստանդնուպօլիս...

\* Հմմ. այս պրակի Ա. գլուխը (եջ 137, ծանոթ. \*\*\*):

թյուն... Յեվ ավեց Գեորգ թագավորը [Վասիլին] յերկիրը, վորը Գավիթ Կուրապալատինն էր, Տայքում\*\*, Կողա Արտահանում (Կոլա-Արտանում) և Ջավախքում (Ջավախեթում)\*\*\*21...

[Հունաց Կոստանդին թագավորի մահվան և Ռոմանոսի դահակալութեան] յերրորդ տարին<sup>22</sup> զնաց Մարիամ թագուհին՝ ափխազաց [Բագրատ] թագավորի մայրն՝ հունաստան խաղաղություն հաստատելու\*\*\*, նաև կուրապալատության պատիվն խնդրելու իր վորդու համար, ինչպես նրանց տան սովորությունն եր ու կարգը\*\*\*\*23...

Յեվ սրանից հետո իր վերին և ներքին «հայրենիք»-ին տեր դարձավ Բագրատը\*\*\*\*24... [Յեվ] սրա թագավորության զորքերը ժողովեցան և կալանավորեցին Լիպարիտին և Արագա վորդի հովհաննիս (Իվանեյին): Յեվ յեկավ մեծն Կորիկե (Կվիլիկե) Ռանից (ուսներ) և Կախից (կախեր) թագավորը, Գավթ<sup>25</sup> հայոց (սոմեխներ) թագավորը և Տփղիսի ամիրա Ջավաբը. սրանք բոլորը ժողովել ելին Կորիկեյի (Կվիլիկեյի)\*\*\*\*\* պայմանի համաձայն Յեկեղյաց (եկեց) [ըսվաւ] ուսմ...

...[Ապա] թագավոր եր Կախքում (Կախեթում) Գաղիկը՝ Սամշվիլեյի և Ջորակերտի\*\*\*\*\* հայոց (սոմեխներ) Գավիթ թագավորի վորդին [և] Կորիկեյի (Կվիլիկեյի) քեռորդին...

Ապա կրկին ուժեղացավ և հզորացավ իր «հայրենիք»ում Բագրատ թագավորը: Յեվ Բագրատի բազմ լանց թե լոչ՝ Վեստը [նրան] միացավ Անվո...

\* Var. +... և անցավ Բասենի (Բասիանի) սահմանը...  
\*\* Var. + Բասենում (Բասիանում):  
\*\*\* Var. + Շավշեթում:  
\*\*\*\* Բնագրում՝ փնտռելու:  
\*\*\*\*\* Այս արագը զրեթե կրկնություն և Սմբատի յերկայսիրության համապատասխան հատվածի (տես այս աշխատության 138 էջը):  
\*\*\*\*\* Var. Բագրատ թագավորը:  
\*\*\*\*\* Var. կայսեր:  
\*\*\*\*\* Var. սամշվիլեյից և զորակերտեցվոց:

Եւ էա զթագաւորութիւնն Բագրատ. և չորաւ մայրն նորա Մարիամ ի Կոստանդնուպօլիս, և երեր թուրք դաշնաց խաղաղութեան և պատիւ կուրապաղատութեան՝ որդւոյ իւրոյ...

...Թագավորն Կախեթոյ [էր] Գաղիկ, որդին Հայոց արքայի...

...զի մայր նորա (Բագրատայ) Մարիամ՝ դուստր էր Սենեքերիմայ Հայոց արքայի, ետուն զքաղաքն Անվո՝ բնապիչք նորա՝ ի թագուհին Մարիամ...

✓ ինն բերդով, բացի Ամբերդից: Յեզ անկ-  
ցիք տվին Անին Բագրատի մորն, քանի  
վոր այն հայերի (սոմեխները) «հայրե-  
նիքն» էր, [Իսկ] Բագրատի մայր Մա-  
րիամ Թագուհին հայոց (սոմեխները)  
Անեքերիմ Թագավորի դուստրն էր<sup>26</sup>...

...Յեզ Լիպարիտը ...հանեց Անիից՝  
Թագուհուց՝ Աբուսեր Արտանուշի իշ-  
խանին, ...և Հովհան (Իվանե) իշխանին,  
Հովհան (Իվանե) Դադիանուն և Գուևա-  
րամ Գողերծիս-ձեյին, ...վորոնց և կա-  
լանավորեց Անիի դուստր ...

...Յեզ Լիպարիտի գահնակիցներն էյին  
[ընդգեմ Բագրատի]՝ կախերը իրենց  
զորքով և Դավիթ հայոց (սոմեխները)  
Թագավորն իր զորքով...

Յեզ մի քիչ ժամանակից հետո դաշ-  
նակից յեղան Կալմախի իշխան Սու-  
լան և Առտանուշի իշխան Գրիգորը,  
վորոնց միացան մեխի ազնվականներն  
(ազնաուերներն) յես՝ ողնելու Բագրատ  
Թագավորին... Լսելով այս՝ Լիպարիտը  
ժողովեց իր զորքը և կանչեց կախերին  
ու հայերին (սոմեխներն), և հույներն  
(բերձեններն) [էլ] սրա հետ էյին: ...

Յեզ սահմանի գրսով գնալով Լի-  
պարիտը նույն զորքով մտավ Դվին և  
առաջնորդեց հունաց (բերձենները) Թա-  
գավորին դվինեցվո վրա. ապա վերա-  
դարձավ իր յերկրը: Իսկ նրա վերա-  
դարձից մի տարուց հետո Բասեն (Բա-  
սիան) գավառում յերեկեցան Բահրամ-  
Լամյան սուլթանական թուրքերը: ...

...Ապա Լիպարիտը հարձակվեց թուր-  
քերի վրա և մտավ Անի...

...Մի քիչ հետո սրա (Բագրատի) Թա-  
գավորության մեծամեծները ձանձրա-  
ցան Լիպարիտի տիրապետութունից:  
Սուլա Կալմախեցին և բոլոր մեխները  
վախան Լիպարիտից, և կալանավորեցին  
Լիպարիտին ու նրա հորը՝ Դևիվում: Իսկ  
Նիանիան դադիեց և գնաց դեպի Կլչե-  
կար (Կլչեկարնի), ուր, սակայն, նրա  
հոր (Լիպարիտի) բերդապահները ներս  
չթողին նրան, և նա անցավ Անի՝ հույ-  
ները (բերձենները) մոտ: ...Յեզ մի քա-

նի տարուց հետո Նիանիան վախճանվեց  
Անիում...

Սրա (Բագրատի) Թագավորության  
պահին յերևաց սուլթան Արփ-Ասլան  
(Արփարասան || Արփասարան)՝ պար-  
սից Թագավորը: ... [Յեզ] յեկան [պար-  
սիկներն] անակնկալ կերպով\* և ավե-  
րեցին Կանգարքն ու Թուեղը (Թրիալե-  
թը): ...

✓ ...Յեզ զիմեց սուլթանը (Արփ-Աս-  
լանը) դեպի Անի և զբաղեց Անին, ավե-  
րեց այն և անթիվ ժողովուրդ դերեց ու  
գնաց իր յերկիր՝ Գարսկաստանը՝ նա  
[յեր, վոր] Ասին խլեց հույներից (բեր-  
ձեններից) և տվեց Աբուլասավրի վորդի  
Մանուշարին: Իսկ Բագրատի քեռորդին,  
վորն խնդրում էր սուլթանը ի կնու-  
թյուն, հայոց (սոմեխները) Կորիկե (Վի-  
րիկե) Թագավորի յեղբորդին էր: Բագ-  
րատը սրան խնդրեց, բայց հայոց (սո-  
մեխները) Թագավորը նրան չտվեց: [Ա-  
պա] Բագրատը մեծ զորքով հանդերձ  
դեսպան ուղարկեց [Կորիկեյի մոտ]  
Վեսպուր-Բակուր Գամրեկի իշխանին:  
[Նույն Բագրատը] հայոց (սոմեխները)  
Թագավորի մարդկանց էլ զրդոնց, և  
Սասնիկի մանող հայոց (սոմեխները)  
Կորիկե (Վիրիկե) Թագավորին ու նրա  
յեղբայր Սմբատին կալանավորեցին  
Քվեչի պուրակում<sup>27</sup>: Յեզ հազորդեցին  
Բագրատին, [վորը]... պահանջեց Սամ-  
շվիլդեն, սակայն [հայերն] այն չտվին,  
և նրանց (Կորիկեյի ու Սմբատի) մի  
ուրիշ յեղբայրը՝ Ատրներսեհը (Ազար-  
նասին)՝ մտել էր Սամշվիլդե: Իսկ [Կո-  
րիկե և Սմբատին] տարան Սամշվիլ-  
դե. և սարքեցին [խաչա]փայտեր, և հա-  
յոց (սոմեխները) Կորիկե (Վիրիկե) ար-  
քային յերեք որ [կախված] թողն: [Հա-  
յեք] խնդրեցին խաղաղություն և տվին  
Սամշվիլդեն<sup>28</sup>: Յեզ յեկեց էյին հայոց  
(սոմեխները) Թագավորի յերկու իշխան-

...և դայր [սուլթան Արփասլան] առ-  
նոյր զամենայն տունն Բարթլայ, կոտո-  
րէր և գերէր. և խաղացեալ գնայր ի  
մայրաքաղաքն Հայոց ի յԱնի, և առնոյմ  
գնա, և ընոյր արեամբ կոտորեցոցն: Եւ  
այլ ևս սպանայր Վրաց աշխարհին, եթէ  
ոչ տացէ նմա Բագրատ՝ զզուտար քեռ  
իւրոյ ի կնութիւն. որ էր նա դուստր  
եղբոր Կլւրիկէի Հայոց արքայի. յորմէ  
խնդրէր Բագրատ աղաչանօք, և ոչ տայր  
գնա Կլւրիկէ. մինչ զորժեցին նմա ո-  
րոգայթ Վարապրակուր և Գամրիկէլ զօ-  
րակուլին Վրաց, և ըմբռնեցին գնա  
յանտառին Բուրշոյ. և աղդ արարին  
Բագրատայ. և գնաց առ նա, և էառ  
զաղջրին և զՇամշոյտէ ի ձեռաց նո-  
րա, և ապա արձակեաց: Իսկ Սուլթանն  
զկնի երկց ամաց դարձաւ ի վերայ  
Վրաց, և էլից արեամբ զբրկին: Եւ  
տեալ զՏփիսը՝ ետ ի յամբլայն Գան-  
ձակայ ի Փատուուն: Եւ Ասխաթան  
որդի Գաղկայ Թագաւորին Կախթոյ՝  
եկն առ նա, և զըջէր ընդ նմա՝ մինչև  
գնաց Սուլթանն...

\* Բնագրում՝ անդգալիորեն:

ները՝ Լուկի\*<sup>29</sup> իշխանը և Կակվաքարինը: Կորեկեյի (Կվլրիկեյի) յեղբայր Սմբատը տալիս եր և հանձնում յերեք բերդեր՝ Ոփրեթն՝<sup>30</sup>, Քորալը՝<sup>31</sup> ու Վարդաքարը: Իսկ Բագրատ թագավորը խզաց նրանց, և ազատեց ու վերադարձրեց նրանց բոլոր բերդերը բացի Սամշվիլ-դեյից, և վոչ էլ այլ բերդերի տերերին՝ մեծամեծներին թույլ ավեց ներս մտանելու այնտեղ, այլ գրավեց Սամշվիլ-դեն, [վորը և մրացրեց] իր թագավորութանն: Յեկ այսպես հայերը (սոմխները) [վրաց] հպատակ դարձան<sup>32</sup>...

[Ապա սուլթանը] յեկավ ակիսազաց թագավորի դեմ, և նրան միացան հայոց (սոմեխներ) Կորեկե (Կվլրիկե)<sup>33</sup> թագավորը, Տփղիսի ամիրան և Աղսարթանը, [վորոնք]՝ սղակ [լազմե]ով՝ մտան Քարթլի... քրոնիկոնի 288-ի դեկտեմբերի 10-ին, յերեքշաբթի որը<sup>34</sup>...

...և ակիսազաց [Բագրատ] թագավորը գրավեց Քորալը: Ապա Փաղընը... գողցավ Քավազը...

...[Բագրատի վորդի Գեորգ թագավորը] շնորհեց Հովհաննիս (Իվանիսի) [Լիպարիտի վորդուն]՝ Սամշվիլդեն... սահայն Հովհաննիս (Իվանեն) չկարողացավ մնալ բերդի ներսում [և] հեռացավ դեպի Հայոց (Սոմխեթի) լեռները...

[Ապա] Հովհաննիս (Իվանեն) նորից ուրացավ [Գեորգին], խաբուսիկ կերպով լույս Գագը Գեորգ թագավորի բերդապահներին և ծախեց [այն] Գանձ[ակ]ի տեր Փաղընին...

Մի քիչ հետո Սարանդն իր ամբողջ զորքով՝ դաշնակից ունենալով Գանձ[ակ]ի, Գվինը և Գմանիսի ամիրաներին՝ դնաց Գեորգի դեմ...

...[Ապա Գեորգ թագավորը] գրավեց հույներից (բերձեկներից) Անակոփիան՝ Ափխազեթի բերդերի գլուխն, և շատ բերդեր Կլարջքում (Կլարջեթում), Շավրջ-

... և էսո [Բագրատ] ի նման է (և Փատուեն ամիրայէ) դՏփիսիս և դՊագ և դՊոզինն՝ զոր առեալ էին Պարսք ի Հայոց և ի Վրաց...

... և ասպատամբեաց ի նման է (և Գէորգեայ) Իւանէ՝ որդին Լիպարտի. և յինքն յանկուցեալ զպահապանս զգեկին Գագայ՝ վտճառեաց զնա դարձեալ տեսան Գանձակայ...

...և էսո Գէորգ ի Յունաց դամենայն բերդսն՝ զոր առեալ էր նոցա, զԱնակոփի ի գլուխն Ափխազեթայ, և Կլարջ և Կլարձեթայ և ի Շաւրձեթայ և ի

\* Բնագրում Լուկի:

\*\* Բնագրում Կորա (Կոշա). հմմ. 148 յեր.\* ծանոթ.

քում (Շավրձեթում), Չավախքում (Չավա- Չաւախեթոյ և յԱրտաշանայ՝ յորով ինթում) և Արաաշանում (Արտաանում): ամբոցս, և զԿարս և զՎանանդ, նոյն- Յեկ սրանից հետո... գրավեց Կարս (Կարիս) քաղաքը, Վանանդի բերդն և դավանն, ու Կարնիփոր-Ալ[ը]սխանու ամբոց- ները, և մաքրեց յերկիրը թուրքերից...

## ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Արաբական արշավանքների շրջանի Հայաստանի պատմութեան վերաբերյալ տես նետյալ հատուկ գրականությունը M. Ghazarian, Armenien unter der arabischen Herrschaft bis zu Entstehung des Bagratidenreiches Marbourg 1903. H. Thopdschian, Armenien vor und während der Araberzeit — «Zeitschrift für armenische Philologie», II. B., I. H., Marbourg 1903 S. S. 50—71. Բագրատ Խալաֆեանց, Արաբացի մատենագրի Հայաստանի մասին [«Ազգային Մատենագրան» 27], Վիեննա 1919. J. Laurent, L'Arménie entre Byzance et l'Islam depuis la conquête arabe jusqu'en 886, Paris 1919. Հակոբ Ջորյան. Արաբների հարկային քաղաքականությունը սլատական Հայաստանում, — «Հ. Ս. Ն. Գետական Համալսարանի Գիտական Տեղեկագիր» № 2—3—Յերևան, 1927, էջ 319—349. Նույնը, Արաբական շրջանում Ֆեոդալական Հայաստանի քաղաքի և գյուղի միջև ստեղծված հակադրությունը, — «Տեղեկագիր Հ. Ս. Ն. Գիտություն և Արվեստի Ինստիտուտի» № 2, Յերևան, 1927, էջ 179—203. № 3, էջ 3—38. Հակոբ Մանանդյան, Արաբական արշավանքները Հայաստանում (ժամանակագրական դիտողություններ) — նույնի «Մանր հետազոտություններ»-ի մեջ, հրատ. Մեյրոնյան Ֆոնդի, Յերևան, 1932, էջ 22—74. R. Vasmer, Chronologie der arabischen Statthalter von Armenien unter den Abbasiden, von as-Saffach bis zur Krönung Aschots I., 750—887, Wien 1932:

2. Տես Մովսես Կաղանկատվացի, II, 11:

3. Ըստ Ատոկիկի (Սակեփանոսի Տարոնեցւոյ Ասողկան Պատմութիւն աիւզերական, 106) «ի ...յնզ թուականին Խալթ իպն եկիտ՝ Հայոց ամիրայ կին և էանց բազմութեամբ ի Վիրս և մեռաւ ի Չաւախս, ի զիւզն որ կոչի Խոզարի (այժմյան Խիզարնիքաւ Լ. Մ.-Բ.):»

4. Մանրամասնությունները տես. И. Джавахов, К вопросу о времени построения грузинского храма в Атене по вновь обследованным эпиграфическим памятникам, — «Христ. Восток», т. I, 1912, стр. 277—297. Իվ. Չավախիշվիլի, Վրաց ժողովրդի պատմությունը, վրացերեն, II, 1914, էջ 374—377 հմմ. նաև մեր այս աշխատությունն ա. պրակի Գ. գլուխը:

5. Հմմ. Ատոկիկը (ibid., 158):

6. Պետք է լինի «Խոստովանող». հմմ. հաջորդ ծանոթության մեջ հիշած մեր հոգվածը Քավախիկի մասին, էջ 218: Նաև՝ M. Brossel, Histoire de la Géorgie, I, p. 274, n. 8.

7. Ուփլիսցիները իբրև հայոց գաղթականության հնագույն վայրերից մեկի մասին վրաստանում առայժմ տես. П. Исселиани, Города, существо-

завниа неуществоющие в Грузии, Тфл. 1850, стр. 65—66. Н. Пантюхов, О пещерных и позднейших жилищах на Кавказе, Тфл. 1896, стр. 34—35. *այիլի մանրամասն՝* Л. Меликсет-Бекоев, Пещерный город Квахрели.— «Известия Кавказского Музея», т. XI, 1918, стр. 208—218. [Л. Меликсет-Бекоев] Прошлое и настоящее Грузии по древним памятникам Мцхетского района и Уплисцихе (Краткий путеводитель экекурсии), изд. Культотдела Совпрофа Грузии [Тфл. 1929], стр. 4. *նույնը, վրացերեն, էջ 4: Հայկական արձանագրութիւնները և մասնավորապես 1585 թ. արձանագրութեան ընդորինակումը տես՝* M. Brosset, Voyages archéologiques dans la Géorgie et dans l'Arménie, II rapp., livraison II, SPB. 1850, p. p. 161—162. Գ. Գաբինեանց, Հայկական արձանագրութիւն մը Ուփլիս ցիլիէ գիւղում (Վրաստան), «Հանդէս ամսօրեայ» 1907 թ., էջ 300. հմմ. նաև բանահյուսական նյութը՝ Ե. Թաղաձորի, [Վրաց] ժողովրդական գրականութիւնը, I [Տփղ. 1909—1915], էջ 256, 257:

8 Վրացերեն բնագրում «Իմձախես», վորի վերլուծութիւնը տես՝ M. Brosset, Histoire de la Géorgie, I, p. 274, n. 9:

9. Սմբատի և Կոստանդինի թշնամութեան և ապա համերաշխութեան մասին հմմ. Հովհան Գրասխանակերտացիո տիպոյները (Յովհաննու կաթողիկոսի Գրասխանակերտացւոյ Պատմութիւն Հայոց [«Ղուկասեան Մատենադարան» Ե], Տփղ. 1912, էջ 200—201:

10. Հայ բանահյուսութեան մեջ Թմրկարերդ կոչվածը. հմմ. «Թմրկարերդի առումը» (Ե. Կալայեան, Ջալալբի բուրմունք, Թիֆլիս 1892, էջ 57). *նույնը* Հովի. Թումանյանի կողմից ողբագործած:

11. Մանրամասն տես մեր յերկասիրութեան ա. սրակի Ը. գլուխը:

12. Տես նույն տեղ, հմմ. նաև Ասողիկ (էջ 164—165):

13. Հմմ. ա. սրակի Ժ. գլխի 2 ծանոթ:

14. Թոնդրի և մասնավորապես Կլդեկարիի և Մանդղայ մասին տես. E. Такайшвили, Археологические экекурсии, разыскания и заметки, в. IV, Тфл. 1913, стр. 1—79, 130—144. Լ. Մելիքաբ-Բեկ, Մանդլիսի շրջանը պատմահնագիտական տեսակետով, վրացերեն, — «Ախալ սիւլխակին» 1924 № 2—3, էջ 71—80. Ռույնը, Կլդեկարին, վրացերեն, — «Bulletin Historique 1924, № 1, էջ 167—172. Ռույնը, Մանդլիսի նեկրոպոլը, վրացերեն, — «Չվինի մեցնիբերա», № 13, 1924, էջ 82—87:

15. հմմ. Ասողիկի (էջ 252) ցուցմունքը. «Եւ կիւրապղատան Տայոց Դաւիթ և Թաղաւորն Վրաց Բաղարատ առաքին առ Թաղաւորն Հայոց Սմբատ [Տիեզերակալ]՝ կոչել յօղնականութիւն իւրեանց...»:

16. Զորակերտը այժմյան Զուրառակեան և կամ Դարբուլախի դաշտավայրը (Ստորին Ծաղկան), ուր՝ VI—VII և հետագա դարերի վրացական բազմաթիվ հնութիւնները կողքին՝ հանդիպում ենք և հայկական հնութիւններին համեմատաբար ավելի ուշ ժամանակները, XVIII դարու հայերեն կամ հայերեն-վրացերեն արձանագրութիւններով (1718, 1721 և 1795 թ. թ.), վոր մենք ընդօրինակեցինք 1932 թ-ի ամառվա գիտական արշավանքի միջոցին (պատրաստվում և տպագրութեան ժողովածուի մեջ՝ «Հայերեն արձանագրութիւնները Վրաստանում» վերնադրով):

17. Հստ Ասողիկի (ibid., 252—253), Սմբատ Տիեզերակալ «առեալ դամեանայն զօրս Հայոց և զԴաղիկ գեղապը իւր՝ գնաց առ նոսա ի դաւառն Չաւախաց և բանակին ի գիւղն, որ կոչի Դլիվեին, և մանուկն Աբաս Թաղաւորն Կարուց... եւ ամենայն զօրն Վրաց և Վասպուրականի, Սիւնեայ և Աղուանից իշխանքն միանաւաք ինէին ընդդէմ Ասիխազաց զօրուն: Որոց կրկուցեալ զխաղաղութիւն խնդրեն և սէր հաստատեն առ միմեանս: Կիւրապղատան Դաւիթ խնդրէ ի Թաղաւորէն Ասիխազաց զբերդն Սահուրէթ, և առեալ տայ Թաղաւորին Հայոց Սմբատայ՝ շնորհ նմա արարեալ վասն օգնականութեան. զոր ի մահուն Սմբատայ դարձեալ հանին ի Հայոց զբերդն Սահուրէթ»:

18. Հստ Արիստակես Լատիվերտցվո (Պատմութիւն Արիստակես վարդապետի Լատիվերտցոյ, Տփղ. 1912, էջ 11) հայոց 470 թ.—1021 թ. ը. հմմ. Խվ. Ջավախիշվիլի, Վրաց ժողովրդի պատմութիւնը, II, 424, M. Brosset, Hist. de la Géorgie, I, p. 306, n. 2:

19. Այս արդացում նկարագրած դեպքերի մասին տես. Արիստակես Լատիվերտցի, I և II գլուխները, նաև Յախա Անտիպաղի (B. P. Розен, Император Василии Болгаробойца, Петербург 1883, стр. 61—62). հմմ. Խվ. Ջավախիշվիլի, ib., 425: Մասնավորապես «Շիրիմք»-ի մասին տես. Ասողիկ, XVII (էջ 196—197). նաև՝ M. Brosset, Histoire de la Géorgie, I, p. 306, n. 4. Ղ. Ինքինեան, Ստորագրութիւն հին Հայաստանայց, 402:

20. Հմմ. B. Розен, II, с. 65—66:

21. Տես նույնը:

22. 1030—1031 թ. թ. (Խվ. Ջավախիշվիլի, op. cit., II, 431):

23. Տես Դավիթ վորդի Սմբատի յերկասիրութիւնը (այս սրակի Ա. գլուխը):

24. Հստ Վարդանի (Վին., 106)՝ «Վրաց Թաղաւորն Բաղարատ դարձեալ ի կայսերն՝ առնու զհայրենիան իւր»:

25. Անհողին:

26. Տես այս սրակի Ա. գլխի 5-րդ ծանոթութիւնը:

27. Այս Կորիկի (Կվիլիկի) և Սմբատը Լոռու-Տաշիրի Կորիկայնց հարստութեան ներկայացուցիչներն են, վորոնց ազգաբանութիւնը վրացի հեղինակը շիտթած է՝ համարելով նրանց յեղբայրներ, մինչդեռ Կորիկին (Կվիլիկին) Դավիթ Անհողին վորդին էր, իսկ Սմբատը՝ յեղբայրը կամ Կորիկեյի հորեղբայրը. Կորիկայնց ճանդաբանութիւնն ընդհանրապես տես. M. Brosset, Monographie des monnaies arméniens, SPB. 1839. Նույնը, Additions et éclaircissements à l'Histoire de la Géorgie. p. p. 277—279. Ղ. Ալիշան, Շիրակ, 96—97. Ռույնը Հայաստանում, Վին., 1901, II, 392. Ե. Կալայեան, Բորչալուի դաւառ, — «Ազգագրական Հանդէս», գ. VII—VIII, Տփղ. 1901, էջ 312—318. Ղեմուղ վ. Մալախեան, Լօսիլի Կիւրիկեանց Թաղաւորներու պատմութիւնը [«Ազգային Մատենադարան» Ղե], Վիլնիւս 1923. E. Пахомов, О монете Корика Куропалата, — «Известия Кавказского Историко-Археологического Института», т. III, Тфл. 1925, стр. 43—45. Լ. Մելիքաբ-Բեկ, Գորեքն և նրա հայրենն ու վրացերեն արձանագրութիւնները, վրացերեն, — «Bulletin de l'Université de Tiflis», VII, 1926, էջ 60—73. Նույնը, «Վարդապետը Հայոց հիւսիսային կողմանց» etc., էջ 25—32, հատկապես 31: Մասնավորապես Կորիկի (Կվիլիկի) և Սմբատի մասին պետք

և ասել, վոր սրանք Սանահնի վանքի Ամենափրկիչ կոչված տաճարի կառուցող-ներն են, վորն մասին վիպյում և նույն տաճարի արևելյան պատի համապատասխան քանդակադործությունը, ուր յերկու թաղավորներ ձեռնի բնած ունեն յեկեղեցու կաղապարը, հետևյալ արձանագրությունը՝ «[Կ]որիկէ թաղաւոր, Սմաղատ թաղաւոր» (H. Marq, Санահинская скульптурная группа ктиторов, — «Христ. Восток», т. I, 1912, стр. 350 и табл. XX): Հմմ. Լ. Մելիքեթ-Բեկ, «Վարդապետք Հայոց հիւսիսային կողմանց» etc., 49: Ըստ այսմ և ի նկատի ունենալով, վոր նույն Կորիկեն և Սմաղատը հիշատակվում են նաև նույն Սանահնի 1063 թվի մի արձանագրության մեջ (Ս. Ջալալեանց, op. cit., I, 32 — Description des monastères arméniens d'Haghbat et de Sanahin, par archim. Jean de Crimée, avec notes et Appendice, par M. Brosset, SPB, 1863, p. 49 = Կ. Կոստանեանց, Վիճական տարեգիր, 24), մենք յեկած ենք այն յեղբակացությունը, վոր Սանահնի Ամենափրկիչ կառուցումը պիտի վերագրել հենց այդ Կորիկե և Սմաղատին XI դարու կիսին և, համենայն դեպս, վոչ ուշ քան 1065 թ.: Ինչ վերաբերում և Հաղբատի Սուրբ Նշան տաճարի հյուսիսային պատի 991 թ. արձանագրությանը (Ջալալեանց, I, 79 = Jean de Crimée, p. 11 = Կոստանեանց, 10), ուր հիշատակված են Սմաղատ և Գուրգենը, դրանք Բաղրատունյաց Աշոտ Վոզրմածի վորդերն են, վորոնցից Գուրգենը Կորիկյանց հարստության հիմնադիրն և համարվում, բայց, ի հարկի, վոչ իրավացի (այս առթիվ մանրամասն տես. Լ. Մելիքեթ-Բեկ, «Վարդապետք Հայոց հիւսիսային կողմանց» etc., էջ 25—27, ծան. 6):

28. Սամշվիլիելի՝ իբրև Կորիկյանց յերբեմնի մայրաքաղաքի մասին՝ վիպյում են մի շարք հայկական հնությունները, վորոնք մինչ որս պահպանված են և վորոնց ընդհանուր նկարագրությունը կարելի չէ գտնել հետևյալ գրականությունների մեջ. M. Brosset, — «Mélanges Asiatiques», t. II, p. 92—103. Սարգիս Վ. Ջալալեանց, Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, II, 1858, էջ 78—79. С. Мажников, Памятники древности города Самшвилде, — «Сборник материалов для описания местностей и племен Кавказа», в. XIII, 1892, отд. I, стр. 3—13. E. Такайшвили, Археологические экскурсии, разыскания и заметки, II, 40—46. Հմմ. Լ. Մելիքեթ-Բեկ, «Վարդապետք Հայոց հիւսիսային կողմանց» etc., էջ 31, ծան. 1: Այդ հնություններից առանձնապես հետաքրքիր և հինավուրց վիշապաքար-ֆալուսը, վորը XI դարում վերածած և խաչքարի՝ հայերեն արձանագրությամբ ՆՃ 400+100=500 (1051) թվականով, ուր հիշատակված և «Սմաղատ իշխանաց իշխանը» (հմմ. Լ. Մելիքեթ-Բեկ, op. cit., էջ 28, ծան. 5), և վորը հետագայում ներփակվել և աստվածածնա անվամբ կառուցված և հայերեն հատկացրած փոքրիկ մատուռում: Այդ արձանագրության մասին և, վոր Ս. Ջալալյանը 1858 թվին գրում էր (op. cit. II, 79)՝ «...Վիճել միոյ մատրան արտաքին բերդի զոր կոչեն Շամշուղի կանգնեալ կայ միաձոյլ և բարձր խաչ քար, ի բառ (ուղիղ՝ Սմաղատ. Լ. Մ. Բ.) իշխանէ (ուղիղ՝ իշխանաց իշխանէ. նույնը) ի թուրին Հայոց ՆՂԳ (ուղիղ՝ ՆՃ. նույնը), յորում առնեն զուխտագրութիւնս զենամար խոյոց և զուարակաց»: Այդ արձանագրութիւնն ամբողջութեամբ հրատարակած ունի M. Brosset (Mélanges Asiatiques), t. II, p. 97—98): Մի ուրիշ արձանագրութիւն վորագրված և Սիոն կոչված մայր յեկեղեցու (վրացականի) հարավային պատի վրա, հետևյալ բովանդակությամբ. «[հր]ամա[ն]աւ. ան Գե[ո]րգ[ի]ա հա[յո]ց կաթա[ղի]կոսի...» (մինչ այժմ գրականությունների մեջ բուրբոն անհայտ), ուր, անկասկած, հիշատակված և Գեորգ Գ. Լորեցի կոչված

կաթողիկոսը՝ Գրիգոր Վկայասերի հակաթուր՝ 1069—1072 թ. թ.: նույն Սիոնի արևելյան պատի արձանագրությունն և, ուր հիշատակվում և բղիշխները (պիտիախնները) սերունդը:

29. «Լոկի» ընթերցվածքը ապիւս և «Քարթլիս-ցխորերա»-ի Աննա թագուհու վարիանտ կոչվածը, վորն ամենահնագույնն և համարվում և վորն Իվ. Ջավախիշվիլու և պատկանում ու դեռ հրատարակված չէ տես Իվ. Ջավախիշվիլի, Վրաց ժողովրդի պատմությունը, II, 449 և ծան. \*. նույնը, Վրաստանի սահմանները, 22: Ղ. Աղայանի «Տորք-Անգեղ»-ում հիշված նույն «Լոքի» կամ «Լորք»-ն և:

30. Ղ. Աղայանի «Տորք-Անգեղ»-ի նույն «Ուսիրէթ»-ը:

31. «Կորա»-«Կորա»-ն «Քորա[յր]»-ի յե վերականգնում, թեև հարցական նշանի տակ, Իվ. Ջավախիշվիլին, Վրաց ժողովրդի պատմությունը, II, 449.

32. Ըստ Իվ. Ջավախիշվիլու (Վրաց ժողովրդի պատմությունը, II, 448—449 Վրաստանի սահմանները, 21—22), մոտավորապես 1065 թվին:

33. Կորիկե Բ.

34. Այսինքն 1068 թվին,

ԱՆԱՆՈՒՆ (XII Դ.)

«ԴԱՎԻԹ ԱՐՔԱՅԻՑ-ԱՐՔԱՅԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ»

Քարթլիացիները Մարիամ թագուհու վարիանտում անա- նուն հեղինակի անվերնագիրը յերկասիրութեանը, ուր վրաց պատ- մությունը մինչ Գեորգ Ա-ի թագավորութեանն և հասցրած, ան- միջպակս հետևում և բավականին ընդարձակ («Դավիթ» արքայից- արքայի պատմութեանը), վորի հեղինակի անունը վոչ մի տեղ չի հիշվում։ Այդ պատմութեանը գրաված ունի Ե. Թադաջուլիու հրատարակութեան մեջ 281—335 հջերը, իսկ Մ. Brosset-ի՝ 236—263, վորին համապատասխանում են նույն Մ. Brosset-ի Ֆրանսե- րեն թարգմանութեան 346—381 հջերը և «Համառոտ պատմու- թիւն վրաց»-ի 114—123։ Նույնը վարքաբանութեան վերածված՝ վրացերեն Մ. Սաբինինի «Վրաստանի գրախոսում», հջ 489—512, և ուսերեն արձակ թարգմանութեամբ՝ նույն Սաբինինի գրքում Полное жизнеописание святых грузинской церкви, ч. III, Спб. 1873, стр. 103—140։ Այս յերկասիրութեանը պարունակում և իր մեջ մանրամասն նկարագրութեան այլ և այլ քաղաքական և պա- տերազմական անցքերի սկսած Գեորգ Ա-ից մինչ Դավիթ Շինողի\* մահը, այսինքն 1125 թիվը։

Վոր «Դավիթ արքայից-արքայի պատմութեան» հեղինակն, իրոք, նույն Դավիթ ժամանակակից և, այս գրույթը միանգա- մայն անվիճելի յե վրացագիտութեան մեջ (Թ. Ժորդանիա, Իվ. Ջա- վախիշվիլի, Ս. Կակաբաձե)։ Վրացագիտները կողմից հայտնված կարծիքները միջև տարբերութեանը միմիայն մանրամասնութեան- ներին և վերաբերում։ Ըստ Թ. Ժորդանիայի (Քրոնիկաներ, I, XLV—XLVI), «մատենագիրը հոգևորական անձն և, վոր յերևում

\* Վրացերեն «աղմաշենքերի» շինող строите. և վոչ թե վերաշինող, возобновитель.

և յուրաքանչյուր տողից», քանի վոր «նրա ամբողջ պատմվածքն աստվածաբանական [գատողութեան] դրոշմն և կրում»։ միաժամա- նակ՝ նա «հույժ կրթված և զարգացած մարդ և», դիցուք «Հով- հան կաթողիկոսը կամ Սիմեոն Ճղոնդիկեցին կամ Արսեն Իդալ- թոյեցին լինի»։ Մի ուրիշ տեղ նույն Ժորդանիան (ibid., 248) վո- րոշում և նույնիսկ յերկասիրութեան գրութեան ժամանակը. «Դա- վիթ Շինողի պատմութեանը գրված և Գելատի [տաճարի] ավար- տումից, այսինքն 1130 թվից հետո»։ Միանալով Թ. Ժորդանիայի կարծիքին, Սարգիս Կակաբաձեն իր հատուկ գրքույկում՝ վերնա- գրով «Դավիթ Շինողի պատմչի ո՞վ լինելը» (վրացերեն, Տիգրիս 1913, հջ 3—7)՝ այն միտքն և հայտնում, վոր հեղինակը վո՞ն Արսեն վանականը պիտի լինի, վորը 1115 թվից Դավիթ խոստո- վանահայրն ևր համարվում։ Յեվ այս հիման վրա յե, ըստ յերե- վույթին, վոր Կ. Կեկելիձեն (Վրաց գրականութեան պատմութեան, I, 315—316), այս յերկասիրութեանը վո՞ն Արսեն Սաղբրիսձե- յին և վերագրում։

Ըստ Իվ. Ջավախիշվիլու (Հին վրացական պատմական գրա- կանութեանը, Բ. տպ., 216), «Դավիթ արքայից-արքայի պատ- մութեանը» գրված պիտի լինի 1123—1126 թ. թ. միջոցին. անա- նուն պատմիչն ընդհանրապես լայն և աչալուրջ մտքի տեր մարդ և, և միմիայն առ հայերն տաճած թշնամանքն և, վոր,— նույն գիտնականի ասելով (215—216), — աչքի յե ընկնում։ Սակայն հեղինակի այս զգացմունքն էլ, ըստ յերևույթին, կրոնական հո- ղի վրա չե բսած. ընդհակառակը, այնտեղ, ուր նա նկարագրած ունի վրաց և հայ հոգևորականութեան աստվածաբանական վեճե- ունի ընթացքը, յերկու հոգևորականութեանն ևս համահավասար կերպով մեղադրում և և պախարակում՝ «յերկու կողմն էլ տարված ևր իրար ճնշելու և վատաբանութեամբ պայքարելու միտումով, քանի վոր նրանք մտնում և յին անանց և դժվար յեղանելի գոր- ծերի մեջ»։ մի խոսքով,— շարունակում և նույն գիտնականը,— «պատմիչը, այնուամենայնիվ, աստվածաբանութեան ջատագով չի յեղել և հենց այս հանգամանքը ցույց և տալիս, վոր Դավիթ Շի- նողի պատմութեան նկարագրողը կամ աշխարհիկ անձն և, կամ, յեթե հոգևորական և, կրթված և՛ մտածելակերպով միանգամայն աշխարհականացած գրող և յեղելը»։ Միաժամանակ Իվ. Ջավախի- շվիլին (հջ 216) մատնանշում և, վոր հեղինակը Դավիթ կողմնակից և և իր յերկասիրութեան մեջ տեղ-տեղ պայքարում և վերջինիս հակառակորդները հետ կամ վիճում։

Ի վերջո, հիշատակենք, Վոր «Դավիթ արքայից-արքայի սլատմութիան» վրայերէն բնագրի քննական հրատարակութիւնը վաղուց սլատրաստած ունի տպագրութիւն Իվ. Չալիսիւիիին\*:

[ԳԵՈՐԳ II ՅԵՎ ԴԱՎԻԹ ՇԻՆՈՂ ԹԱԳԱՎՈՐՆԵՐ]

...Ապա յեկավ Սուլթան Մելիք-Շահը և մտեցաւ Սամշիլիլիլին, Վորն և գրավեց և Լիսպարիտի վորդի Իվանելին գերեց, և ամբողջ Հայքը (Սոմխիթն) ավերեց: Ապա նույն տարին Սարանդը՝ գալով սուլթանական զորքով հանդերձ՝ կանգ առավ Սամշիլիլիլի գաղտում, ուր յեկան և Գեորգ թագաւորի զորքերը, և ընդհարում ունեցան Փաղցխիսում: Գեորգի զորքը հաղթեց և փախուստի մնալով կեցաւ զարսիկներին... Իսկ Գեորգը դնաց իր հայրենիք՝ Տայքը, ապա հասավ Բանաձ: Յեւ նույնտեղ նրա մոտ յեկավ արեւելքի զորավար (զորվար) Գրիգոր՝ Բակուրյանի՝ Վորդին, Վորը տեր եր՝ Ուղթյաց (Ութիի), Կարնո-քաղաքի և Կարսի. և նրանք հույժ ուրախացան և հանդարտեցին: Յեւ հանձնեց [Գրիգորը] Գեորգ թագաւորին քաղաքաբերդն Կարսի ու նրա շրջակա գավառը: ապա բաժանուցին: Իսկ Գեորգ թագաւորը թողեց Կարսում շաղճ (շաղճիթ)՝ ցել՝ ազատներին (աղնվականներին) և տուն վերադարձաւ...

Մինչ այս ժամանակ Տիգրս քաղաքը, Ռուսթավը, Հայքը (Սոմխիթն) և ամբողջ Սամշիլիլիլին՝ ու Ագարա[յ]ները՝ թուրքերի ձեռին ելին. Իսկ Թոնգըն (Թրիալիթն) ու Կլեկիարը ձգ՝ օնգլիկիի՝ քեռորդի ձեռին եր...

Ապա թուրքերն՝ իմանալով Սամշիլիլիլի առումը [Թեոդորոս, Աբուլեթ և հովհան (Իվանե) Որբեկները կողմից]՝ Հայքի (Սոմխիթի) բազում բերդերը թողին և գիշերով փախան... Իսկ մինչ այդ

Իբրև լուաւ դայս (զբաջարծու-թիւնս Գեորգեայ) Մելիք Շահ՝ Սուլթանն՝ եկն և տնդրէն էառ զՇամշոյտէ, և գերեաց զՎերս և զԻւանէ իշխան, և չողաւ: Յաւուրան յայնտիկ՝ մինչև էր Գեորգի ի բանակս, եկն առ նա Գրիգոր՝ որդին Բակուրյանայ, տէրն Ուլտեաց և Կարուց և Կարնու քաղաքի՝ և խնդրեաց ի նմանէ զԿարս, և եթող նմա լինել զերսն...

թուրքերն իրենց վրաններով աշնանը հայքով (Սուլթանիթով) ելին անցնում՝ կանգ առնելու Գաջենքում (Գաջիանում): ու Կուր գետի յեզերքին՝ Տրփ-ղեից մինչ Պարտավ (Բարդավ)՝ և Իորի ափին և ձմեռային արոտատեղ [ժառայող] բոլոր այս սքանչելի տեղերում, ...Իսկ պարնանը սկսում են [կրկին] վեր բարձրանալ գետի Հայոց (Սոմխիթի) և Արաբաւոյան լեռները, ուր ամուսն պահին նրանք դառնում ելին հանդիսա և ուրախութիւն՝ խոտով և դաշտավայրով, սքանչելի աղբյուրներով և ծաղկապաճույճ տեղերով...

...Յերբ վոր Սամշիլիլիլին գրավեցին\*, նույն տարին սուլթանի զորքը և բովանդակ թուրքութիւնն յեկավ ...[ապա] վրայ զորքն աներկյուզած հարձակվեց [այն] թուրքերի վրա, Վորոնք նստած ելին մինչ Բասեն (Բասիան) և Կարմիր փորակի՝<sup>11</sup> լեռն[եք]ում\*\*...

Յեւ մյուս տարին [Դավիթ թագաւորը] կախանալորեց Ասամ և Շոթա՝ Գրեկորի վորդից, և գրավեց բերդն Գիշո, և իր վորդի Գեմետին մեծ զորքով ուղղակեց Շարվան... Իսկ մյուս տարին՝<sup>13</sup> ծաղկազարդին դուրս յեկավ [Դավիթ] թագաւորն Ղանուխից՝ գնալու Արաբսի (Ռախսի) յեզերքը, և գատիլը տոնեց Նախիգուրում... և հարձակվեց Արաբսի (Ռախսի) յեզերքին կանցած թուրքերի վրա, Վորոնք մի մասը կոտորեց: ...Սուլթան թիլին [Դավիթը] գրավեց Հայոց (Սոմխիթի) քաղաքաբերդ Լուսին, և նույն տարին, հուլիսին, լուսադեմին, կրկին վերցրեց Ագարա[յ]ները<sup>15</sup>, քանի վոր առաջին անգամ այս բերդը նրա պապ Բաղրատն եր գրավել:...

...Յեւ սկսեց [Դավիթն] արշավանքներ կատարել Պարսկաստանի, Շարվանի և մեծ Հայքի (Սոմխիթի) վրա...  
...[Դավիթը] հարձակվեց Սուլթանի

...էառ [Դաւիթն] և զբերդաքաղաքն Հայոց՝ զԼուսէ:...

\* Տես Գիտութիւնայն ձեւարանի հրատարակութիւնը 1911—1915 թ. թ. Գեորգի շաղճի վերջին յերեսի annonce-ները:

\* Var. + բրոնիկոնի 330-ն էր<sup>10</sup>:  
\*\* Var. + բրոնիկոնի 336-ն էր<sup>12</sup>:

վրա. և դորք[ով] լցրեց [ամբողջ յերկի-  
բը] լեռն[եր]եց սկսած մինչ Կուր և Գա-  
զից<sup>15</sup> սկսած մինչ Բերդուշ ...քրոնիկո-  
նի 340 թվին<sup>17</sup>...

...[Ապա սուլթանը] հրամայեց թուրք-  
մենուկյանը, ուր ել վոր լինի, ժողովել  
հեծելազորք՝ Գամասկից և Հալեպից  
սկսած մինչ վեր, և սրանց հետ Գան-  
ձ[ալ]ի աթաբեկին՝ իր ուժով և Հայքի  
(Սոմսիթի) բոլոր ամիրաներին\*...

...Յեւ սովանանելով իբրև արծիվ՝  
[Գավթի թագավորը նույն թվի] մայր-  
սին<sup>18</sup> վերցրեց Հայքի (Սոմսիթի) բեր-  
դերը՝ Գազք (Գազ[եր]ը), Տերունահանը  
(Տերունահալը), Գավաղինները, Նոր[ա]-  
բև[ը]դը, Մանիցդոմերը (Մանսագոմերը)  
և Ղալինջաքաղը (Պալինջաքաղը),<sup>19</sup> և  
հունիակն [նորեց] յեկավ դորքով և ան-  
ցավ Ջավախքը (Ջավախեթը), Կողան  
(Կոլան), Կարնիփորը<sup>20</sup>, Բասենք (Բասիան-  
տացուք զքաղաքս ի ձեռք քո, և դնաց  
ներք)՝ մինչ Սպեր. և ուր ել դտավ  
թուրքմեններ, բոլորին կտորեց կամ  
զերի վերցրեց. անցավ Բուխարա՞ ուրը  
և ավերեց Ուղտիքը (Ութին), ապա մեծ  
հաղթանակով յեկավ Թուրք (Թրիալեթ):  
...Յեւ ոգոստոսի քսանին Բոժանա ազ-  
բյուրները մոտ կանգնած [Գավթի թա-  
գավորի] մոտ յեկան Անեցի ավազները  
[դիվանա]զպիները և հայտնեցին քա-  
ղաքն ու բերդերը նրան (Գավթին) տա-  
լու մասին: Յեւ նա շտապ կերպով հրա-  
վերադեր ուղարկեց բոլորին, և յեր-  
բորդ որը նրա (Գավթի) առաջ կանգ-  
նած եր վաթսուս հազար հեծյալ, ու-  
ղեռվեց և յերբորդ որը հեռուսթյամբ  
զբավեց Անի քաղաքն ու նրա բերդերը,  
և Անի գյուղերն ու դավանները, հա-  
նեց [Անիից] Բուլասովարին\* իր ութն  
վորովով, կանանց և հարսներով հան-  
դերձ, վորոնց ուղարկեց Ափսաղք (Ափ-  
սաղեթ), և Անի ստահապան թողեց  
մեծիցս ազատներին (ազնվականներին),

\* Var. 341:

\*\* Var. Շուլասովային. հմմ. 148 յեր.\* ծանոթ.:

խոս լինքը վերադարձավ Գավթի... և  
կարգավորեց բոլոր դործերը Գավթի,  
Հայքի (Սոմսիթի) և Անվո<sup>21</sup>...

...Յեւ ժողովեց [Գավթի] թագավորի  
շուրջը նենդ և ամենուրեք չարամիտ  
ազգն հայոց<sup>22</sup>, [նրանց] յեպիսկոպոս-  
ներն ու վանքերի առաջնորդները բա-  
զում<sup>23</sup>, վորոնք պարծենում էին թե  
մանք ինչպես հասել են ամենայն ուս-  
մանց և քրտուկյան դադաթնակտին<sup>24</sup>,  
և զեկուցին, վորպեսզի նրա (թագավո-  
րի) հրամանով ժողով<sup>25</sup> գումարով, ուր  
տեղի ունենա հակահառուսթյուն և  
քննուսթյուն հավատ<sup>26</sup>, և յեթե հաղթ-  
վին, խոստովանեն նրանց (վրաց) կրոնը  
և իրենց (հայոց) կրոնը նզովեն: Իսկ  
յեթե հաղթեն, նրանց [իրավունք] շնորհ-  
վի այլևս հերձվածող չհամարվել և վնչ  
եւ նզովք յենթարկվին: Իսկ թագավո-  
րը նրավիրեց Հովհան (Իոանն) Գարթ-  
լի կաթողիկոսին և նրան յենթակա  
յեպիսկոպոսներին ու անապատական-  
ներին, և՛ Արսենիոս (Արսեն) Իդալթո-  
յեցուն՝ թարգմանչին և հունարեն ու-  
վրացերեն լեզուներում հմուտին և բո-  
լոր յեկեղեցիներին լուսավորչին<sup>27</sup>, նաև  
ուրիշ գիտուն և իմաստուն մարդկանց:  
Յեւ տեղի ունեցավ հակահառուսթյուն  
նրանց միջև լուսազեկեց սկսած մինչ  
իններորդ ժամը և չկարողացան վեր-  
ջացնել, քանի վոր յերկու կողմն ել  
[տարված եր] իբար ճնշելու և վատարա-  
նությամբ պայքարելու միտումով, քա-  
նի վոր նրանք մտնում էին անանց և  
զժվար յեկանի զործերի [քննու-  
սթյուն] մեջ: Ջանձրանալով սրանով թա-  
գավորը զիմեց նրանց, Գուր, հայրեր,  
այնպիսի խորությանց մեջ եք մտել և  
այնպիսի տարբրինակ տեսողություն  
ունիք, իբրև փիլիսոփաներ, վոր մենք՝  
թերուսներս և կատարյալ աշխարհիկ-  
ներս՝ չենք զիմանում ձեզ հասկանալու  
և դուք դարմանում եք, վոր յես՝ զին-  
վորականության մեջ սովածս՝ հեռու  
յեւ ուսումնականությունից և գիտու-

...Այլ և կամեցաւ [Գաւթի] միա-  
ւորել զհայս և զՎերս. և կոչեաց զՅով-  
